



Սույն գիրքը թվայնացվել է Գրգասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրգասեր ՀԿ-ն գրքերը ծայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

<https://grqaser.org/hy/donate>

Ստուգված

Չեխական գրականություն, Արձակ, Վեպ

13+

Ռուսերենից թարգմանեց՝ Ա. Ասրյան

Ֆրանսիշեկ Ֆլուս Օրխիդեա որոնողները

Այս գրքի հեղինակը, չեխ գրող Ֆրանսիշեկ Ֆլուսը առաջին անգամ օրխիդեաներ տեսավ 1892 թվականին Չերվենի Պեչենկի (Չեխոսլովակիա) այն ժամանակվա հայտնի ջերմոցներում: Այստեղ նա ծանոթացավ հայտնի ծաղկաբույծ Յան Սատրապայի հետ, որին հետագայում դարձրեց «Օրխիդեա որոնողները» գրքի հերոսը: Չնայած իր երիտասարդ տարիքին, Յան Սատրապան ամենափորձված ծաղկաբույծներից էր: Օրխիդեայի հազվադեպ և անհայտ տեսակների որոնման ժամանակ նա շրջագայեց Կենտրոնական Ամերիկան, ճանապարհորդեց Մեքսիկայի, Գվատեմալայի, Հոնդուրասի, Կոստա-Ռիկայի ջունգլիներում: Յանն իր առաջին ճանապարհորդությունը կատարեց, երբ տասներեք տարեկան էր:

Հեղինակի մեջ միտք ծնվեց. պատանի ընթերցողներին պատմել այդ հետաքրքիր մարդու ճակատագրի մասին: Անցան տարիներ... Ֆլուսը կարդաց շատ ճանապարհորդների հիշողություններ, օրագրեր: Այդ մարդիկ եղել էին այն երկրներում, ուր ճամփորդել էր Յան Սատրապան: Ֆլուսն ուսումնասիրեց բազմաթիվ գիտական նյութեր, և ահա, 1920 թվականին լույս տեսավ «Օրխիդեա որոնողները» գիրքը, որը դարձավ չեխ երեխաների սիրելի գրքերից մեկը: Դա հրապուրիչ պատմություն էր երեք չեխերի՝ Դոլեժալի, Վեվերկայի և փոքրիկ Յան Սատրապայի՝ Կենտրոնական Ամերիկայի երկրներում կատարած ճանապարհորդության, նրանց արկածների և այդ երկրների բնության ու մարդկանց մասին:

Ֆրանսիշէկ Ֆլուսը մեծ ջերմությամբ նկարագրում է այդ երկրների բնակիչներին, նրանց կյանքի դաժան պայմանները: Նա սրտանց կարեկցում է հնդիկներին, Կենտրոնական Ամերիկայի ժողովուրդներին՝ իրենց ազատության ու անկախության համար մղած պայքարում:

Դրա համար էլ, չնայած «Օրիսիդեա որոնողները» գիրքը լույս է տեսել շատ տարիներ առաջ, բայց մինչև հիմա էլ չի կորցրել իր նշանակությունը: Ե՛վ գիրքը, և՛ հեղինակը քաջ ծանոթ են Չեխոսլովակիայի երիտասարդ ընթերցողներին: Հուսով ենք, որ գիրքը դուր կգա նաև մեր երեխաներին:

Գլուխ առաջին
ԿԱՆԴԵԼԱՐԻ ԳԵՏԱՓԻ ՌԱՆՉՈՆ

— Ենդա՛, Ենի՛կ: Յա՛ն /Ենդա, Ենիկ, Հոնգա — բոլորը չեխական Յան անվան նրբացուցիչ ձևերն են, որոնք համապատասխանում են ռուսական Իվան և հայկական Հովհաննես անուններին:/, նորից ո՞ւր կորար:

Ահա արդեն երեք շաբաթ էր, ինչ Մեքսիկական Յուկատանի /Յուկատան — թերակղզի Կենտրոնական Ամերիկայում Մեքսիկական ծոցի և Կարաիբյան ծովի միջև:/ խուլ անկյուններում հնչում էին մաքուր չեխերենով արտասանված բացականչություններ: Շատ ավելի կանչում էին ինչ-որ Ենիկի, բայց, ինչպես կանոն, համառ կանչերը երկարժամանակ մնում էին առանց պատասխանի, հետո չորս կողմում տարածվում էին պարզ ու հասկանալի «խոստումներ» և դժբախտ Ենիկին մնում էր մի բան. ընկերություն անել, թերևս, կոկորդիլոսի հետ, քան վերադառնալ «քնքուշ բարերարի» մոտ:

Ամենաթեթև սպառնալիքը այն էր, որ երդվում էին տղայի կաշին քերթել, կամ գցել մրջնանոց. կարմիր մրջյունները կեսժամից հետո կթողնեին միայն կրծոտած ոսկորների մի կույտ:

— Ենդա՛, Ենի՛կ: Ա՛յ քեզ անտանելի տղա:

Ռանչոյից ցածրիկ, բայց ընդարձակ, դեպի հարավ նայող պատշգամբով տնից ժպտալով դուրս եկավ բարձրահասակ, վայելչակազմ, կլորադեմ, պարզ, շագանակագույն աչքերով քսան տարեկան մի երիտասարդ: Նրա շուրթերից վերև արդեն նշմարվում էին բեղերը: Ափսոս, որ երիտասարդի գեղեցկությունը և հպարտությունը կարելի էր տեսնել միայն մոտիկից. նրա բեղերը դեռ որոշակի գույն չէին ստացել և լավ չէին երևում: Վացլավ Վեվերկան, ճիշտ է, հավատացնում էր, թե դրանք նույն գույնի են, ինչ որ մազերը, բայց մազերը պարզապես թուխ էին:

Ահավոր կանչերը Վացլավի վրա ոչ մի տպավորություն չթողեցին: Նա բարձրածայն ծիծաղեց. փայլեցնելով իր շլացուցիչ ատամները և ձեռքերը շեփորածև դնելով բերանին ձայն տվեց. «Ենդի՛, փախիր»: Հետո դանդաղաքայլ ուղղվեց դեպի մոտակա բլուրը:

Բլուրի վրա կանգնած էին երկու հոգի. մետիս /Մետիսներ — եվրոպացիների և հնդիկների խառնասերունդ: Լատինական Ամերիկայի հանրապետությունից շատերում մետիսները կազմում են ժամանակակից բնակչության մեծ մասը:/ դոն Ֆեր-Նանդո Ալվերեսը՝ ռանչոյի բարեհամբույր տերը, և նրա ընկերը՝ Ֆրանսիշէկ Դոլեժալը: Դա հենց այն դաժան մարդն էր, որը անհետացած Ենիկին սպառնում էր դժոխքի բոլոր տանջանքներով, եթե նա անմիջապես չվերադառնա: Դոլեժալի խորաթափանց, սև աչքերը, արծվաքիթը և ուղիղ ծնոտը թույլ էին տալիս ենթադրելու, որ վճռական, քաջ ու շրջահայաց մարդ է: Կարճ կտրած սև մազերը

և կախ ընկած բեղերը դեմքին տալիս էին խիստ և նույնիսկ դաժան արտահայտություն. այդպիսի մարդը կարող է հեշտությամբ բորբոքվել և գայրանալ ամեն մի փոքր բանից:

Օրվա տոթը աստիճանաբար թուլանում էր, արևը արդեն թաքնվում էր ոչ բարձր անտառապատ լեռների հետևը: Ժամը մոտ հինգն անց կես էր, զբոսնելու համար բավական ուշ ժամանակ, քանի որ արևը մայր էր մտնում վեցից անմիջապես հետո և իսկույն, համարյա առանց մթնաշաղի, սկսվում էր գիշերը:

Հետաքրքրությամբ գննելով բլուրները և բարձունքները, Դոլեժալը ռանչոյի տիրոջը հարցնում էր ծառատեսակների մասին, այն մասին, թե անտառահատներն ու կաուչուկի թանկագին հյուլի «կթվորները» հասնո՞ւմ են արդյոք այս թավուտները: Նա հիանալի գիտեր, որ շահի ծարավը անխոհեմաբար ոչնչացնում էր մեքսիկական անտառները: Նույնիսկ կառավարությունը ի վիճակի չէ դադարեցնելու այդ հանցավոր կողոպուտը: Իսկապես, միայն բնության թշնամիները կարող են անտառանյութը տանել, առանց հոգալու դրա վերականգնման մասին:

Դոն Ֆերնանդոն հանգստացրեց Դոլեժալին. Ո՛չ, այստեղ դեռ չեն հասել փայտի առևտրականների ագահ թաթերը: Սան-Ֆիլիպեն, մոտակա քաղաքը, ընկած է տասնչորս յոթ /Լյո—Երկարության չափ. 1 յոթ = 4,5 կմ:/ դեպի արևելք. մինչև Բոլանկան, որը արևմուտքում է, ավելի հեռու, իսկ Գվատեմալական Սան-Խուանը էլ ավելի հեռու է, անտառից այն կողմ, հարավում:

Դոն Ֆերնանդո Ավարեսն արդեն գիտեր, թե ինչով են հետաքրքրվում անսպասելի, բայց հաճելի հյուրերը, որոնք արդեն երկու օր էր, ինչ ապրում էին նրա տանը:

Ճիշտ է, երբ ռանչոյի տերիտորիայում երևաց փոքրիկ քարավանը՝ երկու սպիտակ տղամարդիկ ու մի տղա, որոնց հետևում էին երեք հնդիկներ, մի նեգր և երկու ջորի լծված սայլ, զգոն դոն Ֆերնանդոն պատշաճ համարեց դիմավորել նրանց ձի հեծած, հրացանը ձեռքին: Սակայն շուտով ամեն ինչ պարզվեց: Խմբի ղեկավարը՝ Ֆրանտիշեկ Դոլեժալը, ազատ խոսում էր իսպաներեն: Տանտիրոջից քաղաքավարի խնդրեց նրա տանը մնալու թույլտվություն, խոստանալով ծառաներին լավ վճարել: Դոլեժալը հաճույքով բավարարեց դոն Ֆերնանդոյի հետաքրքրասիրությունը, բացատրելով, որ արշավախումբը հավաքում է բույսեր, դասավորում արկղերի մեջ և ուղարկում հեռավոր Անգլիա:

Այդ բացատրությունը, կարծես թե բավարարեց ռանչոյի տիրոջը, բայց ոչ երկար ժամանակ: Երեկոյան Դոլեժալը իր ընկերների հետ նստել էր տանտիրոջ ընտանիքի նեղ շրջանում և բոլորին պատմում էր, թե հավաքում է ծաղիկներ, որոնք աճում են բարձր ծառերի կատարներին, ճահիճներում, հին, փտած կոճղերի կամ ժայռերի վրա: Այդ բույսերի մերկարմատները կախված են, և ցողունների համար սննդավետ կյուլթեր են քամում օդից:

Դոն Ֆերնանդոյի կասկածանքները վերջնականապես ցրվեցին, երբ օտարերկրացիներից փոքրը՝ տասներեք տարեկան մի տղա, դոն Ֆրանտիշեկի խնդրանքով, կոշտ արմատներ, լայն, ամբողջական տերևներ և գեղեցիկ ծաղիկներ ունեցող բույսերի նկարներով մի գիրք հանեց:

Պարզվեց, որ դոն Ֆերնանդոյի ծառաներից մեկը այդպիսի ծաղիկներ տեսել էր անտառում, գետնին. հավանական է, ծառերի գագաթներից դրանց ցած էր գցել փոթորիկը: Որսորդները և հովիվները լուռ ժպտացին, նրանց նույնպես հանդիպել էին այդպիսի բույսեր. մի խոսքով, տեղական բնակիչները գիտեին օրիսիդեա ծաղկի մասին, բայց առաջներում դրա վրա ոչ մի ուշադրություն չէին

դարձրել. չէ՞ որ այստեղի բնությունը մի հոյակապ, ծաղկափթիթ պարտեզ էր, և երբ «դոն Ֆրանսիսկոն»՝ ինչպես իսպաներեն ձևով այստեղ անվանում էին Ֆրանտիշեկ Դոլեժալին, ասաց, որ Մեքսիկայում այդպիսի շատ արշավախմբեր են աշխատում, և Եվրոպայում օրիփոջան թանկ է գնահատվում, բնիկները շա՛տ զարմացան:

— Բայց դրանք մինչև տեղ հասցնեն կթառամեն:— Առարկեց սենիորիտա Իզան՝ տանտիրոջ փոքր աղջիկը:— Եվրոպան հեռու է, շատ ավելի հեռու, քան Վերակրուսը կամ Մերիդը:

Բոլորը սրտանց ծիծաղեցին և ասացին Իզային, որ Անգլիան հարյուր անգամ հեռու է Մերիդից. աղջիկը միայն թերահավատորեն օրորեց գլուխը:

— Ճի՛շտ չէ, ճի՛շտ չէ, աշխարհը բոլորովին էլ այդքան մեծ չէ: Բավական է բարձրանալ բլրակը և արդեն կերևա նրա ծայրը: Այնտեղ, որտեղ երկինքը կաչում է գետնին, այնտեղ էլ աշխարհի ծայրն է:

Ա՛խ, ինչպես էր ափսոսում Ենիկ Սատրապան, որ իսպաներեն խոսել չգիտե: Ինչպիսի մեծ բավականությամբ իր հասակակցին՝ այդ աղջկան, կպատմեր թե որքա՛ն մեծ է աշխարհը:

Հիրավի Կենտրոնական Ամերիկայից մինչև Անգլիա իսկապես շատ հեռու է: Բայց հարկավոր է ավելի հեռու գնալ Անգլիայից Չեխոսլովակիա ընկնելու համար, իսկ Խրուդիմայից մինչև իր հարազատ Լգոտկան քիչ ճանապարհ չէ: Իսկ եթե գնանք և ավելի հեռու, դեպի արևելք. ահա թե որտե՛ղ են հեռավոր երկրները: Այնտեղ Ռուսաստանն է, Սիբիրը և հետո էլ ինչ-որ պետություններ, բայց ոչ մի տեղ երկրի ծայրը չի երևում:

Իմանալով ընդհանուր ուրախության պատճառը, Ենիկը չծիծաղեց խուլ տեղերում մեծացած աղջկա վրա. նա հիշեց, թե ինչքան չնչին է եղել իր սեփական գիտելիքները, երբ ապրում էր Լգոտկայում: Դպրոցում, ճիշտ է, նա լսել էր, թե որքա՛ն մեծ է երկրագունդը, բայց մի՞թե հնարավոր է պատկերացնել այդ, եթե երբևէ Խրուդիմայից ավելի հեռու չես գնացել: Միայն այժմ, երբ նա կտրել-անցել էր ծովեր ու օվկիանոսներ, Անգլիա հասնելը նրան թեթև զբոսանք էր թվում:

— Փոքրիկ մեքսիկուհին դեռ քիչ բան գիտե, բայց, ճիշտն ասած, երբեմն փորձն ավելի արժեքավոր է, քան գիտելիքները: Միշտ հասկանալի է այն, ինչ զգացել ես սեփական կաշվիդ վրա,— արդեն անկողնում պառկած ասում էր Ենիկը իր «եղբորը»՝ Վացլավին:

Իսկ հետո, երբ ննջարան մտավ «քեռի» Ֆրանտիշեկը, նրանք երկար գրուցեցին այն մասին, որ վաղն իրենք պետք է մտնեն անտառի թավուտը... Ո՞վ գիտե, կվերադառնան այստեղ, եթե իրենց ճանապարհը ձգվում է Գվատեմալայով դեպի հեռավոր Պետեն լիճը:

Տարօրինակ ընտանիք էր այդ: «Քեռին» և երկու, «եղբայրները» տարբեր ազգանուններ ունեին: Թե դա ինչպես պատահեց, շուտով կիմանանք:

Գլուխ երկրորդ
ՈՉ ՀԵՌԱՎՈՐ ԱՆՑՅԱԼԸ

1890 թվական: Լոնդոնի արևմտյան ծայրամասի թաղամասերից մեկում տարածված էին հսկա պարտեզներ, ուր սրածայր տանիքներ էին երևում: Հեռվից դրանք նմանվում են հսկա սղոցի ատամների: Իսկ եթե մոտենայիք, ապա

կտեսնեիք ինչ-որ ցածր շինություններ՝ ապակյա թեք տանիքներով, որոնք սովորաբար դարձած էին դեպի հարավ-արևելք: Ընդհանուր առմամբ դրանք պարզ շինություններ էին. կարմիր աղյուսե հիմքի վրա դրված էին երկաթյա սյուներ՝ շեղագերաններով: Դրանք ջերմոցներ էին, որոնց տները հասարակ պարտիզպաններ էին, այլ լոնդոնյան հարուստ առևտրականներ: Ջերմոցներում աճեցնում էին բազմատեսակ անդրծովյան բույսեր, հազվագյուտ մրգեր՝ խաղող, սեխ, վարունգ, անանաս, իսկ անվերջանալի գետնահարկերի մոլթ և խոնավ միջանցքներում, որտեղից սնկերի սուր հոտ էր փչում, հարյուր հազարավոր սպիտակ կետեր ուռչում էին, մեծանում դառնալով շամպինյոններ: Բայց ջերմոցներից շատերում բազմացնում էին բացառապես օրխիդեաներ: Ամեն մեկին էլ հաճելի է, երբ նրա ջերմոցները զարդարում են արտասովոր ու հազվագյուտ բույսեր: Օրխիդեայի գինը շատ բարձր էր: Ձեռներեց մարդիկ դրանով մեծ հարստություն էին կուտակում: Նրանք իրենց ջերմոցներում օրխիդեա էին բազմացնում, իսկ հետո վաճառում էին կամ ամբողջ թփով, կամ միայն ծաղիկները:

Օրխիդեաների շատ տեսակներ աճում են ծառերի բներին կամ ճյուղերին. նրանց արմատները կախված են օդում, որտեղից և ստանում են իրենց սնունդը, հատկապես ածխաթթու գազ: Որոշ օրխիդեաներ ապրում են ծառերի արմատների վրա, իսկ շատերը աճում են ուղղակի հողի մեջ գտնվող կոճղեզներից: Օրխիդեաները պարագիտներ չեն: Ծառը նրանց համար հենվելու և ամրանալու միջոց է: Փաթաթվելով ճյուղերին, հաստ արմատներին, օրխիդեաները փակում են լույսի ու օդի ճանապարհը և ճյուղերը աստիճանաբար փոխվում են հումուսի, որով սնվում են օրխիդեաները:

Այդ բոլորը ենիկ Սատրապան արդեն վաղուց գիտեր. նա Լոնդոնի այն ջերմոցների մշտական հյուրն էր, որոնք պատկանում էին միստր Հաուլին: Գեղեցիկ ծաղիկներ աճեցնելով էին զբաղված երկու չեխեր՝ Ֆրանտիշեկ Դոլեժալը և Վացլավ Վեվերկան: Բայց ո՞ր քամին էր ենիկ Սատրապային բերել Լոնդոն և, առհասարակ, Անգլիա:

Մենք արդեն գիտենք, որ ենիկը ծնվել է Չեխոսլովակիայի Լգոտկա քաղաքում: Երեք տարի առաջ նրա դերձակ հայրը տխրությամբ համոզվեց, որ Չեխոսլովակիայում դերձակությամբ ընտանիք չես պահի, որ իր արհեստը իսկականում գնահատել կարող են միայն Լոնդոնում, որտեղ նա աշխատել էր մինչև ամուսնանալը:

Մայրը և քույրը՝ Թերեզան, ճիշտ է, վախեցան հեռավոր ճանապարհից, բայց հոր որոշումը ենիկին ոգևորեց:

Ավագ Սատրապան երկար չմտածեց, նամակ գրեց Լոնդոնի իր բարեկամներին և հաստատ պատասխան ստանալով, վաճառեց իր տունը ու ոչ մեծ հողակտորը և ամբողջ ընտանիքով ճանապարհվեց արտասահման:

Սատրապաները տեղավորվեցին Լոնդոնի արավարձանում. հայրը ստիպված ամեն օր գնում էր կենտրոն, պատրաստի հագուստեղենի մեծ խանութը: Այնտեղ նա ձևում էր և հագուստներ կարում: Հասկանալի է, ենիկի մոր համար հեշտ չէր ընտելանալ նոր շրջապատին: Օտար, անհասկանալի լեզուն, անծանոթ միջավայրը ստիպում էին, որ կարոտի հայրենիքին, և չնայած հայրենակիցները ժամանակ առ ժամանակ այցելում էին Սատրապաներին, սակայն նրան միշտ ձգում էր հայրենիքը: «Հյուր լինելը լավ է, իսկ տանը՝ ավելի լավ»,— ասում էր նա: Խեղճը միխթարվում էր միայն նրանով, որ ամուսինը խոստացել էր հենց որ մի քիչ հարստություն կուտակի վերադառնա Չեխոսլովակիա:

Թերեզան էլ ոչ մի կերպ չէր կարողանում ընտելանալ նոր միջավայրին: Իսկ Ենիկը, որն այդ ժամանակ տասը տարեկան էր, Լոնդոնի ծայրամասում իրեն շատ լավ էր զգում:

Տանը նա չէր կարողանում նստել: Անձանոթ երկիր, մեծ քաղաք, նոր մարդիկ, ամեն անհասկանալի և անսովոր բան անհաղթահարելիորեն գրավում էր տղային և բորբոքում նրա երևակայությունը: Նա ցանկանում էր ամեն ինչ տեսնել և փորձել:

Դուլեժալին նա ծանոթացել էր փողոցում, երբ պատահաբար չեխերեն խոսակցություն լսեց, իսկ շուտով ընկերացավ նաև Վացլավ Վեվերկայի հետ, որին Դուլեժալը Սատրապաների ընտանիքին ներկայացրեց որպես իր անփոխարինելի ընկերոջ:

Անսկատելի անցան երեք տարիներ: Ջերմոցի տերը՝ միստր Հաուն, անսպասելի որոշեց Դուլեժալին ուղարկել օրիսիդեայի նոր տեսակներ փնտրելու: Արշավախումբը պետք է անցներ Հարավային Յուկատանը և Գվատեմալան, որպեսզի ձեռք բերեր արդեն հայտնի տեսակների կոճղեզներ, իսկ հետո շարժվեր Հարավային Ամերիկա, դեպի Ամազոն գետը՝ անհայտ և հազվագյուտ նմուշներ փնտրելու:

Ճախսերը չէին վախեցնում ջերմոցի տիրոջը: Նա գիտեր, որ այդ փողը ետ կստանա, դեռ մի բան էլ ավելի, և դրա համար թույլատրեց Դուլեժալին իրեն հետ օգնական վերցնելու:

Դուլեժալը ամբողջ երկու ամիս, երկար և հիմնովին, ճանապարհորդության պատրաստվեց: Այդ նախապատրաստությունները ոչ մեկի համար գաղտնիք չմնաց, և Ենիկը հենց լսեց ցնցող նորությունը, որոշեց ինչ գնով էլ լինի՝ ընկնել նավ և, ընդհանրապես, փախչել տնից:

Դուլեժալը արդեն երկրորդ անգամ էր ուղևորվում արևադարձային երկրները: Նա հարուստ փորձ ուներ, բացառիկ խիզախություն և հազվագյուտ գիտելիքներ: Նա իրեն անվանում էր «օրիսիդեա որոնող», քանզի այդ զբաղմունքը չէր համարում հասարակ մի բան:

Բույսեր գտնելու համար պետք է պատրաստ լինել դիմագրավելու վայրի գազաններին, չար մարդկանց, փոթորիկներին, վատ եղանակներին, արևադարձային տոթին ու հիվանդություններին, հազարավոր տարբեր վտանգների և անակնկալ խոչընդոտների:

Լավ իմանալով և սիրելով իր ընկերոջը՝ Վեվերկային, Դուլեժալը առանց տատանվելու նրան իր ուղեկից ընտրեց:

— Մի խելքը լավ է, իսկ երկուսը՝ ավելի լավ, — ասաց նա մի անգամ, երբ Սատրապաների ընտանիքում խոսում էին ճանապարհորդության դժվարությունների մասին:

— Իսկ երե՞քը, — իբր պատահաբար հարցրեց Ենիկը:

— Իսկ երրորդը ավելորդ է, — հանգիստ ու լուրջ առարկեց Դուլեժալը, սևեռուն նայելով կարմրատակած տղային, որը նստած էր մոր ոտքերի մոտ դրված աթոռակին և լսում էր մեծերի խոսակցությունը:

Այդ րոպեին ոչ մեկի մտքով էլ չէր անցնում, թե Ենիկը մտածել է փախչել:

Նա արդեն մի ամբողջ տարի աշխատել էր խանութ-արտելում, որտեղ հայրը ձևարար էր: Վերջերս Ենիկին առաջարկեցին ընտրություն կատարել. դառնալ կանացի դերձակ կամ վաճառող: Բայց ո՛չ մեկը, ո՛չ մյուսը չհրապուրեցին Ենիկին. նրան հրապուրում էին հեռավոր երկրները: Տղան սարսափելի նախանձում էր Դոլեժալին և Վեվերկային, որոնց վիճակվել էր այդպիսի հրապուրիչ ճանապարհորդություն կատարել:

Սատրապաների ընտանիքում գիտեին, թե Դոլեժալն ու Վեվերկան որ գնացքով են Սաուտհեմպթոն նավահանգիստ գնալու, գիտեին թե «Վուլկան» առևտրանավը երբ է բարձրացնելու խարիսխները և մեկնելու Մեծ Անտիլյան կղզիները, այնտեղից էլ՝ Վերակրուս նավահանգիստը:

Սատրապաների ընտանիքը բարեկամներին հրավիրեց հրաժեշտի ընթրիքի:

Ենիկի մայրը ճանապարհի համար թխել էր կլոր, կարմիր կարկանդակներ: Կարկանդակները անպայման պետք է կլոր լինեն, որպեսզի ճանապարհորդները հաջողությամբ վերադառնան, այդպես էր չեխական սովորությունը: Պանի Սատրապովան կտխրեր, եթե նրա բարեկամները հրաժարվեին համեստ նվերից:

Հայրենակիցները, սրտառուչ հրաժեշտ տալուց հետո, գնացին: Մյուս օրը երեկոյան, հայրը վերադառնալով տուն, հարցրեց, թե ինչո՞ւ Ենիկը ամբողջ օրը աշխատանքի չէր եղել: Մայրը վախեցավ. Ենիկը տանն էլ չէր եղել: Առավոտյան, սովորականի նման, քաղաք էր գնացել:

Սատրապաները սարսափով անցկացրին գիշերը: Թերեզ անանամոք լաց էր լինում: Հայրը էլ տեղ չթողեց, որ ման չեկավ և վերջապես ոստիկանություն դիմեց: Բայց ամեն ինչ իզուր էր. տղան կարծես գետնի տակն էր անցել, ոչ մեկը նրան ոչ տեսել էր և ոչ լսել: Դա դժվար չէր կռահել. մեծ քաղաքում կորչելը ավելի հեշտ է, քան անտառում:

Հանկարծ Թերեզայի մտքով անցավ, որ Ենիկը կարող է փախած լինի Դոլեժալի հետ:

Հուսահատված ավագ Սատրապան անմիջապես հեռագիր տվեց նավահանգիստ և զանգահարեց ոստիկանատուն: Համարյա միաժամանակ նա երկու պատասխան ստացավ. ոստիկանական վարչությունը հայտնում էր, որ կորածի մասին ոչինչ հայտնի չէ, դրա փոխարեն մյուս հեռագիրը բացատրում էր ամեն ինչ: Դոլեժալը և Վեվերկան հենց «Վուլկանի» տախտակամածից հեռագրեցին, որ Ենիկին նկատել են նավի անձնակազմի մեջ: Խորամանկը երկու ամիս գաղտնի պատրաստվել էր փախուստի և ոչ մի խոսք չէր ասել իր մտադրության մասին: Որպեսզի հավաքի գնալու ծախսը, նա ծառայության էր մտել խոհարարի մոտ:

— Թե կբռնեմ, ականջները այնքա՛ն կքաշեմ, որ հարյուր վաթսուներեք սանտիմետր դառնա,— բացականչեց հայրը: Աստված գիտե, թե ինչու հատկապես այդ թիվը եկավ նրա գլուխը:

— Դու կարդա վերջացրու հեռագիրը,— խնդրեց մայրը:

«Հիմա ստիպված Ենիկին մեզ հետ ենք տանելու և խորհուրդ ենք տալիս հաշտվել այդ մտքի հետ: Կաշխատենք, որ նա առողջ և անվնաս վերադառնա: Ձեր բարեկամներ՝ Ֆրանտիշեկ և Վացլավ»:

Սատրապայի ձեռքերը թուլացան, իսկ Թերեզան, այդ տարօրինակ աղջիկը, հանկարծ դադարեց լալուց: Նա գրկեց մորը և սկսեց մխիթարել նրան:

— Մայրիկ, մի՛ լացեք, Ենիկին ոչինչ չի պատահի, նրա հետ է պան Վացլավը, բարի պան Վացլավը, իսկ պան Դոլեժալը աշխարհում ոչ մի բանից չի վախենում: Եվ, գուցե,— հառաչեց Թերեզան,— նրանք մի որևէ հրաշալի բան կբերեն մեզ:

— Ճիպո՛ւտ, ճիպո՛ւտ,— զայրացած փնջացրեց հայրը:— Այնտեղ լավերն են աճում: Թող միայն վերադառնա տուն, ես նրան ցույց կտամ:

Վարպետը մի քիչ հանգստացավ, հիշեց իր երիտասարդությունը: Նրա համար էլ Լգոտկայում նեղվածք էր, նրան էլ անդրնդիատ ձգտում էր հեռու, ընդարձակ, անընդգրկելի տարածությունները:

— Պտուղը ծառից հեռու չի ընկնում, ինչ ճիշտ է, ճիշտ է,— եզրափակեց նա և արհեստանոց գնաց:

Մայրիկն ու Թերեզան մեկ լաց էին լինում, մեկ մխիթարում իրար և ամբողջ ժամանակ հիշում էին Ենիկին:

Գլուխ երրորդ
ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

Իսկ Ենիկը այդ ժամանակ լողում էր «Վուկանով»: Իհարկե, նա իր հանդիպումը բարեկամների հետ մի քիչ այլ կերպ էր պատկերացնում. նրա կարծիքով դա պետք է ուրախ և սրտառու լիներ: Նա մտածում էր, որ և՛ Ֆրանսիշեկը, և՛ Վացլավը շատ կուրախանան, իրեն անսպասելի հանդիպելով նավում: Այդպես չեղավ, Դոլեժալը վճռական հայտարարեց, թե Ենիկին Մադերայից ետ կուղարկի, բայց Վեվերկան տղայի կողմը կանգնեց, նավապետն էլ վճռականորեն առարկեց. նա Ենիկին վարձել էր համաձայն օրենքի՝ նավարկությունից երկու շաբաթ առաջ, այնպես, որ ամեն ինչ կարգին էր:

Դոլեժալը ստիպված զիջեց Ենիկին, սակայն նա իր իրավունքը համարեց որոշ դեպքերում սեփական ցանկությամբ վարվել:

Դոլեժալը Ենիկին լուրջ խոսակցության կանչեց:

— Այն, ինչ արել ես, տգեղ բան է, հիմարություն,— ասաց նա,— միայն անշնորհակալ տղան կարող է այդպես վշտացնել ծնողներին և քրոջը: Ապա, խոստովանիր, ինչքա՞ն փող ես թռցրել տնից:

Սկզբում Ենիկը լուրջ վախեցավ. Դոլեժալը այդպես խիստ ոչ մի անգամ իր հետ չէր խոսել: Բայց վերջին հարցը նրան շա՛տ վշտացրեց:

— Ոչինչ էլ չեմ վերցրել: Ինձ մոտ հինգ ֆուլատ կա, բայց ինքս եմ հավաքել իմ աշխատավարձից և ծնողներին տված նվերներից:

— Դե, քո բախտիցն է, տղա՛, թե չէ առանց հապաղելու քեզ ետ կուղարկեի, չէի նայի սրանց հորդորներին,— խիստ ասաց Դոլեժալը:— Իսկ ի՞նչ ես վերցրել քեզ հետ:

— Երկու կոստյում, երկու գույգ կոշիկ, երեք վերնաշապիկ, շալվարներ, թաշկինակներ, դանակ և... Մոնտե-Քրիստո, տասը փամփուշտանոց ատրճանակ:

Ենիկը նույնիսկ քրտնեց, թվարկելով այդ բոլորը:

— Այ քեզ բա՛ն,— զարմացավ Դոլեժալը,— դու, ինչպես տեսնում եմ, շրջահայաց տղա ես: Ի միջի այլոց, Մոնտե-Քրիստոն հենց քո բանն է: Ի՞նչ ես պատրաստվում Յուկատանում անել:

Ենիկը լռեց: Շիկնելով, նա թախանձագին նայեց Վեվերկային, կարծես նրանից օգնություն էր սպասում:

— Խնդրում եմ, ձեզ հետ վերցնեք, ես կօգնեմ...— հազիվ լսելի շշնջաց տղան:

Դոլեժալը ծիծաղեց:

— Սրան տե՛ս, «օգնե՛լ»: Դու երևի սեխը եղինջից չես էլ տարբերում: Որտե՞ղ է տեսնված: Երեխա՛, դեռ ուզում է օրխիդեա որոնող դառնալ: Ա՛յ, սա անակնկալ է: Ուրեմն պատրաստվում է մեզ հետ անցնել ճահիճները, անանցանելի անտառները, լեռները, հանդիպել գիշատիչ գազանների ու անծանոթ մարդկանց:

— Ձեզ և պան Վեվերկայի հետ ես կգնամ թեկուզ աշխարհի ծայրը,— վստահորեն ասաց տղան. նա զգաց, որ պան Ֆրանսիշեկը արդեն այնքան էլ չի բարկանում:— Մի՛ մտածեք, ես հիմա լավ գիտեմ ինչով է տարբերվում Օդոնտոգ լոստումը Օնցիդիումից և կետլեյան ստանգուպեից /Օրխիդեայի տարբեր տեսակներ (լատ.):/:

— Ասա, խնդրեմ,— զարմացավ Դոլեժալը,— որտեղի՞ց ես հավաքել այդ իմաստությունը:

— Ախր մի՞թե քիչ եմ եղել ձեր ջերմոցում: Եվ հետո, ինձ նույնպես դուր են գալիս գեղեցիկ ծաղիկները:

— Ա՛յ քե՛զ էլ դուր են գալիս ծաղիկները... իսկ ի՞նչ ես հասկանում դրանցից: Հլա մի տե՛ս, նրան դուր են գալիս օրխիդեաները, ոնց որ անգլիական լորդին, բանկիրին կամ ազնվական կնոջը: Սրան մի տե՛ս, փողոցի այս փախստական տղային,— արդեն միայն ձևի համար զայրացավ Դոլեժալը:

Այնուամենայնիվ Ենիկը չկարողացավ ավելի հարմար պատասխան մտածել, որպեսզի դուր գա Դոլեժալին: Դա էլ որոշեց գործի վախճանը. քանի որ Ենիկին դուր են գալիս օրխիդեաները, ապա կգնա արշավախմբի հետ և կդառնա մեծ, հազվագյուտ բույսերի փոքրիկ որոնող:

Իսկ երբ Ենիկը խոստովանեց, որ իր հետ վերցրել է Մեքսիկայի, Հարավային Ամերիկայի քարտեզը և բնագիտության նկարագարոված դասագիրքը, վերջնականապես ներում ստացավ: Ի բավականություն բոլորի, Դոլեժալը անմիջապես պահանջեց, որպեսզի Ենիկը իրեն «քեռի» անվանի, Վացլավ Վեվերկային նույնպես ուզեցին «քեռի» դարձնել, բայց նա գերադասեց կոչվել «ավագ եղբայր». Վացլավը շատ գոհ էր, որ տղան գնալու էր իրենց հետ. նա սիրում էր Ենիկին, որը ինչ-որ բանով հիշեցնում էր հեռու Չեխոսլովակիայում թողած փոքր եղբորը:

Դոլեժալը որոշեց, որ Ենիկը առաջվա նման պետք է խոհարար աշխատի. թող սովորի ֆիզիկական աշխատանքին և կարգապահությանը. այն, թե տղան ինչ պետք է անի, երբ ճանապարհորդները թողնեն նավի տախտակամածը, կիմանա հետագայում:

Ազատ ժամանակ Վացլավը և Ենիկը սովորում էին իսպաներեն, և եթե որևէ բան չէին հասկանում, վազում էին «քեռի» Ֆրանսիշեկի մոտ, որը տիրապետում էր

խսպաներեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներին այնպես լավ, ինչպես հարազատ չեխերենին:

Ընդհանրապես «քեռի» ֆրանսիշեկը գիտեր այն ամենի մասին, ինչի կարող էին հանդիպել ճանապարհորդները: Նա շատ անգամ էր եղել Մեքսիկայում և այնտեղից բերել հազվագյուտ բույսեր: Մասնագետների մեջ Դոլեժալը համարվում էր իր գործի գիտակը:

Երեք բարեկամները նավից իջան Մեքսիկական Վերակրուս նավահանգստում: Որպեսզի Վացլավին և Ենիկին ցույց տա Ուսմալը, Կենտրոնական Ամերիկայի Թեբեն /Թեբե — Եգիպտոսի ամենահին քաղաքներից մեկը, եղել է նրա մայրաքաղաքը XXI—XI դարերում, մ. թ. ա.: Դա հին Եգիպտոսի ճարտարապետական հուշարձանների իսկական գանձարանն է: Համանման դեր Կենտրոնական Ամերիկայում խաղացել է Ուսմալ քաղաքը, որի տերիտորիայում պահպանվել են Մայա ժողովրդի ծաղկման շրջաններում կառուցված ճարտարապետական կառույցները: /, Դոլեժալը ճանապարհ ընկավ Վերակրուսից դեպի Պրոգրեսո: «Եղբայրները» զմայլված էին Մայա /Մայա — հնդկական իրար հարազատ ցեղախմբերի անվանումը, որոնց սերունդները մինչև հիմա էլ ապրում են ժամանակակից Մեքսիկայի, Գվատեմալայի և Հոնդուրասի տերիտորիաներում: Այստեղ մեր թվարկությանսկզբից մինչև XVI դարը գոյություն է ունեցել մայաների բարձր զարգացած մշակույթ (հիերոգլիֆներ, ճարտարապետական խոշոր կառույցներ), որը անխղճորեն ավերվել է իսպանական նվաճողների կողմից XVI դարում: / Ժողովրդի ծաղկման ժամանակաշրջանի տաճարների ու պալատների ավերակների վեհությամբ:

Ուսմալից ճանապարհորդները շարժվեցին դեպի հարավ՝ Կամպեչե: Այնտեղ նրանք նստեցին մի նավ, որը բեռնաբարձ ուղևորվում էր դեպի Կանդելարիի գետաբերանում գտնվող Կարմեն նավահանգիստը: Դոլեժալն այդ նավահանգիստն ընտրեց, որովհետև այնտեղ հեշտությամբ կարելի էր արկղեր և բանող անասուններ գտնել. այնտեղից, գետի ուղղությամբ վեր շարժվելով, որոնողները կարող էին առանց մեծ ջանքերի թափանցել թերակղզու խորքը:

Հարավային Յուկատանը հյուսիսայինից համեմատաբար քիչ էր նակեցված, բայց գետի հոսանքի ուղղությամբ գնալու դեպքում կարելի է հանդիպել գյուղերի կամ մենավոր ռանչոների, որտեղի մետիսներից կրեոլներից /Կրեոլներ — իսպանական գաղութարարների սերունդները Լատինական Ամերիկայում:/ բաղկացած տեղական բնակչությունը ճամփորդներին միշտ անշահախնդիր հյուրասիրություն էր ցույց տալիս:

Մեքսիկայում ճանապարհները ընդհանրապես շատ վատ են, բայց Յուկատանի ավագոտ ափերը և այդ թերակղզու կենտրոնական մասը, որտեղ ռելիեֆը կարստյան /Կարստյան ռելիեֆ — տեղանքի յուրահատուկ ձև, որտեղ մակերևույթն դուրս գալիս ջրում լուծված լեռնային հանքատեսակները՝ կիրը, գիպսը: Ջրի ազդեցության տակ հողի մակերևույթին առաջանում են ձագարածև ճեղքեր, այրեր:/ է, համարյա թե անանցանելի:

Քարայրները, կիրճերը, անդունդները, ստորերկրյա գետերը՝ այս բոլորը երևի շատ հրապուրիչ են արկածներ որոնողների համար, բայց մեր բարեկամները այլ նպատակներ և մտադրություններ ունեին: Նրանք աշխատում էին, որքան հնարավոր է, շուտ հասնել Գվատեմալայի սահմաններում գտնվող կուսական անտառներին և արագ առաջ էին շարժվում վարձված չորս բնիկների՝ Նեգր Խոսեի և Երեք հնդիկների ուղեկցությամբ, որոնք կասկածամիտ էին, լուռ, բայց ջանասեր ու ճարպիկ: Հնդիկների կյանքը Յուկատանի թերակղզում միսթարական չէ. հողատերերի և ծառաների կամ աշխատողների միջև եղած

հարաբերությունները շատ բաներով հիշեցնում է վաղուց վերացված ստրկատիրությունը:

Արևադարձային երկրներում գետի երկարությամբ ճանապարհորդելը միայն բավականություն է: Չկան անբարեբեր, մերկ գառիվայրեր, ինչպես հյուսիսում, ճանապարհը ընթանում է գեղեցիկ հովիտով, մեկ լայնանում է, մեկ նեղանում: Այնտեղ, ուր պտղաբեր հողաշերտերը հաստ են, հողը խնամքով մշակված է: Ընդհանրապես Կամպեչե նահանգը արգավանդ է Հյուսիսային Յուկատանից: Այստեղ ցանում են բրինձ, եգիպտացորեն, աճեցնում են սուրճի ծառեր, շաքարեղեգ, ծխախոտ և սև բակլա, այսպես կոչված «ֆրիխուես», որը աղքատների ամենօրյա սննդամթերքն է: Գերաններից կառուցված շինությունների մոտ, որոնք ամրակցված են ոչ թե մեխով կամ սեպով, այլ դալար կեղևով, կավակերտ խրճիթների կողքին բարձրանում են հնդկական սլացիկ արմավենիներ և հացենու, բանանի ու նարինջի անթիվ-անհամար ծառեր:

Արշավախմբին դեռ ոչ մի վտանգ չէր սպառնում: Միայն թափառաշրջիկ հրոսախմբերը երբեմն փորձ էին անում թալանելու նրանց, բայց մեր երեք ընկերները լավ զինված էին և ուղևորությունը կատարում էին միայն ցերեկը, մինչև մայրամուտ: Գիշերները նրանք կանգ էին առնում, ջերմ ընդունելություն գտնելով մետիսների մոտ, որոնք միշտ ուրախ են զրուցելու հեռվից եկած մարդկանց հետ:

Ֆրանտիշեկը չէր հասցնում բավարարել իր երիտասարդ ընկերների հետաքրքրասիրությունը: Ենիկը և Վացլավը հետաքրքրվում էին, օրինակ, ագավայով, և շատ զարմացան, երբ իմացան, թե այս բույսերի մագմգուկներից կանայք պարաններ էին գործում, ցանցեր, զամբյուղներ և այլ իրեր են հյուսում: Այստեղ աճում է նաև բամբակենի, բայց դրան անհրաժեշտ ուշադրություն չէին հատկացնում:

Կարճ ասած, ամեն մի օրը ճանապարհորդներին բերում էր մի նորություն: Այդպես նրանք քայլեցին ամբողջ մի շաբաթ, մինչև հասան դոն Ֆերնանդոյի ռանչոն, որտեղ և որոշեցին լավ հանգստանալ՝ մինչև անտառի խորքերը գնալը:

Գլուխ չորրորդ
ՊԱՏՄՎԱԾՔ ՎԱՂՈՒՑ ԱՆՑԱԾԻ ՄԱՍԻՆ

— Ենդա՛, Ենի՛կ: Ա՛յ քեզ անտանելի տղա:

— Գալի՛ս եմ, քեռի, վագում եմ, թռչում եմ,— ձայն տվեց Ենիկը մացառուտից և, Վացլավը դեռ չէր հասցրել դուրս գալ բլրի հետևից, Ենիկն արդեն այնտեղ էր:

Նրա հետևից թավուտից դուրս եկան նեգր խոսեն և հնդիկներից մեկը: Օհո՛, վեր բարձրացրած ձեռքում տղան բռնել էր մանուշակագույն, խոշոր ծաղիկներով ինչ-որ բույս:

— Որտեղ ես կորել, թոկից փախած: Ինչքա՛ն ժամանակ է քեզ եմ փնտրում,— արդեն հանգստացած խոսեց քեռին, անմիջապես մոռանալով տղայի կաշին քերթելու իր վճռական մտադրությունը:

— Մինչ դուք քնած էիք,— բացատրեց Ենիկը,— մենք երեքով հետախուզության գնացինք: Նայեք, ի՛նչ եմ գտել: Թրաշուշանի է նման, բայց ինչպե՛ս է բուրում: Իսկ գույները...

— Սա ճահճային բույս է... բայց ինչպե՞ս ես համարձակվել հասնել անտառի խորքը: Սպասիր, քեզ կապելու եմ սալից: Մի՛ մոռացիր, որ մենք գտնվում ենք վայրի Յուկատանում՝ դեղնատենդի և մալարիայի երկրում:

Լավ էր, որ դոն Ֆերնանդոն չեխերեն չէր հասկանում, եթե ոչ նա անպայման դեմ կլիներ հայրենիքի այդպիսի սարսափելի նկարագրությանը: Ախր Յուկատանի բնակիչները սիրում են իրենց երկիրը այնպես, ինչպես որ կա: Ի միջի այլոց, չնայած կլիման այնտեղ փոփոխական է, բայց առողջարար է:

Արագորեն իջավ գիշերը: Տարբեր տեղերից դեպի ռանչո էին շտապում հովիվները, աշխատողները և հողագործները: Հունիս ամիսն էր, Յուկատանում դաշտային աշխատանքների ժամանակը, որը հաճախակի ընդհատվում էր սարսափելի ամպրոպներից, որոնք գալիս էին հյուսիս-արևմուտքից: Ահա այսօր գիշերն էլ փոթորիկ էր սպասվում, և բոլոր կենդանի արարածները շտապում էին թաքնվելու ռանչոյի ծածկի տակ և բակի շինություններում, որոնք գլխավոր տան հետ միասին մի քառակուսի էին կազմում և նմանվում էին փոքրիկ մի բերդի:

Դոն Ֆերնանդոյի հյուրերը և նրա տնեցիները հավաքվեցին ընդարձակ սենյակում: Ամպրոպը մոտենում էր: Ուժեղ քամի էր փչում: Դեպի հյուսիս և արևմուտք ընկած բոլոր պատուհաններն ու դռները, բոլոր ճեղքերը փակված էին և խնամքով ծածկված. փեղկերը կողպված էին կեռիկներով, դարպասները գոցված էին և ամրացված գերաններով. տեղական բնակիչները լավ գիտեն, թե ինչ է նշանակում այստեղի փոթորիկը: Նրանք կարծում էին, որ այս ամառը առանց ամպրոպների կանցնի, հունիսը արդեն վերջանում էր, բայց այսօր մի ուշացած փոթորիկ էր սպասվում:

— Լավ տեղ եմ ընտրել մեր ռանչոյի համար,— նկատեց դոն Ֆերնանդոն և բավականությամբ շփեց ձեռքերը:— Անտառը և բլուրը հուսալի պաշտպանություն են ամենասարսափելի տարերային աղետից: Ի միջի այլոց, այստեղի եղանակների կամակորոթյունը վաղուց է հայտնի. դրա համար էլ ռանչոն կառուցում են քամու հոսանքի ուղղությամբ:

Դոն Ֆերնանդոյի վերջին խոսքերը լսողների վրա կախարդական ազդեցություն թողեցին և շուտով հորդացին հիշողությունները այդ երկրի վաղեմի փառքի մասին: Հյուրերը հուսալով Նոր բան իմանալ Մեքսիկայի վերաբերյալ, տանտերերին խնդրեցին պատմել երկրի մասին:

Եվ դոն Ֆերնանդոն սկսեց իր պատմությունը:

— Եվրոպայում Յուկատանի մասին գիտեին վաղուց: Արդեն 1508 թվականին նրա ափերի մոտ խարիսխ գցեցին իսպանական Սոլիս և Պինսոն ծովագնացները:

1517 թվականին Կուբայի փոխարքա Վելասկեսը արևմուտքը հետախուզելու ուղարկեց Խուան դե Գրիխալվային /Խուան դե Գրիխալվան ուսումնասիրեց Յուկատանը՝ մինչև Վերակրուս քաղաքը:/: Նա էլ հենց հայտնաբերեց Մեքսիկայի ափերը: Նույն թվականի աշնանը Վելասկեսը Մեքսիկա ուղարկեց Ֆերդինանդ Կորտեսին, որը նվաճեց երկիրը և 1526 թվականին հայտարարեց իսպանական տիրապետություն: Մեքսիկա թափվեցին իսպանական վերաբնակիչները և այդ երկիրը Նոր Իսպանիա անվանեցին: Հիմնկվա կրեոլները նրանց անմիջական սերունդներն են:

Իսպանական տիրապետությունը Մեքսիկայում տևեց մոտ երեք հարյուր տարի: 1810 թվականին մեքսիկացիները ապստամբեցին եվրոպական կառավարողների

դեմ: Ապստամբությունը ղեկավարում էր հռչակավոր Միգել Հիդալգո ի Կաստիլյան, որի հրամանատարության տակ հավաքվել էին հիսուն հազար մարդ: Մի տարի հետո նա սպանվեց, բայց 1815 թվականին ապստամբությունը բռնկվեց նոր ուժով, որը գլխավորում էր Խոսե Մարիա Մորելոսը:

1824 թվականին Մեքսիկան հռչակվեց հանրապետություն, բայց մինչև հիմա էլ շատ քիչ բան է արված, որպեսզի մենք երջանիկ և ազատ լինենք:

Գլուխ հինգերորդ
ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ

Նախաճաշից հետո ջոկատը ճանապարհ ընկավ: Ճանապարհորդները լավորակ քաթանե զգեստներ էին հագել, փափուկ, երկարաճիտ կոշիկները պաշտպանում էին նրանց ոտքերը:

Հայտնի է, որ Մեքսիկայում, հատկապես Յուկատանում, վիստում են ավելի շատ օձեր, դոդոշներ և մողեսներ, քան ուրիշ մի տեղ:

Ֆրանսիշեկը մի քայլ հեռու չէր թողնում Ենիկին. այս անտառներում կարելի է անսպասելիորեն հանդիպել ոչ միայն լուսանի, այլև հովազի և կատվառյուծի:

Քեռու ասելով, Ենիկի բախտը բերել էր. տարվա այդ ժամանակ նա կարող էր լսել ու տեսնել շատ երգող թռչունների: Գույնզգույն թռչունների երամաշարը, որը ճախրում էր ծաղիկների վրայով, ասես թռչող թանկագին քարեր կամ փայլփլուն կայծեր լինեին:

Սև աշխատանքի համար վարձված էր նեգր Խոսեն: Նա պետք է արկղները կրեր, հոգ տաներ օթևան գտնելու և ուտելիք պատրաստելու մասին: Հնդիկներին հանձնարարել էին ծառերի գագաթներից ցած գցել օրխիդեայի ծաղիկները:

Դոն Ֆերնանդոն իր ամբողջ ընտանիքով հյուրերին բավական երկար ճանապարհ դրեց. անտառի եզրին նրանք հրաժեշտ տվեցին, և մեր ճանապարհորդների հետ մնացին միայն դոն Ֆերնանդոյի աշխատողները, որոնց հրամայված էր անտառում խրճիթ կառուցել:

Այս աշխատողների մեջ էր ռանչոյի հովիվը, որը շատ օգտակար մարդ էր արշավախմբի համար. նա գիտեր անտառի որ մասում են աճում օրխիդեաները:

Ճանապարհին եվրոպացիները մեծ հետաքրքրությամբ նայում էին մշակված դաշտերին, որտեղ արդեն բարձրացել էին եգիպտացորենը, բրինձը, ծխախոտը, և «ֆրիխոլեսը»: Հովտի ցածրադիր մասում նրանք հանդիպեցին շաքարեղեգի դաշտերի:

— Մի՞թե այստեղ կարտոֆիլ ու հացահատիկ չկա,— զարմացած հարցրեց Ենիկը:

— Ո՛չ, տղաս, այստեղ դրանց փոխարեն աճում են բատատներ, մանիոկ, յամս և արում, այնպես որ, եվրոպական ուտելիքները բնակիչներին ծանոթ չեն,— անմիջապես պատասխանեց Ֆրանսիշեկը, և հետո մանրամասն բացատրեց տղային, թե ինչպիսի բույսեր են այստեղ աճում:

— Բատատը, կամ ինչպես այստեղ անվանում են՝ «պատատը», քաղցր, գետնին փռված, երկարակյաց բույսի պալար է: Մանիոկը կամ «մանիխոն» կաթնուկազգիների ընտանիքից է. այդ բույսերը աճեցնում են, որովհետև արմատները օսլա, կասավայի այլուր, սագու են պարունակում, որին մենք

տապիոկ ենք անվանում: Յամսի պալարները այստեղ փոխարինում են կարտոֆիլին: Վերջապես, արումը. դու այդ բույսը տեսնում ես այնտեղ, արմավենու ստվերում, նույնպես շատ օգտակար է: Բույսը պարունակում է օսլայի այուր, որը համարյա օգտագործվում է բոլոր ուտելիքներում:

— Վա՛յ, վա՛յ, ինչ գեղեցիկ է,— Ֆրանսիշեկին ընդհատեց Ենիկը, ցույց տալով սպիտակ ծաղիկներով ծածկված թփերի շարքը, այդ թփերը, կամ ավելի շուտ ծառերը, մնացել էին ավելի բարձր ծառերի ստվերում:

— Երևի դրանք ծաղկած բալենիներ են,— ենթադրեց Վացլավը:

— Ի՛նչ բալենիներ,— ծիծաղեց Ֆրանսիշեկը,— դրանք սուրճի ծառեր են: Իսկ բարձր, փարթամ ծառերը դրանց պաշտպանում են փոթորկից ու արևից:

— Արևի՞ց,— զարմացավ Ենիկը:— Բայց չէ որ դրանց հենց արև է պետք:

— Այո՛, ջերմությունը նրանց անհրաժեշտ է, բայց այս ծառերը կարող են աճել միայն ստվերում. արևի ուղիղ ճառագայթները տանել չեն կարողանում: Պտուղները նման են մեր բալին: Երբ ծաղիկները սկսում են թափվել, ճյուղերին երևում են գեղեցիկ, մուգ կարմիր հատապտուղներ, որոնց տեսքից մեր քաղցրասերների բերնի ջուրը կգնար: Բայց այս հատապտուղները չեն ուտում:

Ենիկը և Վացլավը ամեն ինչից զարմանում էին:

— Եթե հարցնեք տեղի բնակիչներին, նրանք կպատմեն, թե որքան անշնորհակալ և դժվար գործ է այս պտուղների մշակումը: Պոկում են ծառերից և կույտեր կազմում: Որոշ ժամանակ անց հատապտղի փափուկ մասը սկսում է նեխել: Կոստա-Ռիկայում հատապտուղները թրջում են: Հետո չորացնում են ուժեղ արևի տակ, և աշխատողները հատուկ մեքենաների օգնությամբ դրանք տրորում են, ընդ որում, չորացած փափուկ մասերը վրայից թափվում են, թաղանթը պոկվում է: Մեջը սովորաբար լինում է երկու հատիկ՝ իրար սեղմված հարթ կոճերով:

— Այդ մենք կտեսնե՞նք,— հարցրեց Ենիկը:

— Այո, Կոստա-Ռիկայում և Գվատեմալայում մենք սուրճի հսկա լեռներ կտեսնենք: Ահա այդ ժամանակ կզարմանաս:

Այդտեղ Ենիկի ուշադրությունը գրավեց գորշ կապտավուն, կանաչ թփերով ծածկված մի բլրակ: Մոտենալով նա տեսավ, որ դրա տերևները մսոտ են ու փշոտ:

— Ազավա,— բացականչեց տղան:— Բայց բոլորովին նման չեն նրանց, որոնց մենք արդեն հանդիպել ենք:

— Ճիշտ է,— հաստատեց Ֆրանսիշեկը,— և դրանք աճեցնում են ոչ գեղեցկության, ոչ էլ մանրաթելերի համար: Դրանիցից ըմպելիք են պատրաստում, որը «պուլկե» է կոչվում:

Հազիվ էր Ֆրանսիշեկը այս ասել, երբ ուղեկցողը պայուսակից հանեց տափաշիշը: Երևի նա հասկացավ, որ օտարերկրացիները թարմանալ են ուզում:

— Ահա, տեսնում եք,— ծիծաղեց Ֆրանսիշեկը:— «Պուլկեն» Յուկատանի բնակիչների համար կախարդական բառ է: Այստեղ բոլորը սիրում են այդ ըմպելիքը: Համը տեսեք, երևի ձեզ էլ դուր կգա:

Մինչև այդ ջոկատը մոտեցավ անտառին և նրա հաճելի զովության մեջ վերջապես ազատվեց կիզիչ տոթից: Բայց և այնպես, չնայած Ենիկի և Վացլավի խնդրանքին, Դոլեժալը նրանց չթույլատրեց ուղղակի ծառի տակ հանգստանալ:

— Բարեկամներ, մենք ոչ Չեխոսլովակիայում ենք, ոչ էլ Անգլիայում, չմտածեք պառկել խոտին կամ մամուռների մեջ: Նախապես ուշադիր նայեք այն տեղը, որտեղ ցանկանում եք պառկել, արդյոք օձեր, կարիճներ, սարդեր կամ այլ անկոչ հյուրեր չկան: Եվ ոչ մի դեպքում չպառկեք սառը խոտի վրա, երբ քրտնած եք: Յուկատանը դողերոցքի հայրենիքն է, իսկ այդ հիվանդությունը, ինձ թվում է, հատկապես անտարբեր չէ սպիտակամորթների նկատմամբ:

Արշավախմբի փորձված ղեկավարը սկսեց հարմար տեղ փնտրել, որտեղ հնարավոր կլիներ խրճիթ պատրաստել, բայց հազիվ ժամը երկուսին գտավ: Դա ոչ բարձր սարահարթում ընկած մի թեթև գառնկող լանջ էր, որտեղ հովտի խոտառատ և թփերով ծածկված մասով հոսում էր երեկվա հեղեղից հետո դեռևս հորդառատ առու: Սարալանջին ծառեր չկային: Հարկավոր էր միայն արմատախիլ անել թփուտը և ազատվել ոչ ցանկալի հարևաններից: Դրա համար ամենալավ միջոցը խարույկ վառելն էր: Մարդիկ սկսեցին արագ-արագ քարշ տալ չոր ճյուղերի կույտեր, խոտ և ծառերի կեղևներ:

Հովիտը ծածկվեց թանձր ծխով. պետք էր աչալուրջ հետևել, որպեսզի կրակը խարույկի սահմանից դուրս չգար: Մարդիկ ուստերով հանգցնում էին բոցը, հենց որ չափից ավերի հեռու էր սողում: Խոտերի մեջ մերթ ընդ մերթ փայլում էին կրակից փրկված օձեր, մողեսներ, կրծողներ, իսկ հովիվը հավատացնում էր, որ շատերն էլ աննկատ սողոսկել են անտառ:

Երբ խարույկները հանգան, բոլորը կացիներ, գերանդիներ վերցրին: Երեկոյան ընտրված տեղը արդեն մաքրված էր, և հոգևած ճանապարհորդները գնացին գիշերելու: Միայն հնդիկները նստեցին գիշերվա համար թողած միակ խարույկի շուրջը: Ձեռքերով ծնկները բռնած, կիսախուսի աչքերով, նրանք ինչ-որ բանի մասին էին մտածում:

Հետևյալ օրը, մինչ դոն Ֆերնանդոյի մարդիկ ծառաբնից և իրենց հետ բերված տախտակներից կկառուցեին խրճիթը, երեք եվրոպացիները լավ գինված, դուրս եկան շրջապատը նայելու և, եթե բախտը ժպտար, որս անելու:

Հետախուզության դուրս գալով, Ֆրանսիշեկ Դոլեժալը հետապնդում էր միայն մեկ նպատակ. գտնել ծառեր, որոնց վրա, ինչպես փորձից գիտեր, հազվագյուտ օրխիդեաներ են հանդիպում: Դրա համար էլ նա շատ ուրախացավ, երբ մոտիկ բարձրության վրա տեսավ ծոված կաղնիներ, լաստենիներ, ծփենիներ, դափնիներ և ակացիաներ: Ֆրանսիշեկը հուսով էր, որ լեռնագագաթի մոտ կհանդիպի նաև փշատերև տեսակների՝ սոճու և եղևնու:

Բայց Ենիկին երբեք չէին հրապուրում վայրի ֆուկսիաները, խորդենիները, հսկայական մանուշակները և մոխրախոտերը: Նա չէր կարողանում բաժանվել անտառի բացատներից: Նրան հիացմունք էին պատճառում փայլուն, սադափագույն թևերով երփներանգ թիթեռներն ու գեղեցիկ թռչունները: Տղան շատ էր ափսոսում, որ չգիտի, թե ինչպես են դրանք կոչվում, բայց լսելով, որ Մեքսիկայում թիթեռների վեց հարյուր տեսակ կա, ընդմիջտ թողեց դրանց անունները հիշելու մտադրությունը: Գրավիչ զբոսանքի ամենաթունդ պահին նա հանկարծ ցնցվեց և սարսափած նետվեց դեպի Վացլավը:

— Ի՞նչ պատահեց,— վախեցավ նաև Վացլավը:

— Շը՛շ, կարթնացնես,— շշնջաց տղան, մատով ցույց տալով փայլուն մի կծիկ՝ պտավոր օձին, որն անշարժ փռված էր հաստ պողպատյա պարանի նման:

Վացլավը քիչ էր մնում քաշեր հրահանը, բայց Ֆրանտիշեկը արգելեց:

— Իզուր մի փչացնի լիցքը: Ավելի լավ է ուղարկենք հնդիկներին, նրանք գիտեն, ինչպես վարվել դրա հետ... հլա մի նայե՛ք,— բացականչեց նա և ցույց տվեց վազող ինչ-որ կենդանիների երամաշարը, որոնք նման էին մկների:— Ամբողջ մի հոտ է, երևի մոտերքում որսի է դուրս եկել ևս մի օձ, ահա դրա համար էլ սրանք փախչում են... Իհարկե, մի այս կողմ շրջվեք: Տեսնո՞ւմ եք, խոտերի մեջ մի ինչ-որ բան է փայլում:

Ենիկն ու Վացլավը նույնիսկ շունչները պահեցին: Ենիկը խղճաց անպաշտպան գազանիկներին, որոնց հետապնդում էր արագաշարժ և ճարպիկ օձը:

Ֆրանտիշեկը ապարդյուն ապացուցում էր, որ այդպես է ջունգլիների օրենքը, որտեղ հաղթանակում է ուժեղը, բայց Ենիկը մնաց անսփոփ:

Հանկարծակի մի սուր ճիչ ընդհատեց նրանց համերաշխ զրույցը: Ենիկը միանգամից կապվ Վացլավին:

— Ա՛յ դու, հերո՛ւս,— ծիծաղեց քեռին,— դա, ախր, եղած-չեղած թուրքակ է: Ինչպես տեսնում ես, խայտաբղետ գեղեցկուհին ողջունում է մեզ իր տանը:

Հանկարծ մի տասը-տասներկու սկյուռիկներ դուրս թռան անտառից և բացատով նետվեցին դեպի ճյուղատարած կաղնին: Ամուր կեղևի վրայով նրանք արագորեն մագլցեցին ծառի կատարը և փոփոլացնելով իրենց վեր տնկած պոչերը, սկսեցին հետաքրքրությամբ բացատին նայել: Նրանց հետևից սլացավ և անտառում անհետացավ մահու չափ վախեցած նապաստակը:

— Ուշադրությո՛ւն,— շնչաց Ֆրանտիշեկը,— պատրաստել հրացանները, այստեղ միայն օձեր չեն, որ որսի են դուրս եկել:

Թաքնվելով կաղնու հետևում և շնչառությունը պահելով, ճանապարհորդները սպասում էին, թե ինչ կերևա բացատում:

— Պետք է խոստովանել, որ որսի սովորական ժամանակը չէ,— շնչոցով նկատեց քեռին:— Գիշատիչները որսի են դուրս գալիս գիշերը: Երևի մենք անսպասելի անհանգստացրել ենք նրանցից մեկին. ահա և նա դուրս է եկել օրը ցերեկով:

Հանկարծ Վացլավը տեսավ գազանին: Հպարտանալով, որ առաջինն է նկատել, նա հապճեպ կրակեց, բայց, երևի, վրիպեց. գազանը թաքնվեց:

Դատելով արտաքին նշաններից, դա կարող էր կատվառյուծ կամ ուղղակի վայրի կատու լինել:

Վացլավը ստիպված էր համբերատար լսել խելացի խորհուրդը. պետք է հաստատ համոզվել և անտեղի չանհանգստացնել անտառի բոլոր բնակիչներին:

Բարեկամները դատարկաձեռն վերադարձան, և հովիվ «դոն Ֆրանսիսկոյին» խորհուրդ տվեց ցած իջնել առվակի ուղղությամբ, նստել մի որևէ մեկուսացած տեղ, հետևել և կհաջողվի:

— Պարզ է,— գլխով արեց քեռին:— Եղջերո՞ւ: Բայց մենք բավական միս ունենք: Ես չեմ ուզում գազաններին իզուր սպանել:

— Ինչ կա որ, դա ճիշտ է,— համաձայնեց հովիվը:— Մենք էլ գազաններին անտեղի չենք խփում: Բայց, ա՛յ, վաղը մենք ռանչո պիտի վերադառնանք, իսկ այնտեղ մի կտոր միսը, հատկապես ջահել եղջերուի, չէր խանգարի:

Այդ փաստարկը վճռեց գործի ելքը: «Դոն Ֆրանսիսկոն» կարգադրելով, որ ոչ ոք ճամբարից չհեռանա, շարժվեց վտակն ի վեր:

Նա անմիջապես մի տեղ գտավ, ուր բազմաթիվ հետքերից կարելի էր ենթադրել, որ եղջերուները գնացել են ջուր խմելու, թաքնվեց թփերի մեջ և սկսեց սպասել:

Արևը թեքվում էր դեպի արևմուտք և անտառի կանաչավուն աղջամուղջը աստիճանաբար սկսում էր ներկվել բաց վարդագույն երանգով: Հեռվից լսվում էր գորտերի կոկոռոցը: Թեթև քամին խշխշացնում էր ծառերի կատարները, ինչ-որ տեղ կոնչում էր թռչունը: Գիշերը վրա հասավ, կտրվեց միջատների ճկճկոցը: Ֆրանսիշեկը մոռացավ որսը: Նա պառկեց խոտերին և վերհիշեց հայրենիքը, հարազատ պոլաբական գյուղակը, որտեղ ճիշտ նույն ձևով ամբողջ գիշերը լճակում անընդհատ կրկնում են գորտերը: Նա պատկերացրեց հորը՝ գյուղական ուսուցչին: Ահա նա, նստած է դպրոցի մոտ, լորենու տակ, և բավականությամբ ծխում է երկար ծխամորձին հազցված գլանակը: Մայրն էլ կանգնեց նրա առջև: Անխոնջ, ժրաջան մի կին, հենց նոր շտապ բակ գնաց, ահա խոհանոցում ինչ-որ գործ է անում: Մի րոպե Ֆրանսիշեկին թվաց, թե ինքը լսում է նրա հարազատ ձայնը: Վերհիշեց նաև մանկության ընկերներին. ամբողջ օրը նրանք վազվզում ու չարություններ էին անում գյուղի հրապարակում՝ մինչև արևը մայր էր մտնում և ծնողները կանչում էին ընթրիքի ու քնելու:

Հանկարծ Ֆրանսիշեկը բարձրացրեց գլուխը. իրենից հազիվ երեսուն մետր հեռու կանգնել էր եղնիկը՝ իր ծագի հետ: Մինչ եղնիկը խմում էր, մայրը զգուշությամբ ականջ էր դնում ամեն մի չխկոցի: Ֆրանսիշեկը մի րոպե նայեց սրտառուլ տեսարանին, հետո, նույնիսկ առանց վախեցնելու զգույշ կենդանիներին, կամաց ետ սողաց և վերադարձավ ճամբար:

— Զամին փչում էր իմ կողմից, ոչինչ չստացվեց,— բացատրեց «դոն Ֆրանսիսկոն», առանց ուշադրություն դարձնելու հովվի արհամարհական ժպտին:

Գլուխ վեցերորդ
ԿՅԱՆԸԸ ՃԱՄԲԱՐՈՒՄ

Ընթրեցին, բայց քնել դեռ չէին ուզում: Առաջին օրը անտառում անցավ ինչպես հեքիաթում, և որոնողները, մոռանալով հոգնությունը, նստեցին կրակի շուրջը և տարվեցին զրույցով: Վացլավը Ենիկի հետ միասին տարվեց հիշողություններով, իսկ հնդիկները լուռ նայում էին կրակին և լսում ռանչոյի մշակների խոսակցությունը: Այս շրջապատում նեգր խոսեն իրեն հիանալի էր զգում: Նա արդեն սովորել է իր նոր տերերին:

— Լսեք, բարեկամներ,— ասաց Ֆրանսիշեկը,— չի կարելի՞ արդյոք, որևէ տեղից մի լավ շուն ձեռք բերել, նույնիսկ երկուսը: Ես լավ կվճարեմ:

— Ինչո՞ւ չի կարելի,— ասաց նրանցից մեկը:— Ինչո՞ւ, սենիոր, այդ մասին ռանչոյում չասացիք: Ձրի գեղեցիկ շներ կստանայիք:

Ֆրանսիշեկը քմծիծաղեց և կրակի մեջ փայտ գցեց:

— Ես չեմ սիրում նվերներ ընդունել, եթե նույն ձևով փոխհատուցել չեմ կարող: Եվ հետո, ինչի՞ս են պետք գեղեցիկ շները: Ես ուզում եմ տեղական ցեղի լավ շներ գնել:

— Որսորդական, թե՞ հսկող,— հարցրեց հովիվը:

— Երկուսից էլ: Մեկը կպահպանի խրճիթը, իսկ մյուսը կուղեկցի մեզ անտառում:

— Ես այդպիսի շների տեղ գիտեմ, բայց թանկ կնստեն: Տասը պետոյից ոչ պակաս,— ասաց հովիվը և քննախույզ նայեց Դոլեժալին, թե ինչպես կընդունի այդ գինը:

— Եթե դուր գա՝ ես քսան էլ կվճարեմ, դեռ հինգ էլ կավելացնեմ բերողին,— պատասխանեց Դոլեժալը և վեր կացավ, լարեց լսողությունը. անտառից տարօրինակ խշշոց էր լսվում, կարծես ինչ-որ մեկը գետնի վրայով դանդաղ ինչ-որ մի ծանր բեռ էր քարշ տալիս. Ֆրանսիշեկը գնաց ձայնի ուղղությամբ: Հովիվը բոցավառվող ճյուղը ձեռքին՝ շտապեց նրա հետևից:

— Ա՛հ, կրիա է, հանգստացեք,— ուրախ բացականչեց նա,— ցանկացել է ջուր խմել, ահա և շտապում է դեպի գետակը:

Ենիկն ու Վացլավը վազեցին կրիային նայելու, իսկ հնդիկները նույնիսկ տեղներից չշարժվեցին. երևում է, որ այդ տեսարանը նրանց համար սովորական բան էր: Խոսեն ուրախացած անմիջապես առաջարկեց սպանել կրիային, դրա մսից վաղվա համար կարելի է համեղ ապուր եփել: Բայց Ֆրանսիշեկը թույլ չտվեց որ սպանեն, և կրիան ապահով առաջ ընթացավ:

Չգիտես ինչու, նայելով թռչկոտող բոցերին, Ենիկը հիշեց մեծ, փայլուն օձին, որը տեսել էր ցերեկը: Եվ երբ Ֆրանսիշեկը խոսեց այդ մասին, հովիվը վրդովվեց.

— Ինչո՞ւ ինձ առաջուց չասացիք: Ձեր խոսքերից երևում էր, որ դա լուռ բուշմեն է եղել,— անհանգստացավ հովիվը:— Նա ընդունակ է խեղդելու ոչ միայն մարդու, այլև ձիու և ավանակի, եթե դրանք արածում են անտառի որևէ բացատում: Եվ ինչո՞ւ ինձ ցույց չտվեցիք: Հիմա նա հանգիստ մարսում է ուտելիքը, մինչդեռ կարող էր մաշկազերծ ճոճվել՝ ծառից կախված: Լուսաբացին կգնանք դրա հետևից. գուցե դեռևս գտնենք նույն տեղում: Այդ վիշապը սարսափելի ծանրաշարժ է, երբեմն կշտանալուց հետո մի քանի օր առանց շարժվելու կարող է պառկել:

Ենիկն ու Վացլավը այլևս չէին լսում հովիվին: Նրանք հիշում էին իրենց հայրենիքը: Բարեկամները այնպես մտազբաղ էին, որ նույնիսկ անմիջապես չհասկացան, թե Ֆրանսիշեկը իրենց է դիմում:

— Դուք նկատե՞լ եք, որ այստեղ աստղերը նույնը չեն, ինչ որ մեզ մոտ: Ճիշտ չէ՞:— Կրկնեց քեռին իր հարցը:— Նայեք թեկուզ այս հիանալի համաստեղությանը: Դա Հարավային Խաչն է, դուք երևի դրա մասին լսել եք կամ կարդացել:

Ենիկն ու Վացլավը գլուխները թեքեցին և հայացքները ուղղեցին ցածր ու մութ երկնակամարին:

— Որքա՛ն հիանալի է այստեղ ամեն ինչ,— հառաչեց Վացլավը:

— Այնուամենայնիվ ինձ համար սիրելի է մեր երկինքը, մեր համեստ, բայց հյուրասեր երկիրը:

— Մի՛ տխրիր, ծերուկ,— քաջալերեց ընկերոջը Ֆրանսիշեկը։— Ենիկը սրան ի՞նչ կասի։

— Իսկ ինձ, քեռի՛, այստեղ ամեն ինչ շատ դուր է գալիս։ Ճիշտն ասած, ես ոչնչից չեմ վախենա։ Ա՛յ, կտեսնես, ինչքան ես համարձակ կդառնամ, երբ ավելի լավ ընտելանամ։ Հնդիկները ոչնչից չեն վախենում և ամեն ինչի ելքը գտնում են, չէ որ նրանք մանկությունից ծանոթ են ջունգլիում եղած բոլոր ճանապարհներին ու անցումներին, տեղական բնակիչների սովորույթներին։— Ենիկը ետ նայեց։— Միայն թե ինչո՞ւ են հնդիկները ամբողջ գիշեր անշարժ նստում խարույկի շուրջը, կարծես քարե քանդակը լինեն, լուռ ու անբարյացակամ։ Ա՛յ, երբ սովորեմ նրանց լեզուն, մենք կսկսենք զրուցել և իրար լավ կհասկանանք։ Կարծում եմ նրանք ինձ կսիրեն։ Նայի՛ր, քեռի, նրանց մռայլությունը ցրվեց, կարծես զգացին, թե ես լավ բաներ եմ ասում իրենց մասին։

Ֆրանսիշեկը մտազբաղ ժպտաց։

— Նրանք հազարավոր պատճառներ ունեն սպիտակներին չվստահելու, տղա՛ս։ Եթե քեզ հաջողվի նրանց վստահությունը ձեռք բերել, դու իսկական ընկերներ կունենաս։ Նրանց խաբել չի կարելի, եղիր արդարացի և բարեհամբույր. այսքա՛նը բավական է։

Խարույկը համարյա հանգավ, ճամբարը դանդաղ ընկդմվեց քնի մեջ։ Եվրոպացիները գնացին քնելու խրճիթում, որը ծածկված էր արևադարձային բույսերի լայն տերևներով և ճյուղերով։ Ռանչոյի մշակները պառկեցին ծածկի տակ։ Նրանք այդ ծածկը կառուցեցին մուլեն ընկնելուց մի փոքր առաջ։ Գետնի մեջ մի սյուն ամրացրին, իսկ ճյուղերից պատրաստեցին թեթև տանիքի նման մի բան։ Միայն հնդիկները առաջվա նման նստել էին խարույկի շուրջը և նրանց միալար ձայնը երկար ժամանակ տարածվում էր գիշերվա լռության մեջ։

— Աղոթում են,— կամաց բացատրեց Ֆրանսիշեկը։— Այն ժամանակվանից, ինչ հնդիկները ընդունել են քրիստոնեություն, նրանք շատ կրոնասեր են դարձել և սիրում են եկեղեցական շքեղ ծիսակատարությունները։

Գիշերն անցավ առանց արկածների, բայց առավոտյան Ճանապարհորդները դեռ չէին հասցրել վեր կենալ և լվացվել, իսկ սև խոսեն նախաճաշ դեռ չէր պատրաստել, երբ երեք հնդիկները ռանչոյի ավագ մշակի հետ անտառից բերեցին մեծ, արդեն սատկած օձին և կախեցին ծառից. օձը կախ էր ընկել ինչպես մի հաստ, տեղ-տեղ ժանգոտած երկաթե ճոպան։ Հովիվը ինքնագոհ նայում էր նրան և մտքում հաշվում, թե ինչքան գոտի, մտրակ կպատրաստի նրա կաշվից։ Նա Ենիկին և Վացլավին պատմեց ուրիշ, ավելի փոքր, բայց ավելի թունավոր օձի մասին. նա նկատի ուներ փոքրիկ, վտանգավոր կուֆիին։

Ֆրանսիշեկը առատ վճարեց մշակներին, իսկ հովվին հիշեցրեց երկու լավ շներ ձեռք բերելու նրա խոստման մասին։ Հետո նա բյուր ողջույններ հղեց դոն Ֆերնանդոյի ռանչոյի բնակիչներին։

Մարդիկ հեռացան. մի քանիսը ուղղվեցին դեպի ռանչո, մյուսները գնացին ջունգլիի խորքերը։

Ճամբարում մնաց միայն սև խոսեն. նա մտավ խրճիթը և սկսեց վառարան կառուցել։ Հասարակ օջախը նրան չէր բավարարում։ Բայց մինչև գործի անցնելը, խոսեն նայեց ջորիներին, ջրեց և կապեց այնտեղ, որտեղ խոտը ավելի փարթամ էր։ Հետո սկսեց գետի ափից, ուր լավ քարեր և կպչուն կավ էր տեսել, շինարարական նյութեր կրել։ Երեք ժամվա աշխատանքից հետո խոսեն հպարտորեն նայեց իր կառուցածին. այդ պահին նա նման էր չեխական կեղտոտ

երեխաներին, որոնք սիրում են անձրևից հետո ամբարտակներ պատրաստել թաց ճանապարհների վրա. տղաների վրա ավելի շատ ցելս է լինում, քան իրենց կառուցածի վրա: Բայց խոսեի համար դա նշանակություն չուներ. հյուրերին նա սպասում էր միայն երեկոյան կողմը. դեռ բավականին ժամանակ կար:

Բնական անհոգությունը նիւշ բերեց, և խոսեն չդիմացավ. նա մեկնվեց խոտից գործված խսիրի վրա, և արթնացավ միայն այն դրամատիկական պահին, երբ նրա գլխի վերևը ինչ-որ բան երկու անգամ դողդաց:

Ավա՛ղ, այդ երկինքը չէր գայրացել, այլ բարի «դոն Ֆրանսիսկոն», որը վերադարձել էր իր ընկերների և օգնականների հետ՝ ընթերլու: Սև խոսեն վեր թռավ ինչպես եղնիկը և մի ակնթարթում վառեց իր նոր վառարանը, որին այդպիսի վերաբերմունքը բոլորովին դուր չեկավ՝ ներսում այնպիսի մի ծուխ գցեց, որ տանտերերը ստիպված եղան փրկություն փնտրել խրճիթից դուրս: Ընդ որում, մի ժամ էլ չէր անցել, որ խոսեն սեղանին դրեց իր խոհարարական արվեստի արդյունքը՝ կոնճների մեջ լցրած եգիպտացորենի շիլան. բայց գովասանքի չարժանացավ: Զմահաճ եվրոպացիները երես էին ամել դոն Ֆերնանդոյի կերակուրներից:

Բայց հնդիկները մեծ ախորժակով կերան, իսկ հետո, ինչպես նախորդ օրը, նստեցին խարույկի շուրջը, որը տնից հեռու էր մի կրակոցի հեռավորությամբ:

Այսօր բոլորն էլ խղճով էին աշխատում. հնդիկները բարձրացել էին բարձր ծառերը և կատարներից ցած էին թափում օրխիդեաների թփերը: Ենիկը ու Վացլավը արագորեն հավաքում էին դրանք ու տանում Ֆրանտիշեկին: Նա ուշադիր նայում էր և տեսակավորում. մի քանիսը շարտում էր, ընտրածը զգուշությամբ դարսում էր գործված կողովի մեջ: Ճիշտ է, այսօր չհաջողվեց գտնել ինչ-որ հետաքրքիր մի բան, բայց միտոր Հաուն կարող էր գոհ լինել՝ Լոնդոնում խոշոր, մանուշակագույն կետլեյների մեծ պահանջ կար:

Դժվարությունը այժմ նրանում էր, որ հնդիկներին շահագրգռեին աշխատանքի նկատմամբ, և սովորեցնեին ճանաչելու օրխիդեայի հազվագյուտ տեսակները, որոնք հաճախ ունենում են ճանճի մեծությամբ փոքրիկ ծաղիկ, իսկ երբեմն էլ ոչ մեծ չեխական չմուշկածաղկից կամ չելոնկից /Չեխիայում այդպես են անվանում կսպույտ ծաղիկները, որոնք նման են «չմշկածաղիկներին»/: Այդ բույսերը, ինչպես Եվրոպայի միջին շրջաններում հանդիպող գիշերային մանուշակները՝ կկուփ արցունքները պատկանում են օրխիդեաների ընտանիքին, այսինքն նույն այն ընտանիքին, որին պատկանում են արևադարձային անտառներում հանդիպող բազմազան օրխիդեաները (բայց Եվրոպայի օրխիդեաները արևադարձայիններին զիջում են բազմազանությամբ և գույների վառությամբ): Այդ ընտանիքում հաշվվում էր բույսի քսան հազար տեսակ: Օրխիդեային բույսերը երկարակյաց են, վերերկրյա կամ սապրոֆիտային (նրանք ապրում են ծառերի վրա և սնվում են ի հաշիվ նրանց մեռնող, փտող մասերի):/: Եթե անհամբեր Ֆրանտիշեկը կարողանար օդապարիկով կամ որևէ այլ ձևով բարձրանալ ծառերի գագաթները ապա կընտրեր օրխիդեայի թագավորությունից ամենաընտիրները: Բայց, ավա՛ղ, Ֆրանտիշեկը ոչ թռչել էր կարող, ոչ էլ մեծ բարձրություններ մագլցել. մնում էր բավարարվել նրանով, ինչ գետին կգցեին անտառքեր հնդիկները: Սկզբում նրանք չէին հասկանում, թե սպիտակները ինչ են ուզում իրենցից: Հնդիկները բավական անզգույշ էին ծառի ճյուղերից պոկում պալարները և օրխիդեայի թփերը հաճախ ընկնում էին գետնին մեծ վնասվածքով, կամ նույնիսկ մասերի բաժանված /Տրոպիկական օրխիդեաները արագ բազմանում են պալարների և արմատակալների, ինչպես և տերևակոթերի բաժանման միջոցով: Դրա համար էլ հատկապես կարևոր է արշավախմբի հավաքած օրխիդեայի պալարները և թփերը անվնաս ջերմոց հասցնելը:/:

Այդ պատճառով էլ Ենիկը որոշեց ինչքան հնարավոր է շուտ սովորել ծառ բարձրանալը: Նա բոլոր բույսերը կբերի ամբողջությամբ և անվնաս: Այսօր նա արդեն փորձեց բարձրանալ ծառերի գագաթը, բայց քեռին բղավեց նրա վրա:

— Իջնելո՞ւ ես ցած, վերջապես, թե՞ ոչ: Կպատռես անդրավարտիքդ, կընկնես և ինչ ասես չի լինի, կկոտորես պարանոցդ, այս րոպեիս ցած իջիր:

Ենիկը չհամարձակվեց չլսել և զբաղվեց թիթեռներ ու բզեզներ բռնելով:

Երևի, ոչ մի տեղ այդպիսի գեղեցիկ, գույնզգույն բզեզներ չկան, ինչպես Մեքսիկայում: Այդ պատճառով էլ զբաղվումսքը, որին տղան նվիրվեց ձանձրույթից, շատ շուտով գրավեց նրան: Բայց երբ Ենիկը ուզում էր քեռու մոտ պարծենալ իր համեստ գյուտով, նա վրդովված ձեռքը թափ տվեց:

— Այդ բոլորը ստիպված ենք դեն շարտելու:

— Բայց, քեռի, ես ցանկանում էի միջատների, թիթեռների և բզեզների հավաքածու կազմել: Գիտե՞ս, ինչպես կգարմանան մեր երեխաները, երբ...

— Իզուր բան է,— տղային ընդհատեց Ֆրանտիշեկը:— Եթե այդ հավաքածուն չփչանա ճանապարհին, ապա կամ ցեցը, կամ որևէ այլ գարշելի մի բան անպայման կոչնչացնի. դա արդեն պարտադիր է: Ես էլ փորձեցի միջատներ հավաքել, երբ առաջին անգամ էի ճանապարհորդում, և բոլորն իզուր անցավ. ով ցանկանում է արևադարձային երկրից այդպիսի մի հավաքածու տանել, պետք է լավ նախապատրաստվի: Մի անգամ հանդիպեցի մի գերմանացի պրոֆեսորի, որը իր հետ մի ամբողջ դեղատուն ուներ: Տեսնեիր, թե ի՞նչ տարբեր տեսակի հեղուկներ, փոշիներ, թույն, արկղիկներ, սրվակներ, պարկեր ուներ: Իսկ պրոֆեսորը դեռ բողոքում էր շատ փոքր աչքի համար համարյա աննկատելի արարածների պատճառած վնասներից, որոնք կարծես իրենց ապրելու իմաստը դարձրել են հատկապես գիտնականների հավաքածուներ խժռելը:

Ենիկը շատ տխուր լսում էր քեռուն: Շուրջը թռչում էին մեծ, գեղեցիկ թիթեռներ: Մեկնիր ձեռքդ և քոնն են: Իսկ քեռին ցրեց նրա վարդագույն երազանքները: Ենիկն արդեն պատկերացնում էր, թե ինչպես կուրախանա Թերեզիկը, երբ տեսնի փայլուն, ծիածանագույն միջատները: Նա, օրինակ, կարող էր դրանցով գույնզգույն նկար պատրաստել: Եվ այդ բոլորը հիմա չի լինի: Փոքրիկ բզեզները, որոնց անվանում են «սրիչներ» միևնույն է, բոլորին կոչնչացնեն:

Ցավոք սրտի, Յուկատանում, բացի գեղեցիկ թիթեռներից, շրջում են նաև հսկա մրջյուններ և սարսափելի ավազավներ:

Այդ լվերը թափանցում են կոշիկի միջով և ամուր կպչում մատների մաշկին, մտնում եղունգների տակ և առաջ բերում դժոխային քոր, որը չի անցնում այնքան ժամանակ, մինչև մարդը չի կտրում եղունգը կամ ասեղով չի հանում դրանց:

Ֆրանտիշեկը այս բոլորը հաշվի էր առել դեռ Լոնդոնում և իր ու Վացլավի համար երկուտակ կաշվից կարված հատուկ կոշիկներ էր պատվիրել, որոնց մեջ դրված էին այլումիևնի թիթեղիկներ. այդպիսի կոշիկներից ավազավները չեն կարողներս մտնել: Ենիկի համար նա այն ժամանակ չէր կարող հոգալ և հիմա տղայի ոտքերին հասարակ կոշիկներ էին, որին ամրացված էր մի կերպ հարմարեցված կաշվե ներբաններ:

Վերադարձին որսորդները հետևում էին, թե ինչպես է աքիսը նապաստակ որսում:

Բայց ավելի տհաճ էր հանդիպումը բոժոժավոր օձի հետ: Ճիշտ է, նա անմիջապես քաշվեց իր տեղը, բայց այն միտքը, որ վտանգը ինչ-որ տեղ է ճամբարի կողքին, հանգիստ չէր տալիս Ֆրանտիշեկին և Վացլավին: Երկուսն էլ հիմնականում վախենում էին Ենիկի համար, չնայած ո՛չ նա, ո՛չ էլ մյուսը բառ անգամ չթռցրին իրենց երկյուղի մասին:

Գլուխ յոթերորդ
ՇՆԵՐԸ

Արշավախմբի գլխավոր զբաղմունքը օրիսիդեայի համար ամեն օր անտառ գնալն էր: Բայց ժամանակ առ ժամանակ ստիպված էին որսորդությամբ զբաղվել, որպեսզի ուտելիքը համեմատաբար բազմազան լիներ:

Ի միջի այլոց, հնդիկները, որ սովոր էին զրկանքներով լի կյանքի, կարողանում էին յուրա գնալ առանց մսի: Նրանք բավարարվում էին եգիպտացորենի շիլայով ու «ֆրիխուլետով»: Նրանք ռանչոյից բավական պաշար էին վերցրել, մեծ ախորժակով ուտում էին նաև ընծյուղներ, որոնք կտրտում էին թավուտներում: Երբեմն նրանց հանդիպում էին նույնիսկ վաղահաս պտուղներ: Արևադարձային երկրներում մրգերը հասունանում են ամբողջ տարվա ընթացքում, բայց բերքահավաքի ժամանակ դրանք, ընդհանրապես, շատ են լինում: Կոկոններ, ծաղիկներ, մրգեր՝ հասունացած և հասունացող, հաճախ կարելի է տեսնել միևնույն թփի կամ ծառի վրա և դրանում ոչ մի անսովոր բան չկա: Մեր բարեկամները միրգը հաճույքով էին ուտում, բայց և այնպես առանց մսի դժվար էր: Յուկատանի գետակներում ու վտակներում ծուկ քիչ կար, իսկ հովտի առվակում բոլորովին չկար: Ստիպված էին կամ որս անել, կամ թակարդով վայրի թռչուններ բռնել: Հնդիկները կարող էին մասնակցել որսին, բայց նրանք իրենց հետ ո՛չ աղեղ, ո՛չ նետ էին վերցրել, Ֆրանտիշեկն էլ, որ փորձից գիտեր, թե ինչքան դժվար է ծառ մագլցելը, չէր ուզում ծանրաբեռնել նրանց ավելորդ աշխատանքով:

Նա, քանի գնում, ավելի շատ էր զգում շների անհրաժեշտությունը: Յուկատանի այս նենգ, վտանգներով լի անտառներում առանց շների որսի գնալը անմտություն է. շունը ոչ միայն հետապնդում է գազաններին, այլև նախազգուշացնում է սպառնացող վտանգի մասին: Դրա համար էլ շատ հեշտ էր պատկերացնել երեք բարեկամների ուրախությունը, երբ ընթրիքի համար խրճիթ վերադառնալիս, դեռ հեռվից շան հաչոց լսեցին: Եվրոպացիներին դա դրախտային երաժշտություն թվաց:

— Արա՛գ, հովիվը կարծես իր խոստումը կատարել է,— բղավեց Ենիկը:

— Բայց նա շատ չի շտապել,— փնթփնթաց Վացլավը,— հետաքրքիր է իմանալ ի՞նչ է բերել:

Խրճիթի աստիճանների վրա նստել էր հովիվը՝ ձեռքին բռնած երկու հիանալի շների վզափոկերը: Շները վաղուց զգացել էին անծանոթ մարդկանց մոտենալը և այնպես էին քաշում շնակապը, որ հովիվը հագիվհագ էր պահում նրանց:

Ֆրանտիշեկը բարևեց հյուրերին և անմիջապես սկսեց գննել կենդանիներին: Շներից մեկը նիհար էր, վայելչակազմ, կարճ, բաց գույնի բրդով, երկար դնչով, կամ «աքցանով», ինչպես ասաց Ֆրանտիշեկը: Միայն ականջի ծայրերը և մեջքի երկայնությամբ ձգված շերտերը մի քիչ մուգ էին: Հենց դա էլ խոստացած որսորդական շունն էր, իսկ մյուս շունը, որ ուժեղ էր, երկար դարչնագույն բրդով,

փոքր ցից ականջներով և լայն կրծքով, երևի նախատեսված էր պահակություն անելու:

Հնդիկները մոտենալով ճամբարին, դեռ հեռվից շրջանցեցին շներին: Նրանք չթաքցրեցին իրենց դժգոհությունը, բայց դրան ոչ մեկը նշանակություն չտվեց: Հովիվը ներողություն խնդրեց ուշանալու համար. շների համար նա ստիպված է եղել մի հեռավոր ռանչո գնալ: Շփելով կենդանիների մեջքը, նա անընդհատ գովաբանում էր իր ապրանքը: Նրա խոսքերից երևում էր, որ որսորդական շունը շատ արժեքավոր է, նա ծագեր կծնի: Դա հավատարիմ և հուսալի ընկեր է, իսկ որսի ժամանակ ուղղակի հրաշքներ է գործում: Երկրորդ շան նման ուժեղը շրջակայքում չկա: Նա տիրոջը կպաշտպանի հրագենից էլ լավ:

Ենկեր շտապում էր ընկերանալ նոր ծանոթների հետ, բայց ահեղ ու խուլ գոմոցը և սպիտակ ժանիքների կափկափայլունը ստիպում էին նահանջել:

— Չար շուն է,— ասաց խոսեն, ցույց տալով պահապան շանը,— ուզում էր պատառոտել նեգրին, երբ նա կերակուր էր բերում:

— Նա կծում է, ինչպես ամեն մի շուն,— համաձայնեց հովիվը,— իսկ հարձակվում է միայն գողերի և սրիկաների վրա. դրանց իսկույն զգում է:

— Խոսեն ո՛չ գող է, ո՛չ էլ սրիկա,— առարկեց խոսեն:

— Այդ դեպքում նա ոչինչ չունի վախենալու,— նրա խոսքը կտրեց հովիվը:

Ֆրանտիշեկը ամենից շատ ուզում էր իմանալ շների տարիքը, և նա աննկատելիորեն փոխեց խոսակցության թեման:

— Ընտանի կենդանիների բնավորությունը կախված է դրանց դաստիարակող մարդուց: Ամենակատաղի կենդանին, եթե փոքրուց վերցնեն, հպատակվում է՝ փաղաքշանքի և արդար վերաբերմունքի շնորհիվ: Այո՛, այո՛, մի՛ ծիծաղեք, հատկապես արդար վերաբերմունքի: Կենդանիներին դժվար է խաբել: Փորձեք խաբել նրանց կամ վիրավորել, նրանք անմիջապես կկատաղեն: Եվ հակառակը՝ փաղաքշանքի համար նրանք միշտ երախտապարտ են լինում: Հետո, նրանք ունեն ինչ-որ հատուկ զգացում՝ վատ և լավ մարդկանց ճանաչելու...

Պատմությունը հետաքրքրեց բոլորին, չնայած, գուցե, ոչ բոլորն էին հավատում Ֆրանտիշեկին:

— Իհարկե, անպետք կենդանու հետ ինչ կարող ես անել: Բավական է, որ մի անգամ շունը կամ ձին մարդու նկատմամբ կորցնեն վստահությունը, նրանք անգամ տարիներ հետո վրեժ կլուծեն մարդկանցից, երբեմն նույնիսկ բոլորովին անմեղներից:— Ֆրանտիշեկը որոշ ժամանակ լռելուց հետո ավելացրեց:— Ա՛յ, իսկ որոշ մարդկանց շատ է հաջողվում: Կենդանիներն կարծես կարդում են մարդկանց աչքերում կամ ձայնից գուշակում, թե ովքեր են սիրալիր ու բարի: Դրանցից իսկապես պետք չէ վախենալ:— Նա նայեց ճամբարի երկու նոր բնակիչներին, և բացատրելով նրանց անհանգստությանը, ասաց.— Այսօր նրանք զայրացած են օտարների ներկայությունից, ճանապարհի հոգնածությունից: Թող հանգստանան և հանդարտվեն:

Հովիվը շատ շնորհակալ եղավ Ֆրանտիշեկի առատ վարձատրությունից: Նա գոհ էր և սիրով խոստացավ դոն Ֆերնանդոյին հասցնել այն նամակները, որոնք Ֆրանտիշեկը պատրաստվում էր հանձնելու վաղ առավոտյան:

Ընթերցելուց հետո եվրոպացիները գնացին խրճիթ և սկսեցին նամակ գրել:

Ֆրանսիշէկը գրեց երեք նամակ. մեկը՝ Լոնդոն, միստր Հաուլին, մյուսը՝ Բելիզէյ, բանկային վարչությանը, երրորդը՝ Չեխոսլովակիա, իր ծեր ծնողներին, իսկ նրա ընկերները մեկն էլ չհասցրեցին գրել:

Ենիկի գործը բոլորովին գլուխ չէր գալիս: Նա երկար ժամանակ կրծոտում էր գրիչը: Բայց «Իմ թանկագին ծնողներ և սիրելի Թերեզիկ, ես ձեզ հազար անգամ գրկում եմ ու համբուրում» շատ բան խոստացող սկզբից այն կողմ գործը առաջ էր գնում:

Ֆրանսիշէկը սկզբում ծիծաղում էր նրանց վրա, իսկ հետո թեթևակի հանդիմանեց:

— Մի՞թե դու չգիտես, որ նամակը հենց նույն խոսակցությունն է, միայն կարճ: Սկիզբը քեզ մոտ լավ է: Բայց պատկերացրու, վերադարձել ես տուն և սկսել ես խոսել, հավատացնել ծնողներին, որ դու նրանց սիրում ես և հազար անգամ համբուրում... Հը, Ենիկ, այդպես չէ՞: Տանը ամեն րոպե անհանգստանում եմ քո առողջության համար, անհամբեր սպասում եմ մի լուրի, իսկ դու ուզում ես ազատվել դատարկ խոսքերով:

— Իսկ եթե չգիտեմ ինչպես սկսել,— բողոքեց Ենիկը:

— Այդ դեպքում ասա, էլ ինչո՞ւ ես գրում: Երևի հարազատներիդ բացատրելու համար այն, ինչ նրանք չգիտեն: Դե՛, ինչ եմ ուզում իմանալ ձերոնք: Առո՞ղջ ես դու արդյոք, ինչպե՞ս ես ապրում, ովքե՞ր են քեզ շրջապատում, ինչպիսի՞ մարդիկ են քեզ հետ, ինչպիսի՞ կյանք ես վարում: Նրանք վախենում են քեզ համար, ուրեմն նրանց անտեղի մի հուզիր, մի՛ վախեցնի, բայց և մի՛ մտածի խաբել: Ազնիվ մարդը երբեք չի խաբում: Հիշիր մեկընդմիջտ, ստի ոտքերը կարճ են, և ճշմարտությունը ուշ թե շուտ կնկատվի: Բացի այդ, պետք է խնայել ժամանակը, դրա համար էլ շատախոս մի՛ եղիր: Դե, դու հիմա մոտավորապես գիտես, ինչ գրել և ինչպես գրել, իսկ ես գնամ մի քիչ շրջեմ:

Ֆրանսիշէկը հեռացավ. նա չէր ուզում թելադրել փոքրիկին: Նամակում մարդը միշտ լինում է ինքն իր հետ, գրված յուրաքանչյուր տողը արտահայտում է նրա առանձնահատկությունները, բնավորությունն ու խելքը: Դրա համար էլ յուրաքանչյուրը պետք է ինքը նամակ գրի, թեկուզ անհարթ, բայց ինքը:

Ենիկը համարձակորեն գործի անցավ: Նա պատռեց ու մի կողմ նետեց գրածը և նորից սկսեց:

«Թանկագին հայրիկ և մայրիկ: Սիրելի իմ Թերեզա: Ես առողջ եմ, ինձ լավ եմ զգում: Ահա արդեն մի շաբաթ է, ինչ ապրում եմ իմ բարեկամների՝ Վացլավի և քեռի Ֆրանսիշէկի հետ՝ անտառի խրճիթում, որը գտնվում է անանցանելի անտառի եզրին, հենց Մեքսիկական Յուկատանի և Գվատեմալայի սահմանի մոտ: Եթե դուք մատիտով գիծ քաշեք Սան Ֆիլիպ քաղաքից դեպի հարավ՝ ուղիղ մինչև սահմանը, ապա մոտավորապես կգտնեք այն տեղը, որտեղ ես եմ հիմա: Մեզ հետ ապրում է նեգր Խոսեն, նա ճաշ է եփում և պահպանում է ճամբարը. մեզ հետ են նաև երեք հնդիկներ:

Նրանք ծառերի կատարներից ցած են գցում օրիսիդեաները: Ես օգնում եմ քեռուն և Վացլավին, բայց առայժմ նրանց շատ քիչ եմ օգնում: Ես բոլորից գոհ եմ, բայց հաճախ եմ հիշում ձեզ: Վացլավը նույնպես: Միջատների հավաքածուն, որը ես ուզում էի տուն բերել, երևի, երբեք ձեզ չի հաջողվի տեսնել: Ուզում էի հպարտանալ դրանով, երբ վերադառնայի, բայց իմ մտադրությունից ոչինչ դուրս չի գա: Այստեղ վիստում են այնպիսի փոքր բզեզներ, որ կարող են մի ակնթարթում

ոչնչացնել ամեն տեսակի հավաքածուներ: Ավելի լավ է դեն գցել, բայց ափսոս է: Երանի տեսնեիք, թե ինչպիսի գեղցիկ թիթեռներ կան:

Այսօր հովիվը կալվածատնից (այստեղի լեզվով՝ ռանչո) մեզ համար երկու շուն բերեց: Ես դեռ չգիտեմ լա՞վ են դրանք, թե՞ ոչ. երևի լավ են: Քեռի Ֆրանսիշեկը ասաց, որ կենդանիները միշտ լինում են այնպիսին, ինչպիսին ուզում են նրանց դարձնել մարդիկ. ամեն ինչ մարդուց է կախված:

Քեռի Ֆրանսիշեկը և եղբայր Վացլավը (գիտեք, մենք դեռ նավում պայմանավորվեցինք, որ նրանց այդպես պետք է անվանեմ) ոչ մի բանից չեն վախենում, ես նույնպես ոչնչից չեմ վախենում: Այստեղ ոչինչ չկա, որ նման լինի հնդիկների մասին գրածներին: Հնդիկները դժբախտ մարդիկ են. տխուր, թերահավատ և խաբված: Ոչ մեկին նրանք վատություն չեն անում, շատ են աշխատում, իսկ հետո ամբողջ գիշերը լուռ նստում են խարույկի շուրջը:

Քեռի Ֆրանսիշեկը ասաց, որ գնալու ենք արևմուտք, մինչև Հոնոլուրաս, իսկ հետո՝ Կոստա-Ռիկա: Ես անհամբեր սպասում եմ այդ ճանապարհորդությանը և մեկ էլ տուն վերադառնալուն: Հուսով եմ, դուք արդեն կդադարեք ինձ վրա բարկանալուց: Ես ցանկանում եմ դառնալ ծաղկաբույծ, ինչպես քեռի Դոլեժալը, և դրա համար էլ պետք է տեսնեմ տարբեր երկրներ, որտեղ աճում են հազվագյուտ բույսեր: Եթե ճանապարհին հանդիպեմ գեղեցիկ որևէ բանի, անպայման կբերեմ ձեզ համար, միայն թե խնդրում եմ, մի՛ գայրացեք ինձ վրա և մի՛ թախծեք: Համբուրում եմ ձեր ձեռքը, իսկ Թերեզիկին հղում եմ շատ-շատ համբույրներ: Ես շատ եմ սիրում նրան և ձեզ բոլորիդ նույնպես, իսկ ջերմոցի Դիկին հաղորդեք ջերմ բարևներս: Թող նա գա մեզ մոտ, այս տեղերը նրան շատ դուր կգան:

Ձեր հավատարիմ որդի և եղբայր
Յան Սատրապա, Կամպեչի նահանգ
1890 թ. հունիս»:

Գրելով վերջին տողերը, Ենիկը վազեց Ֆրանսիշեկին գտնելու:

— Ա՛յ, սա արդեն լավ է,— նա հավանություն տվեց տղայի առաջին մեծ ստեղծագործությանը:— Ինչ ճիշտ է, ճիշտ է, ամեն ինչ լավ ես նկարագրել: Միայն ինձ թվում է, թե դու քիչ ես զոջում, որ փախել ես տանից, և ներում ես խնդրում միայն պատշաճության համար: Ա՛յ, դու գրում ես, թե սիրում ես քո բոլոր հարազատներին: Բայց հետագայում պետք է ապացուցես այդ մի այլ ձևով, առանց տխրեցնելու նրանց:

Ենիկը նայեց քեռուն և սա նույնիսկ աղջամուղջով ծածկված անտառում նկատեց տղայի աչքերի արցունքը:

— Է՛, դա ինչ բան է, ես չեի ուզում որևէ վիրավորական բան ասել:— Ֆրանսիշեկը սիրալիր շոյեց Ենիկի գլուխը,— եղածը ետ չես վերադարձնի, իսկ քո հասակում հաճախ են առանց մտածելու բան անում: Բայց ես հավատում եմ, տղա՛ս, որ քեզանից իսկական մարդ կստացվի:

Հետևյալ օրը առավոտյան Ֆրանսիշեկը գնաց շներին կերակրելու: Երևի նա հենց այն մարդկանցից էր, ում կենդանիները բնագոյաբար սիրում են: Շները հենց որ նրան տեսան, սկսեցին սիրալիր շարժել պոչերը, իսկ որսորդական շունը ուրախ պտտվեց տեղում, ինչքան թույլ կտար կապը. նա հավանաբար խնդրում էր ազատություն և մի փոքր մարդկային փաղաքշանք: Ֆրանսիշեկը շոյեց նրա գլուխը և արձակեց կապը: Շունը մի կողմ նետվեց, և պոչը տնկելով, մի ակնթարթում շրջեց ամբողջ ճամբարը: Ուշադիր հոտոտելով ամեն ինչ, նա

վերադարձավ Ֆրանսիշեկի մոտ: Ֆրանսիշեկը նորից շոյեց շանը և կանչեց իր հետևից: Շունը թեթևորեն թռավ աստիճաններով, և երբ ետևից լեզուն շխկացնելով կանչեց նրան, վստահորեն մոտ վազեց, պոչը թափահարելով հոտոտեց ոտքերը, չղաղարելով միաժամանակ քսվել Ֆրանսիշեկին:

— Ահա քո տերը,— ասաց Ֆրանսիշեկը, շեշտելով, «տեր» տառը և ցույց տալով տղային:— Սիրիր նրան, նա էլ քեզ կսիրի...

— Ճիշտ է, ետևից:

— Բեռնի... չե՞ս կատակում,— շփոթված ասաց նա,— դու կարծում ես նա ինձ կլսի՞... Իսկ անունը... կարելի՞ է ես գտնեմ:

— Իհարկե: Հետաքրքիր է, թե դու նրան ի՞նչ կանվանես:

— Ես դեռ գիշերն եմ մտածել, որ շներից մեկին լավ կլինի Լգոտկա անվանել... Լավ է, հը՞, եթե այս հրաշալի շունը մեզ հիշեցնի չեխական գյուղը:

— Հիանալի է, ծիծաղեց քեռին, — Լգոտկա, Լգոտկա, դու գո՞հ ես:

Շունը իր խելոք հայացքը դարձնում էր մեկ սրան, մեկ մյուսին, կարծես ցանկանում էր կռահել, թե ինչ են ասում այս մարդիկ, և հասկացավ, որ ոչ մի վատ բան չի պատահելու, եթե նրանք այդպես սիրալիր ժպտում են:

Ետևից գրկեց նրա պարանոցը և շունը առանց դիմադրելու, շնորհակալությամբ լիզեց նրա դեմքը:

Ա՛յ թե ուրախացան ու հրճվեցին: Վացլավը հիացմունքով հաստատեց, որ կյանքում սրանից խելոք շուն չի տեսել: Դրանից հետո չորսն էլ միասին ուղղվեցին դեպի պահապան շունը, որ նախանձից բարձր գոմռում էր և գոհ չէր այն բանից, որ իր ընկերուհին արդեն ազատության մեջ է, իսկ ինքը դեռ կապված է: Նկատելով մոտեցող մարդկանց, նա անմիջապես զգաց, որ արդեն իր հերթն է: Ուրախությունից սկսեց թռչկոտել, հաչել, ոռնալ և նույնիսկ սկսեց փորսող տալ:

— Դուք հիմա կհամոզվեք, թե ինչ է նշանակում օրինակը: Այդ անգուսպ շունը անմիջապես հանդարտվեց, հենց որ տեսավ, թե Լգոտկան իր ուշիմությամբ և սիրալիրությամբ արժանացել է մեր բարեհաճությանը: Հը, Վացլավ, ի՞նչ ես կարծում, նա կլսի՞ քեզ:

— Ֆրանսիշեկ, մի՞թե դու ուզում ես պահապան շունը ինձ տալ,— բացականչեց Վացլավը,— բա դո՞ւ:

— Ես արդեն փոքր չեմ, որ խաղամ շների հետ,— կատակեց Ֆրանսիշեկը:— Գնա նրա մոտ, գնա հանգիստ, մի՛ վախեցիր: Ա՛յ, կտեսնես, ինչպես նա քեզ կենթարկվի:

Վացլավը մոտեցավ: Շունը անհամբերությունից դողում էր, բայց նրա կտրուկ շարժումներում թշնամանք չկար: Ազատություն ստանալով, նա առաջ նետվեց և ոգևորված հարձակվեց հնդիկների վրա:

— Պլուտոն, այստեղ արի, Պլուտոն, ետ արի,— բղավում էր Վացլավը վազելով նրա հետևից:

Եվ, ո՞վ հրաշք. շունը ենթարկվեց: Նա ենթարկվեց մարդու ձայնին, որի մեջ հրաման կար և թույլ տվեց, որ իրեն տանեն իր տեղը:

— Որտեղի՞ց գիտես, որ նրան Պլուտոն են անվանում,— հարցրեց զարմացած Ենիկը:

— Ուղղակի բերանից դուրս թռավ,— ծիծաղեց Վացլավը:— Մեր տանը մի Պլուտոն կար, ես այնպես վախեցա, որ շունը կհարձակվի հնդիկների վրա, և...

Բոլորը ծիծաղեցին:

Հենց այսօր սրանց կփորձենք որսի ժամանակ,— ասաց Ֆրանսիշեկը,— անհրաժեշտ է, որ շները արագ ընտելանան մեզ: Հնդիկներին էլ անհրաժեշտ է հանգստանալ:

Հնդիկները այդ հայտարարությունը ընդունեցին անտարբերությամբ, չնախատեսված հանգիստը նրանց բոլորովին չուրախացրեց: Որսին մասնակցելու ցանկություն էլ չհայտնեցին: Միայն խիտ շարքով նստեցին խարույկի շուրջը և խորասուզվեցին իրենց սովորական խոհերի մեջ:

Գլուխ ութերորդ
ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՋՈՒՆԳԼԻՈՒՄ

Ենիկը ուրախությունից նույնիսկ ճչաց: Նա սեփական զենք ունի, զենք, որը նրան տվել է ինքը՝ քեռի Ֆրանսիշեկը: Նա էլ է որսի գնալու և կյանքում առաջին անգամ քաշելու է ձգանը:

Երջանկությունից Ենիկի գլուխը պտտվեց: Չենք ունենալ և որս անել արևադարձային անտառներում մեծ երջանկություն է ամեն մի տղայի համար:

Ձեռքում սեղմելով երկփողանի հրացանը, Ենիկը մտածում էր, ևս մի քանի րոպե և ինքը նույնպիսի արկածների կհանդիպի ինչի մասին մինչ այդ միայն կարդացել էր Կուպերի և ուրիշ արկածային վեպերում: Ընդհանրապես, միայն այսօր է սկսվում այն իսկականը, որի մասին երազել էր ամբողջ երկու ամիս՝ դեռ այնտեղ, Անգլիայում, նախքան վերջնական փախուստի որոշում ընդունելը:

Վացլավ Վեվերկան էլ անհամբերությամբ սպասում էր որսի գնալուն: Նա, ճիշտ է, Ենիկից մեծ էր. արդեն լրացել էր նրա 20 տարին, բայց դա բոլորովին չէր խանգարում, որ երեխայի պես ուրախանա առաջիկա գվարժությամբ: Ֆրանսիշեկը գտնում էր, որ Վացլավը այնքան էլ խելացի չէ տասներեք տարեկան Յան Սատրապայից:

Չինվելով երկփողանի հրացաններով և դանակներով, որսորդները մտան խորհրդավոր անտառ: Ֆրանսիշեկի խորհրդով Վացլավը և Ենիկը աջ փողը լցրեցին մանր կոտորակով, իսկ ձախը՝ համեմատաբար մեծ չափի կոտորակով՝ խոշոր գազանների համար:

Լգոտկան ավելի անհամբեր էր, քան Ենիկը: Ըստ երևույթին, հրացանը նրա համար նորություն չէր. շունը տեղում չէր կանգնում, պտտվում էր մարդկանց շուրջը, կարծես շտապեցնելով նրանց արագ շարժվելու: Որսորդները չէին հասցրել անտառ մտնել, երբ Լգոտկան, ձգելով պոչը, սրընթաց թռիչքով դեպի թփուտները նետվեց:

Իսկ Պլուտոնը ցույց տվեց, թե որքան հիմարն է: Նա բարձր թռչկոտում էր, թավալվում մարդկանց ոտքերի տակ, հաչում խռպոտ ձայնով, կարծես մրսած լիներ, և պարզապես չգիտեր ինչով զբաղվել. չէ՞ որ ինքը սովոր էր հովիվների

հետ միասին պահպանելու ոչխարների մեծ հոտը, և անտառում զգաց, որ ինքն իր գործին չէ:

Կես ժամ հետո նրա երկար լեզուն կախվել էր համարյա մինչև գետին, իսկ ինքը ծուլորեն քարշ էր գալիս իր նոր տիրոջ հետևից:

Այդ ժամանակ Լգոտկան հոտոտում էր և ստուգում ամեն մի թուփ: Նա վախեցրեց շատ թռչունների և սկյուռների, մինչև գլխի ընկավ, թե դա իսկական որս չէ և դրան որսալը պատվաբեր չէ որսորդական շան համար:

Ճանապարհորդները այդ օրը չէին մտածում օրիսիդեա հավաքել, բայց այնուամենայնիվ ստիպված էին աչք ածել շրջապատող բուսականությանը: Այլապես նրանք կարող էին ընկնել փոշոտ թփուտների, անանցանելի մացառուտների մեջ: Ոչ մի մարդ չի հանդգնի այնտեղ մտնել, եթե կաշվե կոստյում չունի. մյուս բոլոր տեսակի հագուստները անմիջապես պատառ-պատառ կլինեին:

Չունգլիով անցնելը հեշտ գործ չէ, մի քայլ գնալն անգամ տանջալից բան է: Խորապես սխալվում է նա, ով մտածում է, թե արևադարձային անտառներում որս անելը նման է մեր երկրներում որս անելուն: Չնայած Ֆրանսիշեկը ընտրել էր ամենից հարմար ուղին՝ առվակի հոսանքն ի վար, բայց այստեղ էլ մի քանի քայլ անելու համար որսորդները ստիպված էին թռչելու պատուտակների վրայով, կտրտել ճյուղերը կամ առաջ շարժվել սողալով: Երբեմն գնում էին մինչև ծնկները ջրի մեջ, խրվում կաչուն ճահճուտում: Առջևը պատի նման բարձրանում էին ջունգլիները, որոնք անմիջապես հայտնվում էին հետևում. ճանապարհը փակում էին նորանոր խոչընդոտներ: Այսպիսի տեղերում հեշտ չէ նկատել գազաններին, իսկ թե նկատես էլ՝ ապա շատ քիչ ժամանակ է մնում՝ կողմնորոշվելու և նշան բռնելու համար. որսը կերևա ու կթաքնվի թփուտում: Եթե դա թռչում է, դուք իզուր կփնտրեք ծառերի խիտ կատարներին:

Արևադարձային տեղերում կարելի է որս անել միայն բացատներում, մեկ էլ թփուտներում, որտեղ տեսադաշտը լայն է և շարժվելու տեղ կա:

Մեր բարեկամները երկու անգամ դադար առան, մինչև որ հասան մի այնպիսի սարալանջի, որտեղ ճամբար էին խփել: Միայն այժմ նրանց մոտ հույս արթնացավ, որ վերջապես բախտը կժպտա իրենց:

— Խորհուրդ եմ տալիս հեռու չգնաք,— ասաց Ֆրանսիշեկը:— Թող յուրաքանչյուրը զբաղեցնի այն տեղը, որ ցույց կտամ, և չհեռանա, մինչև չլսի իմ եղջրափողի ծայնը: Կհավաքվենք կաղնու մոտ, որտեղ Ենիկն է կանգնելու:

Վացլավը չափեց հարյուր քայլ դեպի աջ, իսկ Ֆրանսիշեկը, որպես գլխավոր որսորդ, թեքվեց ձախ:

Հինգ րոպե հետո նրա գնացած կողմից լսվեց կրակոց և ճիչ. «Բռնիր, Լգոտկա, բռնիր»: Այդ ճիչը ապացուցում էր, որ կրակոցը իզուր չանցավ: Դրանից հետո Ֆրանսիշեկը կրակեց երեք անգամ: Բայց կապույտ ծխի քուլաներից Ենիկը որոշեց, որ քեռին հասել է սարալանջի մեջտեղը:

Տղան այնպես անկնապիշ էր հետևում Ֆրանսիշեկի կրակոցից առաջացած ծխին, որ շուրջը ոչինչ չէր նկատում: Հանկարծ ինչ-որ բան խշշացրեց իր ոտքերի տակ, նա մինչև անգամ չհասցրեց գլխի ընկնել, երբ նրա մոտով մի նապաստակ սլացավ, ապա մյուսը, երրորդը: Նրանք անցան շատ մոտիկից և քիչ էր մնում ցած գցեին Ենիկին:

Իսկ նա շվարած նայում էր, թե ինչպես իրենց սպիտակ, փափուկ պոչերը ցցած, սլանում էին վախեցած երկարականջ կենդանիներ և նույնիսկ հրացանն էլ չհիշեց: Որոտաց Վացլավի երկփողանին ու Ենիկի ականջին մի գոռոց հասավ:

— Այստեղ եկեք, ինձ մոտ, ես ջայլամ եմ խփել, հիմա կթաքնվի թփուտների մեջ:

— Կանգնի՛ր, մի՛ շարժվիր,— սարալանջից լսվեց քեռու ձայնը:— Հիմա շների հետ կգամ:

Ենիկը աչքերը չորս արած նայում էր: Մի՞թե իրեն այդպես էլ ոչինչ չի հանդիպելու: Ճիշտ է, այստեղ նապաստակներ երևացին, բայց գլխապատառ սլացան, բոլորովին էլսպասեցին, որ կրակի:

Իսկ հովտում Ֆրանտիշեկի երկփողանին կատարում էր իր գործը և պարզ լսվում էր նրա «բռնիր» կանչը:

Ենիկը հանկարծ սրտնեղեց: Հասկանալի է: Քեռին իր համար ավելի լավ տեղ էր ընտրել, իսկ Ենիկին դիտմամբ կանգնեցրել էր այնպիսի մի տեղ, որպեսզի նա նույնիսկ կրակել չկարողանա: Ենիկը շնչահեղձ էր լինում, հագիվ էր լացը զսպում: Իր հետ վարվում են ինչպես փոքրիկի. ահա քեզ հրացան, զբաղվիր, փոքրիկ, խաղ արա:

Թը՛ռ... թը՛ռ... երեք... չորս... փասիանի նման հինգ թռչուն թռչում են ուղիղ դեպի Ենիկը: Նա արագ լցնում է հրացանը, կրակում է առանց նշան բռնելու. թրա՛խկ թրա՛խկ... բայց թռչունները թռչում են հեռու, և անվնաս թաքնվում են ծառերի խիտ ճյուղերում:

Հուզմունքից դողալով, Ենիկը գցում է դատարկ պարկուճները և նորից է լցնում հրացանը: Ահա ինչ-որ բան անցավ շատ մոտիկից, բայց չափազանց արագ, իսկ թիկունքում թռավ ինչ-որ մեծ բան, աքլորից էլ մեծ. հեքիաթային հսկա մի թռչուն: Բայց թռչունը թեքվեց դեպի աջ և աչքից կորավ: Լսվեց Վացլավի կրակոցը, շրջապատը ողողվեց շների հաչոցով:

Ենիկը շատ էր ուզում հեռանալ իր տեղից, բայց վախենում էր Ֆրանտիշեկի բարկությունից: Նրա անհանգստությունը ավելանում էր ամեն րոպե: Մերթ ընդ մերթ հենց նրա կողքից վեր էր սլանում որևէ թռչուն, բայց մինչ Ենիկը նշան կբռներ, թաքնվում էր թփուտներում, խոտերի մեջ, անտառի թավուտներում: Ենիկը հրահանը իջեցրեց և երդվեց անպայման կրակել, հենց որ մի բան շարժվի: Նա երկու անգամ կրակեց, բայց չհամարձակվեց ստուգել՝ հաջո՞ղ է, թե՞ ոչ:

— Ենիկ, զգույշ: Ես ու Վացլավը քեզ մոտ ենք գալիս, մի կրակիր,— սարալանջից ձայն տվեց քեռին, և այդ րոպեին մեկը մյուսի հետևից լսվեց երկու կրակոց:

Ենիկին ուրախացրեց ընկերների վերադարձը, բայց լսելով «չկրակես» բացականչությունը, նեղսրտած հրացանը ուսին գցեց և, խոժոռվելով, սկսեց ականջ դնել երկարաճիտ կոշիկների ձայնին, ճյուղերի ճռճոցին, ծանրաբեռնված որսորդների փնջոցին և առջևից վազող Լգոտկայի հևոցին:

Որսորդները վերադառնում էին ուրախ և հուզված: Ֆրանտիշեկը գալիս էր հրացանը բարձր պահած, Վացլավը, որսով ծանրաբեռնված: Ենիկը հետաքրքրությամբ և նախանձով նայում էր, թե նա ինչ է բերում: Վացլավը ծախ ձեռքով բռնել էր երկու նապաստակ, իսկ աջով՝ ջայլամը: Պարզվեց, որ «ջայլամը» վայրի հնդուհավ է: Ի միջի այլոց այնքան մեծ էր, որ Վացլավը կարող էր դրան ջայլամի տեղ ընդունել: Բոլորից զարմանալին այն էր, որ Վացլավ Վեվերկան, որ

ձեռքը հրացան էր վերցրել միայն տոնավաճառի հրաձգարանում, ընդհանրապես համարձակվում էր կրակել:

Վացլավը արդեն կանխավ պատկերացնում էր, թե Նա Ենիկին ինչպես կպատմի իրենց քաջության և որսորդական արվեստի մասին, բայց Ֆրանտիշեկը հանձնարարեց գնալ մնացած որսի հետևից, որոնք ջունգլիում չի կարելի թողնել առանց հսկողության. անմիջապես կանհետանան, կամ մրջյունները կուտեն, կամ ինչ-որ գիշատիչ կթռցնի:

Վացլավը շատ շուտ վերադարձավ, քարշ տալով մի Նապաստակ և ցախաքլորի նման երկու թռչուն:

Մոտենալով, Նա լսեց, թե Ենիկը ինչպես է բողոքում, որ իրեն շատ վատ տեղ է ընկել:

— Չի կարող պատահել, այստեղից անպայման որսն անցել է,— առարկեց Ֆրանտիշեկը,— միայն թե քո աչքը դեռևս սուր չէ, դու ժամանակին չես նկատում: Ինչ արած, ամեն բանում էլ փորձ է պետք: Հանգստացիր, կամաց-կամաց կսովորես: Իմ առաջին որսորդությունն էլ անհաջող էր վերջացել, դեռ ավելին, ես քիչ էր մնում իմ ոտքին խփեի:— Նա մեծ բավականությամբ Նայեց շուրջը:— Որսը այստեղ առատ է, մենք, ինչպես էլ լինի, մի անգամ էլ այստեղ կգանք:

Քնքուշ Լգոտկան վաղուց արդեն փաղաքշանքի էր սպասում: Նա քսվում էր Ենիկի կոշիկներին, կարծես հարցնում էր. գո՞հ է արդյոք, խփե՞լ է որևէ բան:

Այս երկու շները որքան տարբեր են: Պլուտոնը պառկել էր կաղնու տակ և ծանր շնչում էր, չնայած որսը բոլորովին չէր հոգնեցրել Նրան: Նրա աչքերը կարծես թե ասում էին. գբաղվելը լավ է, իսկ պառկելը՝ ավելի լավ:

Հանկարծ Լգոտկան վեր թռավ, հոտոտեց օդը և նետվեց թփուտները:

— Երևի ինչ-որ գազան է թաքնվել,— ասաց Ֆրանտիշեկը:— Ապա, Ենիկ, փորձիր բախտդ:

Ենիկը դժկամ ուսից իջեցրեց հրացանը և, իհարկե, նորից ուշացավ. դեռ չէր հասցրել նշան բռնել, երբ թփուտից դուրս թռավ այնպիսի մեծ ու հմայիչ մի թռչուն, որ Նրա շունչը կտրվեց: Թռչունի թևերը կանաչ էին, ինչպես զմրուխտ, փորը կրակի նման կարմրին էր տալիս, իսկ երկար պոչը քամուց փողփողում էր դրոշի նման: Բոլորի աչքերի առաջ այդ հեքիաթային զարմանքը սահուն ու անաղմուկ, ինչպես նկարագարոված օդապարիկ, վեր բարձրացավ: Թռչունը արդեն հասել էր ծառի գագաթին, երբ Ենիկը նշան բռնեց և ձգանք քաշեց:

— Գերազանց է, Ենիկ, չվրիպեցիր,— ուրախ բացականչեց Վացլավը և վազեց Լգոտկայի հետևից, որպեսզի շան բերանից ազատի թռչունին:

— Քո բախտը լավ բանեց,- Ենիկին սրտանց գովեց քեռին:— Դե, շնորհավորում եմ, որդիս: Մի քիչ էլ և ուշ կլիներ:

— Ենիկ, դու թանկարժեք մի թևավոր ես խփել: Կյանքումս այսպիսի գեղեցիկ թռչուն չէի տեսել:

— Հեռվից բղավում էր Վացլավը:

— Ինչ ճիշտ է, ճիշտ,— հաստատեց Ֆրանտիշեկը,— զմրուխտը արևադարձային անտառների ամենագեղեցիկ թռչունն է: Փայլուն, գունավոր փետուրներով այս

գեղեցկուհուն այստեղ անվանում են կետցալ, ի միջի այլոց, նա պատկերված է Գվատեմալայի գերբի վրա:

— Ենիջիկ, նրա հետ չի կարելի համեմատել ոչ թուրքերին, ոչ էլ մեծ փայտփորիկին. սա որտեղ, նրանք որտե՞ղ: Ոչ մի նմանություն: Սա գանձ է:

Ենիկը երկար ժամանակ կանգնել էր շշմած: Ֆրանսիշեկը զգուշությամբ վերցրեց հրացանը և ինչ-որ հատուկ մեղմությամբ ասաց.

— Ապա վազիր քո որսի հետևից:

Միայն հիմա տղան ուշքի եկավ: Նրա սիրտը ուրախությունից ուժեղ բաբախում էր: Նա նետվեց թփուտները, բայց Վաջլավը զմրուխտի հետ արդեն նրան ընդառաջ եկավ, հեռու հրելով Լգոտկային:

— Չմրուխտ, ահա թե սա ինչպիսին է: Ուղղակի հրաշք է: Իսկ կարելի՞ է սրանից խրտվիլակ պատրաստել: Ես կնվիրեմ մերոնց: Ա՛խ, քեռի, ինչպես կուրախանան հայրիկն ու մայրիկը: Իսկ թերեզիկը: Նա խրտվիլակը կոնի պահարանի վրա: Իսկ ինչպե՞ս կգարմանան մեր հյուրերը: Ա՛յ թե տղաները կնախանձեն:

Ենիկը երանությամբ շունչ առավ և հափշտակեց գեղեցկուհի թռչունը: Ոչ, նա ոչ մեկին չի վստահի: Եվ ճիշտ էր, այլևս չարժեք շարունակել որսորդությունը, նամուս պետք է ունենալ: Քեռին ժպտաց, օ՛, նրան ծանոթ է որսորդական մոլուցքը: Նա վաղուց արդեն նորելուկ չէ այս գործում, բայց հասկանում է տղային, կարծես ինքն էր առաջին անգամ որս խփել: Ի միջի այլոց, բոլորն էլ համաձայնեցին, որ ժամանակն է տուն գնալու:

Մնում էր միայն խրախուսել Լգոտկային. նրանք երեքն էլ սիրալիր թփթփացրին տղայի մեջքը: Ի՛նչ քսան պես: Հիմա Ֆրանսիշեկը նույնիսկ քսան դուկատով էլ չէր վաճառի: Լգոտկան կարծես հասկանալով նրա ապրումները սկսեց եռանդուն այս ու այն կողմ թռչկոտել:

Եվ երբ որսորդները անցան գետակի ծանծաղ տեղից, նա կամացուկ վնգստոցով զգուշացրեց, թե ինչ-որ տեղ, մոտակայքում որս կա: Ֆրանսիշեկը մոտեցավ շանը, և հետևելով նրա հայացքին, ցածր ափին տեսավ սև, թուփ քարի պես մի մսագունդ: Նա ուզում էր տեսնել, թե ինչ գազան է դա, բայց թուփ հսկան, զգալով վտանգը, խուլ մռնչաց և հանկարծակի անհետացավ:

— Հա՛, գետակինճ է: Ոչինչ, մենք նրան դեռ կհանդիպենք, երբ տապակա ուզենանք,— կատակեց քեռին և երախտագիտությամբ շոյեց Լգոտկային: Սա ուզում էր սլանալ գազանի հետևից, բայց Ֆրանսիշեկը ետ կանչեց:

Մայրամուտին փոքրիկ քարավանը վերադարձավ տուն:

Ճամբարում ամեն ինչ սովորական էր: Հնդիկները հանգստանում էին, ջորիները արածում էին, իսկ խոսեն ննջում էր: Ամենուր կարգուկանոն էր թագավորում, միայն ընթրիքը չկար: Խոսեն ոչինչ չէր պատրաստել, ասենք չէր էլ խախտել իր խոստումը: Այսօր նա իսկապես չէր քնել. աստված մի արասցե, հենց այնպես մի քիչ ննջել էր:

Հնդիկները պառկած էին, ջորիները արածում էին, իսկ խոսեն ննջում էր: Նկատելով ծանոթ խրճիթը, ծույլ Պյուտոնը սկսեց ուրախ հաչել և մի ակնթարթում վազեց մինչև սանդուղքները և պառկեց, սպասելով հյուրասիրության:

Ֆրանսիշեկը ձայն տվեց հնդիկներին. նրանք բոլորն էլ դեռ մանուկ հասակից հիանալի որսորդներ են, և խնդրեց գնահատել որսը: Նապաստակները տեսնելիս նրանք զգվանքից խոժոռվեցին, ոտքով մի կողմ գլորեցին ցախաքլորի նմանվող թռչուններին և միայն հնդուհավը նրանց մոտ արժանի ընդունելություն գտավ: Չմրուխտը սկզբից նրանք չնկատեցին: Ենիկը բերում էր շալակած: Բայց փայլուն փետուրները տեսնելուն պես նրանք, որպես հավանության նշան, շարժեցին գլուխները և չկարողացան թաքցնել իրենց հիացմունքը, հատկապես երբ իմացան, որ թռչունը խփել է որսորդներից ամենափոքրը: Այստեղ նրանք ավելի շատ աշխուժացան, ավելի եռանդով գլխով արին և սկսեցին ձեռքերով խփել ազդրերին, արտահայտելով իրենց հիացմունքն ու զարմանքը: Ինչ վերաբերում է նապաստակներին, ապա կարմրամորթներից մեկն ասաց, որ չարժի նրանց վրա լիցք փչացնել: Ամենից լավը թակարդով որսելն է. վերջում նրանք նորից հրեցին ճարպոտ թռչուններին, բացատրելով որ դրանք ուտելու բան չեն:

Միակ մարդը, որ ամեն ինչով ուրախանում էր, խոսեն էր: Նա ուրախ ճաճապցնում էր աչքերը, շաղակրատելով, որ հիմա հաճույքով փետրահան կանի հատկապես զմրուխտին, որովհետև զմրուխտը ամենահամեղն է, իզուր չէ, որ նա հագել է ամենագեղեցիկ շորը:

Ենիկը վրդովված բացատրեց խոհարարին, որ նա պետք է բավարարվի միայն նապաստակներով, իսկ զմրուխտը զարդարանքի համար է, ոչ թե ուտելու:

Ճիշտն ասած, նապաստակները պատրաստվեցին ոչ բոլորովին խոհարարական արվեստով, քանի որ խոսեն գիտեր պատրաստման միայն մի ձև: Նա կտրատեց քերթած նապաստակները, միսը աղաց, պղպեղ ցանեց, զգեց պղնձի մեջ, որտեղ նախօրոք ճարպ էր զցել և մի քիչ էլ ջուր ավելացրել. պղնձի տակը խոսեն մեծ կրակ վառեց և մեկ ժամից կարողացավ քաղցած որսորդներին հյուրասիրել սեփական ձևով պատրաստված հիասքանչ մսե շիլայով, որը սպիտակներին և հնդիկներին չափից շատ դուր եկավ: Ենիկը էլ մի բան ստացան: Պլուտոնը կատաղի կրծոտում էր ոսկորները և միաժամանակ այնպես էր գոմռում, որ կարծես իր նախաճաշին արժանացել էր, աստված գիտի, թե ինչպիսի դժվարությամբ: Փաղաքշանք սիրող Լգոտկան այդ օրը իսկապես որ շատ էր քաղցած: Հերթով իր դուռնը քսում էր քեֆ անողների ծնկներին, զգուշությամբ և ճարպկորեն վերցնելով ամենալավ ողորմությունը:

Ենիկը շատ հաճախ վագում էր զմրուխտի մոտ և չհանգստացավ մինչև ամեն ինչի վարպետ Ֆրանսիշեկը հանեց թռչունի մաշկը, մշակեց, որպեսզի պաշտպանի ցեցերից և կրծող միջատներից: Այդ նպատակի համար ամենից լավ է օգտագործել մկնդեղի օճառ, բայց եթե չկա, բավական է մաշկը ներսից շփել մկնդեղի փոշիով. քեռին այդպես էլ արեց:

— Ճիշտն ասած, խրտվիլակ լցնել չեմ կարողանում,— վշտացավ Ֆրանսիշեկը:— Մարդուն ամեն ինչ չի տված: Ավելի լավ է սա օրխիդեաների հետ ուղարկենք Անգլիա: Հուսով եմ, որ մաշկը չի փչանա ճանապարհին. մկնդեղ չեմ խնայել:

Թռչունի հետ վերջացնելով գործը, Ֆրանսիշեկը կրակի շուրջը նստածներին պատմեց, որ մեքսիկացիները հնում զմրուխտի փետուրներից պատրաստում էին գորելենի /Գորելեն — գեղարվեստական ճաշակով պատրաստված դեկորատիվ գործվածք:/ նման հատուկ գործվածքներ, նույնիսկ առաջնորդների թիկնոցները հյուսում էին այդպիսի փետուրներից:

Այդ օրը Ենիկը երջանիկ և գոհ քնեց: Նույնիսկ երագում նրա գլխավերևում պտտվում էր զմրուխտի երամ:

Ընթրիքից հետո հնդիկները, սովորության համաձայն, լուռ օրորվեցին, բայց հետո, նստած խարույկի շուրջը, դեռ երկար փսփսում էին:

— Ո՞վ է նա, այդ բարձրահասակ օտարերկրացին,— հարցնում էին մեկը մյուսին՝ հագիվ լսելի ձայնով, իրենց հատուկ շշնջոցով:— Նա ամեն ինչ գիտի և ձեռքից ամեն ինչ գալիս է: Երևի նա կախարդ է, բայց այն բարի կախարդներից, որոնք ոչ մեկին չարիք չեն պատճառում: Մնանք նրա մոտ, նա դեռ ոչ մեկին չի խաբել, և կարծես թե նրա մոտ ծառայելը դժվար չի լինի:

Այդպես աստիճանաբար ցրվում էր եվրոպացիների նկատմամբ եղած անվստահությունը:

Ենիկը այդ նկատեց: Իրեն ուղղված հնդիկների հայացքը դարձել էր ավելի սիրալիր և ջերմ:

Առավոտյան Ենիկը վազեց կարմրամորթների մոտ, ձեռքը մեկնեց նրանց և հնդիկների ձևով ողջունեց, որը նրան սովորեցրել էր ֆրանսիշեկը: Բրոնզե դեմքերը պայծառացան թույլ ժպիտից: Մի հնդիկ ինչ-որ բան պատասխանեց իրենց ձևով, իսկ մնացած բոլորը գլխով արեցին:

Այդ օրվանից Ենիկը ամեն օր իր մահճակալի վրա թարմ մրգեր էր գտնում, իսկ ով էր բերում, այդպես էլ երբեք չիմացավ: Ոչ մեկը հանձն չէր առնում. միայն խոսքից ժլատ հնդիկների աչքերում կարելի էր կարդալ պատասխանը:

Գլուխ իններորդ

ԽՈՒՄԲԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Ե ԱՐՇԱՎԵԼ ԴԵՊԻ ՀԱՐԱՎ

Օրիսիդես հավաքելը շարունակվում էր իր կարգով: Որսորդները քանի գնում, այնքան խորն էին թափանցում ջունգլիների սիրտը:

Հնդիկները սովորեցին տարբերել օրիսիդեսի նոր տեսակները, որոնց վրա առաջ ուշադրություն չէին դարձնում, իսկ այժմ պոկում էին մեծ զգուշությամբ: Խոսեն նույնպես թույլտվություն խնդրեց անտառ գնալու և, ամեն առավոտ, ծույլ Պյուտոնի ուղեկցությամբ, զամբյուղը ուսին, ճանապարհվում էր ջոկատի հետ. նա տուն էր վերադառնում, իհարկե, մենակ, քանի որ մինչև մյուսների գալը, պետք է ընթրիք պատրաստեր:

Շրջակայքը կարծես անվտանգ էր. ո՛չ հովազ, ո՛չ կատվառյուծ էին երևում. միայն օձերն էին երբեմն հիշեցնում իրենց մասին: Բայց աչալուրջ հետիոտնը հեշտությամբ կարող է խուսափել դրանց հանդիպելուց: Բավական է ճիպոտով թխկթխկացնես ոտքերիդ առաջ, որ օձը մի կողմ սողալ և հանդգնի անօգուտ հարձակման անցնել:

Խոսեն երբեք անտառից դատարկաձեռն չէր վերադառնում. հնդիկները միշտ իրենց հետ բերում էին կամ թակարդն ընկած նապաստակ, կամ հասած պտուղներ: Նրանք ամեն տեղ կարողանում էին գտնել հետքեր, աննկատելի արահետներ, որոնցով գազանները գնացել էին ջուր խմելու և այնպես խելացի ձևով էին թակարդ լարում, որ նույնիսկ ամենազգայուն կենդանիները չէին նկատում:

Սպիտակների և հնդիկների միջև աճող վստահությունը լավ հետևանքների էր հասցնում: Առանց վստահելի օգնականների ճանապարհորդները նախապատրաստական աշխատանքի վրա ահագին ժամանակ կկորցնեին, իսկ հիմա բոլորն օգնում էին իրար և ապրում հաշտ ու խաղաղ, ոչ մի բանի կարիք չէին զգում: Պակասում էր միայն զվարճությունները:

Բայց մի անգամ Ֆրանստիշեկը ծառաբնի մեջ մի կեռ խրեց, իսկ ճյուղին կապեց ծայրին օղակ սարքած մի երկար պարան: Նրան, ում հաջողվում էր ճարակորեն օղակը անցկացնել կեռին, արժանանում էր գովասանքի: Այդ խաղը շատ դուր եկավ հնդիկներին, և շատ շուտով նրանք սովորեցին համարյա առանց վրիպելու օղակը հագցնել կեռին:

Հետո Ֆրանստիշեկը ամուր պարանի ծայրին կախեց մի գնդակ, իսկ բարձր նստարանին կեգելի նման կոճղեր դրեց:

Խաղացողը պետք է գնդակն այնպես նետեր, որ մի հարվածով որքան հնարավոր է շատ կոճղեր ցած գցեր: Նորից ուրախություն, նորից զվարճանք: Բայց Վացլավին և Ենիկին ամենից շատ դուր էր գալիս թիրախին կրակելը: Հնդիկները պատրաստեցին աղեղներ, իհարկե, ժամանցի համար, և եվրոպացիներին գերազանցեցին դիպուկ խփելու մեջ:

Մի անգամ Վացլավը ճամպրուկում ինչ-որ բան փնտրելիս շրթնահարմոն գտավ և երեկոները նվագով զվարճացնում էր բոլորին:

Ճանապարհորդների մոտ, իհարկե, և գրքեր կային: Ֆրանստիշեկը հետևում էր, որ իր երիտասարդ ուղեկիցները չմոռանան իսպաներեն սովորելը:

Այնուամենայնիվ ստուգումից պարզվեց, որ նրանց սովորած իսպանական բարբառին չափից ավելի հնդկական բառեր են խառնվել, և դա հասկանալի է, որովհետև նրանք իսպաներեն խոսում էին հիմնականում հնդիկների հետ:

Բացօթյա կյանքի ութերորդ շաբաթն արդեն մոտենում էր ավարտին, երբ մի գեղեցիկ օր Ֆրանստիշեկը կարգադրեց ամեն ինչ նախապատրաստել դեպի հարավ կատարվելիք ճանապարհորդության համար: Դրանից անմիջապես հետո, երեկոյան անտառից գալով, ճանապարհորդները խրճիթում թանկագին մի հյուր տեսան, որը իրենցից քիչ առաջ էր եկել:

Դոն Ֆերնանդոն չէր մոռացել իր բարեկամներին և հովվի հետ միասին եկել էր ճամբար, իմանալու որևէ բան պետք չէ՞ նրանց: Միմյանց ողջունելուց հետո հյուրերը և տանտերը հարցերի տարափ տեղացին մեկը մյուսի վրա: Ճանապարհորդների մնացած պաշարից և դոն Ֆերնանդոյի առատաձեռն նվերներից ճոխ ընթրիք պատրաստվեց: Հովիվը իմանալով, որ երկու շներն էլ իրենց լավ են պահում, պայծառացավ:

— Մեզ մոտ բոլորն էլ ողջ-առողջ են և ձեզ սրտագին ողջույններ են հղում,— երևի արդեն հինգերորդ անգամ կրկնում էր դոն Ֆերնանդոն:— Մենք հաճախ ենք ձեր մասին մտածում, իսկ անձրևային եղանակներին սրտանց ցավում ենք. չէ՞ որ այս խրճիթը հարմար ու հուսալի ապաստարան չի կարող լինել:

Եվրոպացիները անմիջապես ցանկալի հյուրին հավատացրին, որ իրենք էլ երախտագիտությամբ են հիշում նրա ընտանիքը, իսկ Ենիկը խնդրեց ռանչերոյի դուստրերին բարևներ և բարի ցանկություններ հաղորդել: Ենիկը շատ էր ուզում որպես հիշատակ նրանց ինչ-որ գեղեցիկ մի բան նվիրել... Ճիշտ է նա զմրուխտ թռչուն ուներ, բայց արդեն խոստացել է հարազատներին: Ա՛յ, եթե նրան մեկ էլ բախտ վիճակվի որևէ հազվագյուտ թռչուն խփել, անպայման դա ռանչոյի բնակիչներին կուղարկի:

Հետևյալ օրը դոն Ֆերնանդոն գնաց նայելու որսորդներիբերածին, և անչափ զարմացավ ու հիասթափվեց, երբ ցույց տվեցին թառամած տերևներ և դեղնած պալարներ:

— Ախար դրանք մինչև նավ հասցնեք, կփտեն: Եվ արժե՞ր այդքան ուժ վատնել այդ խղճուկ, թոշնած բաների համար:

Ֆրանտիշեկը պատասխանի փոխարեն միայն ժպտաց:

— Սիրելիս, այս դեղին, խորշումած շիվերը շատ երկարակյաց են: Հեռավոր ճանապարհը չի փչացնի, այդ մասին ես արդեն կհոգամ: Իսկ Անգլիայում դրանց գերազանց խնամք է սպասում: Ջերմոցներում, որտեղ մշտական ջերմաստիճան է պահպանվում, կանոնավոր կջրեն, հողին կավելացնեն մանրած աղյուս ու մի քիչ էլ հումուս: Խոնավ օդը և տաքությունը կվերականգնեն բույսերի ուժը: Ա՛խ, եթե կարողանայիք տեսնել, թե դրանք ինչպես են փարթամանալու: Ենթադրում եմ, որ հունվարին կամ փետրվարին դրանց վրա նոր գեղեցիկ ծաղիկներ կերևան: Այդ րոպեին է անհամբեր սպասում միստր Հաուն, չէ՞ որ միայն այդ ժամանակ կարող է ստուգել, արդյոք մեզ հաջողվե՞լ է նոր կամ գոնե հազվագյուտ տեսակի օրխիդեա գտնել:

— Տարօրինակ է...— ձեռքերը տարածելով ասաց դոն Ֆերնանդոն,— ես հասկանում եմ, Եվրոպան աշխատում է բամբակ, ինդիգո, կարմիր փայտ, հազվագյուտ մետաղներ, համեմունքներ և այլ տեսակի օգտակար բաներ ստանալ: Բայց մարդիկ գան հասնեն այս ջունգլիները՝ ծաղիկների համար, դա բոլորովին անհասկանալի է:

— Այնուամենայնիվ, անգլիացիները, գերմանացիները, ֆրանսիացիները, իսկ վերջին ժամանակներս նաև հյուսիսային ամերիկացիները կազմակերպում են մեծ արշավախմբեր հատկապես ծաղիկների համար,— առարկեց Ֆրանտիշեկը:— Եվ այդ արշավախմբերին հաջողվում է շատ հետաքրքիր նմուշներ գտնել... Իհարկե Կենտրոնական Ամերիկայում, հատկապես Մեքսիկայում, դժվար է մի որևէ նոր բան գտնել, որովհետև մեր հայրենակիցները՝ Գենկեն և Նրանից ավելի բախտավոր Ռյոզլը, արդեն տեղական բույսերի շատ տեսակներ են հայտնաբերել...

Ենիկը լսում էր հմայվածի պես. նա հիշում էր, որ միստր Հաունի ջերմոցներում այս երկու ազգանունները գրված էին օրխիդեաների ծաղկամաններին ամրացված տախտակների վրա: Այո՛, Գենկե և Ռյոզլ, այս անունները այնտեղ հաճախ են արտասանվում, բայց Ենիկը երբեք չէր ենթադրում, որ օրխիդեայի շատ նոր տեսակներ գտնված են իրենց հայրենակիցների ձեռքով:

Բարեկամները մանրամասն քննարկեցին ջոկատի հետագա առաջխաղացման պլանները: Ֆրանտիշեկը հույս ուներ Պետենյան հովտում օրխիդեայի հազվագյուտ տեսակներ գտնել, որոնք խոնավություն և ցածրավայրեր են սիրում:

Բացի այդ, նա հաշվի էր առնում, Կոկսքոմբյան լեռան վրա, որի ամենաբարձր գագաթը ծովի մակերևույթից հասնում է 3700 մետրի, ճանապարհորդներին կհաջողվի լեռնային օրխիդեայի նոր տեսակներ գտնել:

Դոն Ֆերնանդոն ի պատասխան միայն տարուբերեց գլուխը: Նրա համար պարզ էր, որ սայլակով ճամփորդները չեն կարող անտառի թավուտով անցնել, դրա համար էլ առաջարկեց արկղները բեռնել ջորիներին և ավանակներին. այդ ժամանակ միայն բեռից ազատ տղամարդիկ կարող են հարթել ճանապարհը: Իհարկե, առաջ շարժվելը ավելի դանդաղ կլինի, մի քանի մետր առաջ գնալու համար ստիպված կլինեն կացնով և դանակներով բավական աշխատել: Այնուամենայնիվ, դա ավելի լավ է, քան սայլով միևնույն տեղում պտույտ գալը:

Հովիվը, բացի դրանից, խորհուրդ տվեց փորձված ուղեկից վարձել, որը կարող է ճամփորդներին տանել անհայտ արահետներով. նրա պարտքն է նախազգուշացնել, որ անտառում թաքնվում են թափառաշրջիկների խմբեր, որոնք հաճախ են դարան մտնում Պետեն լճի մոտ, իսկ երբեմն էլ թափանցում են նույնիսկ Գվատեմալայի հարավային մասը՝ դեպի Կորդիլերները:

— Ինձ մնում է միայն ձեզ համար հուսալի մարդ գտնել,— ավելացրեց հովիվը,— բայց դժվարությունը հենց դրա մեջ է: Ըստ որում, ավագակները շատ երկչոտ են և հարձակվում են այն դեպքում, երբ քանակական գերակշռությունը իրենց կողմն է: Իսկ ուժեղ հակառակորդի առաջ նրանք վախկոտ են գառնուկի նման:

— Բոլոր դեպքերում նրանցից պետք է զգուշանալ,— ավելացրեց դոն Ֆերնանդոն:— Նրանք, օրինակ, կարող են դիտմամբ շեղել ձեր ճանապարհը, դրա համար էլ աչքներդ նրանցվրա պահեք:

Երեկոն մոտ էր և դոն Ֆերնանդոն մտածում էր տուն վերադառնալու մասին: Նա առաջարկեց անտառի խրճիթը չքանդել, գուցե երբևէ մի մոլորված մարդու համար ցանկալի ապաստան դառնա: Սայլը դոն Ֆերնանդոն կվերցնի իր հետ, բայց դրա փոխարեն արշավախմբի համար երկու ջորի էլ կուղարկի:

Բաժանվելիս նա ասաց.

— Եթե ձեզ անպայման անհրաժեշտ է մինչև Պետեն գնալ, օգտվեք հովվի խորհրդից, բայց մի՛ մոռացեք այստեղի ամենալավ օրենքը. հրացանից և սուր դանակից ավելի հավատարիմ ընկեր չկա: Մի՛ վստահի ոչ մեկին, նույնիսկ իմ հովվին: Նա, ճիշտ է, արդեն երկու տարի է, ինչ հավատարմորեն ծառայում է, բայց ով գիտի նախկինում ինչով է զբաղվել: Նա շատ պատրաստակամ առաջարկեց իր ծառայությունը. դա արդեն կասկածելի է: Կարևորն այն է, թե կարո՞ղ եք արդյոք լրիվ վստահել ձեր հնդիկներին:

— Առայժմ նրանք իրենց շատ լավ են պահել,— մտազբաղ պատասխանեց Ֆրանտիշեկը:— Եվ թվում է, քանի գնում, այնքան ավելի են վստահում մեզ:

— Դա շատ կարևոր է. ես չեմ ուզում ձեզ անտեղի վախեցնել, այլ միայն խորհուրդ եմ տալիս շրջահայաց լինել:

Դոն Ֆերնանդոն գրկեց բոլորին, հոստիս և հնդիկներին նվերներ տվեց ու գնաց ձիեր լծած իր սայլակով, որոնցով հյուրերը այստեղ էին եկել:

— Ես շուտով կվերադառնամ ուղեկցի հետ,— արդեն հեռվից բղավեց հովիվը:— Մի շաբաթից դուք ճանապարհ կընկնեք:

Վացլավ Վեվերկան Պլուտոնի գլուխը շոյելով, երկար նայեց գնացողների հետևից, հետո դարձավ դեպի Ենիկը:

— Զեզ տարօրինակ չթվա՞ց, որ շները չճանաչեցին հովվին:

— Իսկ ինչո՞ւ պիտի ճանաչեին,— պատասխանեց Ենիկը:— Այդպես կլինեք, եթե սրանց տեղը լինեք, թե չէ գնել է ինչ-որ տեղում և հետո վաճառել մեզ:

Վացլավը ստիպված եղավ ընդունել Ենիկի համոզիչ եզրակացությունը: Բարեկամները դանդաղ ճամբար վերադարձան:

Գլուխ տասներորդ
ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՋՈՒՆԳԼԻՈՒՄ

Հովիվը խոստումը կատարեց: Հինգերորդ օրը նա վերադարձավ և իր հետ բերեց պարկերով և զամբյուղներով բեռնված ջորիներ: Դոն Ֆերնանդոյի առատաձեռնությունը այս անգամ չափազանց էր: Հակերը լցված էին նվերներով և ուտելիքի պաշարներով. հիմնականում ապխտած մսով, որը շատ լավ պահպանվում է և անփոխարինելի է ճանապարհի համար: Բացի դրանից, դոն Ֆերնանդոն ուղարկել էր սուրճ, թեյ, շաքար և շատ անհրաժեշտ մի բան՝ աղ: Աղի համար բնիկները ինչ ասես, որ չեն կարող տալ՝ թռչունի փետուր, ուզածդ կտորը, խոտից գործված գլխարկ և փայտից պատրաստված հրաշալի քանդակներ:

Եվրոպացիները շնորհակալությամբ ընդունեցին ռանչոյի տիրուհու և նրա աղջիկների հոգատար ծեռքերով պատրաստված մեծածավալ պարկերի և զամբյուղների նվերները: Դա որ կնոջ ծեռքերի գործն էր, վկայում էր ամենաանհրաժեշտ բաների խնամքով ընտրությունը: Պարկերից մեկի մեջ ճանապարհորդները մի կարմիր ժապավեն գտան, երևի պատահաբար էր ընկել այդտեղ. բայց, այսպես Լգոտկան էլ նվեր ստացավ՝ շքեղ վզնոց, որը Ենիկը անմիջապես պատրաստեց վառվռուն մետաքսից:

Հովիվը հայտնեց, որ իր բախտը բերեց մի բարեկամի մոտ հանդիպելու երկու հնդիկների՝ հորը և որդուն, որոնք գիտեն դեպի Պետեն լիճը տանող բավական հարմար մի ճանապարհ, և կուղեկցեն արշավախմբին, եթե նրանց օրական վճարեն երկու պետ և ուտելիք: Վաղը նրանք կգան ճամբար: Ինքը, հովիվը չի կարող ուղեկցել բարի ծանոթներին, շատ գործ ունի:

Այդպիսի տեղեկություն ստանալով, Ֆրանտիշեկը հրամայեց անմիջապես պատրաստվել ուղևորվելու: Արշավախումբը ճանապարհ կընկնի հենց որ ուղեկցողները գան:

Հետևյալ օրը անտառից դուրս եկան անծանոթ մարդիկ. ծերունին և մի գեղեցիկ տղա, երևի նրա որդին: Փոքրիկ հնդիկին Դիեգո էին անվանում, իսկ հորը՝ Սանա: Երկուսն էլ բավականին լավ իսպաներեն էին խոսում:

— Այո՛, Սանան կաբալերոյին մինչև Պետեն լիճը կհասցնի,— ասաց ծերուկը:— Սանան լավ մարդ է և բոլորովին միայնակ: Կինը վաղուց է մահացել, իսկ Դիեգոն լսող ու խելացի տղա է, նա կպաշտպանի և կպահպանի սենիորներին:

Բեռնելով ավանակները և ջորիները, մեր բարեկամները մեջքներին գցեցին հրացանները, գոտիներին ամրացրին դանակները, ձեռքներն առան կարճ, սուր կացիկներ, որպեսզի անհրաժեշտության դեպքում ճանապարհ բացեն, և ջոկատը ուղեկցողների գլխավորությամբ թողեց ճամբարը:

Ենիկը ուզում էր անմիջապես մտերմանալ Դիեգոյի հետ, նրանից բան հարցնել, բայց ամաչկոտ հնդիկը սկզբում շփոթվում էր և մոտ չէր գալիս:

Վացլավին տարօրինակ էր թվում, որ շները անհանգստության նշույլ անգամ ցույց չտվեցին, երբ ճամբար եկան օտար մարդիկ:

Բայց Ենիկը դա բացատրեց պարզապես նրանով, որ շները արդեն սովորել են հնդիկներին. ուրիշ պատճառ նա չէր կարող գտնել:

Ուղեկիցը քարավանը տարավ գետակի ուղղությամբ, հետո շրջվեց դեպի արևմուտք և խոստացավ, որ երկու, ամենաշատը երեք օրից հետո նրանք հետևում կթողնեն անանցանելի ջունգլին և դուրս կգան ավելի հարմար

ճանապարհ: Հեռանալով հովտից, եվրոպացիները վերջին անգամ ետ նայեցին այն տեղին, ուր իրենց նախկին բնակատեղը մնաց: Մի քանի շաբաթ այդ խրճիթը նրանց պահպանում էր վտանգներից և վատ եղանակներից: Նրանք շնորհակալությամբ դեռ հաճախ կհիշեն այդ խրճիթը, հատկապես այն ժամանակ, երբ ստիպված կլինեն գիշերն անցկացնել չոր գետնի վրա:

Արշավի առաջին օրը շատ դժվար էր. արշավախումբը միայն մի քանի կիլոմետր առաջ շարժվեց: Ճաշը և հանգիստը շատ ժամանակ էր խլում: Պետք էր մինչև մութն ընկնելը, քանի դեռ գիշատիչները քնած են իրենց որջերում, գիշերելու համար հարմար տեղ փնտրել:

Խիտ անտառում թռչուններ չեն լինում: Նրանց պետք են ընդարձակ տարածություն և արև: Խիտ ջունգլիները նրանց չեն հրապուրում: Ճանապարհորդներին զվարճացնում էին միայն ծառերի վրա ցատկոտող փոքրիկ սկյուռները: Երևում ու անհետանում էին կրծողների վտառները. խշշոցով թփերի մեջ էր սողում օձը, իսկ ծառի ճյուղերից քնաթաթախ աչքերով նայում էր մողեսների քարավանը: Մարդու ոչ մի հետք. միայն ծառեր, թփուտներ, պատուտակ և ամեն տեղ, ուր թափանցել էր արևի ճառագայթը, խիտ մացառուտները արգելակում էին արշավախմբի ճանապարհը: Երբեմն կոտորտվող ճյուղերի ճարճատյունին, կացինների թրխկոցին խառնվում էր հաչոցի ձայնը. դա Լգուկան էր, որը վազվզում էր խոնավ տեղերում, հարձակվում էր կրիաների վրա կամ զգվանքով բռնում էր անտանելի, լարծուն դոդոշները:

Ֆրանտիշեկ Դոլեժալը շտապում էր անցնել ճահճոտ ցածրավայրը, որտեղ մարդկանց և կենդանիներին տանջում էր աներես մոծակների երամը: Այդ մոծակները խոշոր էին, նման Չեխոսլովակիայի ճպուռներին: Նրանց սոսկալի խայթոցներից ստիպված էին թաշկինակով ծածկել երեսն ու պարանոցը:

Օդը լցված էր նեխած ճահճի ծանր հոտով, որին խառնվել էր արևադարձային բույսերի թմրեցնող, քաղցրավուն բուրմունքը:

Երեկոյան արշավախումբը հասավ մի բլրի, որտեղ Ֆրանտիշեկը որոշեց գիշերել, բայց Սանան, ցույց տալով դեպի արևմուտք, պնդեց, թե ավելի լավ տեղ գիտի:

— Ոչ, կմնանք այստեղ,— իրենը պնդեց Ֆրանտիշեկը:— Մի քանի տեղերում խարույկ վառեք, անկոչ հյուրերին քշելու համար:

Եվ ինքն էլ գործի անցավ: Ավանակներին ու ջորիներին բեռնաթափեցին, կապեցին խարույկներից ոչ հեռու, այնպես որ նրանք կարողանային հասնել հյուլթալի խոտին: Լավ մաքրված հրապարակում Ֆրանտիշեկը կարգադրեց կլոր վրան խփել և խոսեին հանձնարարեց արագ տեղավորել իր խոհանոցը ու կերակուր պատրաստել:

Ընթրիքի հարցը արագ լուծվեց: Օրվա ընթացքում հոգնած եվրոպացիները անմիջապես քնելու գնացին, իսկ հնդիկները, որ հիմա երկու մարդով ավելացել էին, ինչպես միշտ, լուռ նստեցին խարույկի շուրջը: Ոչ մեկը չհարցրեց, ո՞չ Սանային և ո՞չ էլ նրա տղային, թե որտեղի՞ց հայտնվեցին. նրանք կարծես չէին նկատում նորեկներին: Հնդիկները, ընդհանրապես, չվստահող և վախկոտ մարդիկ են, սպիտակներից, հատկապես իսպանացիներից նրանք երբեք լավ բան չեն տեսել:

Ճակատագրի անակնկալները նրանց սովորցրել էին զգուշանալ նույնիսկ ցեղակիցներից:

Չնայած, ընդհանրապես աշխույժ, կայտառ, աշխատող և նույնիսկ ուրախ մարդիկ են, այնուամենայնիվ երբեմն թվում է, թե նրանց աչքերում հավերժ մտորմունք է թաքնված: Երբեմն նայում ես նրանց, և ուզում ես հարցնել թե ի՞նչ կա նրանց մտքում, ինչի՞ մասին են այդքան երկար և կենտրոնացած մտածում, երբ իրենց աչքերը հառում են բոցերի դեղին լեզուներին:

— Մենք գնում ենք արևմուտք:— Պառկելով անկողնում, հանկարծ ասաց Ենիկը:— Իսկ ըստ քարտեզի պետք է շարժվենք դեպի հարավ:

— Գիտես ինչ, եթե մենք ճանապարհորդեինք Խրուդիմյան երկրամասում, ամեն ինչ հեշտ կլիներ,— պատասխանեց Վաքլավը,— իսկ այստեղ պետք է շրջանցել լեռները և կիրճերը... Այո՛, եղբայր, այստեղ արդեն բանն ուրիշ է, ճիշտ չէ՞:

— Իհարկե,— հաստատեց Ֆրանտիշեկը:— Իսկ հիմա քնել:— Լսո՞ւմ եք, Խոսեն ինչպիսի եռանդով է պահպանում ձեր հանգիստը. այնպես է խռմփացնում, կարծես փայտ են սղոցում: Մեր բախտիցն է, որ Պլուտոնի պես շուն ունենք. այնուամենայնիվ վստահելի պահակ է...— Հանկարծ նա անհանգստացած բարձրացավ տեղից:— Ինչո՞ւ է շունը ամբողջ ժամանակ հաչում: Ի՞նչն է նրան անհանգստացնում: Սպասեք ես ինքս կնայեմ...

Մութ էր, երբ Ֆրանտիշեկը դուրս եկավ վրանից: Նրա հետևից վազեց Լգոտկան և անմիջապես սկսեց հաչել, կարծես թե Պլուտոնին էր օգնում: Հանկարծ նա զառիթափով ներքև վազեց, բայց Ֆրանտիշեկը ետ կանչեց:

Երկնքում իրենց ամբողջ վեհությանը փայլում էին հարավային աստղերը: Պայծառ խարույկը լուսավորում էր շրջապատը: Ֆրանտիշեկը մոտեցավ կրակին, որի շուրջը անշարժ նստած էին հնդիկները և հարցրեց.

— Այստեղ ի՞նչ է կատարվում:

— Շունը հաչում է,— պատասխանեց նրանցից մեկը:

— Իսկ ինչո՞ւ: Ոչինչ չե՞ք նկատել: Դուք պետք է, որ լավ իմանաք, թե ինչ է կատարվում անտառում:

— Երևի մոտերքից կատվառյուծ է անցել,— ենթադրեց Սանան:

— Ո՛չ,— առարկեց հնդիկներից ավագը,— լանջով մարդիկ անցան:

— Զանի՞սն էին:

— Երկուսը:

Դիեգոն քնած էր խարույկից քիչ հեռու, և չնայած նրա շնչառությունը կանոնավոր և խոր էր, բայց հանկարծ Ֆրանտիշեկին թվաց, թե այդ վայրկյանին տղայի աչքերը փայլատակեցին:

Վերջապես երկու շունն էլ լռեցին: Հնդիկները նորից խոնարհեցին գլուխները: Ֆրանտիշեկը մի անգամ էլ պտտվեց խարույկի շուրջը և վերադարձավ վրան:

Չարմանալի է, որքան ջունգլին լուռ էր ցերեկը, այնքան հիմա լցվել էր աղմուկով: Ցերեկը թվում էր, թե անտառը ամայի է: Արևի լույսի տակ լսվում էր միայն միջատների ծորուն ճռռոցը, որը երբեմն ընդհատվում էր գազանների կամ թռչունների ճչոցներով: Իսկ երեկոյան անտառը հանկարծակի կենդանացավ. գիշատիչները թողեցին իրենց որջերը, կռնչացին վախեցած թռչունները,

բարձրաձայն կռկռացին գորտերը, և ինչ-որ տեղից, հեռվում, լսվեց մահվան դատապարտված զոհի սարսռեցնող ողբը:

Հաջորդ օրը, առավոտ վաղ, արշավախումբը շարժվեց առաջ: Եվրոպացիները թեթևացած շունչ քաշեցին. մի անհանգիստ գիշեր ևս մնաց հետևում: Ջունգլին լռեց ու դատարկվեց, անդորրն ու հանգստությունը ցրեցին գիշերվա երկյուղները:

Ճամփորդը արևադարձային անտառում ժամանակ չունի մտածելու իրական և երևակայական վտանգների մասին, քանի որ վտանգը սպառնում է նրան ամեն քայլափոխի: Թունավոր օձ, միջատ կամ սարսափելի գիշատիչ, նեխած ջուր կամ պտուղներ, որոնք առաջին հայացքից քաղցրահամ են թվում, բայց իրենց մեջ թաքցնում են մահ. այս ամենը մշտապես սպառնում է մարդու կյանքին:

Ենիկը մտազբաղ քայլում էր, խփվում ծառերի արմատներին, անցնում թփուտների միջով, երբեմն կանգ առնում, որպեսզի հեռացնի պատուտակը կամ ծակծկող ճյուղերը: Նա տարվել էր տխուր մտքերով:

Արդեն գնալու ուժ չունեին, բայց Ֆրանսիշեկը ստիպեց բոլորին, որ հավաքեն վերջին ուժերը: Առաջ, միայն առաջ, ետ չմտալ:

Ենիկին տանջում էր ծարավը, իսկ ջուրը վերջացել էր: Հրացանը ճնշում էր նրա ուսը, գոտին ամուր կպել էր կողերին, ձեռքերը և ոտքերը հրաժարվում էին ծառայելուց: Տղան համարյա ուշադրություն չէր դարձնում ծառերի վրա, մինչդեռ հենց այդ ծառերի վրա էլ աճում էին ցանկալի օրիսիդեաները:

Նա չէր տեսնում ո՛չ թուփակներին, ո՛չ կապիկներին... Ափսո՛ւ.... չէ՞ որ հանդիպում էին հազվագյուտ տեսակների: Նա չէր նկատում նաև հսկայական փայլուն բզեզներին: Նա հազիվ էր ոտքերի վրա մնում: Եվ երբ հնդիկները, որոնք առջևից էին գնում, գոռացին՝ «Գայլ, աջից գայլ»,— տղան նույնիսկ չնայեց այդ կողմը:

Տեսնելով, որ շատ է ետ մնում, Ենիկը ցանկացավ հասնել նրանց և մեկ էլ զգաց, ինչ-որ մեկը ձեռքը հպեց իրեն. նա սարսռաց հանկարծակիությունից:

Հնդիկներից մեկը, հավասարվելով նրան, շշնջաց.

— Հաղորդիր մեծ, ուժեղ եղբորը, որ մեզանից առաջ շատ հնդիկներ են գնում: Սանան հավանաբար վատ մարդ է... չմատնես ինձ:

Ենիկը դեռ ուշքի չէր եկել, երբ հնդիկը անհետացավ մացառուտներում և տղայի կանչին պատասխանեց նախազգոշացնող «սը՛ս...» կանչելով:

Հոգնածությունը կարծես հանեցին նրա միջից: Ենիկը վազեց առաջ, շտապելով գտնել քեռուն: Հնդիկը, իրենց ընկերը, ինչ-որ վատ բան է զգացել. նշանակում է բոլորին վտանգ է սպառնում: Իրենց թիկունքում ինչ-որ դավեր են սարքում: Անհրաժեշտ է, որքան հնարավոր է, շուտ հայտնել քեռուն:

Ենիկը հասնելով Ֆրանսիշեկին, շփոթվելով և խառնելով բառերը, պատմեց հնդիկի հետ ունեցած իր խոսակցությունը: Լուրը կարծես բոլորովին չտնհանգստացրեց քարավանի պետին:

— Աչքերդ չորս արած նայիր և լռիր,— բազմանշանակալից ասաց Ենիկին:

Առաջին դադարին Ֆրանսիշեկը հարցրեց, թե ուղեկիցը որքան պետք է քարավանը արևմուտք տանի:

— Չէ՞ որ Պետեն լիճը մեզանից հարավ է,— հիշեցրեց Նա,— և հետագա շրջանցումը ավելորդ է. անտառը բավական ցանցառ է դառնում:

— Մենք գնում ենք ուղիղ դեպի լիճը,— առարկեց Սանան, համառորեն ձեռքով ցույց տալով արևմտյան կողմը:

Ֆրանտիշեկը պնդեց, որ լիճը ընկած է հարավում:

— Այդ քեզ ո՞վ ասաց,— վիրավորվեց Սանան,— ճանապարհը միայն ե՛ս գիտեմ:

— Ինձ ոչ ոք չի ասել,— հետևեց հանգիստ պատասխանը:— Դու չես հասկանում քարտեզը և չգիտես, որ ա՛յ, այս ապակյա տուփը /Ֆրանտիշեկը նկատի ուներ կողմնացույցը:/ միշտ ինձ ասում է ճշմարտությունը: Կա՛րճ, վաղը, մենք կշրջվենք դեպի հարավ: Կա՛մ մեզ առանց խաբելու, կա՛մ մենք կգնանք մենակ: Գվատեմալայի սահմանը, իհարկե, արդեն երևում է, մենք կարող են հանդիպել անտառահատների, որոնք այնտեղ փայտ են կտրում:

Սանան լուրջ վիրավորված էր: Նա խոժոռվեց և նահանջեց: Դիեգոն երկչոտ նայեց հրացանին հենված Ենիկին:

— Այսօր մենք ոչ մի քայլ առաջ չենք գնա,— բոլորի համար անսպասելի եզրափակեց Ֆրանտիշեկը:— Ավելի հարմար բացատ չենք գտնի, իսկ մեզ չի վնասի համեմատաբար երկարատև հանգիստը: Պատրաստեցե՛ք վրանը և խարույկները:

Բոլորը գոհ էին ընդունված որոշումից, միայն Սանան ակնհայտորեն բարկացած էր: Հնդիկները մտածում էին, որ նրան բարկացրել է «դոն Ֆրանսիսկոյի» հետ ունեցած վեճը:

Քաղաքի հրապարակի նման մեծ բացատը շրջապատված էր ծառերով, որոնք ասես հսկա տներ լինեին: Ջունգլիում այդպիսի մեծ կամ փոքր բացատների շատ կարելի է հանդիպել: Դրանք առաջանում են տարբեր պատճառներից. կա՛մ փոթորիկից, կա՛մ ծառերի համար ոչ պիտանի հողից:

Որսորդները չգիտեին, թե իրենք նպատակից որքա՞ն են հեռու: Բայց որ Սանան իրենց ճիշտ ճանապարհով չի տանում, Ֆրանտիշեկը հաստատ գիտեր. հնդիկների արտահայտած կասկածը նա անուշադրության չմատնեց: Ֆրանտիշեկը հասկանում էր, որ հնդիկից այլևս ոչ մի բան իմանալ հնարավոր չէ: Նա ասաց ուղիղ այնքան, որքան ուզում էր: Դրա համար էլ, որպեսզի Սանան չկասկածի, Ֆրանտիշեկը որոշեց խառնել նրա պլանները անսպասելի հանգստով, իսկ հետո ուղղությունը փոխելով:

Գիշերելու նախապատրաստությունը վերջացավ ցերեկով: Արագ վրաններ խփեցին, փայտ հավաքեցին: Ճամփորդները հանգստանում էին և ազատ էին արձակել նաև հոգնած անասուններին: Վացլավն ու Ենիկը նստել էին վրանից ոչ հեռու... Տղան չհամբերեց և գաղտնի շշնջաց Վացլավի ականջին, թե Ֆրանտիշեկը չի վստահում Սանային, իսկ քարավանի ճանապարհին թաքնված են օտար հնդիկներ:

Մինչ այդ, աննկատելիորեն իջավ մթնաշաղը: Գիշերային մթության մեջ բոցավառվեցին խարույկները և ծխի թեթև սյուները բարձրացան դեպի աստղացան երկինք: Ուժասպառ անող տոթը բավական մեղմացել էր, և մարդիկ թեթևացած զգում էին հազիվ նկատելի քամու շունչը:

Շրջակայքում արածող ավանակներն ուրախ փնջացնում էին, դիմավորելով երեկոյան զովը, իսկ աղմուկը անտառում ուժեղանում էր:

Չնայած Վացլավը և Ենիկը առաջին անգամ չէր, որ դիմավորում էին գիշերային ջունգլիի արթնացումը, բայց նրանք ուժ չունեին իրենցից հեռացնելու տագնապալից հուզումը:

Թերևս աշխարհում այնպիսի մարդ չի լինի, որ չվախենա լսելով թռչունների կոկորդային ճիչերը, գորտերի կռկռոցը, օձերի ֆշշոցն ու սուլոցը, կապիկների ճղճղոցն ու թուրթուրների ականջ ծակող ծղրտոցը, որ երբեմն խլանում է հովազների այնքան սարսափելի մռնչոցով: Այսօր, ճիշտ այնպես, ինչպես երեկ, ինչպես հարյուրավոր տարիներ առաջ, այդ վայրի համերգը փախցնում է մարդկանց քունը: Ննջողը հանկարծակի արթնանում է, վերցնում զենքերը, ուշադիր նայում է մթության մեջ: Բայց նրա լսողությունը որսում է միայն սարսռեցուցիչ ձայներ, կամ կատաղած գիշատչի մռնչոցը, կամ զոհի հեծեծանքը: Իսկ աստղերը առաջվա նման անվրդով նայում են երկրին և մարդկանց շշմեցնում է բույսերի միջև երկինք հասնող բույրը:

Ենիկն ավելի սեղմվեց Վացլավին և սկսեց բարձրաձայն երազել.

— Ինչո՞վ են հիմա զբաղված մերոնք, հը՞, Վացլավ: Հայրիկը երևի վերադարձել է աշխատանքից, մայրիկը ընթրիք է պատրաստում, իսկ Թերեզիկը սովորում է դասերը: Հիշո՞ւմ են արդյոք մեզ: Չէ որ այնտեղ աստղերը նույնիսկ ուրիշ են...

Վացլավը, ենթարկվելով նրա տրամադրությանը, նույնպես սկսեց մտաբերել, թե ինչպես վաղուց, շա՛տ վաղուց, Չեխիայում ամեն երեկո հետապնդում էր բզեզներին, որոնք խուլ տզգալով խփվում էին տան պատերին, թե ինչպես էր գաղտագողի լսում հարևանների խոսակցությունը, որոնք մթնաշաղին դուրս էին գալիս նստոտելու փոքրիկ նստարաններին:

Նա այնպես պարզ պատկերացրեց այս բոլորը, որ մի պահ կարծես լսեց եկեղեցու երեկոյան զանգերի դողանքը, ուշացած տանտիրոջ սայլի դղրդոցը, որը այգացողին մի քիչ երեքնուկ էր հնձել, որովհետև ձեռնունայն չէր ուզում վերադառնալ տուն:

Այդ րոպեին Ֆրանտիշեկը ընկերներին կանչեց ընթրելու և քնելու: Նրանք ներս մտան դժկամ. անցյալը այնքա՛ն հիանալի վերակենդանացել էր հիշողության մեջ: Քեռու ձայնը նրանց ստիպեց սթափվել երազանքից և տեղափոխվել դաժան իրականության:

— Այսօր մենք չենք քնելու,— պայմանավորվեցին եղբայրները, ուղղվելով դեպի խարույկը:— Բայց քեռուն այդ մասին չենք ասի. նրան հանգստանալ է պետք:

Ընթրիքի ժամանակ անսովոր լռություն էր թագավորում: Նույնիսկ հնդիկները կարծես սովորականից լուռ էին: Խարույկը նրանք վառել էին վրանից հեռու: Տարօրինա՞կ է...

Շատ բաներ այսօր հանկարծ ուրիշ կերպ պատկերացան: Ֆրանտիշեկը ուշադիր հետևելով այս բոլորին, նկատեց, որ ինչ-որ մեկը ջորիներին կապել էր իրար մոտ:

Երկար շղթայով կապված Պլուտոնը պառկել էր բեռնակիր կենդանիների մոտ: Նա նոր էր ընթրել և հիմա գոհ, ուրախ խաղացնում էր պոչը, բարեկամաբար ողջունելով Ֆրանտիշեկին, որը, ըստ սովորության, նախքան քնելը շրջագայում էր ամբողջ ճամբարը:

— Այսօր աչքերդ չորս արա, Պլուտոն,— մտերմաբար շշնջաց Ֆրանսիշէկը, շոյելով շան գլուխը:

Պլուտոնը պոչը թափահարեց և աչքերը հառեց տիրոջը, բայց մարդը չհասկացավ, թե այդ աչքերը խոստանո՞ւմ են մի բան, թե՞ նայում են վարանումով:

Հնդիկները չհանեցին իրենց գոտիները, որից ամրացված էին երկար դանակներ: Դրանց իսպանացիները մատչե են անվանում: Ասենք դրանում զարմանալի ոչինչ չկար. հնդիկը չի բաժանվում գենքից նույնիսկ գիշերը: Չարմանալի էր միուրիշ բան: Սանայի մոտ ընդհանրապես դաշույն չկար: Մի՞թե նա իսկապես գենք չուներ: Երիտասարդ Դիեգոն թափառում էր ինչ-որ տեղ, մոտերքում, աշխատելով միշտ ստվերում մնալ:

Վերադառնալով խարույկի մոտ, Ֆրանսիշէկը նայեց հնդիկների ավագի աչքերին և դրանցում գգուշություն և գովասանք կարդաց: Հնդիկը թեքվեց դեպի ննջող Սանան. Ֆրանսիշէկը լուռ գլխով արեց և դանդաղ ուղղվեց դեպի վրանը:

— Հանգիստ քնեք, բարեկամներս,— ներս մտնելով ասաց նա:— Ամեն ինչ կարգին է: Դու էլ Լգոտկա, պառկիր:

Շունը քսվեց նրա ոտքերին, հետո շնական սովորությամբ տեղում մի քիչ պտտվեց և պառկեց մուտքի մոտ, իր մարմնով բարձրացնելով վրանի փեշը: Ֆրանսիշէկը նույնպես պառկեց. բոլորը լսեցին, թե ինչպես նրա հոգևած մարմնի տակ ճռճռաց խսիրը:

Ջունգլին թաքուն հուզված էր, բայց ոչ մեկի, նույնիսկ ամենանրբագագ մարդու ականջն անգամ չէր կարող որոշել, թե որտեղից են լսվում ձայները, մո՞տ են, թե՞ հեռու: Ժամը անցավ ժամի հետևից, աստղերը բացատի վերևում փոխեցին իրենց դիրքը, և մեծ չղջիկները արագ, անաղմուկ, առանց հոգնելու որսացին միջատներին: Անտառի աղմուկը դադարեց կամ գուցե այդպես թվաց քնածներին: Ծանր, խեղդող արևադարձային գիշերն իջավ վրանի վրա:

Գլուխ տասնմեկերորդ
ԳԻՇԵՐԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՈՒՄ

Ֆրանսիշէկը երկար ժամանակ չէր կարողանում քնել: Վերջապես նա խոր քուն մտավ և չլսեց Պլուտոնի կարճ հաչոցը. քնել էր և Լգոտկան: Բոլորից շուտ արթնացավ Ենիկը. ավելի ճիշտ նրան արթնացրին: Նա հանկարծ զգաց ինչ-որ մեկի ձեռքի շփումը իր երեսին, ինչ-որ մեկը ափով փակեց նրա բերանը և կամաց շշնջաց. «Փախի՛ր, փախի՛ր Դիեգոյի հետ, քանի ուշ չէ»:

Հարցուփորձի ժամանակ չկար: Ենիկը մի ակնթարթում թոթափեց քունը, հիշեց հնդիկների նախազգուշացումը, և ամեն ինչ պարզ դարձավ: Նա դուրս թռավ վրանից, վայր գցելով Դիեգոյին, որը չոքել էր գետնին և մեջքով մի քիչ բարձրացրել վրանի փեշը: Ահա թե ով նախազգուշացրեց Ենիկին:

Մի ակնթարթ, և Ենիկը ոտքի վրա էր. գոտկից հանելով ատրճանակը, կրակեց օդում: Անտառը դրդոցով արձագանքեց: Ջորիները կատաղեցին: Մարմրող խարույկի լույսի տակ ստվերներ երևացին. ինչ-որ մարդիկ անտառից մոտեցել էին բացատին:

Լգոտկան սուր ոռնոցով նետվեց դեպի խավարը: Ֆրանսիշէկը վրանի առաջ կանգնած ինչ-որ բան էր պտտում ձեռքում և բարձրաձայն հայհոյում: Հանկարծ

Նրանց գլխավերևում բռնկվեց կուրացուցիչ կրակը, և պայծառ, բոցավառվող մի գունդ թռավ բացատի վրայով: Հրթիռը մի վայրկյանից էլ քիչ լուսավորեց շրջապատը, բայց դա բավական էր, որպեսզի Ֆրանսիշեկը տեսներ ամեն ինչ:

Այո՛, քարավանը հարձակման էր ենթարկվել:

Մոտ երեք տասնյակ ավազակներ շարժվում էին դեպի ճամբարը, բայց հրթիռի կուրացնող լույսի մի վայրկյան կանգնեցրեց նրանց:

Վացլավը դուրս թռավ վրանից, ամեն ձեռքում մի-մի հրացան:

— Հենց որ արձակեմ երկրորդ հրթիռը, կրակիր երկու անգամ,— կարգադրեց Ֆրանսիշեկը:

Սուկեց երկրորդ հրթիռը և երկու կրակոց որոտաց օդում: Հենց նույն պահին ուժեղ բռնկվեցին երկու խարույկները: Ենիկը և Դիեգոն մտածեցին, որ ավելի լավ է տեսնել հարձակվողներին, արագ չոր ցախ լցրեցին շիկացած ածուխների վրա:

— Չգույշ, պարոն,— բղավեց ինչ-որ մեկը խավարի միջից:

Պայթեց երրորդ հրթիռը և բոլորը տեսան, որ բացատում մենամարտի են բռնվել: Փայլում էին դաշույնները:

— Այնտեղ մեր հնդիկներն են,— բղավեց Ֆրանսիշեկը,— պետք է օգնության հասնել: Ատրճանակները:

Վացլավը ներս ընկավ վրանը և անմիջապես դուրս թռավ այնտեղից՝ զենքերը ձեռքին: Չենքերը այնքան շատ էին, որ կբավարարեին բոլորին. նույնիսկ Ենիկն ու Դիեգոն մեկական ատրճանակ ստացան: Նրանք արագ հասան Ֆրանսիշեկին և Վացլավին, որոնք արդեն կռվի տեղն էին հասել, բայց ուշացել էին. թշնամին հեռացել էր:

Այդ վախկոտ արարածները, որ հանդգնել էին գողություն անել մթության մեջ, վախեցան բաց մարտից: Բացի դրանից, նրանց սարսափեցրել էր հրագենը. նրանք գիտեին, որ դաշույնը ատրճանակի դեմ ոչինչ անել չի կարող: Վախկոտներ: Նրանք որոշել էին հարձակվել քնած ճամբարի վրա և հաղթել մի բուռ շփոթված մարդկանց, մինչ նրանք կմտածեին դիմադրություն ցույց տալ: Նրանք արդեն պատկերացնում էին, թե ինչպես կգողանան անասունները, փողը, հագուստը և այլ բարիքներ, որոնց վրա միշտ աչք ունեն ավազակախմբերը:

Բայց թռչող կրակը, Վացլավի բացած հրաձգությունը, անսպասելի հարվածը կողքից հարձակվողների շարքերում այնպիսի իրարանցում առաջ բերեցին, որ շփոթված փախուստի դիմեցին և ջունգլիի սև խորությունը կուլ տվեց նրանց: Հետապնդելու մասին խոսք լինել չի կարող:

Խարույկի մոտ երևում էին միայն երկուսը. մի մարդ և շունը: Սանան և Պլուտոնն էին: Նրանք պառկած էին իրար կողքի, ծառերին կապված ջորիներից ոչ հեռու: Հնդիկները վառվող ճյուղեր բերեցին և բոլորը տեսան, որ Սանան ուշագնաց է եղել. երևի շատ արյուն էր կորցրել: Պլուտոնի կողին ցցված էր Սանայի դաշույնը: Պլուտոնը մեռած էր:

Հիմա ամեն ինչ պարզվեց: Սանան դավաճան դուրս եկավ: Դոն Ֆերնանդոյի ռանչոյի հովիվը նրա մեղսակիցն էր: Նա դիտավորյալ ճանապարհորդներին այնպիսի շներ էր բերել, որոնք արդեն սովոր էին հնդիկներին: Սանան հուսով էր, որ նրանք աղմուկ չեն բարձրացնի ճամբարի վրա հարձակվելիս: Բայց շներն

արդեն սովորել էին նոր տերերին, և հնդիկը մեջտեղից հանեց Պլուտոնին, բռնակիր անասունների աչալուրջ հսկողին, որոնք դառնալու էին կողոպտիչների արժեքավոր ավարը: Ճամբարի բնակիչները հավաքվեցին այս երկու զոհերի մոտ, որոնցից մեկին խղճում էին, մյուսին արհամարհում:

Հնդիկները և ջլապինդ խոսեն Սանային տարան մյուս խարույկի մոտ, լվացին և կապեցին վերքերը: Դա արվեց, ոչ թե խղճահարությունից, այլ Ֆրանտիշեկի կարգադրությամբ:

Մեծ ջանքերից հետո եվրոպացիներին հաջողվեց ծերունուն ուշքի բերել: Տեսնելով իր վրա կռացած սպիտակ մարդկանց դեմքերը, նա վախից դողաց:

— Ես կմեռնե՞մ,— հարցրեց նա և հագիվ լսելի խնդրեց,— Ջո՛ւր...

Տվեցին օղիախառն ջուր, և Սանան ագահաբար խմեց. նա արդեն տենդի մեջ էր:

— Ինչո՞ւ դավաճանեցիր,— խիստ տոնով հարցրեց Ֆրանտիշեկը,— մի՞թե քեզ չխոստացա հարուստ վարձատրություն, եթե մեզ ապահով մինչև լիճը հասցնեիր: Իսկ եթե քեզ ջորիներ էին պետք, ես կտայի նաև ջորիներ:

Սանան, փակելով աչքերը, լռեց:

— Ինչո՞ւ դավաճանեցիր, պատասխանիր,— կրկնեց Ֆրանտիշեկը:

— Ես չեմ դավաճանել, ես ոչինչ չգիտեմ...

— Նա խաբում է,— հնչեց հուզված մի ձայն:

Բոլորը ետ նայեցին: Այնտեղ կանգնած էր Դիեգոն: Նա ամբողջովին դողում էր չգիտես ատելությունից, թե՛ վախից և, ցույց տալով Սանային, պնդում էր նույնը.

— Նա ստո՛ւմ է, ստո՛ւմ:

— Շո՛ւն,— շշնջաց Սանան,— այդ դու ես ստում...

— Ինչո՞ւ չես պատասխանում,— ընդհատեց նրան Ֆրանտիշեկը,— դո՛ւ սպանեցիր մեր Պլուտոնին, չնայած նա քեզ ոչ մի վատ բան չէր արել՝ մինչև քո հարձակվելը նրա վրա:

— Ո՛չ,— խզված ձայնով ասաց ծերունին, — հարձակվեց ինձ վրա, ես միայն պաշտպանվել եմ:

— Ստո՛ւմ է,— նորից չհամբերեց Դիեգոն,— նա դեռ երեկ առանց դաշույնի էր ման գալիս, որպեսզի կասկած չառաջացնի: Դաշույնը թաքցրել էր տոպրակի մեջ, որպեսզի միշտ ձեռքի տակ լինի: Երբ մեծ աստղերը թաքնվեցին անտառի հետևը, նա հեռացավ խարույկից: Ես հետևեցի և տեսա, թե ինչպես նա կաղնու մոտ խոսում էր օտարների հետ: Անմիջապես ես վազեցի վրանը և զգուշացրի սպիտակ երիտասարդին:

Երևի դա ամենաերկար ճառն էր, որ երբևիցե արտասանել էր Դիեգոն: Իսպաներեն խոսքը նրա մոտ մի քիչ աղավաղված էր հնչում, բայց դրա փոխարեն նրա մտադրությունը ազնիվ էր:

Ենիկը սեղմեց Դիեգոյի ձեռքը և հաստատեց:

— Ճի՛շտ է, նա արթնացրեց ինձ:

— Պլուտոնին ավելի շատ եմ խղճում, քան քեզ, — ասաց Ֆրանսիշեկը Սանային:— Նա մեր ընկերն էր ու պահապանը, իսկ դու դավաճան ես, գո՛ղ: Մենք վրեժ չենք լուծի քեզանից: Պլուտոնը արդեն բավական քեզ պատժել է, բայց այլևս մեզ հետ չես գա: Թող հիմա քո մասին հոգ տանեն հանցակիցներդ:

Սանան համառորեն լռում էր և աչքերը չէր բացում: Սպիտակները գնացին դեպի վրանները, իրենց հետ տանելով նաև հնդիկ մշակներին:

— Գիտեմ, ջունգլիի դատը կարճ է, — սկսեց Ֆրանսիշեկը:— Ես նույնիսկ լսում եմ, թե ինչպես է հնչում ձեր վճիռը, բայց դրան հավանություն չեմ տալիս: Հուսով եմ, որ Սանայի համախոհները հեռու չեն գնացել, գիշերը թավ անտառում հեռու չես փախչի: Դրա համար էլ խնդրում եմ, ովքեր տիրապետում են հնդկական մի քանի բարբառներ, գնացեք անտառի խորքը և բղավեք, որ Սանան վիրավորված է, որ վաղը մենք կթողնենք նրան խարույկի մոտ. թող նրան չմոռանան:

Հնդիկները համաձայնեցին և գնացին դեպի անտառ, տարբեր լեզուներով բղավելու սպիտակի հրամանը: Միայն Խոսեն մնաց անդրդվելի և պահանջում էր, որ Պլուտոնի սպանողը հանցանքի համար հատուցի իր կյանքով:

— Դու ավելի լավ է նախաճաշ պատրաստիր, հերո՛ս: Կարծեմ, քեզ չնկատեցինք մարտում: Երևի քնա՞ծ էիր: Այնպես որ, շտապի՛ր: Լուսաբացին ճանապարհ ենք ընկնելու:

Լգտական իր վրա վերցրեց Պլուտոնի պարտականությունները: Նա անընդհատ վազվզում էր շրջակայքում, հոտոտում էր օդը, բայց օտարները, երևի, արդեն հեռու էին. շուրջ անհանգստության ոչ մի նշան ցույց չէր տալիս:

Ֆրանսիշեկը Դիեգոյին կանչեց վրան և այնտեղ երեք սպիտակները շնորհակալություն հայտնեցին պատանուն: Ճիշտն ասած, Դիեգոն փրկեց նրանց կյանքը, բայց նա ոչ մի կերպ չէր համաձայնում դրա հետ և շատ էր հուզված: Հարցուփորձից պարզվեց, որ Սանան նրա հայրը չէ և նույնիսկ ազգականն էլ չէ: Հնդիկների մոտ ընդհանուր տարածում գտած «հայրը» բառը մեծերին դիմելու ձևն է: Կամաց-կամաց Դիեգոն սկսեց խոսել: Նա եղել է որբ և մեծացել է թափառական խմբում: Ինչ-որ մի ժամանակ նրան հրապուրել է անտառներում թափառելը, բայց և այնպես Դիեգոն երազել է ուրիշ մի զբաղմունքի մասին: Նա հաճախ է քաղցած մնացել ու ծեծ կերել: Սանայի հետ նա հանդիպել է վերջերս և մեծ ուրախությամբ կպել նրանից, որովհետև այն հրոսախումբը, որտեղ ծառայում էր Դիեգոն, Յուկատանում մի ռանչոյի վրա անհաջող հարձակումից հետո ցրվել էր:

Եվրոպացիները սարսափեցին այն մտքից, որ գուցե կողոպտել են դոն Ֆերնանդոյի ռանչոն, բայց Դիեգոն ասաց, որ հրոսախումբը իր գործը կատարել է արևելքում: Նա պատմեց նաև, որ Սանան արդեն երկու օր էր ճանապարհին թողնում էր նշաններ, իսկ գիշերը գաղտնի հեռանում էր ճամբարից: Դիեգոն այդ մասին ոչինչ չէր ասել, վախենալով Սանայից, և մեկ էլ նրա համար, որ այն ժամանակ դեռ հաստատ չգիտեր, թե ինչ է անում ծերունին:

— Դու գիտե՞ս լիճը տանող ճանապարհը, — հարցրեց Ֆրանսիշեկը տղային:

— Դիեգոն եղել է այնտեղ, — մի պահ մտածելուց հետո ասաց Դիեգոն, — միայն մոտեցել է մյուս կողմից: Եթե Մեծ Սպիտակը մոտենա լճին, Դիեգոն կճանաչի:

— Ինչ արած, հույսներս կղնենք քարտեզի և կողմնացույցի վրա, — որոշեց Ֆրանսիշեկը:— Վատն այն է, որ մենք մի քիչ շեղվել ենք ճանապարհից:

— Այո,— արձագանքեց Վազլավը:— Ես էլ եմ այդպես մտածում, Սանան մեզ դեպի արևմուտք է տարել: Հիմա պետք է շրջվել դեպի հարավ և չփոխել ուղղությունը:

— Իսկ թշնամիները մեզ վրա նորից չե՞ն հարձակվի,— կասկածը հայտնեց Ենիկը:

Ֆրանտիշեկը մտքերի մեջ ընկավ:

— Ճիշտը դժվար է ասել, բայց, կարծում եմ, որ նրանք այլևս չեն համարձակվի, հասկանալով, որ մենք զգույշ կլինենք...— այստեղ նա հիշեց մի կարևոր բանի մասին ևս:— Առավոտյան ինքներս կթաղենք Պյուտոնին: Հնդիկները կվիրավորվեն, եթե խնդրենք, որ նրանք անեն այդ աշխատանքը: Նրանք զգվում են շնից:

— Խեղճ Պյուտոն,— հառաչեց Ենիկը,— պետք է նրան թաղել, ինչպես կարգն է: Ես նրան երբեք չեմ մոռանա... Իսկ դո՞ւ, Դիեգո, դու հո մեզ չե՞ս թողնի:

Երիտասարդ հնդիկը ուրախությունից շփոթվեց:

— Դիեգոն կմնա, եթե սպիտակներին պետք է նրա օգնությունը: Դիեգոն կծառայի հավատարիմ,— բացականչեց պատանին:

— Գնանք մեզ հետ,— ասաց Ֆրանտիշեկը:— Եղիր մեր ընկերը, մենք քեզ չենք նեղացնի:

Դիեգոն ուրախ ժպտաց և դուրս վազեց վրանից:

Աստղերը մարեցին, քամի բարձրացավ: Տրտեց... Շուտով արշալույսի փայլը խաղաց կաղնիների գագաթներին: Արագ լուսացավ: Մեր բարեկամները, իրենք էլ այդ չնակատելով, մինչև առավոտ աչքները չփակեցին: Երբ արևը դուրս եկավ, նրանք հավատարիմ Պյուտոնի համար գերեզման փորեցին: Դաշույնը շան կողքից հանելով, պառկեցրին փոսի մեջ և ծածկեցին հողով: Տրորեցին հողը, վրան փշոտ ճյուղեր լցրին, որպեսզի վայրի գազանները չկարողանան դիակը հանել:

Ենիկը վազեց դեպի կաղնին և մի քիչ փնտրելուց հետո վերադարձավ երեք կաղին ձեռքին՝ յուրաքանչյուրը հնդուհավի ձվի մեծությամբ: Գվատեմալայի կաղնիները այնքան էլ բարձր չեն, բայց դրա փոխարեն անսովոր մեծ պտուղներ են տալիս: Ենիկը ցանեց կաղնիները, մտածելով, որ այդտեղ գոնե մի ծառ կաճի և իր սովերով կծածկի հավատարիմ ընկերոջ գերեզմանը:

Ճանապարհորդները հոգ տարան նաև Սանայի մասին: Ֆրանտիշեկը խիսին խմեցրեց, որպեսզի տենդը անցնի, և կարգադրեց հիվանդի մոտ ջուր և ուտելիք դնել:

Լուսաբացին քարավանը սկսեց արագ-արագ ճանապարհ ընկնելու պատրաստություն տեսնել: Աշխատանքը արդարացիորեն բաժանեցին արշավախմբի բոլոր անդամների միջև և ճանապարհի նախապատրաստությունները արագ վերջացրին: Շտապ նախաճաշելով, քարավանը առաջ շարժվեց. սկսեց վայրեջքը դեպի ջուռգլի: Սպիտակները, զինված հրացաններով, պահպանում էին ջոկատը, որը առաջնորդում էր Դիեգոն, Լգոտկան ամենահուսալի պահապանի պես անընդհատ վազում էր ջոկատի շուրջը:

Լուսանալու հետ միասին ջունգլին նորից խաղաղվեց և ընկավ թեթև նիրհի մեջ. միայն միջատների ձանձրացնող ձայնը, տերևների խշխշոցը և թռչունների դյուլթող երգն էր ուղեկցում ճանապարհորդներին: Օրը վերջանում էր, իսկ ջունգլին վերջ չկար:

Մինչ մեր քարավանը անցնում էր ջունգլիների միջով, Սանային օգնության հասան նրա ընկերները, որոնք հեռու չէին գնացել և լսել էին այն ամենը, ինչի մասին Ֆրանտիշեկը պատվիրել էր հաղորդել: Հենց որ քարավանը հեռացավ տեսադաշտից, նրանք վերադարձան իրենց պարտության տեղը և ագահաբար հարձակվեցին այն ամենի վրա, ինչ ընդհանրապես մնում է լքված ճամբարում: Սանան շատ լավ գիտեր ավազակների սովորությունը և ժամանակին թաքցրել էր ուտելիքը: Նա սպասում էր մեղադրանքի և իսկապես դրանք թափվեցին նրա վրա կարկուտի նման:

Բայց և այնպես ավազակախումբը չհրաժարվեց իր մտադրությունից: Նրա առաջնորդը որոշեց գնալ արշավախմբի հետևից: Գուցե այն, ինչ չհաջողվեց այսօր, կհաջողվի վաղը:

Գլուխ տասներկուերորդ
ԳՎԱՏԵՄԱԼԱՅԻ ԱՆՏԱՌԱՀԱՏՆԵՐԸ

Չորս օր քարավանը ընթանում էր հարավային ուղղությամբ, և վերջապես երիտասարդ ուղեկցողը հայտարարեց, թե ինքն արդեն տեսնում է Պետեն լճի շրջակայքը: Ֆրանտիշեկը նույնպես հասկացավ, որ իրենք մոտենում են նպատակին: Անտառը նոսրանում էր: Մի քանի անգամ զարմացած ճանապարհորդների աչքի առջև ընդարձակ մարգագետիններ բացվեցին, եզրափակված թեք զառիթափերով, իսկ երկար, անտառապատ լեռների կատարները աստիճանաբար իջնում էին և փոխվում վաղուց սպասված հարթությանը:

— Առանց ուղղությունը փոխելու մի քանի օր էլ գնանք,— ասաց Ֆրանտիշեկը,— գուցե բախտներս բերի: Ջունգլիի ծայրամասում կարող ենք օրիսիդեայի բազմաթիվ տեսակների հանդիպել: Միայն անհրաժեշտ է հյուղակի համար մի հարմար տեղ ընտրել:

Ֆրանտիշեկի առաջարկությունը ընդհանուր բերկրանքով ընդունվեց: Բոլորն էլ հոգնածությունից ոտքի վրա չէին կարողանում մնալ: Դրա հետ միասին արդեն վերջանում էր մթերքը: Իսկ մարգագետնում և անտառի թփուտներում որսը ուղղակի ինքն էր ոտքի տակ ընկնում: Ենիկը արդեն երևակայում էր, թե ինչպես նորից որսորդության ժամանակ իր բախտը կվործի:

— Եվս մի օրվա ճանապարհ և տանը կլինենք,— շնչաց նա Վացլավին, պատրաստվելով քնելու:

Ի՞նչը նկատի ունենալով, տան մասին խոսելով: Հյուղա՞կ, տանի՞ք գլխի վրա: Միգուցե այն տեղը, ուր մի ամբողջ ամիս ապրելու էին: Կարող է և այդ: Իսկական տունը, որ նա ջերմորեն հիշում էր, տունը, որտեղ մնացել էին ամենահարազատ մարդիկ, շատ հեռու էր, այնքա՞ն հեռու, որ նույնիսկ վերադառնալու հույսը ետ էր թռչում ճանապարհի կեսից՝ անկարող լինելով հաղթահարել անձայրածիր ծովը, որն ընկած էր Գվատեմալայի և Եվրոպայի միջև:

Մարգագետիններով և անտառի եզրով գնալն ավելի հարմար և հեշտ էր: Ջունգլիից հոգնած հայացքը վերջապես կարող է առանց արգելքի ընդգրկել ծով կանաչը, հետևել ճահճի վրա սավառնող թռչունների երամին: Կուրծքը շնչում էր

թեթև, ազատ տարածության մեջ: Խիտ ծառերի, թփուտների և պատուտակների գերությունից ազատված ճամփորդների տրամադրությունը բարձրացավ: Հոգևած ձեռքերը դանակներն ու կացիները խրեցին գոտիները, բթացած զգացմունքները նորից արթնացան: Մարդիկ իրենց վրայից թափ տվեցին խոնավ, հեղձուցիչ օդի թմրեցնող, ծանր բույրը:

Իսկ գիշերները: Փառահեղ գիշերները, երբ անընդգրկելի երկնականարի շողշողացող անհաշիվ աստղերի կրակների տակ ննջում է երկիրը: Հարավում երկնականարը ավելի մութ է և թվում է, թե աստղերը կպած չեն գոգավոր երկնքի կիսագնդին. ընդհակառակը, տեսնում ես, որ արևադարձային օդում թրթռացող գեղեցիկ, սքանչելի լուսատուները ճառագում են «անհասանելի հեռուներից և ծիածանագույն ճառագայթներ են արձակում մութ տարածության մեջ:

Բոսորագույն լուսինը բարձրացավ ջուռգլիի վրա: Ենիկը պառկած էր, չէր շարժվում: Նա հոգնել էր և հանգստանում էր երեք կաղնիների ստվերում, որոնց տակ քարավանը տեղավորվել էր գիշերելու համար: Ենիկը նայում էր ծառերի գագաթներին և երագում... Եթե Ֆրանստիշեկը գտնում է, որ անհրաժեշտ է լրացնել օրխիդեայի հավաքածուն, ուրեմն իրենք այդտեղ դեռ շատ կմնան:

Ձախ կողմը աղմկում, տնքում, շաչում էր անտառը, իսկ աջում տարածված էին անհաշիվ ծաղիկներով ծածկված հիանալի մարգագետինները: Հենց որ ճանապարհորդները այստեղ հասան, դրանք գրավեցին Ենիկի ուշադրությունը:

Մարգագետնի վրա վետվետում էին ստվերները. որսի էին դուրս եկել հսկայական մեծության չղջիկները: Անդադար կռվում էին գորտերը և երբեմն նրանց միալար երգը ընդհատում էր ճահճային թռչունի սուր ճիչը, որը նման է գլխիվրայով թռչող նետի սուլոցին:

Հանկարծ այն կողմից, որտեղ կանգնած էին ջորիները, հնդիկները ինչ-որ բան բղավեցին: Պետք է ասել, որ անասուններին, ինչքան հնարավոր է, նրանք հեռու էին կապում ճամբարից, որովհետև միջատները գրավվելով նրանց հոտից, մարդկանց չէին խնայում: Մտքերով տարված Ենիկը անմիջապես չհասկացավ, թե ինչ է պատահել: Նա դեռ չէր հասցրել ուշքի գալ, երբ կրակոց լսվեց, դրան հետևեց երկրորդը: Ենիկը վեր թռավ: Ո՛չ Ֆրանստիշեկը, ո՛չ Էլ Վացլավը չէին երևում, իսկ ճիչերը չէին դադարում: Բայց շուտով դրանք փոխվեցին ցնծալի բացականչությունների: Ենիկը նետվեց առաջ. հնդիկների խմբում նա ճանաչեց Ֆրանստիշեկին, Խոսեին և Վացլավին:

— Ուղղակի մեր բախտը բանեց,— բացականչեց Ֆրանստիշեկը,— քարշ տվեք կրակի մոտ:

Իրարանցման մեջ ոչ ոք ուշադրություն չդարձրեց՝ Ենիկի վրա, բոլորն զբաղված էին. միացյալ ուժերով սպիտակները և հնդիկները ինչ-որ շատ ծանր բան էին քարշ տալիս դեպի ճամբարը:

Շուտով Ենիկը ամեն ինչ իմացավ: Հնդիկները վազել էին հայտնելու «դոն Ֆրանսիսկոյին», թե ինչ-որ մի խոշոր գիշատիչ գաղտնի մոտենում է ավանակներին և ջորիներին: Ֆրանստիշեկն ու Վացլավը առանց հապաղելու, շտապ վերցրեցին կարաբինները և նետվեցին նրանց հետևից: Նրանք ժամանակին հասան: Ճարպիկ գիշատիչը արդեն թռել էր կենդանիներից մեկի վրա: Մթության մեջ դժվար էր որևէ բան տարբերել և Ֆրանստիշեկը որոշեց գազանին քշել կրակոցով, բայց նախքան ձգան քաշելը նշան բռնեց. գազանը ընկավ և սարսափելի ոռնոցով տապալվեց գետնին: Հրաձիգը մոտ վազեց և մի անգամ էլ կրակեց: Թնդաց կրակոցը, մոնչոցը կտրվեց, շուտով դադարեցին և ջղաձգությունները: Նույն պահին վիրավոր գիշատիչի մոտ վազեցին հնդիկները՝

դաշույնները ձեռքներին, բայց արդեն նրանց կարիքը չէր զգացվում, գազանը սատկել էր: Գազանին մի կերպ քարշ տվեցին խարույկի մոտ: Նրա մաշկի անհավասար սև նշաններից դատելով, Գվատեմալայի անտառների կենդանական աշխարհի ամենասարսափելի թշնամին էր՝ հովազ: Առաջին փամփուշտը ջարդել էր նրա մեջքը, երկրորդը՝ ծակել էր կուրծքը և, երևի, ուղիղ սրտին էր դիպել:

Այդպիսի գազան եսիկը կյանքում առաջին անգամ էր տեսնում: Սարսափով նայում էր բաց ժանիքներին, փայլուն, կանաչ աչքերին, որոնց արդեն իջել էր մահվան մշուշը: Տղան դողաց և կպավ քեռուց:

— Տեսնում ես,— ասաց Ֆրանտիշեկը,— ահա այդպիսի քաջերը և նրա ազգականները խանգարում են մեր գիշերային հանգիստը: Ուրեմն, մի ավազակ և մի ճչան պակասեց: Հովազները, ճիշտ է, խույս են տալիս մարդկանցից, բայց երբեք առիթը բաց չեն թողնում հարձակվելու ընտանի կենդանիների վրա, մի բան, որ այսօր ցույց տվեց այս քաջը: Մենք նրան բռնեցինք հանցագործության վայրում, և նա հատուցեց ամեն ինչի համար: Իսկ հիմա՝ քնել: Սատկած հովազից այնքան էլ հաճելի հոտ չի փչում:

Եսիկը, Վացլավը և Ֆրանտիշեկը գնացին դեպի կաղնու տակ գտնվող իրենց վրանը, իսկ հնդիկները նոր խարույկ վառեցին բեռնակիր կենդանիների մոտ:

Միայն հաջորդ օրը, առավոտյան, Եսիկը կարողացավ ինչպես հարկն է նայել հովազին: Նա շատ զարմացավ, երբ Ֆրանտիշեկը կարգադրեց ձեռք չտալ դիակին և պատրաստվել ճանապարհ ընկնելու:

— Պետք է ավելի հարմար և ապահով տեղ փնտրել,— բացատրեց նա: Իսկ Եսիկի հարցին, թե տանելո՞ւ են արդյոք իրենց հետ թեկուզ հովազի մորթին, նա պատասխանեց.— Ոչ մի դեպքում: Մեզ ուղարկել են այստեղ օրիսիդեա որոնելու, ոչ թե հովազներ որսալու: Մենք միջոցներ չունենք ո՛չ մորթին պահպանելու, ո՛չ էլ ամբողջ աշխարհով մեկ մեզ հետ քարշ տալու համար: Ես կարծում եմ հնդիկներն իրենք հոգկտանեն այդ պտավոր մուշտակի համար:

Ութ ժամ քարավանը քայլում էր ջունգլիի եզերքով: Վերջապես ճամբարի համար հարմար տեղ գտնվեց: Ֆրանտիշեկը գերադասեց տեղավորվել բարձունքին, որտեղից լավ էր երևում հորիզոնը և միշտ ժամանակին կարելի էր նկատել, թե ով է մոտենում ճամբարին:

Հնդիկներն սկսեցին կենդանիների վրայից իջեցնել բեռները, բայց այդ թուպեին մոտ վազեց Դիեգոն և հայտնեց, որ հեռվում ծուխ է բարձրանում: Ֆրանտիշեկը նորից վերցրեց հրացանը և շտապեց հնդիկների հետևից. նա կարգադրեց, որ ոչ ոք չհեռանա ճամբարից:

Լգոտկան վազում էր առջևից. նրա նրբազգաց քիթն արդեն հեռվից առավ ծխի և, հավանական է, նաև մարդկանց հոտը:

Տասնհինգ թուպե քայլելուց հետո, Ֆրանտիշեկը նկատեց բրեզենտով ծածկված երկու սայլակ և մի մեծ խարույկ: Խարույկի մոտ նստած էին մի տղամարդ և մի կին: Կինը պղնձյա ամանը կախել էր բոցավառվող կրակի վրա:

«Սրանք խաղաղ մարդիկ են»,— մտածեց Ֆրանտիշեկը, և մոռանալով ամեն տեսակի զգուշություն, արագ մոտեցավ կրակին: Ընդ որում, Լգոտկան առաջ անցավ նրանից և, մի կրակոցի հեռավորությամբ մոտենալով մարդկանց, կարճ հաչաց:

Տղամարդը և կինը զարմացան: Թողնելով իրենց գործը, նրանք հետաքրքրությամբ հետևեցին սպիտակին, որի հետևից կրնակալոխ գալիս էր հնդիկը:

— Բարի օր,— ողջունեց Ֆրանտիշեկը անծանոթներին:

Տղամարդը ձեռքը տարավ գլխարկին:

— Ուլքե՞ր եք և ի՞նչ եք ուզում:

— Ես ճանապարհորդ եմ և նույնպես ցանկանում եմ իմանալ՝ ուլքե՞ր եք դուք,— պատասխանեց Ֆրանտիշեկը:— Քաղաքում չէի հարցնի այդ մասին, բայց ջունգլիում, ինքների գիտեք, պետք է իմանալ հարևանին:

— Մենք անտառահատների արտելից ենք,— բացատրեց տղամարդը,— մեր ընկերներն հիմա ուսումնասիրում են անտառը:

— Դուք շա՞տ եք:

— Յոթ տղամարդ և մի կին:

— Ինչպիսի՞ ծառ եք փնտրում:

— Երկնագույն:

— Իսկ ո՞ր է ձեր ավագը:

— Անտառում, շուտով կվերադառնա:

Ֆրանտիշեկը նայեց շուրջը:

— Մենք տեղավորվել ենք քիչ հեռվում,— ասաց նա,— եթե ես գամ այստեղ երկու ժամ հետո, կգտնե՞մ նրան:

— Իհարկե: Բարի ճանապարհ:

— Ցտեսությո՜ւն: Լգտկա, գնանք:

Տանը Ֆրանտիշեկը և Դիեգոն պատմեցին ամբողջ լսածի և տեսածի մասին:

— Չնայած անտառահատները փչացնում են անտառը, բայց մեզ համար նրանց հետ հանդիպելը հազվագյուտ հաջողություն է: Սովորաբար դրանք խաղաղ մարդիկ են: Տեղավորվելով նրանց կողքին, մենք ապահով կլինենք վտանգից,— ասաց Ֆրանտիշեկը:

Ճանապարհորդները ճամբար խփեցին քիչ հարավում. այստեղ ինչքան ուզես բլուրներ կային: Ընտրիր՝ որն ուզում ես:

Մոտավորապես մեկ ժամ հետո վրանում հանգստացող Ֆրանտիշեկին Դիեգոն հայտնեց, որ ճամբարին մոտենում են երկու անծանոթ մարդիկ, ավելի շուտ՝ անտառահատներ: Ֆրանտիշեկը դիմավորեց հյուրերին վրանի առջև և սիրալիորոջունեց նրանց:

Երկու եկվորներն էլ, որոնք մետիսներ էին՝ ծովափից, որպես նշան բարեկամության, Ֆրանտիշեկին ձեռք տվին և նրա հրավերով վրան մտան: Նրանք հաստատեցին այն, ինչ ասել էր խարույկի մոտ տղամարդը, որի հետ մեկ

Ժամ խոսել էր Ֆրանսիշեկը: Իսկապես, անտառահատները մտադրվել էին կանգ առնել մոտակայքում, որովհետև այստեղ անտառներում երկնագույն ծառեր շատ կային. իսկ գլխավորը՝ այստեղ համեմատաբար ավելի հեշտ է սայլերին հասնել: Մետիսները հայտնեցին, որ իրենց արտելը մի մեծ ընկերության առաջավոր ջոկատն է: Կան մի տասնյակ արտելներ և բոլորն էլ աշխատում են դոն Միգել Սերպենտի համար: Նա անտառանյութը հանձնում է համբուրգյան ֆիրմային: Առաջավոր ջոկատը կտրատում է ծառերը, պատրաստում է անտառանյութը, իսկ մյուսները միայն զբաղվում էին դրա առաքումով:

Մետիսին, որն այդպես լավ իրագել էր գործին և բացատրություն էր տալիս Ֆրանսիշեկին, անվանում էին Խուան Բրաչատե, իսկ նրա ընկերոջը՝ Բոբ Պանսա:

Ամեն ինչի մասին պատմելով, Խուան Բրաչատեն նորից ձեռքը մեկնեց Ֆրանսիշեկին. դա նշանակում էր, որ վստահության դիմաց նա խնդրում է վստահություն: Մինչև հիմա մետիսը ջունգլիում չէր հանդիպել ծաղիկներ հավաքող օտարերկրացու, իսկ դա արդեն ինչ-որ մի բան նշանակում է, որովհետև Բրաչատեն արդեն հիսուն տարեկան էր և ջունգլիում թափառում էր մանկությունից սկսած:

Վերջում նա ասաց, որ իրենց և սենիոր Պանսային շատ է ուրախացրել նոր ծանոթությունը: Պարզվեց, որ սենիոր Պանսան ընդունակ է միայն մի արտահայտության, որն ի վիճակի չենք հավերժացնելու. այն հասկանալի չէր:

Անսպասելիորեն հեռվից կրակոցի ձայն լսվեց և երկու մետիսներն էլ բարձրացրին գլուխները:

— Մի տազնապեք,— հանգստացրեց նրանց Ֆրանսիշեկը,— դրանք իմ կրտսեր ընկերներն են, գնացել էին որսի, որովհետև մենք վաղուց արդեն թարմ միս չենք կերել: Շուտով նրանց հետ կձանոթանաք. երեկոն մոտենում է և որսորդները որտեղ որ է, պետք է վերադառնան:

Անտառահատները ընդունեցին հյուրասիրությունը և մի բաժակ պուլկե խմելով, արդեն պատրաստվում էին գնալ, երբ ներս վազեց տաքացած Լգոտկան:

— Ահա և մեր որսորդները,— ուրախացավ Ֆրանսիշեկը և հյուրերի հետ միասին դուրս եկան վրանից:

Նրանց ընդառաջ վազեց Ենիկը, ուրախացած թափահարելով ձեռքի թռչունները, որոնք նման էին ձկնկուլի:

— Զեռի՛, ես լավ որս եմ բերել: Ա՛յ թե ընթրիք կլինի, հա՛: Պատկերացրու, ես խփել եմ թռչելիս:

Անտառահատները հիացած նայում էին տղային, իսկ սենիոր Պանսայի կլոր, մսոտ երեսին ձգված շրթունքները ժպտում էին. նրան դուր էր եկել այդ տղան: Ենիկի հետևից մոտեցավ Վացլավը և ամուր սեղմեց անտառահատների կոշտ ձեռքերը:

Եվրոպացիները ճանապարհեցին մետիսներին: Նրանք պայմանավորվեցին օգնել մեկմեկու, իսկ անտառահատները համառորեն որսորդներին առաջարկում էին վրաններ խփել միևնույն ճամբարում իրենց հետ միասին: Ֆրանսիշեկը խոսք տվեց, որ կտեղափոխվեն նրանց մոտ: Նա նոր բարեկամներին հարցրեց Պետեն լիճը տանող ճանապարհի մասին և անասելի ուրախացավ, լսելով, որ ընդամենը երկու օրվա ճանապարհ է մնում այնտեղ հասնելու:

Սենիոր Պանսան աչքը չէր հեռացնում Ենիկից: Նա քայլում էր տղայի կողքից, հուզմունքով նայելով նրան, իսկ սա գվարճանում էր Լգոտկայի հետ, ուղարկելով նրան մեկ թփուտների մեջ, մեկ խոտերի, իսկ հետո ետ էր կանչում:

Բաժանվելիս Պանսան իր հաստ մատներով շոշափեց Ենիկի այտերը և շատ սիրալիր ասաց.

— Ես մի տղա ունեի, քեզ նման էր: Նրա անունը Միգել էր: Մեր չար բախտից մեռավ:

Ենիկը խորապես ազդվելով. բռնեց անտառահատի ձեռքը:

— Ձեր որդին մեռե՞լ է: Խեղճ: Ինչի՞ց:

— Նրան կծեց բոժոժավոր օձը, իսկ օգնությունն ուշացավ: Դու ընկերներիդ հետ կգաս մեզ մոտ, չէ՞:

Հաստամարմին Պանսայի ծայրը դողաց:

— Անպայման,— հուզված բացականչեց Ենիկը,— և դուք կպատմեք Միգելի մասին:

Սենիոր Պանսան Ենիկին սեղմեց իր հզոր կրծքին և գլուխը կախելով, առանց որևէ մեկի վրա ուշադրություն դարձնելու, քայլեց իր ընկերների հետևից:

— Ահա, տեսնում ես, Ենիկ,— ասաց Ֆրանտիշեկը,— հիմա հասկանո՞ւմ ես ինչպիսի՜ վիշտ կարող ես պատճառել մեզ՝ քո անզգուշությամբ:

Ենիկը շփոթվեց: Նա հասկացավ, թե քեռին իրեն ինչքան շատ է սիրում:

Նա չէ՞ որ չասաց. «Ինչպիսի՜ վիշտ կարող ես պատճառել ծնողներիդ»: Նա ասաց՝ մեզ, այսինքն՝ իրեն և Վացլավին:

— Ի՛նչ եք ասում, ես չեի ուզի ձեզ վշտացնել,— դուրս թռավ Ենիկի բերանից, և նա գրկեց իր ավագ ընկերներին:— Ընդհակառակն, ես ուզում եմ ամեն օր ձեզ ուրախություն պատճառել:

Լգոտկան վիրավորվեց, որ մարդիկ մոռացել են իրեն: Շատ դժգոհ այդ բանից, նա անմիջապես պաշտպանեց իր իրավունքը. բարձր ցատկելով՝ թաթերը դրեց Ենիկի ուսերին և տղան դեռ չէր հասցրել ետ նայել, երբ շունը լիզեց նրա դեմքը: Ի՛նչ կարող ես անել, տղան ստիպված գրկեց նրան: Ենիկը դա այնպես անշնորհք արեց, որ երկուսն էլ գլորվեցին խոտերի մեջ:

— Անտառահատների հետ մեզ համար հանգիստ կլինի,— ուրախացավ Ֆրանտիշեկը,— և Խոսեն կարող է հաճախ մեզ հետ անտառ գալ:

— Իսկ այնտեղ, մեկ էլ տեսար, խոհարարուհուց էլ մի բան սովորեցիր,— ավելացրեց Վացլավը:— Դա չի խանգարի...

— Ախ դո՛ւ,— ծիծաղեց Ֆրանտիշեկը,— չեխական կարկանդակ կամ մսագնդիկներ չէի՞ր ուզի:

— Օ՛, եթե լիներ,— հառաչեց Վացլավը:— Ես բլիթն էլչեի արհամարհի:

— Այդ ի՛նչ բլիթ է, որ դու ամեն առիթով ակնարկում ես:

— Բլիթ մեզ մոտ անվանում են տրորված կարտոֆիլով խմորագնդիկները, վրան մանրած չորացրած տանձ ցանած: Դա նույնպես ազգային ուտելիք է, ինչպես սալորով կարկանդակը,— բացատրեց Վազլավը:

— Ուրեմն դու կարտոֆիլով բլիթների մասի՞ն ես ասում,— գլխի ընկավ Ֆրանտիշեկը:

Բոլորը ծիծաղեցին: Ահա թե ի՞նչ, երեք տարբեր անուններ՝ բլիթ, մսագնդիկ, կարկանդակ, իսկ եուրոնը նույնն է: Հիմա բոլորին հասկանալի եղավ, թե ինչի մասին է խոսքը:

— Իսկ մենք վրան ցանում ենք շաքար՝ ծեծված խաշխաշով, հետո՝ հասկանալի է, յուղ ենք լցնում,— ավելացրեց Ֆրանտիշեկը:

— Իսկ մենք՝ տրորված պանրով ենք պատրաստում,— հպարտացավ Ենիկը:

— Այդ բոլորը չի կարելի համեմատել չորացած տանձի հետ,— իրենը պնդեց Վազլավը:

Տարօրինակ էր հնչում այս խոսակցությունը Գվատեմալայի արթնացող ջունգլիում, բայց դրանում հնչում էր նաև օտարերկրացիների կարոտը՝ հայրենիքի համար:

Գլուխ տասներեքերորդ
ԲԱՐԻ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ

Անտառահատներն իսկապես լավ հարևաններ դուրս եկան. արտելի բոլոր անդամները բարի և աշխատասեր մարդիկ էին: Երեկոյան, երբ ցերեկվա աշխատանքից հետո հանգստանում էին, խարույկի մոտ ուրախություն էր տիրում: Կատակներին և գվարճությանը փոխարինում էին հիշողությունները՝ հետաքրքիր իրադարձությունների մասին:

Անտառահատները շատ չէին հեռանում անտառի խորքը: Նրանք գլխավորապես հոգ էին տանում այն մասին, թե ինչպես հեշտացնեն կտրած ծառերի առաքումը ջունգլիի ծայրամասից կամ ծայրահեղ դեպքում, բացառից, որտեղ այնքանել դժվար չէ գերաններ քարշ տալը:

Բայց օրիսիդեա որոնողների գործը դժվար էր. ծառերի գագաթների ծաղկուն այգիները հրապուրում էին, և ճանապարհորդները քայլ առ քայլ խորանում էին ջունգլիի մեջ: Երբեմն անտառահատները բերում էին ծառերի գագաթներից կտրած օրիսիդեայի ամբողջ թփեր: Նրանք օրիսիդեաները տալիս էին Ֆրանտիշեկին և շատ էին զարմանում այն բանից, որ որոնողները արկղներում զգուշությամբ դարսում էին խորշոմած շիվերը և պատռված կեղևով շագանակագույն տերևները, իսկ փարթամ ծաղիկները դեն էին գցում:

Բոլորովին վերջերս այդ բանից զարմացավ նաև դոն Ֆերնանդոն, և Ենիկը ստիպված էր նորից բացատրություններ տալ: Տեղին է ասել, Ենիկի հեղինակությունը և հարգանքը նրա նկատմամբ շատ էր մեծացել: Քիչ-քիչ նա դառնում էր գիտակ և փորձված օրիսիդեա հավաքող: Ի վերջո նույնիսկ համոզեց Ֆրանտիշեկին թույլատրելու իրեն բարձրանալ ծառերի գագաթը և նայել այդ «օդային այգիները»:

Հնդիկների ավագը և Դիեգոն խոստացան, որ աչքները չեն հեռացնի Եսիկից: Նրանց անխոնջ հսկողության ու ղեկավարության տակ տղան սովորեց սկյուռի նման մագլցել ծառերը: Բայց չէ՞ որ ծառեր ջունգլիում խաղալիքներ չեն: Բարձրանալու համար մեծ արվեստ է պահանջվում: Վեր մագլցողը միայն ձեռքերի և ոտքերի ուժը չի օգտագործում, որոնք պահում են մարմինը. քիչ դեր չեն կատարում նաև վիզն ու գլուխը, որոնցով ճանապարհ են բացում իրար հյուսված ճյուղերի միջով: Մարդը սկյուռի նման ծառից ծառ չի թռչում, չի ցատկոտում ինչպես փայտփորիկը, նա ավելի շուտ սողում է մոդեսի պես: Այդ միտքը ծագեց Եսիկի գլխում, երբ նա հետևում էր փոքրիկ, արագաշարժ Դիեգոյին:

Երբ Եսիկը առաջին անգամ բարձրացավ ծառի գագաթը և նայեց շրջապատը, հուզմունքից ուղղակի մարեց: Ծառերի կատարները ծածկված էին տարբեր ձևի և գույնի ծաղիկներով, բայց դրանց մեջ գերակշռում էին նուրբ մանուշակագույն, ոսկյա երակներով ծաղիկները: Արևադարձային ծաղիկներով ծածկված ծառերի վեր խոյացող գագաթները հեքիաթային գեղեցկության մարգագետիններ էին թվում:

Եվ այս արտասովոր գեղեցկության վրա, թավ անտառի վտանգներից վեր, այրող արևի անտանելի շողերի մեջ բզգում, երգում, փայլվում էին անդադրում միջատները: Ծառերի գագաթներին փթթող մարգագետինները նրանց համար հիանալի ապաստարան էին ծառայում: Ողողված ծիածանի բուլբուլ գույներով, շուրջը պտտվում էին հիաքսանչ կոլիբրիները. նրանք օրորվելով իջնում էին ճկուն ոստերի վրա, նրբագեղ կտուցները մտցնում էին քնքուշ ծաղկի պսակի մեջ, որպեսզի բռնեն թաքնված բզեզներին և մժեղներին:

Եսիկը պատրաստ էր ամբողջ օրը հիանալու այս տեսարանով:

Սկզբում նա շատ բաներում էր սխալվում, օրինակ, կարծում էր, թե կոլիբրիները թիթեռների նման կերակրվում են ծաղիկների հյութով: Բայց Ֆրանսիշեկը բացատրեց, որ այս փոքրիկ թռչնակները ծաղկեպսակից հանում են մանր միջատներին, որոնք նրանց հիմնական ուտելիքն են:

Եսիկի գլուխը պտտվեց քնքուշ և նուրբ բուրմունքից, որի մեջ ավելի շատ զգացվում էր վանիլի անախորժ, քաղցրավուն հոտը: «Օդային այգու» անուշահոտությունն ուղղակի թմրեցնող ազդեցություն էր թողնում:

Եսիկը նստել և նայում էր հմայվածի նման: Տարված գեղեցկությամբ, մոռանալով շրջապատը, նա երագում էր:

Եվ ահա մոտերքում նա փարթամ ծաղկած օրխիդեայիմի թուփ նկատեց: Օրխիդեայի մի քիչ խունացած ցողունը համարյա չորացած ծաղիկներով՝ կախված էր օդում: Եսիկը զգուշությամբ պոկեց ցողունը և շարտեց գետին:

Դա նրա գտած առաջին օրխիդեան էր: Նա դրան նույնիսկ նշանակություն չտվեց և զարմացավ, երբ մի ժամ հետո Ֆրանսիշեկը բոլոր հնդիկներին կարգադրեց ջանադիր ստուգել ծառը, որի վրա նստած էր Եսիկը:

— Եսի՛կ, այդ դո՞ւ ես գտել,— ձայն տվեց քեռին,— ա՛յ սա հաջողություն է: Ապրես, քո բախտը լավ է բերել:

Եվ Ֆրանսիշեկը թեքվելով, նորից ու նորից էր զննում մեջտեղում նարնջագույն ծաղկեպսակ ունեցող, մուգ դարչնագույն մսոտ տերևները, որոնք կարծես ցողված էին դեղին ներկով և զարդարված մանուշակագույն երակներով:

Կեսօրից հետո, երբ որոնողները ճամբար վերադարձան, Ֆրանտիշեկը անմիջապես սկսեց թերթել գրքերը, որոնք վերցրել էր հետը: Նա նոր գտնված ծաղիկները համեմատում էր նկարների հետ, և գոհ արդյունքից, ոգևորված օրորեց գլուխը:

— Դու գտել ես հազվագյուտ տեսակը, տղա՛ս,— զգացված խոսեց նա և խփեց Ենիկի ուսին:— Եթե մի անգամ էլ քեզ այդպիսի բան հաջողվի, դու կհատուցես բոլոր ծախսերը, որոնք քեզ համար կատարել է միստր Հաուն:

Ենիկը երջանկությունից յոթերորդ երկնքումն էր: Հիմա ինքն էլ պետքական մարդ է: Եվ տղան որոշեց, որ սրանից հետո կփնտրի միայն ամենահազվագյուտ ծաղիկները: Նա դեռ ցույց կտա, թե ինչի է ընդունակ:

Երեկոյան հնդիկները գտան այդպիսի մի թուփ ևս: Ֆրանտիշեկը չափից դուրս գոհ էր այդ օրվա գտածից:

Իսկ ո՞ր կորան օրիսիդեա որոնողներին հետևող թալանչիները: Ավագակախմբի մասին ոչ ոք ոչինչ չգիտեր: Երևի նրանք ճանապարհորդների հետքերով հասել էին նոր ճամբարին, բայց իմանալով, որ սպիտակները միացել են անտառահատների խմբին, հեռացել էին: Նրանք մարդաշատ ճամբարի վրա հարձակվելու քաջություն չէին ունեցել: Այդպիսի թափառաշրջիկները քաջություն են ունենում հարձակվելու անգն գոհի վրա, բայց քաջ հակառակորդի առաջ նրանք միշտ նահանջում են:

Շրջակայքում տարածված անծայրածիր մարգագետինը, դատելով մուգ կանաչավուն գույնից, փոքած էր ճահճի վրա, որտեղ պատսպարվում էին բազմաթիվ թռչուններ: Դա կարելի էր գլխի ընկնել ոչ միայն նրանից, որ ցերեկը անթիվ-անհամար երամներ անընդհատ պտտվում էին մարգագետնի վրա, այլև մութն ընկնելուն պես ամեն կողմից բազմաթիվ ճիչեր էին լսվում:

Մի անգամ վաղ առավոտյան մեր բարեկամները պատրաստվեցին որսի գնալու:

Լգոտկան խոտերի մեջ ուրախ թավալվում էր ու վնգստում, երբ նրա քթի տակից վեր սլացավ վախեցած կաքավների մի երամ և տափաստանային արոսների նման թռչուններ: Նա տազնապի մեջ էր գցում շատ փետրավորների, որոնք արտաքինով հիշեցնում էին հավերի, սագերի ու կտցարների: Վախեցած թռչունները աղմուկ-աղաղակով սլանում էին ճահճի վրայով և թաքնվում հեռուներում:

Չարմանալի չէր, որ կրակոցները հետևում էին մեկը մյուսին. կապտավուն ծուխը տարածվել էր խոտերի վրա: Լգոտկան մոռացել էր հոգնածությունը. նա մերթ կանգնում էր թաթերին, մերթ նետվում թռչունների երամի վրա, մեկ էլ բերում էր սպանված որսը:

Նույնիսկ երբ հոգնածությունը որսորդներին հալից գցեց և նրանք նստեցին հանգստանալու չոր խոտերի փափուկ բարձերի վրա, Լգոտկան դեռ շարունակում էր վազել և հոտոտել, ասես ինչ-որ բան էր փնտրում:

Ֆրանտիշեկը, որ բլուրի վրա էր բարձրացել, իր ընկերների ուշադրությունը հրավիրեց գվատեմալյան սավանաների մի առանձնահատկության վրա. դա խայտաբղետ մարգագետին չէր, որտեղ բոլոր գույները խառնվում են անկանոն ձևով: Սավանայում առաջանում են բուսականության առանձին կղզյակներ. այնտեղ, ուր գերակշռում է բույսերի մի տեսակը, մյուսը երբեք չի թափանցում, և այդ երկնագույն, բաց վարդագույն, դեղին, շագանակագույն, մանուշակագույն և սպիտակ կղզյակները շատ հաճելի են աչքի համար:

Դիեգոն, որ սպիտակներին ուղեկցում էր որպես որս հալածող և սպանված որսը տեղափոխող, հանկարծ բոլորին իր մոտ կանչեց, ցույց տալով դալար մացառուտում թաքնված մի որջ: Չգուշությամբ մոտենալով, որսորդները տեսան մի գազանի, որի գլխից մինչև պոչը սպիտակ շերտեր էին ձգված: Գազանն իր երկար, նեղ դունչը դրել էր իր սեփական կողին և անհռով քնել:

— Սա մրջնակեր է,— շնչաց Ֆրանտիշեկը և բոլորի հետ միասին զգույշ հեռացավ:— Թողեք դրան, շատ զգվելի հոտ ունի այդ քնկոտը: Ցանկանանք նրան ազատություն և քաղցր երազներ:

Ենիկը ուզում էր արթնացնել մրջնակերին, բայց Ֆրանտիշեկը թույլ չտվեց:

— Սպասիր, ա՛յ, գետակինճի կհանդիպենք և կսպանենք,— խոստացավ նա:— Չրահակիրների և մրջնակերների միսը չեն ուտում: Քիչ առաջ մեր ճամբարի մոտով պեկարներ /Պեկարներ — երկամբակավոր կենդանիներ. պատկանում են խոզերի ընտանիքին: Մարմնի երկարությունը 1 մ է, բարձրությունը՝ 40 սմ: Տարածված են Կենտրոնական և Հյուսիսային Ամերիկայում:/ են անցել, փափուկ հողի վրա մնացել են նրանց հետքերը: Ա՛յ, դա արդեն ուրիշ բան է: Ահա թե երբ կարելի է միլավ խնջույք սարքել: Պեկարի միսը հիշեցնում է խոզի մսի համը:

Ֆրանտիշեկը Ենիկին նկարագրեց, թե ինչպիսին են պեկարները: Դրանք բավական արագաշարժ կենդանիներ են, նման են վարազների, միայն ավելի խոշոր են:

Լգոտկան չսպասելով հրաձիգներին, սկսեց մենակ որս անել: Խոտերի մեջ անսպասելի մի ճիչ լսվեց. այդպես ծվծվում է վայրի ճագարը, որի վրա հարձակվում է աքիսը: Այդ նույն րոպեին, չգիտես որտեղից, մոտ վազեց Լգոտկան: Ատամներով բռնած նա բերում էր ծովախոզի նման մի գազանիկ, որը ոտքից մինչև գլուխ ծածկված էր մազոտ մորթով:

— Փո՛ւհ, այդ ի՞նչ ես քարշ տալիս,— հանդիմանեց նրան Ենիկը,— դե՛ն գցիր անմիջապես:

Լգոտկան, որպես պատասխան, ուրախ թափահարեց պոչը, բայց որսը բաց չթողեց:

— Ախր, դա ագուտի /Ագուտի — Կրծողների տեսակ: Ապրում են Կենտրոնական և Հարավային Ամերիկայի գետերի մոտ գտնվող արևադարձային անտառներում: Դրանց անվանում են «սապատավոր նապաստակներ», որովհետև հիշեցնում նապաստակներին, բայց վերջիններից տարբերվում են սապատավոր մեջքով:/ է,— նկատեց քեռին:— Ինչո՞ւ դեմ գցել: Նա մեր նապաստակի նման բան է: Տուր Դիեգոյին. կտեսնես, որ հիանալի միս է: Իսկ եթե հաջողվի այդպիսի գազանիկի կենդանի բռնել, ապա կվերցնենք հետներս: Շատ խելոք կենդանի է, սովորեցնելը շատ հեշտ է:

Ենիկը արագ նետվեց դեպի այն տեղը, որտեղ Լգոտկան բռնել էր ագուտիին (Դիեգոն նրան անվանում էր «ցուպոլ»), բայց ուշ էր. գազանիկները արդեն փախել էին և թաքնվել մացառուտներում:

Դիեգոն ծիծաղեց, տեսնելով, թե ինչպես է վշտացած Ենիկը: Վաղը նա Ենիկի համար ինչքան ուզես ագուտի կբերի. դրանց հեշտ է թակարդով բռնել, գետնասկյուռների նման են:

Որսորդներն արդեն մոտեցել էին տանը, երբ հանկարծ Դիեգոն, որն օգնում էր որսը տանելուն, շարտեց բեռը և մի կողմ թռավ:

— Օտովի՛,— սարսափած բղավեց նա, և նայեց շուրջը փայտ կամ այլ բան փնտրելով:

Ֆրանսիշեկը ուսից իջեցրեց հրացանը և վազեց վախեցած Դիեգոյի մոտ, որը ցույց տվեց խոտերի կողմը: Թնդաց կրակոցը, բայց երկուսն էլ՝ և՛ մեծահասակը, և՛ տղան, դեռ բավական ժամանակ կանգնած էին անշարժ: Հետո, երբ ցրվեց ծուխը, Ֆրանսիշեկը առաջ անցավ և երկար փայտով երեք անգամ խփեց խոտերին:

— Մոտեցեք, մի՛ վախեցեք, հիմա արդեն ոչ ոք մեզ ձեռքջի տա,— կանչեց նա:

Մոտ վազողները հետաքրքրությամբ նայում էին զգվելի, երկու մասի բաժանված օծի մարմինը:

— Դա օտովի է: Նա բոժոժավոր օծից պակաս վտանգավոր չէ, թերևս ավելի, օտովին հարձակվում է անմիջապես, իսկ նրա թույնը ներգործում է անսովոր արագությամբ:

Թվում էր, թե այս մարդը գիտի այն ամենի մասին, ինչ բուսնում է, թռչում, լողում, սողում կամ ցատկում:

— Նայեք, գնդակը մեջտեղից կիսել է, իսկ նա դեռ գլուխը շարժում է:

Օծին փայտով սատկացրին և շարժվեցին առաջ: «Չանկադոսները» (մոծակները) ավելի աներես էին դառնում և մարդիկ շտապեցին դեպի ճամբարի խարույկը, որպեսզի ազատվեն զգվելի ուղեկիցներից: Անտառահատներին հայտնի էին այն թփուտները, որոնց ճյուղերն ուժեղ ծուխ էին առաջացնում: Մշակները ամբողջ խուրձերով այդ ճյուղերից դարսեցին խարույկի վրա և բավական արագ քշեցին արյունախում միջատներին:

Դուք երևի հիանալի պատկերացնում եք, թե ինչպիսի հիացմունքով խոսեն դիմավորեց որսորդներին և որսին: Այն, ինչ այդ օրը չէին ուտելու, պետք էր հորել: Տաք երկրներում այլ կերպ հնարավոր չէ միսը պահպանել, կփչանա հենց մյուս օրը: Դրա համար էլ Ֆրանսիշեկը թույլ չէր տալիս շատ սպանել: Սակայն հենց մյուս օրը ինքը Ենիկին ցույց տվեց ոսկեկարմիր փետուրներով մի թռչուն:

— Այդ կարպինտերոն կսագի քո գմրուխտին,— շնչացնա:— Կարպինտերոն փայտփորիկի մի տեսակն է: Տեսնո՞ւմ ես, ի՞նչ հիանալի գույներ ունի: Լավ նշան բռնիր, որպեսզի չվրիպես:

Թնդաց կրակոցը և խայտաբղետ թռչունը վառվող հրթիռի նման ընկավ գետին:

— Հիմա ես նվեր ունեմ և՛ մայրիկի, և՛ հայրիկի համար: Մնում է միայն մի բան սպանել Թերեզիկի համար:

— Այստեղ ընտրելու չա՛տ բան կա,— հանգստացրեց տղային Ֆրանսիշեկը:— Դու դեռ շատ գեղեցիկ թութակներ և ահագին կտուցներով տուկաներ /Տուկաներ — փայտփորիկների խմբին պատկանող թռչուններ, որոնք աչքի են ընկնում բազմագույն փետուրներով և հսկայական, վառ ներկված կտուցով: Նրանց մարմնի երկարությունը հասնում է 50 սմ: Տուկաները տարածված են Կենտրոնական և Հարավային Ամերիկայի արևադարձային անտառներում:/ կտեսնես:

Այդ նույն օրը Ենիկը ծանոթացավ մի տարօրինակ կենդանու հետ ևս: Դիեգոն կանչեց նրան նայելու համրուկին /Համրուկները (համրուկների ընտանիք, ոչ լրիվ ժանիքավորների խումբ) տարածված են Հարավային և Կենտրոնական Ամերիկայի արևադարձային անտառներում, որոնք ընկած են խոնավ և նույնիսկ ճահճուտ ցածրավայրերում: Համրուկները կյանքի մեծ մասն անց են կացնում ծառերի վրա, քանի որ սնվում են ծառերի բողբոջներով, դալար շյուղերով և պտուղներով և խմում են տերևների վրայի ցողի կաթիլները: Նրանց մարմնի կառուցվածքը հարմարված է այդպիսի ապրելակերպի: Թաթերը նուրբ ու ճկուն են, զինված կառչուն ու մանգաղաձև մագիլներով (նրանց օգնությամբ հեշտ է կաչել ծառերի ճյուղերից): Վզի ողերը դասավորված են այնպես, որ համրուկի գլուխը հեշտությամբ շրջվում է ետ: Դրա փոխարեն համրուկը գետնի վրա բոլորովին անօգնական է: Ուտելով մի ծառի ընձյուղները, տերևները և պտուղները, ընկնում է գետնին և հետո մեծ դժվարությամբ, շատ դանդաղ հասնում է մյուս ծառին: Համրուկը ծառի վրա էլ շատ հաճախ մնում է անշարժ, այնպես, որ նրա բոդի մեջ երբեմն բույն են դնում միկրոսկոպիկ մեծության ջրիմուռները (որից մորթը ստանում է կանաչավուն երանգ) և նույնիսկ ցեցը:/:

Ենիկը հաճախ էր լսել այդ զարմանալի գազանի մասին, բայց երբեք չէր հավատացել, որ այդ անունը նրան շատ է սագում: Բայց, դա այդպես էր: Համրուկը անշարժ կախվել էր ծառից, ինչպես մեռած: Ամուր ճանկերով նա կառչել էր մի ճյուղից և, հավանական է, քնել էր: Դիեգոն ծիծաղելով, ճյուղով խփեց: Համրուկը չշարժվեց: Ենիկը սկսեց թափ տալ ճյուղը, որից կախվել էր փրչոտ գազանը: Ոչ մի փոփոխություն:

— Երևի նա շունչը փչել է,— ենթադրեց Ենիկը:

Դիեգոն ծիծաղեց:

— Նա կենդանի է, միայն ալարում է շարժվել: Բայց Դիեգոն կստիպի ցած իջնել, սպասի՛ր:

Դիեգոն ցած թռավ ծառից, կացինը խրեց գոտու մեջ և նորից բարձրացավ իր նախկին տեղը: Ենիկը հասկացավ, որ Դիեգոն ուզում է կտրել ճյուղը, որից կառչել էր համրուկը, և անհամբերությամբ սպասում էր, թե ինչ է լինելու: Ամբողջ ժամանակ համրուկը կենդանության նշան ցույց չէր տալիս: Նույնիսկ կացնի հարվածները չարթնացրին նրան: Միայն երբ ճյուղը ճռռաց և կռացավ, գազանն ամուր կառչեց թփերից, թը՛րիկ, ընկավ խոտերի մեջ և սկսեց թնկթնկալ, ինչպես երեխան քնի մեջ: Ենիկը մոտ վազեց և սկսեց նայել կոշտ մորթով պատված այդ կենդանուն: Նա կարճ, մագոտ դունչ ուներ և ուժեղ, երկար ճանկերով թաթեր: Տարօրինակ մի գազան էր դա, անշնորհք, սարսափելի դանդաղաշարժ:

— Այս հիմարը շատ ալարկոտ է,— ասաց Դիեգոն,— եթե բարձրանում է ծառը, նստում է այնտեղ այնքան ժամանակ, մինչև որ խժռում է բոլոր տերևներն ու պտուղները: Նա չի կարողանում իջնել, ինչպես հարկն է, երբ քաղցածանում է, ուղղակի իջեցնում է ճյուղը և ցած է ընկնում:

— Իսկ ի՞նչ ենք անելու սրան,— հարցրեց Ենիկը:

Դիեգոն ծիծաղեց:

— Ոչի՛նչ: Ճիշտ է, տեղացիներն ուտում են նրա միսը, բայց դոն Ֆրանսիսկոն զգվում է: Գնա՛նք:

Նրանք գնացին: Իսկ համրուկը նորից քնեց կամ էլ քնած ձևացավ: Ծո՛ւյլ, նա
նույնիսկ ցտեսություն չասաց տղաներին:

Գլուխ տասնչորսերորդ
ՀՅՈՒՐԱՍԵՐ ՏԱՆՏԵՐԵՐԻ ՄՈՏ

Անտառահատները անտառագրին հաստատվել էին հինգ-վեց ամսով, իսկ
օրիսիդեա որոնողները այնտեղ չորս շաբաթ մնալուց հետո, արդեն
պատրաստվում էին ճանապարհ ընկնել: Ֆրանսիշեկը գտնում էր, որ կարևորը
հավաքած բույսերի քանակը չէ, այլ նրանց բազմազանությունը: Լեռնային
օրիսիդեաները հազվագյուտ բաներ են, իսկ դրանք կարելի է գտնել միայն
Կոստա-Ռիկայում:

Անտառահատները եվրոպացիներին համոզում էին թեկուզ կարճ ժամանակով,
հետաձգել իրենց գնալը: Սկսվեց արևադարձային անձրևների շրջանը, իսկ
այդպիսի օրերին հատկապես հաճելի է ընկերական շրջապատը և
բարեկամական զրույցը: Բայց Ֆրանսիշեկը շտապում էր: Ճիշտ է, նա
համաձայնեց մեկ-երկու օր մնալ, որպեսզի անհրաժեշտ քանակությամբ
ապիստած մսի պաշար վերցնի, որից հետո արշավախումբը անհապաղ
ճանապարհ պիտի ընկներ:

Հնդիկները պեկարների մի մեծ հոտի հետք գտան և որսորդներին տարան
ուղղակի դեպի նպատակը, այնպես որ նրանց հաջողվեց վեց կենդանի խփել: Իսկ
Վացլավը խփեց ինչ-որ գազանի ու շատ ուրախացավ դրանով: Սակայն
Ֆրանսիշեկը չընդունեց նրա որսը:

— Աղավնյակս, չնայած քո ջրարջը լավ մորթ ունի, բայց միսը բանի պետք չէ:
Մի՞թե չես զգում, ինչ հոտ է փչում նրանից:

— Իսկական ա՞րջ է,— զարմացավ Ենիկը:— Դե, ինչ կա որ, մենք կարող ենք նվեր
ընդունել գոնե թաթերը: Ես ինչ-որ տեղ կարդացել եմ...

Ֆրանսիշեկը քրքջաց.

— Ես նույնպես երեխա ժամանակ կարդացել եմ արջի թաթերի մասին: Իբր թե
համեղ է, իսկ հոտը, ինչպես կրիայի մսով եփած արգանակի հոտ: Իբր թե
ռոբինզոնները կերակրվել են արջի թաթերով, ասես ոստրե լինի: Միայն, սիրելիդ
իմ, ամեն ինչի կյանքում չեն հավատա: Քեզ դուր չեն գա, արջի թաթերը չեխերի
ճաշակով չեն: Դրա փոխարեն պեկարի ապիստած միսը իսկական ուտելիք է, ա՛յ,
կտեսնես:

Խոսեն ստիպված էր բավականին ջանք գործադրել, մինչև որ ամբողջ միսը աղ
դրեց և ապիստեց:

— Խնայիր աղը,— զգուշացրեց Ֆրանսիշեկը:— Պետեն լճի մոտ ոսկուն հավասար
է գնահատվում: Ա՛յ, կտեսնես, հնդիկները աղի հետ ինչ սիրտդ ուզի կփոխեն:

Շուտով նախապատրաստական աշխատանքները վերջացան. արկղերը
փակեցին, վրանները հավաքեցին, գրաստները պատրաստեցին երկար
ճանապարհի: Հասավ հրաժեշտի ժամը: Անտառահատները, այդ անմիջական և
սիրալիր մարդիկ, մի քանի շաբաթվա ընթացքում շատ էին կապվել իրենց
սպիտակադեմ բարեկամներին և անկեղծ տխրում էին բաժանման պատճառով:
Նրանք ճանապարհորդներին ուղեկցեցին ճամբարի սահմաններից հեռու, շա՛տ

հեռու, և դեռ երկար նայում էին նրանց հետևից, ձեռքները թափահարում էին և բղավում:

— Բարի՜ ճանապարհ, ցտեսությո՛ւն:

«Գուցե նորից տեսվենք,— հառաչելով ինքն իրեն ասաց Ֆրանսիշեկը,— կարող է պատահել նորից անցնենք այս կողմերը»:

Ամենից ծանրը սենիոր Պանսայի և Ենիկի հրաժեշտն էր: Նրանք երկուսն էլ կատարեցին իրենց խոստումը. Ենիկը ամեն երեկո գալիս էր հաստամարմին մետիսի մոտ, նստում էր, գլուխը դնում նրա ուսին և լսում Միգելի մասին պատմածները:

— Կուզեի քեզ որևէ բան տալ, որպես հիշատակ,— ասաց Պանսան Ենիկին:— Միայն թե ես ոչինչ չունեմ... բացի այս դաշույնից... Վերցրու, գուցե պետք գա: Ամեն օր ես նրան կաղոթեմ, որ պահպանի քեզ: Մի՛ ծիծաղիր: Կարծում ես զենքը չի՞ հասկանում մարդկային լեզուն: Օ՛, այն էլ ինչպես է հասկանում: Այս դաշույնի հետ միասին քեզ կհետևի և իմ աջ ձեռքը, հիշի՛ր:

Ենիկը ընդունեց գեղեցիկ պատյանով դաշույնը և հպարտորեն կախեց գոտուց: Հետո Պանսային մեկնեց իր ատրճանակներից մեկը և խնդրեց ընդունել որպես հիշատակ սպիտակադեմ տղայից, որը միշտ շնորհակալությամբ հիշելու է իր հեռավոր բարի ընկերոջը:

— Լավ, կվերցնեմ ատրճանակը, բայց ներիր: Մի բան ես արդեն ինքս եմ վերցրել, գաղտնի: Այս գիրքը տեսնո՞ւմ ես: Ահա, վերցրու և ներիր:

— Ո՛չ, ո՛չ, սենիոր Պանսա, խնդրում եմ, թող ձեզ մոտ մնա: Թույլ տվեք միայն մի քանի բառ գրեմ...

Ենիկը նստեց գետնին և իսպաներեն մի քանի բառ գրեց. «Սիրելի սենիոր Պանսա, երբ կհիշեք ձեր Միգելին, մտածեք նաև չեխ տղայի՝ Յան Սատրապայի մասին, որ ձեզ անկեղծ սիրեց»:

— Է՛հ, գրածից ես բան չեմ հասկանում,— հառաչեց Պանսան:— Ոչինչ, մեր ավագը կարող է: Նա ամեն երեկո կկարդա ինձ համար: Դե՛, առողջ և բախտավոր լինես, որդի՛ս:

Ֆրանսիշեկն ստիպված եղավ ձայն տալ Ենիկին, որովհետև քարավանն արդեն անցել էր անտառը և բավական հեռացել էր: Տղան դուրս պրծավ մետիսի գրկից և շտապեց յուրայինների հետևից:

Արշավախումբը, որքան հնարավոր է, խուսափում էր ջունգլիից. դա այնքան էլ դժվար չէր: Նույնիսկ կարիք էլ չկա փոխելու ուղղությունը, քանի որ ջունգլին տարածվում էր հյուսիսից հարավ ձգվող լեռնաշղթաների փեշերին:

Պետենի ընդարձակ փոսորակը գոյացել էր երկրագնդի կեղևի վերին շերտերի իջվածքից, որը հրաբուխների հետևանքն էր: Նրա ամենացածր մասը լցվել էր անձրևի և աղբյուրների ջրերով, որոնք մինչև օրս էլ հավաքվում են այս հսկա ձագարում, որովհետև հոսելու տեղ չունեն:

Այդպես է առաջացել Պետեն լիճը: Դրան շրջապատող բնությունը հեքիաթային գեղեցկություն ունի և աննկարագրելի հարուստ է: Ամեն քայլափոխի նա ճանապարհորդներին պարգևում է չտեսնված գեղեցիկ պտուղներ: Թափանցիկ առվակները և սառնորակ աղբյուրները, տաք ու սառը հոսանքները շրջապատող

լցնում են հիանալի թարմությամբ. անուշահոտությունը արբեցնում է, իսկ անկրկնելի տեսարանի գեղեցկությունը կախարդում է մարդու հայացքը:

Գվատեմալայում կարելի է հանդիպել տարբեր ազգերի՝ ֆրանսիացիների, իսպանացիների, անգլիացիների, բայց Պետենի ավերին նրանք դեռևս չեն երևացել, որովհետև երկրի սիրտը համարյա ոչ մի կապ չուներ հեռավոր ծովափի հետ:

Մեր ճանապարհորդները դրանում շատ շուտ համոզվեցին: Դեռ լեռներում, նախքան լիճ իջնելը, նրանք հանդիպեցին որսորդ բնիկների: Եվրոպացիներին զարմացրեց ուժեղ, բարձրահասակ տղամարդկանց արտաքինը, որոնց մաշկի գույնը համարյա չէր տարբերվում սպիտակներից: Բնիկները երկչոտություն անգամ չցուցաբերեցին օտարերկրացիների առաջ և նրանց հրավերով սիրով մոտեցան վրանին: Նրանք խոսում էին այն լեզվով, որը լավ հասկանում էին քարավանի հնդիկ ուղեկցողները: Անձանոթները հագնված էին համարյա եվրոպական ձևով. ունեին բլուզներ և շալվարներ, բայց ուսներին կրում էին նեղ, թիկնոցի նման մի գործվածք: Նրանց գեները նետ ու աղեղն էր, չնայած երևում էր, որ հրացանը նրանց ծանոթ է: Նրանք հետաքրքրված զննում էին սպիտակների հրացանները, բայց աչքները հեռացնում էին, հենց որ եվրոպացիները նկատում էին նրանց նախանձոտ հայացքները: Ընդունելով հյուրասիրությունը, նրանք եկվորներին առաջարկեցին թարմ որս՝ նապաստակներ և հավի մեծության թռչուններ:

Ֆրանտիշեկը շնորհակալությամբ հրաժարվեց նվերից, բացատրելով, որ արշավախումբը պաշար ունի: Բաժանվելիս նա յուրաքանչյուրին մի-մի բուռ աղ տվեց, որը հնդիկներին մեծ ուրախություն պատճառեց:

Մեր ճանապարհորդները շատ ուրախացան, երբ մյուս օրը հասան լեռնագագում պատսպարված հնդկական մի գյուղակի: Մի քանի բնակիչներ նրանց ընդառաջ վազեցին: Դրանք ցածրահասակ, թուլակազմ, վախկոտ և պատրաստակամ մարդիկ էին: Իրար առաջ կտրելով, նրանք հրավիրում էին օտարերկրացիներին իրենց խրճիթները և հյուրասիրելու համար բերում էին ամեն ինչ:

Գյուղի շուրջը փռված դաշտերը ջանասիրաբար մշակված էին և բարձր եգիպտացորենը քամուց օրորում էր իր երկարտերևները, կարծես դիմավորում էր երկար սպասած հյուրերին:

Խրճիթների շուրջը վիստում էին հավերը, իսկ փափուկ հողի մեջ ծուլ-ծուլ փռվել էին խոզերը:

Խրճիթներում ոչ մի կահավորանք չկար, բացի ցանցաճոճերից, որոնք մեծերի համար անկողին էին ծառայում: Երեխաները քնում էին ուղղակի գետնին: Քանի որ խրճիթները շատ փոքր էին, ճամփորդները ստիպված բաժանվեցին. այստեղ նրանց ոչ մի վտանգ չէր սպառնում: Տեղի բնակիչները գաղափար չունեին գողության և անազնվության մասին:

Մեր բարեկամները դեռ չէին հասցրել հավաքվել ամենաընդարձակ խրճիթում, երբ եկավ ընտանիքի ավագը, որպեսզի մի անգամ էլ ողջունի հյուրերին և լսի նրանց ցանկությունները:

Խոսեն այդ օրն ազատվեց խոհանոցային չարչարանքից. տանտիրուհին արդեն տապակել էր հավի ճտեր և ձու էր եփել: Կաթսայում քլթքլթում էր եգիպտացորենի կաշան, իսկ տասից տասներկու տարեկան տղա երեխաները եռանդով ցախ էին լցնում կրակը:

Տղաները, ինչպես ընդհանրապես հնդկական բոլոր երեխաները, տկլոր ու ոտաբոբիկ էին, բայց տանտիրոջ հագին լավորակ բրոյա գործվածքից կարված վերնաշապիկ և տաբատ կար: Նա նույնիսկ կոշիկ ուներ. եզան փափուկ կաշվի մի կտոր փոկերով կապված էր սրունքներից: Տանտիրուհու հագին վերնաշապիկ էր և մաքուր երկնագույն գծերով յուբկա: Նրանց դուստրը, քսան տարեկան մի նազուկ աղջիկ, կարմիր յուբկա էր հագել և ագռավի փետուրի պես սև մազերին գունավոր ժապավեններ էր հյուսել:

Ճոխ ընթրիքից հետո սկսվեց գրույցը: Մեկը մյուսի հետևից կամացուկ խրճիթ էին մտնում հարևանները և շուտով ամբողջ գյուղը շրջանաձև նստոտելով գետին, ուշադիր ականջ էր դնում հյուրերի պատմածներին:

Տարօրինակ և արտասովոր էր այն, որ այստեղ բոլոր եկվորներին անվանում էին միատեսակ՝ «դոն խոսե»: Դա շատ վիրավորեց արշավախմբի սևամորթ խոհարարին: Որտե՞ղ է տեսնված այսպիսի բան: Չէ՞ որ միայն իրեն՝ խոսեին է պատկանում այդպիսի գեղեցիկ հնչուն մի անուն: Նեգրը անմխիթար վիճակում էր: Իգուր էր Ֆրանսիշեկը բացատրում, ոչ տեղի բնակիչները այդպիսի սովորություն ունեն, յուրաքանչյուր օտարերկրացու մեծարում են «դոն խոսե» ասելով, իսկ յուրաքանչյուր օտարերկրուհու՝ «դոնյա Մարիա»: Սև խոսեն չէր ցանկանում ընդունել այդ հիմար սովորությունները և բղավեց:

— Խոսե չէ: Դոն Ֆրանսիսկո, դոն Վալդավո, դոն Ենիկո, միայն ես եմ դոն խոսե:

Հնդիկները հետաքրքրվեցին, թե սպիտակները ի՞նչ են փնտրում: Հասկանալով, որ օտարերկրացիները բույսեր են հավաքում, նրանք անմիջապես առաջարկեցին իրենց օգնությունը:

— Այո՛, այո՛, այդպիսի ծաղիկներ այստեղ աճում են,— ասում էին նրանք իրար հետևից,— թանկագին հյուրերի բախտը բերել է և ինչքան շատ մսան, այնքան լավ կլինի:

Երեկոյան սպիտակները նույնիսկ մասնակցեցին ընդհանուր աղոթքին և դրանով ձեռք բերեցին այդ պարզ մարդկանց վստահությունը:

Ի միջի այլոց, եկեղեցին այստեղ էլ հավատացյալներից մեծ-մեծ հարկեր է վերցնում: Նրանք ստիպված էին եռանդով աշխատել, որ մի փոքր էլ իրենց մնար:

Մինչև Պետեն լիճը մտնում էր մեկ օրվա ճանապարհ, և Ֆրանսիշեկը արշավանք կազմակերպեց հարավային ուղղությամբ, հույս ունենալով, որ երբ շրջվեն դեպի արևելք, դեպի Հոնդուրաս, իրենց առջև կբացվի լիճը:

Օրերն անցնում էին աննակատելի և ուրախ: Գյուղում այնքան կամավոր օգնականներ գտնվեցին, որ որոնողներն արդեն սկսեցին ծուլանալ:

Արկղները լիքը լցվեցին, և Ֆրանսիշեկը գոհ շփեց ձեռքերը:

Ենիկը որոշ ժամանակ մոռացավ ջունգլին: Նա ուսումնասիրում էր գյուղը և ամեն անգամ ուշադրության արժանի մի բան էր գտնում: Ժամերով նա համառորեն կանգնում էր տեղացի կավագործի մոտ, որը կավե ամանեղեն էր պատրաստում: Տղան զարմանում էր կանանց վարպետության վրա, որոնք արագ ու ճարպիկ ալոեի /Ալոե — հյութալի տերևներով երկարակյաց բույս (պատկանում է շուշանագգիների ընտանիքին): Ալոեի մի քանի տեսակներ մանրաթելեր ունեն: Հենց դրանք էլ օգտագործում են ճոճացանցեր գործելու համար:/ մանրաթելից ճոճացանցեր էին գործում, ճլեից /Ճիլ — խոտաբույս, որը տարածված է գերազանցապես խոնավ տեղերում: Պատկանում է ճլախոտերի ընտանիքին:/ և

արմատների չոր մանրաթելերից՝ գլխարկ: Ենիկը երբեք չէր հավատա, եթե իր սեփական աչքերով չտեսներ, թե այն հիանալի կտորը, որը ռեբոսո է կոչվում, տեղացի աղջկա նուրբ ձեռքերի գործն է: Ախր, դա ավելի շուտ սարդոստայն էր, քան կտոր: Միայն Ֆրանսիշեկը կարող էր ըստ արժանվույն գնահատել այդքան վարպետորեն կարված աշխատանքը և դրա համար առաջարկեց հինգ ֆունտ, բայց երիտասարդ հնդկուհին դուրեկան ժպիտով հրաժարվեց վարձից, և մինչ Ֆրանսիշեկը ուշքի կգար, գեղեցիկ թաշկինակը նրան մեկնեց:

— Սա դոն Խոսեին,— ասաց նա:

Սովորությունը պահանջում էր, որ «դոն Խոսեին» նույնպես մի բան նվիրեր աղջկան, և Ֆրանսիշեկը երկար մտածում էր, թե փոխարենը ինչ տա: Վերջապես նա աղջկա առաջ դրեց իր ամբողջ հարստությունը և խնդրեց ընտրել, ինչը դուր կգա: Նա վերցրեց պայծառ նկարներով գիրքը, որտեղ ծաղիկներ էին նկարված:

Այդ աղջիկը ամբողջ տարին ապրելով Կենտրոնական Ամերիկայի հարուստ ու փարթամ բնության մեջ, որտեղ բնական ծաղիկների ճոխությունից գլուխ է պտտվում, ընտրեց Եվրոպայի խղճուկ ծաղիկների մեռած պատկերները:

Ֆրանսիշեկը կանխատեսել էր, որ ճանապարհորդության ժամանակ իրենց տարբեր գիզի-բիզի բաներ պետք կգան փոխանակելու համար, այդ պատճառով էլ դեռ Լոնդոնում նա ձեռք բերեց հուլունքներ, ժապավեններ, օղեր և ուրիշ էժանագին ու վառվռուն գույներով ապրանքներ: Հիմա նա այս էժանագին զարդարանքներից մի բուռ առաջարկեց աղջկան: Բայց նա երկչոտությամբ հրաժարվեց այդպիսի հարստությունից: Նրա պատկերացմամբ այդ նվերները տասն անգամ թանկ արժեին իր թաշկինակից:

Ֆրանսիշեկը մենակ մնալով, սկսեց գննել երիտասարդ հնդկուհու թաշկինակը: «Այդպիսի թափանցիկ, ժանյակավոր շալեր ծածկում են իսպանացի կանայք՝ բարձր սանրով ամրացնելով իրենց՝ մագերից,— հիշեց նա:— Այս հուշանվերը Եվրոպա կտանեմ, որևէ մեկին...»:

Ենիկը Թերեզիկի համար ընտրեց կլոր պանամա գլխարկ: Նա հուսով էր, որ լոնդոնյան դերձակուհին գլխարկին շքեղ տեսք կտա, զարդարելով փետուրով կամ ծաղիկներով: Ֆրանսիշեկը ժպտալով հավանություն տվեց գնումին:

Տասնչորս օրերը աննկատելի անցան, և երբ քեռին կարգադրեց պատրաստվել ճանապարհ ընկնելու, բոլորն էլ շատ տխրեցին: Խրճիթի տերը վճռականորեն հրաժարվեց ընդունել վարձը, և արշավախմբի ղեկավարը ստիպված եղավ հաշիվները փակել նրա կնոջ հետ: Համարյա բոնությամբ նա տանտիրուհուն ստիպեց ընդունել նվերներ: Հետևյալ օրը քարավանը թողեց հյուրասեր գյուղակը:

Ենիկը և Դիեգոն գնում էին ջոկատի առջևից: Տասնհինգ քայլ նրանից առաջ վազում էր Լգոտկան, իսկ նրա հետևից՝ մի խումբ մերկ երեխաներ: Երեխաները աղմկում, վազում և թռչկոտում էին: Դա ուրախ երթ էր:

Արշավախումբը լճին մոտեցավ ուշ երեկոյան: Ճանապարհորդներն օրվա ընթացքում շատ էին հոգնել և ոչինչ չէին նկատում: Նրանք պառկեցին խարույկի մոտ, այնտեղ, ուր կապել էին ջորիներին, և անմիջապես քուն մտան:

Լգոտկան ննջում էր Ենիկի ոտքերի մոտ: Լճի կողմից մի մեղմ ձայն լսվեց: Նա ցնցվեց, դանդաղ բարձրացրեց գլուխը և դժգոհ վնգստաց:

Առաջին անգամ էր շունը լսում այդ ձայները: Այո՛, լճից շշուկներ էին լսվում. այնտեղ, ջրի վրայով, սլանում էի կրակները, և ինչ-որ բանի արտացոլումը,

լուսավոր երկար շերտերի նման, ձգվում էր դեպի ջրի խորհրդավոր խորքերը: Բայց այդ բոլորը հոգնած, խոր երազի գիրկն ընկած ճանապարհորդներից աննկատ մնաց:

Գլուխ տասնհինգերորդ
ՊԵՏԵՆԻ ՓՈՍՈՐԱԿՈՒՄ
Առավոտյան Ֆրանտիշեկը հայտարարեց.

— Այստեղ մենք երկու օր կհանգստանանք: Կնայենք լիճը և շրջակայքը: Այսքան լարված աշխատանքից հետո մեղք չէ զվարճանալը և որևէ նոր բան տեսնելը:

— Նո՞ր: Այստե՞ղ,— հորանջելով հարցրեց Վացլավը: Նա դեռ չէր կարողանում ցրել իրեն հաղթող քունը:

— Իհարկե, այստեղ,— հաստատեց Ֆրանտիշեկը:— Ես կարդացի իմ գրառումները Պետենի մասին և հիշեցի, որ լճում շատ կղզիներ կան: Դրանցից ամենամեծի վրա մի փոքրիկ քաղաք կա Ֆլորես անունով, հենց այդտեղ էլ մենք կգնանք այսօր:

— Ո՛ւռա, քաղաք անապատում,— ուրախ բացականչեց Ենիկը:— Ես արդեն մոռացել էի, թե վերջին անգամ երբ եմ տեսել հրապարակներ, տներ, եկեղեցիներ, հյուրանոցներ և խանութներ...

— Ավելի շուտ այդ քաղաքը քեզ կհիասթափեցնի,— մեղմ առարկեց Ֆրանտիշեկը:— Վախենում եմ, որ Ֆլորեսը չի փայլի իր շքեղությամբ: Բայց չէ՞ որ չեխական Լգոտկա գյուղում նույնպես ընդամենը մեկ հրապարակ կա:

— Այո՛, բայց Լգոտկան քաղաք չէ, այլ՝ գյուղ,— համառեց Ենիկը:

— Դե ինչ արած, իսկ այստեղ Լգոտկայի նման գյուղը կարող է քաղաք համարվել: Ասենք, այդ բոլորը ինքներս հենց այսօր կտեսնենք: Հիմա անհրաժեշտ է գտնել ապաստարանի նման մի տեղ, իսկ դրա համար ավելի լավ է գնալ ափի երկայնքով՝ պատահաբար գուցե հանդիպի: Այսպես ուրեմն, ոտքի՛, գնացի՛նք, բարեկամներս:

Ճանապարհորդները արդեն մի ժամից ավելի քայլում էին, բայց ոչ մի տեղ ո՛չ նավակ, ո՛չ էլ լաստանավ չնկատեցին. միայն վախեցած թռչունների երամներն էին դուրս պրծնում եղեգնուտից:

Հաճախ ճահիճներն անցնելու համար բարեկամները ստիպված էին ափից բավական հեռանալ: Նրանք արդեն հույսները կորցրել էին, երբ հանկարծ մի փոքրիկ պուրակ տեսան, կողքին էլ՝ մի խրճիթ: Ջրի մակերեսին երևում էր ինչ-որ սև առարկա, կիսով չափ ծածկված առավոտյան մշուշով:

— Ահա և նավամատույցը,— բացականչեց Վացլավը:— Մի քիչ էլ՝ և մենք կհասնենք մեր նպատակին:

Եվ իսկապես, խրճիթում ապրում էր լաստավարը, իսկ ջրի վրա օրորվում էր լայն լաստանավը՝ երկար ծողերով և նավակողին ամրացված թիակներով: Բարեկամները դեռ չէին հասցրել մի լավ շուրջը նայել, երբ լաստավարը դուրս եկավ նրանց ընդառաջ:

— Մի՞թե այդպիսի պատիկ մարդը կարող է մեզ տեղափոխել,— կասկածելով ասաց Ենիկը:— Նա հասակով ինձնից բարձր չէ:

— Իսկ մենք նրան կօզնենք,— ասաց Ֆրանտիշեկը,— ի միջի այլոց, ահա և երկրորդ լաստավարը, որն ավելի ուժեղ է երևում: Սկզբում կտեղափոխվենք երեքով. մնացածները կսպասեն այստեղ: Նրանք կգան մեր վերադառնալուց հետո: Եթե, իհարկե, ուզեն:

Ֆրանտիշեկը արագ պայմանավորվեց լաստավարների հետ, հանձնարարելով կենդանիներին բեռնաթափել և լավ հսկել դրանց բեռը, իսկ ինքը Վացլավի ու Ենիկի հետ բարձրացավ լաստը:

Հանկարծ՝ հո՛ւպ. Լգոտկան մի թռիչքով հայտնվեց նրանց կողքին: Չնայած ոչ մեկը նրան չէր հրավիրել Ֆլորես քաղաքը, առանց կանչի թռավ տերերի հետևից: Ճիշտ է, նրա բուրդը մի թեթև բիզ-բիզ էր կանգնել, շուկը վախեցել էր, երբ իրեն տեսել էր չորս կողմից ջրով շրջապատված:

Լաստավարները իրենց գործը լավ կատարեցին: Սկզբում՝ նրանք արագ հրեցին երկար ծողերով, իսկ հետո սկսեցին թիակներով: Վացլավը ուզում էր օգնել, բայց նրանք քաղաքավարի երիտասարդից խնդրեցին չանհանգստանալ, որովհետև նա միայն կարող է խանգարել աշխատանքը:

Կղզին քանի գնում, այնքան մոտենում էր: Մառախուղը՝ ցրվեց, իսկ երբ բոլորովին չքացավ, բարեկամները մի պուրակ տեսան, իսկ ծառերի տակ, տների տանիքներ և խրճիթներ, որոնք դասավորված էին անկանոն, տոնավաճառի կրպակների նման:

Պատրաստվելով ճանապարհորդության, Ֆրանտիշեկը ձեռք էր բերել ուղեցույցներ, որոնցից տեղեկություններ էր քաղել անձանոթ երկրների բնության, քաղաքների և գյուղերի մասին, ուր նա պատրաստվում էր այցելել: Նա նախօրոք նշել էր, թե ինչը արժեր տեսնել, ինչը պատմական հետաքրքրություն ուներ: Պատահում էր, որ նա զարմացնում էր ոչ միայն հեռավոր արևադարձային երկրների հնաբնականներին, այլև եվրոպական երկրների մարդկանց այն բանով, որ նրանց երկրների մասին ավելի շատ բան գիտեր, քան իրենք:

Այժմ Ֆրանտիշեկը պատմում էր Ենիկին և Վացլավին, որ Պետեն լճում ցրված են շատ կղզիներ, որտեղ իրենց փրկությունն են գտել մայա հնդիկների ջրային կառուցումների մնացորդները:

Մոտենալով Ֆլորեսին, երեքն էլ հիասթափված հառաչեցին. պարզվեց, որ քաղաքը նույնիսկ ավելի փոքր է, քան իրենք էին ենթադրում. մի երեք տասնյակ տներ, ցրված արևադարձային ծառերի մեջ, ահա ամբողջը: Գլխավոր փողոցը՝ ավելի շուտ լայն, ամրացված ճանապարհը, ձգվում էր մանր-մուկ շինությունների և արմավենու ծառուղու երկայնքով:

Կլոր գերաններից կառուցված փայտե անհրապույր շինությունը, աշտարակից կախված զանգով, ծառայում էր որպես եկեղեցի: Այս տարօրինակ զանգակատնից տարածվում էր այն խորհրդավոր դողանքը, որը նրանք լսեցին գիշերը:

Եկեղեցու ներքին տեսքը լրիվ համապատասխանում էր արտաքինին: Ամբողջ նրա կահավորումը միայն մի բեմ էր, եթե կարելի էր բեմ համարել քարից պատրաստված բարձրադիր տեղը: Բեմի վերևում կախված էր պայծառ գույներով նկարված մի պատկեր: Փայտե պատերից ծպեղի նման դուրս էին

ցցվել գերանների ծայրերը՝ ծածկված հմտորեն արված փորագրությամբ: Դա յուրահատուկ զարդարանք էր եկեղեցու համար:

Փողոց դուրս գալով, ճանապարհորդները շարժվեցին բնիկների հետևից, որոնք խոստացել էին նրանց ցույց տալ հին պաշտպանողական կառուցումները:

Կաղնու սև կոճղեր, որոնք ծածկված էին հողով և մացառներով. ահա այն ամենը, ինչ մնացել էր մայաների շինությունից: Բարեկամները մտասույզ կանգ առան այդ հին հիշատակարանի առաջ: Ֆրանսիշեկը ենթադրեց, որ մի ժամանակ այս քառակուսի հիմքի վրա բարձրացել են քաղաքի շինությունները, որ քաղաքը շրջապատված է եղել հողի մեջ ամուր խփված ծառաբների ցցապատներով, իսկ ամրոցի պատերը ամրացված են եղել հողաթմբերով և խորունկ խրամատով, որը, ինչպես եվրոպական երկրներում, թշնամու հարձակման ժամանակ լցնում էին ջրով:

Երևի հնում, մի ժամանակ, այստեղ ապրել են հնարագետ մարդիկ, որոնք կարողացել են իրենց բնակատեղը պաշտպանել անհանգիստ և կռվասեր հարևաններից: Աչքը հեռացնելով փլատակներից, Ենիկը հանկարծ ծանոթ ծառեր տեսավ:

— Վա՛յ, սա չէ՞ որ խնձորենիներ են,— ուրախ բացականչեց նա,— Վացլա՛վ, նայիր, խնձորենիներ:

— Ճիշտ է,— հաստատեց Ֆրանսիշեկը:— Եթե մենք հիմա արևելք չգնայինք, այլ հարավ, դեպի Գվատեմալա, ապա այնտեղ կգտնեինք նաև ցորեն, նույնիսկ կարտոֆիլ, հենց նույն այն կարտոֆիլը, որին դու այնքան կարոտել ես: Հասկանալի է, կարտոֆիլ ցանում են միայն բարձրադիր վայրերում: Իսկ այստեղ, հովտում, բնակիչները գերադասում են սուրճի ծառեր աճեցնել, շաքարեղեգ, բանան և ծխախոտ, որովհետև դրանց մեծ պահանջ կա այնպես, ինչպես կաուչուկի ծառերի բոլոր արժեքավոր տեսակների և վանիլի համար:

Ֆլորեսում ո՛չ հյուրանոց, ո՛չ էլ հոթելներ կային: Եկվորները շատ չէին մնում: Մի քանի բնիկներ սպիտակներին ուղեկցեցին մինչև լաստը, իսկ երբ Ֆրանսիշեկը ուղեկցողի ձեռքը մի բուռ մանր փողեր դրեց, բոլորը շրջապատեցին այդ բախտավորին, բարձրաձայն գովելով «դոն Խոսեի» առատաձեռնությունը:

Ենիկը մտազբաղ նայում էր հեռացող կղզուն:

Գլուխ տասնվեցերորդ

ԼԱՎՈՒԹՅՈՒՆ՝ ԼԱՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

Ֆրանսիշեկը շտապում էր դեպի արևելք: Ժամանակը քիչ էր, իսկ առջևում սպասվում էր դժվարին ու երկար մի ճանապարհ: Արկղներում համարյա տեղ չէր մնացել, և այդ պատճառով էլ Դուլեժալը տեղացիներից մի քանի զամբյուղ գնեց: Դրանք բավականին հարմար էին և կենդանիներին բեռնելն ավելի հեշտ էր: Չնայած շտապում էին և մի շարք տնտեսական հոգսեր կային, Ֆրանսիշեկը համառորեն շարունակում էր նոր տեսակի օրխիդեաներ որոնել և հնդիկները նրա համար մի քանի հազվագյուտ տեսակներ բերեցին:

Ճանապարհորդությունը Պետենյան գոգահովտում ավելի հեշտ էր, քան ջունգլիում: Այստեղ արդեն ոչ մեկին չէին սարսափեցնում ամայի վայրերը. համարյա ամեն օր արշավախումբը հանդիպում էր դեպի Ֆլորես շտապող բնիկների:

Եվրոպացիները աշխատում էին ձեռք բերել բնակիչների բարեհաճությունը. լավություն էին անում, հրավիրում հացկերույթի: Հնդիկները քաղաքավարի շնորհակալություն էին հայտնում: Երբ էլ մեր ճանապարհորդները մտնելու լինեին եգիպտացորենի փոքրիկ դաշտերի տերերի խրճիթը, նրանց անպայման սպասում էր սիրալիր ընդունելություն: Թուխ երեխաները կապիկների նման արագ բարձրանում էին ծառերը, որպեսզի բարեհամբույր օտարերկրացիների համար քաղեն ամենամեծ ու ամենահյութալի պտուղներ: Եթե դրա փոխարեն խաղալիք էին նվեր ստանում, նրանց ուրախությանը չափ չկար:

Բայց Ֆրանսիշեկը շտապեցնում էր իր ընկերներին: Նա բնիկներից հարցնում էր Օլդ-Ռիվեր (Հին գետ) տանող ճանապարհի մասին, որի հոսանքի ուղղությամբ կարող էին ընկնել Բրիտանական Հոնդուրասի /Բրիտանական Հոնդուրաս — Մեծ Բրիտանիայի գաղութը, որը գտնվում է Կենտրոնական Ամերիկայում Յուկատան թերակղզու վրա և անմիջապես հարևան է Մեքսիկայի հետ: 16-րդ դարում երկիրը գրավել է Իսպանիան, բայց 19-րդ դարի սկզբում այստեղ անգլիական գերիշխանություն է հաստատվել: 1862 թ. պաշտոնապես անգլիական գաղութ է հայտարարվել: Բրիտանական Հոնդուրասի գլխավոր քաղաքը Բելիզն է, միաժամանակ երկրի խոշոր նավահանգիստն է, որտեղից արտահանվել և արտահանվում է արժեքավոր տեսակի փայտանյութ:/ ոչ մեծ Բուն Թաուն քաղաքը, իսկ այնտեղից էլ Բելիզ նավահանգիստը:

Նրան հաջողվեց պարզել, որ նախքան գետի ակունքին հասնելը պետք է գնան Կոկսքոմբյան լեռնաշղթայի երկարությամբ:

— Ճիշտ է, լեռներում ապրում են հնդիկ հսկաներ,— Ֆրանսիշեկին խրատում էր տեղացի բնակիչներից մեկը,— բայց մնացած ճանապարհն անվտանգ է:

«Հսկա» խոսքի վրա բնիկը ցույց տվեց Ֆրանսիշեկին, և այդտեղ նույնիսկ Ենիկը ծիծաղեց. բոլորը հասկացան, որ այդ փոքրիկ մարդը, հասակով հազիվ Ենիկից քիչ բարձր, յուրաքանչյուր բարձրահասակ տղամարդու «հսկա» է անվանում:

Եվս երկու օր քարավանը սկսեց ընթանալ սավանաներով /Սավանա — խոտավետ և մացառուտ տափաստան Ամերիկայում ու Աֆրիկայում:/, հիասքանչ տափաստանով, որտեղ հազարավոր փարթամ բույսեր էին աճում: Հողն այստեղ չգիտեր, թե ինչ բան է երաշտը. միայն փետրվարից մինչև ապրիլ անձրև չի լինում:

Բայց ի՞նչն էր այնտեղից քշում Ֆրանսիշեկին, ինչո՞ւ նա ժամանակ առ ժամանակ ստիպում էր իր ընկերներին ոչ մեծ քանակով խինին ընդունել: Նա գիտեր, թե ինչպիսի վտանգ էր թաքցնում իր մեջ այդ հիասքանչ բնությունը: Արևադարձային հարուստ ծաղկանոցը օրեցօր աննկատելիորեն տարածում էր իր մահաբեր թույնը, որը երբեմն ազդում է նույնիսկ տեղի բնակիչների վրա:

Ահա թե ինչու արշավախմբի ղեկավարը այդպես ուրախացավ, երբ քարավանը հասավ խիտ անտառով ծածկված լեռներին:

Հնդիկները, սովորականի նման, վրաններ խփեցին և ոչ մեկը չէր մտածում այն մասին, որ այդ օրը իրենց առաջին գիշերն է անգլիական Վիկտորիա թագուհու տերության մեջ՝ Բրիտանական Հոնդուրասում: Առավոտ շուտ Ֆրանսիշեկը կարգադրեց անմիջապես երթի պատրաստվել:

— Ինչո՞ւ ենք մենք անդադար շտապում ու շտապում,— հարցրեց Վացլավը,— գուցե ընդհանրապես այլևս ծաղիկ չենք հավաքելու:

— Կհավաքենք, բայց միայն այն, ինչ կգտնենք ճանապարհին: Դու ինքդ տեսնում ես, որ արկղներն ու զամբյուղները լիքն են, իսկ կենդանիներին ծանրաբեռնել պետք չէ: Առանց այն էլ ուզում եմ, որքան հնարավոր է, շուտ ազատվել բեռից, և ես չեմ հանգստանա այնքան ժամանակ, մինչև մեր ամբողջ հավաքածը չտեսնեմ նավի վրա: Միայն դրա համար եմ ընտրել ամենակարճ ճանապարհը: Շուտով մենք կմոտենանք գետին, որը արդեն առանց արկածների մեզ կհասցնի մեր նպատակին:

Եսիկը շատ գոհ էր, Լգոտկան ևս: Դուք հարցրեք՝ ինչո՞ւ: Որովհետև հասնելով գետին, նրանք հաճախ էին որսի գնում: Գետի երկայնքով քարավանը ավելի արագ էր շարժվում, քան լեռներով, իսկ շրջապատում անչափ-անհամար որս կար:

Որսորդներին հանդիպեցին եղջերուների, գետակինճի, իսկ մի անգամ էլ խրտենցրին ագուրների մի ամբողջ հոտի: Ագուրներին իզուր չէ, որ անվանում են «արծաթյա»: Նրանք հիանալի, մոխրագույն մորթի ունեն: Ապրում են փչակներում կամ բներում և արածում են երեկոյան:

Ճանապարհորդները հանդիպեցին նաև անապատային նենգ գայլի՝ կոյոտին: Եսիկը դեռ տանը կարդացած գրքերից գիտեր, որ կոյոտը վախկոտ և գիշատիչ շնանման գազան է, հնդկական հեքիաթների և ավանդությունների ծիծաղելի հերոսը:

Ճանապարհին շատ սկյուռիկներ էին հանդիպում, որոնք զգվռտվում էին թութակների հետ, թռչկոտելով պատուտակների և առափնյա ծառերի ճյուղերին: Սղոցակտուցավորները իմաստունների նման լուռ նստում էին, իսկ ճարպիկ գմրուխտահավերը, կրակի պես պուլտերով, կայծկլտում էին տերևների մեջ:

Ուրախ, խայտաբղետ կյանքը եռում էր արևոտ բացատներում:

Ինչքա՞ն հիանալի թիթեռներ և բզեզներ էին թռչկոտում շուրջը: Մեղուները ծոր էին տալիս իրենց սովորական, միալար երգը, ինչպես եվրոպական մարգագետնում, իսկ նրանց կողքից գնդակի արագությամբ սուրում էին կատաղած կրետները: Թափանցիկ ճպուռները օրորվում էին ջրերում անդրադարձող ծաղիկների ճկուն ցողունների վրա:

— Այստեղ ոնց որ հեքիաթում լինի,— հառաչեց Եսիկը,— միայն թե այս դողոշները, մողեսները և օձերը չլինեին:

— Առանց դրանց այստեղ վտանգավոր միջատների ձեռքից չէինք պրծնի,— առարկեց Ֆրանտիշեկը:

— Է՛հ, դողոշն ու մողեսը ինչ են որ,— ծիծաղեց Վացլավը:— Իմ կարծիքով կատվառյուծներն ու հովազները ավելի վատ են:

— Եթե վատ չեն, համենայն դեպս, լավն էլ չեն:

Եսիկը Վացլավին մի կողմ տարավ և ցածր ձայնով ասաց.

— Դու ճիշտ ես, Վացլավ, դժվար է որոշել, թե դրանցից որն է լավը: Նույն զգվելի բաներն են: Բայց էլի գիշատիչները մի քիչ քաղաքավարի են. գոնե խուսափում են մարդուց: Իսկ այս զգվելիները նստում են հարմար թաքստոցում և չգիտես, թե հարձակումը որտեղից է սպասվում: Ա՛յ, երեկ, օրինակ, ես դաշույնով ինչ-որ զգվելի մի բան կտրտեցի... Թո՛ւ, հիշել չեմ ուզում: Նա դուրս թռավ ծառի փչակից:

Դիեգոն ասում է, թե դա կուֆի է եղել, շատ թունավոր օձ, այնպես, որ դու քեռուն ոչինչ չասես, թե չէ նա կվախենա և ինձ ու Դիեգոյին անտառ չի թողնի:

Վացյալը իր խոսքի տերը եղավ և ոչինչ չասաց Ֆրանսիշեկին, բայց երեկոյան ափսոսաց դրա համար: Ահա թե ինչ պատահեց: Խաղաղ գետնախորշում Դիեգոն ջրշան բույն նկատեց և այնտեղ տարավ Ենիկին, ցույց տալու այդ վարպետ գազան-շինարարին: Տղաները գիտեին, որ ջրաշները վախկոտ են և թփուտների միջով շատ զգույշ անցան: Խոտերի և եղեգների միջով նրանք սողացին մինչև գետը, Դիեգոն սողում էր առջևից, զգույշ ետ քաշելով ցողունները: Հանկարծ նա սուր ճչաց և սկսեց հուսահատ դես ու դեն նետվել, կարծես թակարդն էր ընկել: Ենիկը վեր թռավ զսպանակի նման և սարսափեց. ճչացող Դիեգոյի մոտ գետնին ձգվել էր կարճ, պտավոր թաթերով հսկա մի կոկորդիլոս: Նա սարսափելի երախով ամուր սեղմել էր տղայի ձեռքը:

Ենիկը մի պահ վախը մոռացած՝ թռավ դեպի կոկորդիլոսը. նա դաշույնով հարվածեց կոկորդիլոսի գլխին: Անճոռնի հրետոշը կատաղած թափահարեց պոչը, բայց չթողեց Դիեգոյի ձեռքը: Ենիկը սուր դաշույնով այնքան հարվածեց կոկորդիլոսին, մինչև որ սպանեց:

Դիեգոյի աջ ձեռքը ուժեղ վնասվել էր և միայն արի հնդիկը կարող էր այդ ցավը առանց որևէ տնքոցի տանել:

Գունատված և վախեցած տղաները մոռանալով ջրաշներին, դեպի ջուրը շտապեցին: Դիեգոն ջուրը մտցրեց ջախջախված, արնաշաղախ ձեռքը:

Ուշադրություն չդարձնելով Դիեգոյի բողոքներին, Ենիկը ինչպես կարող էր, թաշկինակով կապեց նրա ձեռքը, և երկուսով իջևանատեղ վազեցին:

Ֆրանսիշեկը նրանց ստիպեց հերթով պատմել բոլորը և լուրջ զայրացավ: Վերքերը խորն էին: Չնայած հնդիկները հավատացնում էին, որ կոկորդիլոսի կծածը արագ է լավանում, բայց Ֆրանսիշեկը չէր կարողանում հանգստանալ: Նա վախենում էր, որ Դիեգոյի ձեռքի ոսկորները ջարդված կլինեն, և մեծ խնամքով լվանալով վերքը, անձամբ զննեց տղայի ձեռքը, ներքնապես զարմանալով նրա քաջության վրա: Դիեգոն մի ծպտուն անգամ չհանեց:

Ենիկը նայելով այդ բոլորին, ցնցվեց. ինչպիսի՜ անտանելի ցավ պիտի լիներ:

Ֆրանսիշեկը, ճիշտ է, չմերժեց բուժիչ խոտի հյուլը, որ բերեցին հնդիկները, բայց դրանից բացի նա երկու փոքրիկ տախտակներ կտրեց, Դիեգոյի թուփ նախաբազուկը դրեց արանքը և ամուր կապեց:

— Իսկ հիմա դեղափոշի կընդունես՝ տենդի դեմ, — առարկություն չընդունող տոնով, ասաց Ֆրանսիշեկը, Դիեգոյին տալով խինինը:

Բայց Դիեգոն չէր ուզում կուլ տալ փոշին: Ցավը նա տանում էր հերոսաբար, բայց ա՛յ, այդ դեղից վախենում էր: Միայն Ենիկի խմելուց հետո հնդիկը հետևեց նրա օրինակին:

Խեղճ Դիեգո: Ինչպե՛ս էր վախենում: Հետո դեռ շա՛տ երկար, Ենիկի հետ նստած խարույկի մոտ, նա վշտացած և տխուր շնչում էր:

— Երբ ես մեռնեմ, ինձ խո՛ր, շատ խոր թաղիր, որպեսզի ոչ մի գազան չհանի:

— Իսկ ինչո՞ւ պիտի մեռնես, զարմացավ Ենիկը, — քո ձեռքը շատ շուտ կլավանա:

— Ձեռքս կլավանա, բայց այս դառը թույլը...— Դիեգոն ընկճված օրորեց գլուխը:

Ենիկը սրտանց ծիծաղեց:

— Մի՞թե կարծում ես, թե մենք կարող ենք քեզ թունավորել:

Եվ գետափին, հարյուրամյա ծառերի տակ, որտեղ մինչ այդ սպիտակ մարդու ոտք չէր դիպել, ջերմ գրկախառնվեցին երկու տղաներ՝ հնդիկն ու սպիտակը:

Նրանք երդվեցին հավերժ ընկեր լինել:

Այդ օրը Ենիկը քնեց այնպիսի մի զգացումով, ասես նրան հաջողվել էր ինչ-որ չափով վերադարձնել հին պարտքը: Նա հիվանդ Դիեգոյին պառկեցրեց իր մոտ՝ վրանում, և գիշերվա ընթացքում զգույշ ականջ էր դնում նրա շնչառությունը. հո ընկերոջ մոտ տենդ չի՞ սկսվում:

Ի վերջո, հոգնածությունը հաղթեց Ենիկին, և նա առավոտվա կողմը քնեց:

Գլուխ տասնյոթերորդ

ԼԱՍՏԱՆԱՎԻ ՎՐԱ

Ինչքան առաջ էր շարժվում քարավանը, քայլելը այնքան դժվարանում էր: Գետը թափվող անհաշիվ վտակները ճանապարհորդներին հարկադրում էին անցում կատարել կամ հենց տեղում՝ գետաբերանի մոտ, կամ թեքվել մի կողմ և ծանծաղուտ փնտրել:

Մի շաբաթ հետո հասնելով մարդկանց ձեռքով բացած ուղատին, բոլորն էլ իրենց թեթևացած զգացին:

Բրիտանական Հոնդուրասում անտառահատները շա՛տ-շատ են: Նրա նավակայաններից եվրոպական շուկա է արտահանվում սև, կարմիր և մայրի փայտ:

Ուղատը ճամփորդներին հասցրեց նավակայանին, ուր երկու տասնյակ լաստավարներ էին աշխատում: Մոտ հիսուն տեղացի լեռնցիներ, սպիտակամորթ, մկանուտ մարդիկ, հարյուր հազարավոր գերաններ էին կրում դեպի գետը:

Անգլիացի վերակացուն ուրախ ողջունեց մեր ճանապարհորդներին: Նրա մտքով անգամ չէր անցնում, որ այստեղ, ջունգլիում, անգլերեն խոսող սպիտակ մարդկանց կհանդիպի: Իմանալով, որ ճանապարհորդները օրիսիդեա են հավաքում լոնդոնյան ֆիրմայի համար, նա առաջարկեց իր օգնությունը:

— Այստեղից գետը լաստերի համար նավարկելի է,— ասաց նա:— Ահա թե ինչ խորհուրդ կտամ. ձեր ճանապարհը շարունակեք լաստանավով: Համաձայն եմ, լաստը դանդաղ է շարժվում, բայց չեմ կարծում, թե ցամաքով ավելի շուտ տեղ կհասնեք, բացի այդ, ստիպված կլինեք հաճախակի շրջանցումներ կատարել:

Ֆրանսիշեկը հաճույքով ընդունեց այս առաջարկությունը. նա ասաց, թե իրենց պետք է կարճ լաստ, քանի որ այդպիսի լաստ ղեկավարելը հեշտ է, բացի դրանից, արագ է լողում:

— Շատ լավ,— համաձայնեց անգլիացին:— Ես կկարգադրեմ ձեզ համար թեթև փայտից լաստ պատրաստեն: Դրա կողերը մենք մի քիչ բարձր կանենք և ավելի

շուտ բեռնանավակի կնմանվի: Դրանով արագ ու անվտանգ դուք կիջնեք հոսանքի ուղղությամբ:

Պատրաստակամ անգլիացին կատարեց իր խոստումը: Նա ոչ միայն հանձնարարեց պատրաստել բարձր կողերով լաստ, այլև իր մարդկանցից մեկին թույլ տվեց արշավախմբին ուղեկցել մինչև Բուն Թաուն: Այստեղից արդեն հնարավոր էր նավակով գնալ մինչև Բելիզ՝ Բրիտանական Հնդկության մայրաքաղաքը, որը Բուն Թաունից հեռու էր միայն մեկ օրվա ճանապարհով:

Առաջիկա ճանապարհորդությունը Ենիկին ուրախացրել էր. դարձյալ ինչ-որ նորություն: Նրանք կլողան արևադարձային գետով՝ սեփական լաստով, նույնիսկ սեփական լոցմանով:

Անտառահատների խարույկի շուրջը ընդհանուր ընթրիքը շատ աշխույժ անցավ: Չրուցեցին, հայտնեցին իրենց տպավորությունները, ուրախացան, ինչպես կարող են ուրախանալ հասարակ մարդիկ:

Իսկ երբ լռեցին երաժշտության ձայները,— եթե կարելի էր, իհարկե, երաժշտություն անվանել այդ անշնորհ գործիքի սուր ճնոցը,— աշխատողները պառկեցին հանգստանալու: Սպիտակները նեղ օղակով շրջապատեցին մարդ խարույկը և տարվեցին հիշողություններով:

Լուսաբացին անտառային ձայները լռեցին: Չով քամին օրորեց ծառերի գագաթները. նրա թեթև հպումից կնճռոտվեց գետի մակերևույթը:

Սկսեցին ճանապարհ ընկնելու պատրաստություն տեսնել: Հնդիկները լաստի վրա դարսեցին արկղները, օրիսիդեաներով լի զամբյուղները և սպասեցին ջորիներին ասից տեղափոխելու հրամանին: Բայց Ֆրանսիշեկը դանդաղում էր: Ձեռներեց անգլիացին համոզում էր վաճառել լծկան կենդանիները:

— Փողը կփոխադրեմ Բելիզի մեր գրասենյակը,— ասաց նա:— Կենդանիները ձեզ հիմա պետք չեն: Միևնույն է, դուք նրանց Հնդկության կամ Կոստա-Ռիկա չեք տանի: Ջորիները այնտեղ շատ էժան են:

Ֆրանսիշեկը ճիշտ համարեց վերակացուի խորհուրդը. իսկապես ավանակներն ու ջորիները այլևս պետք չեն, իսկ փայտի տեղափոխման աշխատանքների համար դրանք անհրաժեշտ են: Շահավետ գործարքը կատարվեց:

Այդ ընթացքում լաստին բարձեցին մթերքի պաշարը: Ճամփորդության համար ամեն ինչ պատրաստ էր:

Բարեկամները ջերմ հրաժեշտ տվեցին երիտասարդ անգլիացուն և բարձրացան իրենց նոր նավը: Լաստը իսկապես լավն էր. իր քսան մետր երկարությամբ և չորս մետր լայնությամբ նման էր միջին չափի նավի, որը հեշտ ղեկավարվում էր երկու ղեկի և նավաքթի թիակներով:

Հնդիկ մշակները արագ-արագ թիավարում էին բարակ, երկար թիակներով: Անգլիացին նրանց հետևից ձայն տվեց, որ գգուշանան կոկորդիլոսներից: Լաստը հեռացավ ասից և դանդաղ լողաց հոսանքի ուղղությամբ:

Հնդիկները ուժեղ հրում էին ծողափայտով և լաստը ընթանում էր հիանալի նավակի նման: Լաստի մեջտեղում վրան էին խփել, կողերի երկարությամբ արկղներ էին դարսել, որպեսզի գիշատիչ կոկորդիլոսները տախտակամած չկարողանան բարձրանալ: Բացի դրանից, Ֆրանսիշեկը անվտանգության համար ջոկատի անդամներին կարգադրեց պահակային ծառայություն կատարել

և ժամանակ առ ժամանակ փոխել միմյանց: Դիեգոն, որի աջ ձեռքը վիրակապերի մեջ էր, չէր կարող գենքը ձեռքին հսկել, և այդ բանը նրան շատ էր ընկճում: Իսկ «դոն Խոսեն» երանության մեջ էր: Դեռ լաստի կառուցման ժամանակ, երեք օր առաջ, նա հոգ էր տարել իր խոհանոցի մասին և հիմա նրա եռոտանին ու պղինձը հարմար տեղավորվել էին քարե օջախի վրա:

Ֆրանտիշեկը վրանից դուրս չէր գալիս, նա ինչ-որ բան էր գրում իր օրագրում: Ենիկը և Վացլավը հրացանները ծնկներին՝ արկղների վրա նստած, հիացած նայում էին ետ վազող ափին, որտեղ մի տեսարան փոխարինում էր մյուսին, ինչպես դեկորացիաները՝ հիանալի թատրոնում:

Լգոտկան զգաստ նստել էր նրանց կողքին: Նրա աչքերը և ականջները անդադար խաղում էին: Երբեմն նա դժգոհ վնգստում էր, կարծես զայրանում, որ չի կարող թռչել ջուրը բադերի երամը հալածելու կամ էլ կոյոտներին փախցնելու համար, որոնք գետափ էին եկել ջուր խմելու: Մի անգամ շունը քիչ մնաց թռչել արկղե պատնեշից, հագիվ զսպելով ափին հայտնված գետակինճի հետ կռվելու իր անհաղթահարելի ցանկությունը: Գետակինճը, որ այդպես տակնուվրա արեց Լգոտկային, շատ լավն էր: Այդ կենդանիները իրենց թխաթույր մորթով նման են երկար դնչով խոզերի: Լսելով շան հաչոցը, վախեցած գետակինճը թաքնվեց խոտերի մեջ, այլևս նրան չտեսան:

— Գետակինճերը շատ վախկոտ են, իսկ նրանց միսը համեղ է,— խրատական տոնով ասաց Ենիկը, ընդօրինակելով Ֆրանտիշեկին:

Վացլավը հասկանալով նրա ակնարկը, ծիծաղեց:

— Զեզ շատ լավ եմ հասկանում. մարդիկ երբեմն զայրանում են, երբ նրանց ամբողջ ժամանակ խրատներ են տալիս: Բայց Ֆրանտիշեկը իսկապես շատ բան գիտի: Նա շատ բան է տեսել իր կյանքում, իսկ ինչքա՞ն գիրք է կարդացել: Եթե մարդու կյանքը այդպես հարուստ է, նշանակում է, իզուր չի ապրել: Ես քեզանից շատ մեծ եմ, բայց էլի երախտապարտ եմ նրա ամեն մի խորհրդի համար:

Ենիկը թունդ կարմրեց: Իհարկե, նա չէր էլ մտածում նվաստացնել քեռու արժանիքները, բայց ճիշտն ասաց, նրան թվում էր, որ շատ հաճելի է, երբ ինքը ես սովորեցնում ուրիշներին... Ընդ որում, տղան անչափ շնորհակալ էր քեռուց այն ամենի համար, ինչ իմացել էր նրանից:

Լգոտկային հետևելը շատ հետաքրքիր էր: Շունը անթարթ նայում էր ափին և ծփացող ջրին: Մի անգամ թռավ ջուրը, իսկ հետո, որպես պատիժ, երկու ժամ կապված նստեց:

Ֆրանտիշեկը նույնիսկ նրան փայտով սպառնաց, և Լգոտկան անմիջապես հասկացավ, որ ջրի մեջ մտնել չի կարելի: Նա տեղավորվեց լաստի ծայրին, դեկաթիակի մոտ և անհանգստությունից անհամբերությունից ամբողջովին դողում էր:

Ինչպես կայծակը պարզ երկնքում, համարյա միաժամանակ որոտացին երկու կրակոց: Ֆրանտիշեկը վրանից դուրս թռավ հենց այն պահին, երբ Լգոտկան Ենիկի կարգադրությամբ նետվեց ջուրը՝ խփված բադերի հետևից: Հանդիպելով ճտերի մի ամբողջ խմբի, որսորդները չէին համբերել և որսը հաջող էր անցել:

— Խելքների թոցրել եք, ի՞նչ է,— բացականչեց Ֆրանտիշեկը զայրացած,— կարծես հինգ տարեկան երեխաներ լինեք: Թե ձեզ Լգոտկա՞ն է ձանձրացրել, որ քշում եք նրան ուղիղ կոկորդիլոսի երախը: Արագ թիավարեք դեպի շունը, թիակներով խփեք ջրին. պետք է վախեցնել այդ գարշելիներին:

Նա անմիջապես հանեց ատրճանակը և երեք անգամ կրակեց եղեգների մեջ:

Լգոտկան արդեն հասել էր բաղերին և, բռնելով երկուսին, ուրախ վերադառնում էր: Ֆրանսիշեկը ինքը օգնեց, որ շուկը լաստի վրա բարձրանա, երբ Լգոտկան ցանկացավ նորից ջուրը նետվել, բռնեց նրան:

— Ստիպված ենք քեզ կապի տակ պահել: Այս անհասկացողներին չի կարելի վստահել,— արդեն հանգիստ խոսեց նա:— Ինչի է ընդունակ կոկորդիլոսը ցամաքում, դուք արդեն տեսել եք, թե ինչ արեց Դիեգոյի հետ: Իսկ ջրում կոկորդիլոսը նույնն է, ինչ որ հովազը անտառում: Նա քեզ երկու մասի կբաժանի, իսկ հետո այս երկու տղաները դառն արցունքներ կթափեն,— խոսում էր Ֆրանսիշեկը, Լգոտկայի պարանոցին վզնոց հագցնելով:

— Մի՞թե պետք է թողնենք բաղերը,— հարցրեց Վացլավը:

— Ինչո՞ւ, ափսոս է թողնել որսը:

Լաստն արդեն թեքվեց դեպի գետախորշը և ճարպիկ հնդիկները նավակը այնքան մոտեցրին սպանված բաղերին, որ կարելի էր վերցնել:

Այդպես Լգոտկան գրկվեց ազատությունից և այն էլ երկար ժամանակ: Շուկը գլուխը դրեց թաթերին և տխրեց: Երևի մտածում էր մարդկանց անշնորհակալության մասին:

Մուժն ընկնելուն պես որսորդները լաստի քթամասում մի մեծ խարույկ վառեցին և դեռ երկու ժամ էլ լողացին, քանի դեռ գետը լուսավորում էր լուսնեղջյուրը. երբ լուսինը թաքնվեց, նրանք խարիսխ ձգեցին թավ կանաչով ծածկված ափի մոտ:

— Խարույկը պետք է պահպանել ամբողջ գիշերը,— կարգադրեց Ֆրանսիշեկը:— Կհսկենք երկու հոգով: Ջրի վրա գիշերելը սրտովս չե...

Դա ոչ մեկի սրտով էլ չէր: Հազարավոր մոծակներ դժժում էին մթնության մեջ: Մոտերքում փռված ջուկների մռնչոցը խառնվել էր ջրի աղմուկի հետ. կասկածելի ստվերներ էին երևում ջրի վրա, և նորից չքանում... Այս ամենը չէր թողնում քնել և սարսափելի մտքեր էր ծնում: Ինչ խոսք, ճանապարհորդներին մի տհաճ գիշեր էր սպասում:

Վերջ ի վերջո բոլորը այն եզրակացության եկան, որ հետևյալ գիշերը նրանք կանցկացնեն ցամաքում, գետից հեռու:

Ամբողջ գիշերը լաստից հրաձգության ձայներ էին լսվում. նրանք կրակում էին ամեն մի կասկածելի ստվերի վրա: Միայն հնդիկները, ինչպես միշտ, իրենց հանգիստ էին պահում և հոգատարությամբ խարույկի վրա փայտ էին ավելացնում: Դիեգոն փաթաթվելով թիկնոցի մեջ գաղտնի կծոտում էր շրթունքը, որպեսզի չբղավի: Նրա վերքերը առողջանում էին և այնպես քոր էին գալիս, որ տղան ցանկություն էր զգում քանդել կապերը և ձեռքը սառը ջրի մեջ մտցնել:

Կեսգիշերվա ժամը երեքին միջատների անտանելի խայթոցները և նենգ կոկորդիլոսների վախը այնքան հոգնեցրին բոլորին, որ Ֆրանսիշեկը կարգադրեց արձակել լաստը:

Ճանապարհորդները թեթևացած շունչ քաշեցին, երբ լաստը հոսանքից քշվելով, անաղմուկ թողեց անհիժված գետախորշը: Ենիկն ու Վացլավն այնքան հոգնած

Էին, որ մի ակնթարթում քնեցին ուղղակի լաստի գերաններին պառկած, ասես փետուրե ներքնակի վրա:

Արթուն մնացին միայն Ֆրանտիշեկը և հնդիկ լաստավարը. մնացածները երևի չէին արթանանա նույնիսկ կոկորդիլոսի երախում:

Արևը արդեն բարձրացել էր, երբ բարեկամները արթնացան: Ափի տեսքը փոխվել էր. անտառոտ լեռները նահանջելէին, և շուրջը տարածվել էր անծայրածիր սավաննա: Ջրային թռչունների երամը պտտվում էր տափաստանի վրա, նրանց ծղորտոցը լցրել էր անուշահոտությամբ հագեցված օդը: Ճանապարհորդները պարզորոշ տեսնում էին դեպի ջուր ընկող տրորված արահետները. նշանակում է մոտակայքում մարդիկ են ապրում: Երկու ժամ հետո նրանք արդեն լողում էին ափին փռված գյուղի կողքով, և բազում օրերից հետո, առաջին անգամ, ջրաղաց տեսան: Որսորդների հրճվանքին սահման չկար. նրանք հաջող անցան մեծ, համարյա ամայի տարածությունը և մարդաբնակ վայրեր վերադարձան:

Երկու-երեք ժամից հետո մի նոր գյուղ երևաց, որի բնակիչները վազեցին գետը՝ նայելու այդ արտասովոր նավը, և որպես ողջույն թափահարեցին ձեռքերը: Իսպաներեն տրված հարցին բնակիչները պատասխանեցին վատ, բայց հասկանալի անգլերենով:

— Մինչև Թաուն մեկ օրվա ճանապարհ է:

— Ուրեմն, մի սարսափելի գիշեր ևս,— հառաչեց Ենիկը:

— Դե՛, այստեղ արդեն այնքան վատ չի լինի,— հանգստացրեց Վացլավը,— եթե երեկոյան դեմ մի որևէ գյուղի հասնենք, ապա կգիշերենք խրճիթում:

Ավա՛ղ, հորիզոնում գյուղ չէր երևում: Մութն արդեն ընկել էր, բայց արշավախմբի ղեկավարը դեռ զառիթափ ափին մոտենալու կարգադրություն չէր անում:

— Ի՞նչ է, այսօր մենք ընդհանրապես կանգ չե՞նք առնելու,— զարմացավ Վացլավը:

— Ո՛չ,— պատասխանեց Ֆրանտիշեկը,— լուսինն այսօր ամբողջ մի ժամ ավելի է լուսավորելու, գետը նավարկելի է և դրա համար էլ հիմա ամենալավ լողալու ժամանակն է:

Լուսինը մայր մտավ երեկոյան մոտ ժամը իննին. արևելքում երկար ժամանակ փայլկտում էր հեռավոր մի կրակ: Մեկ ժամ հետո մեր ճանապարհորդները կարող էին պարզորոշ տեսնել այդ կրակը. դա Բուն Թաուն քաղաքը հսկող նավի լապտերն էր:

Ժամը տասնմեկին մեր բարեկամները, հնդիկների հետ միասին, արդեն հանգստանում էին հյուրանոցում: Քաղաքային ոստիկանը հավաստեց նրանց, որ ապրանքները դրված են ապահով տեղում:

Այնքան սարսափներից ու փորձանքներից հետո շոգենավով Բուն Թաունից մինչև Բելիզ գնալը նրանց հիանալի գրոսանք էր թվում: Հենված բազրիքին, բարեկամները նայում էին արևմուտք, ավելի ճիշտ՝ դեպի հարավ-արևմուտք, որտեղ նրանք թողել էին մռայլ Կոքսքոմբը՝ իր մերկ բլուրներով: Հետո նրանք հայացքները դարձրին շրջակայքին: Այնքան երկար ժամանակի ջունգլիի տեսքով կշտացած աչքերի համար արդեն շատ բերկրալի բան էր:

Բրնձի դաշտերից հետո ձգվում էին շաքարեղեգի և սուրճի ծառերի պլանտացիաները: Ափով մեկ ցրված խրճիթների խմբերը կենդանացնում էին հեռավոր հայրենիքի, չեխական խաղաղ գյուղերի մասին հիշողությունները:

Տախտակամածին շատ մարդիկ չկային. մի քանի չինովնիկներ, առևտրականներ, անգլիացի ավագ սպաներ: Ոչ մի կին: Հնդիկները ճանապարհորդում էին նավամբարներում:

Ժամը տասնմեկին նավակը, սուր սուլոցով, մտավ Բելիզ՝ Բրիտանական Հնդուրասի մայրաքաղաքը:

Գլուխ տասնութերորդ
ԲԵԼԻԶՈՒՄ

Ֆրանսիշեկը առաջին հերթին հոգ տարավ արշավախմբի անդամների բնակարանի մասին, իսկ հետո սկսեց Անգլիա ուղևորվող նավ փնտրել, որպեսզի դրանով ուղարկի իր թանկարժեք բեռը: Ամենաճիշտ տեղեկությունը կարող էին տալ բանկի ծառայողները, որոնց հետ միստր Հաուն գործնական կապեր էր պահպանում:

Դոն Ֆերնանդո Ալվարեսը խոստումը կատարել էր և Բելիզ էր ուղարկել Ֆրանսիշեկի նամակը, այնպես որ բանկի ծառայողները արդեն նախապես գիտեին, որ մի օր հրահանգով և փողով նրանց կներկայանա միստր Ֆրանսիշեկ Դոլեժալը՝ Լոնդոնի Կ. Դ. Հաունի ֆիրմայի ներկայացուցիչը: Դրա համար էլ միստր Դոլեժալին սիրալիք ընդունեցին բանկում, և դիրեկտորը հրավիրեց նրան իր առանձնասենյակը: Ընդունարանում Ֆրանսիշեկը հանդիպեց կոկիկ հագնված մի տղամարդու, որը, երևի, գործով էր սպասում: Ֆրանսիշեկը արդեն նստած էր դիրեկտորի առանձնասենյակում, իսկ անձանոթը նրա մտքից չէր հեռանում: Խորհրդածելով, թե այդ մարդը ինչով կարող էր գրավել իր ուշադրությունը, Ֆրանսիշեկը կայծակի արագությամբ հիշեց անձանոթի հայացքը, որը անմիջապես փախցրել էր իր աչքերը: Ֆրանսիշեկը հասցրեց նկատել խոնարհած գլխի սպիտակած մազերը. երևում էր, որ այդ մարդը արդեն երիտասարդ չէ: Ընդ որում, մանրամասն զննելու ո՛չ ժամանակ կար, ո՛չ էլ անհրաժեշտություն: Մի՞թե այդպիսի հանդիպումները քաղաքում սովորական բան չեն:

Ֆրանսիշեկը հանգիստ տեղավորվեց բազկաթոռում և հանգամանորեն սկսեց պատասխանել բանկի դիրեկտոր միստր Բլեքին հետաքրքրող հարցերին: Հանկարծակի հանդիպումից ստեղծված տարօրինակ տպավորությունը մի փոքր ցրվեց: Միստր Բլեքը հայտնեց, որ Մերիդ գնացող նավը արդեն դուրս է եկել Լիվինգստոնից: Նա բեռը կվերցնի Բելիզից, իսկ Մերիդում կտեղափոխեն օվկիանոսային նավի վրա. ինքը Բելիզը Եվրոպայի հետ նավային ուղիղ կապ չունի:

Միստր Բլեքը Ֆրանսիշեկին հավաստիացրեց, որ առանց վախենալու կարող է իր արկղերը առափնյա նավով ուղարկել:

Այդ նավերի նավապետները մետիսներ են, հուսալի մարդիկ և հիանալի ծովայիններ, իսկ տեղական պայմաններում հատկանիշները առաջնակարգ անհրաժեշտություն են, ընդգծեց միստր Բլեքը, որովհետև ափի երկարությամբ շատ փոքր կղզիներ են ցրված և այդ տեղերում հատկապես պետք է ուշադիր լինել:

Միստր Բլեքը հետաքրքրվեց՝ արդյոք միստր Դոլեժալը մտադի՞ր է Եվրոպա վերադառնալ այս նավով: Իմանալով, որ արշավախումբը ուզում է միայն ազատվել ավելորդ բեռից և նորից ճանապարհ ընկնել դեպի հեռավոր հարավ՝ Հոնդուրաս, կամ գուցե և Կոստա-Ռիկա, միստր Բլեքը անմիջապես առաջարկեց իր ծառայությունը. նա կարող է միստր Դոլեժալին հանձնարարական նամակներ տալ Գվատեմալայի Լիվինգստոն, Հոնդուրասի Պուերտո-Կորտես և Կոստա-Ռիկայի Լիմոնը /Գվատեմալա (պետության մայրաքաղաքը Գվատեմալան է, իսկ Լիվինգստոնը՝ գլխավոր նավահանգիստներից մեկը), Հոնդուրաս (Տեգուսիգուլա-Ապան մայրաքաղաքն է, Պուերտո-Կորտեսը՝ նավահանգիստը), և Կոստա-Ռիկա (Սան-Խոսեն մայրաքաղաքն է, Լիմոնը՝ նավահանգիստը). այս բոլոր պետությունները (անցյալում իսպանական գաղութներ) առաջացել են Ամերիկայի իսպանական գաղութների անկախության պատերազմի ժամանակ (1810-1826):/ քաղաքների իր բոլոր ծանոթներին և բարեկամներին:

Ֆրանսիշեկը շատ շնորհապարտ էր բանկի դիրեկտորին՝ նրա խորհուրդների և բարեկամական օգնության համար: Միստր Բլեքը իսկապես ամեն տեղ էլ բարեկամներ ուներ, բացի դրանից, նա մանրամասն գիտեր Կենտրոնական Ամերիկայի նույնիսկ ամենահեռավոր վայրերը: Լսելով, որ Դոլեժալը պատրաստվում է մտնել Կոստա-Ռիկայի լեռնային շրջանները, նա համեմատաբար հարմար ճանապարհ առաջարկեց. ծովով մինչև Լիմոն, իսկ այնտեղից երկաթուղով մինչև Կարիյոլ լեռնային վայրը:

— Ահա այն փողը, որը ձեզ համար փոխանցել է միստր Հաուն... — տեղից վեր կենալով, ասաց նա:

— Ձեր թույլտվությամբ ես այս փողը ձեզ մոտ կթողնեմ,— ընդհատեց նրան Ֆրանսիշեկը: — Հիմա ինձ շատ քիչ է պետք: Գնալուց առաջ ես մի մասը կվերցնեմ և ձեզ շատ շնորհապարտ կմնամ, եթե մնացածը դուք Լիմոն փոխադրեք: Բայց այդ մասին մենք կպայմանավորվենք հետո: Միայն վախենում եմ, որ մեր արձակուրդը ավելի երկար տևի, քան ցանկանում եմ:

— Ես չեմ գարմանում, որ դուք ուզում եք թողնել մեր քաղաքը: Բելիզը չի կարող հրապուրել զվարճալիքների առատությամբ: Մենք՝ սպիտակներս, այստեղ մոտ չորս հարյուր հոգի ենք, բայց շատ քիչ ենք կապված միմյանց հետ: Անգլիացիները, գերմանացիները, ֆրանսիացիները, իսպանացիները և հյուսիսամերիկացիները այստեղ ինքնուրույն խմբեր և կուսակցություններ են ստեղծել: Նրանք ապրում են անհամերաշխ և մեկուսացված, յուրաքանչյուրը աշխատում է հարստություն դիզել որքան կարելի է արագ ու շատ, և փախչել այստեղից: Լավ զվարճանալ կարելի է միայն Եվրոպայում:

Միստր Բլեքի հետ դուրս գալով ընդունարան, Ֆրանսիշեկը տեսավ, որ սկզբում իրեն այնպես համառորեն նայող անծանոթը պատուհանի մոտ կանգնած, ինչ-որ բան է գրում:

Ֆրանսիշեկը առանց շտապելու իր քայլերն ուղղեց դեպի առափնյան, որտեղ գտնվում էին անտառանյութի հայթայթման և փոխադրման ընկերությունների գրասենյակներ: Բլեքի հանձնարարական նամակը ազատեց ավելորդ չարչարանքից: Ամեն տեղ նրան դիմավորում էին ժպիտով և անմիջապես կատարում նրա բոլոր ցանկությունները: Ֆրանսիշեկը հանգստացավ, համոզվելով, որ բեռը խնամքով կբարձվի և կհասնի Լոնդոն: Նա վճարեց մաքսատան և ապահովագրության ծախսերը և գոհ հյուրանոց վերադարձավ:

Հյուրանոցի բակում Ֆրանսիշեկը գտավ միայն հնդիկներին, որոնք հանգստանում էին ստվերում: Նրանք ասացին, որ Վացլավը, Ենիկը և Դիեգոն գնացել են քաղաքը նայելու:

Երկու ժամյա զբոսանքից հետո մեր եռյակը վերադարձավ հյուրանոց: Ո՛չ քաղաքը, ո՛չ էլ նրա շրջակայքը հիացմունք չէին պատճառել նրանց: Հեռվում տարածված էին ճահճոտ մարգագետինները, որոնք տեղ-տեղ կտրտված էին ավազաթմբերով: Երբեմն հանդիպում էին նոսր անտառակներ: Քաղաքը ուներ մի հրապարակ և շատ թե քիչ ուղիղ չորս փողոց: Մնացած տները և խրճիթները անկանոն ցրված էին: Գլխավոր շենքերն էին՝ եկեղեցին, հիվանդանոցը, գավառապետի նստավայրը, բանկը և այլ հաստատություններ, որոնք կառուցված էին ցցերի վրա, կամ ավելի ճիշտ՝ ճահճոտ հողի մեջ խփած կարմիր փայտից տաշված գերանների վրա:

Քաղաքի ամենաաշխույժ և կարևոր մասը, հասկանալի է, նավահանգիստն էր: Մեր բարեկամները իրենց ժամանակի մեծ մասը այստեղ էին անցկացրել: Կարմրամորթ բանվորները դեպի նավն էին տանում տարբեր տեսակի մրգեր, բամբակի հակեր, բրնձի պարկեր, ինդիգոյի /Ինդիգո — կապույտ ներկ է, որը ստացվում է արևադարձային ինդիգոյի թփերից:/ տակառներ, շաքար և բանանով լի զամբյուղներ: Ամենից շատ բեռ բերում էին անտառարդյունաբերության ընկերության պահեստից: Նավահանգիստը լցված էր անտառափայտի հազվագյուտ տեսակներով: Այստեղից գերաններ էին ուղարկում աշխարհի բոլոր մասերը: Կային կարմիր, սև և եղևնու փայտեր, բայց ամենից շատ հանդիպում էր եղևնու վարդափայտ, դեղին կամ բաց վարդագույն մի ծառ, որը շատ է գնահատվում Եվրոպայում:

Նեգր խոսեի համար ամենամեծ բավականությունը շուկայում շրջելն էր: Այլևս կարիք չկար, որ նա խոհարարություն աներ և ազատ զբոսնում էր, հիանալով տնային թռչունների, ձկների, կրիաների, մրգերի կույտերով: Այստեղ ամեն ինչ էժան էր. Բելիզի առևտրականները դժգոհում էին, որ շատ գնորդներ չունեն: Քաղաքը դատարկվել էր, այնտեղ մնացել էր մոտ հազար մարդ, մյուսները աշխատանքի էին գնացել՝ ոմանք անտառը, ոմանք էլ գետի վրա: Բայց ծննդյան տոներից առաջ, երբ քաղաք են վերադառնում անտառահատները և բնակչության թիվը հասնում է մինչև տասնհինգ հազարի, ապրանքը ուղղակի խլիլում են:

Մինչ այդ Լիվինգստոնից սպասվող նավը տեղ հասավ և բոլոր զամբյուղներն ու օրխիդեաներով լի արկղները իր հսկա նավամբարն ընդունեց: Երկու օր հետո նավը նորից ծով դուրս եկավ և ուղղություն վերցրեց դեպի հյուսիս: Ֆրանսիշեկի հոգսերը պակասեցին:

Հիմա նրան մնում էր միայն մի նավ գտնել, որը ճանապարհորդներին հասցներ Կոստա-Ռիկայի լեռնային շրջաններին մոտ գտնվող որևէ նավահանգիստ: Փոքրիկ նավերը շատ-շատ էին, բայց Ֆրանսիշեկը չէր ուզում հին նավով գնալ, որը ամեն մի առափնյա գյուղում կամ կղզում կանգ է առնում նորոգման: Միստր Բլեքը օգնեց Ֆրանսիշեկին նոր նավ գտնելու, և ապրանքն ուղարկելուց երեք օր հետո նրանք հարմար մի նավակ գտան, որը ուղիղ Լիվինգստոն /Այսինքն՝ Ֆրանսիշեկը որոշեց սկզբում լինել Գվատեմալայում, իսկ հետո ուղղվել դեպի Կոստա-Ռիկա:/ էր ուղևորվում: Միստր Բլեքը մի փոքր զարմացած էր, որ Դոլեթալին ամեն տեղ ուղեկցում են չորս հնդիկ և մի նեգր: Բանկի դիրեկտորը հավատացնում էր, որ Լիվինգստոնում, առավել ևս՝ Կոստա-Ռիկայում հեշտությամբ հնարավոր է մարդիկ վարձել, բայց Ֆրանսիշեկը չհամաձայնեց:

— Մի՛ նեղացեք,— բացատրեց նա Բլեքին,— բայց այս անգամ արդեն չեմ հետևի ձեր խորհրդին, որը դուք անկասկած տալիս եք սրտանց: Մի քանի ֆունտ ավելի ծախսերը ինձ համար ոչինչ չարժե, դրա փոխարեն այս մարդկանց վրա կարող եմ լրիվ հույս դնել: Նրանք նվիրված են ինձ և արդեն կարողանում են հավաքել

բույսերը: Ուրախալի է նրանց՝ ինձ հետևելու պատրաստակամությունը նաև առաջիկայում, և ես երբեք նրանց չեմ հեռացնի:

Այստեղ Ֆրանտիշեկը հիշեց, թե հնդիկները ինչպես պահեցին իրենց գիշերային հարձակման ժամանակ և ավելացրեց.

— Այս մարդիկ արդեն մի քանի անգամ ապացուցել են իրենց հավատարմությունը, իսկ դա գին չունի: Ես չեի ուզի հրաժարվել նրանցից:

Ֆրանտիշեկը միայն Դիեգոյի արարքներից գոհ չէր: Վերջերս տղան ամբողջ ժամանակ անհետանում էր ինչ-որ տեղ, այնպես որ կարելի էր ենթադրել, թե նա պատրաստվում է փախչելու:

Մի անգամ Ֆրանտիշեկը կանչեց Ենիկին և ասաց.

— Իհարկե, ես ո՛չ իրավունք ունեմ, ո՛չ էլ ցանկություն պահելու Դիեգոյին, բայց ինձ դուր չեն գալիս նրա գաղտնի գործերը: Խոսիր նրա հետ, Ենիկ, եթե Դիեգոն մտադիր է հեռանալ մեզնից, թող գնա, բայց գոնե մեզ ասի այդ մասին: Նրան դատարկաձեռն բաց չեմ թողնի:

Ենիկն էլ բարկացավ Դիեգոյի վրա: Վաղ առավոտից նրա ընկերը անհետացել էր տնից և վերադարձավ ուշ գիշերով, բայց Ենիկի բոլոր հարցերին Դիեգոն խուսափողական պատասխան տվեց:

Գլուխ տասնիններորդ

ԴԻԵԳՈՅԻ ԱՐՏԱՍՈՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Մեր բարեկամները առանց շտապելու պատրաստվում էին մեկնել: Առավոտ շուտ նսվը պետք է դուրս գար նավահանգստից, և նավապետը բոլոր մեկնողներին խնդրեց երեկոյան զբաղեցնել իրենց տեղերը:

Ֆրանտիշեկը կատարեց վերջին այցելությունը միստր Բլեքին, բանկից անհրաժեշտ քանակությամբ դրամ հանեց, փոստարկղ գցեց նամակներ և բոլորին հանձնարարեց մայրամուտից առաջ հավաքվել նավակայանում:

Տեսնելով, որ Դիեգոն դարձյալ չկա, Ֆրանտիշեկը վերջին անգամ քաղաք գնաց: Խոսեն ու հնդիկները նավակայան եկան ճիշտ ժամանակին և արմավենու ստվերում կանգնած, սկսեցին դիտել նավամատույցի իրարանցումը:

Ենիկն ու Վացլավը հավատարիմ Լգոտկայի հետ միասին գնացին մի քիչ զբոսնելու: Նրանք թափառեցին ծովափին և բազմագույն խեցիներ հավաքեցին:

Ավագոտ ափը տեղ-տեղ ծածկված էր փշերով: Բայց այնտեղ, ուր պահպանվել էր ճահճուտը, փարթամ ծառեր և բարձր խոտեր էին աճել: Այս կանաչ կղզիներում շատ թռչուններ էին պատսպարվել, և Ենիկը ափսոսում էր, որ իր հրացանը արդեն փաթաթված, դրված էր զամբյուղը և նավամբար ուղարկված:

Օրը վերջանում էր:

Ալիքների ցածրիկ կատարները տարածվել էին ծովի մակերեսին և փայլվում էին ծիածանի բոլոր գույներով: Չէ՞ որ ծովը ամեն տեղ նույնը չէ: Տեղեր կան, որ նա նման է տափաստանի, երկնագույն մարգագետինները այնտեղ փոխվում են մանուշակագույնի, դեղինը՝ շագանակագույնի, վարդագույնը՝ ձիթականաչի:

Իսկ երբ այդ անծայրածիր ծովային հարթությունն է թափանցում գիշերվա քամին և ալիքները սկսում են կայծկլտալ, հնարավոր չէ աչքը կտրել այդ գրավիչ տեսարանից:

Բարեկամները արդեն մտածում էին նավակայան վերադառնալ, երբ հանկարծ Լգոտկան բարձր հաչոցով նետվեց առաջ: Թփերի միջից դուրս թռավ Դիեգոն և բարձրաձայն կանչով սլացավ նրանց մոտ:

— Շտապե՛ք շուտ,— բղավեց նա հեռվից:— Դոն Ֆրանսիսկոյի վրա հիմա կհարձակվեն:

Եվ առանց բացատրություն տալու կամ սպասելու, նա նետվեց ետ՝ դեպի նավակայանը:

Ընկերները նայեցին իրար և ամբողջ ուժով նետվեցին նրա հետևից: Նրանց սրտերը տազնապահար թայրտում էին: Մոտ մի կիլոմետր վազելուց հետո նրանք նորից լսեցին Լգոտկայի հաչոցը, որը նրանցից քիչ առաջ էր անցել, և Դիեգոյի ձայնը:

— Շո՛ւտ, շո՛ւտ:

Շուտով նրանց աչքերի առջև մի ողբերգական տեսարան բացվեց: Լգոտկան ինչ-որ մարդու գետին գլորելով՝ խեղդում էր: Նրա կողքին, թավալելով գետնին՝ Ֆրանսիշեկը կռվում էր մեկ ուրիշի հետ: Սա ձախ ձեռքով սեղմել էր Ֆրանսիշեկի կոկորդը, իսկ աջով բռնել էր դանակը: Նա արդեն ձեռքն իջեցնում էր մահացու հարված տալու, բայց հանկարծ ոռնաց ցավից և դեն շարտելով Ենիկին ու Վացլավին, փախուստի դիմեց:

Ո՞վ փրկեց Ֆրանսիշեկի կյանքը: Սենիոր Պանսայի դաշույնը, ավելի ճիշտ՝ Ենիկը:

Տեսնելով թե ինչ է կատարվում, Ենիկը թռավ հարձակվողի վրա և, երկար չմտածելով, իր սուր դաշույնով հարվածեց բարձրացրած ձեռքին: Դիեգոն արդեն հետապնդում էր երրորդ սրիկային, որը մինչ այդ թաքնված էր ծառերի հետևում, երևի հսկելու իր համախոհներին՝ նավակայանի կողմից վտանգ լինելու դեպքում:

Վացլավը շտապեց օգնության հասնել Լգոտկային, բայց ուշ էր... Սրիկան վիրավորեց շան վիզը և հասցրեց թաքնվել: Վացլավը շտապ պատռեց թաշկինակը և կապեց Լգոտկայի վերքը, աշխատելով կանգնեցնել արյունը:

Ֆրանսիշեկը մեծ դժվարությամբ վեր կացավ, և միայն հիմա բոլորը հասկացան, թե ինչ ծանր է վիրավորված նա. անգեն ձեռքերով պաշտպանվելով զինված հակառակորդից, նա ձախ ուսին երկու հարված էր ստացել: Հարձակվողը չէր կարողացել հաղթել, որովհետև տարիքն առած էր և Ֆրանսիշեկից թույլ էր, սակայն երկրորդ ավագակը թաքստոցից դուրս վազելով, զոհին գցել էր գետին:

— Բայց ինչո՞ւ, ինչի՞ համար,— հարցնում էր Վացլավը, դողալով ամբողջ մարմնով:

— Թալանել էին ուզում,— պատասխանեց Ֆրանսիշեկը. նրա ձայնը նույնպես դողում էր:— Ես ճանաչեցի ավագակին և անմիջապես կասկածեցի, որ նա կհարձակվի վրաս, չնայած սկզբում իրեն քաղաքավարի էր պահում:

— Դո՞ւք ճանաչեցիք այդ սրիկային,— բացականչեց Ենիկը:— Ասացեք, քեռի, դուք նրան հանդիպե՞լ եք այստեղ՝ Բելիզում:

— Այո՛, հենց առաջին օրը, երբ բանկ գնացի: Նրան հանդիպեցի գրասենյակում և հիշում եմ, թե ինչպես դեռ այն ժամանակ նրա հայացքը, չգիտեմ ինչու, անհանգստացրեց ինձ: Ափսո՛ս, որ հենց սկզբից դրան ոչ մի նշանակություն չտվեցի: Թեկուզ և միստր Բլեքին հարցնեի... Հետո այս քաղաքավարի սրիկան մի քանի անգամ հանդիպել է ինձ քաղաքում, և նորից ես նրա վրա ուշադրություն չեմ դարձրել... Բայց արագացնենք քայլերը, ժամանակն է նաև գնալու:

— Սպասեք, ինչ է պատահել մեր Լգոտկային,— բղավեց Ենիկը:

Շուներ փռվել էր գետնին և ցնցվում էր:

— Վզից վիրավոր է,— ասաց Վացլավը:— Ես վիրակապել եմ, իսկ թե հետո ինչ կլինի, կտեսնենք: Հուսով եմ, որ վերքը մահացու չէ:

— Անիծված երկիր,— բացականչեց Ենիկը:— Զեռի Ֆրանսիշեկը վիրավորված է, Լգոտկան՝ մահամերձ:

Նա պազեց և սկսեց շոյել շան գլուխը: Լգոտկան թույլ-թույլ օրորեց պոչը և աչքերը փակեց:

— Նա սպանեց շանը, սպանե՛ց,— հուսահատ բացականչեց Ենիկը:

— Դե սպասիր, բոլորովին էլ չի սպանել,— տղային մի կողմ քաշեց Վացլավը:— Ես նրան կտանեմ, իսկ դու օգնիր քեռուն: Մենք պետք է այստեղից արագ հեռանանք, օգնություն գտնենք և հայտնենք իշխանություններին:

— Ամենից առաջ հարկավոր է նաև գնալ,— տնքաց Ֆրանսիշեկը:— Այնտեղ մեզ կօգնեն: Իսկ իշխանությանը անհանգստացնելու կարիք չկա, միայն անտեղի կուշանանք այս ավազակաբնում:

Վացլավը գրկեց շանը և մնացածներին խնդրեց որքան հնարավոր է արագ գնալ: Հենց այդ պահին էլ թփերի միջից դուրս եկավ Դիեգոն:

— Ա՛, այդ դու ես, թափառաշրջիկ,— տղային զայրացած ողջունեց Ֆրանսիշեկը:

— Այդ թափառաշրջիկը փրկեց ձեր կյանքը,— մեջ ընկավ Ենիկը,— թե չլիներ Դիեգոն, որը ժամանակին մեր հետևից վազեց, չգիտեմ ինչով կվերջանար այս բոլորը...

— Ահա թե ի՛նչ— զարմացավ Ֆրանսիշեկը:— Մոտեցիր ինձ, տղա՛ս: Ինչո՞ւ ես այդպես ծանր շնչում:

— Ես հետապնդեցի երրորդ ավազակին,— պատասխանեց Դիեգոն, հազիվ շնչելով:— Նա փախավ, բայց ես տեսա, թե ուր:

— Դու տեսար, թե ո՞ւր փախավ: Իսկ ինչպե՞ս ես հետևել այդ ավազակներին: Այ քեզ բա՛ն:

— Ես ամեն ինչ կպատմեմ հետո, իսկ հիմա հեռանանք այստեղից,— շտապեցրեց Դիեգոն:— Ավազակները շատ են, գուցե մյուսներն էլ գան:

Բարեկամները շտապեցին նավակայան, որտեղ նրանց սպասում էին հնդիկները և սև խոսեն՝ իրերով:

Ճանապարհին Ֆրանսիշեկը փորձեց հարցուփորձել Դիեգոյին ամեն ինչի մասին, ինչ նա գիտեր, բայց Դիեգոն միայն խորհուրդ տվեց նազ չնստել: Ավելի լավ է վերադառնալ քաղաք և տեղավորվել ուրիշ հյուրանոցում:

Ֆրանսիշեկը լսեց նրան և հնդիկներին կարգադրեց քաղաք վերադառնալ: Դիեգոն օգտվելով խավարից պետք է նրանց տաներ քաղաքի հակառակ ծայրում գտնվող հյուրանոցը, որտեղ մեր բարեկամները երբեք չէին ապրել:

Ֆրանսիշեկը գերադասեց մինչև Լիվինգստոն հասնելու համար նավապետին տված գումարը կորցնել: Ընթրիքից հետո, երբ բոլորը մի քիչ հանգստացել էին, Դիեգոն պատմեց, թե ինչպես է իմացել նախապատրաստվող հարձակման մասին: Երեք սպիտակները ամուր սեղմեցին տղայի ձեռքը այս անգամ էլ նա անգնահատելի ծառայություն կատարեց: Բացատրությունը եղավ պարզ և հակիրճ:

Առաջին օրերը Բելիզում Դիեգոն տխրում էր: Նա ամաչում էր իր ձեռքի կաղապարի պատճառով: Բայց նա չէր համարձակվում հասնել. «դոն Ֆրանսիսկոն» ներշնչել էր Դիեգոյին, թե բացի իրենից, ոչ մեկը չի համարձակվի ձեռք տալ վիրակապին: Դիեգոն այդ պատճառով էլ մի անկյուն էր գտել և այնտեղ, ծառերի տակ, ժամերով նստում էր, մտածելով ամենատարբեր բաների մասին: Դրա հետ միասին նա սկսել էր հետևել շրջապատին, և գլխավորը՝ այն բանին, թե ինչ էր կատարվում բակում:

Շուտով կասկածամիտ հնդիկի աչքովն ընկավ վստահություն չներշնչող մի մարդ, որը հայտնվում էր բակում և նայում առաջին հարկի բաց պատուհանից: Երբեմն նա զգուշությամբ բարձրանում էր սրահի տանիքը և նայում երկրորդ հարկի սենյակները: Այդպես շարունակվեց մի քանի օր: Մի օր էլ բակը մտավ մի ուրիշ անձանոթ և ինչ-որ բանի մասին շշուկով պայմանավորվեց հետևողի հետ. նրանց անպայման հետաքրքրում էր այն համարի երկու պատուհանները, որտեղ ապրում էր «դոն Ֆրանսիսկոն»:

Դիեգոն ականջները սրեց: Երբ հետաքրքրվողներից առաջինը գնաց բակից, Դիեգոն հետևեց նրան: Ո՞վ ուշադրություն կդարձներ փոքրիկ հնդիկի վրա: Այդ փոքրիկները խցկվում են ամեն տեղ, սպիտակներին առաջարկում են մրգեր, ծաղիկներ և ամեն տեսակի չնչին բաներ:

Ոչ մեկի աչքին չընկնելով՝ Դիեգոն հասավ մինչև արվարձանի պանդոկը, որտեղ երեկոները համընդհանուր աշխուժություն էր տիրում:

Կասկածելի մարդը պանդոկ չմտավ: Երկու անգամ նա անցավ պատուհանների մոտով և ուղղվեց դեպի ծառերով ու թփուտներով ծածկված ծովափը:

Քիչ անց պանդոկից սկսեցին դուրս գալ մարդիկ՝ մեկ-մեկ, երկու-երկու, և իրար հետ խոսելով, նույնպես դեպի ծովափ գնացին:

Դիեգոն, թաքնվելով ստվերում, հետևեց նրանց: Նրա սիրտը նվաղում էր. նա արդեն ինչ-որ վատ բան էր կանխագգում: Հասնելով փոքրիկ բացատը, պառկեց ծառի հետևում և սկսեց ականջ դնել: Չորս կողմից ծառերով շրջապատված բացատը շատ լավ էր երևում: Դիեգոն ոչ մի բառ բաց չթողեց:

Այդ մարդիկ սարսափելի գործ էին ձեռնարկել: Նրանք խոսում էին իսպաներեն, բայց օգտագործում էին այնպիսի բառեր, որոնք Դիեգոն չէր հասկանում: Անձանոթները ինչ-որ տեղեկություններ էին հաղորդում փափուկ, մոխրագույն գլխարկով մի մարդու: Երբ նա գլուխը բարձրացրեց, Դիեգոն անմիջապես ճանաչեց. դա հենց այն մարդն էր, որ այնպես մանրամասնորեն ուսումնասիրում

Էր «դոն Ֆրանսիսկոյի» պատուհանը: Այդ մարդը լսում էր, ինչ-որ բան նշում փոքրիկ գրքույկում, իսկ հետո նոր հանձնարարություններ տվեց:

Առաջին գիշերը Դիեգոյին հաջողվեց քիչ բան իմանալ, բայց հետաքրքրությունը ամեն օր բերում էր նրան անծառների գաղտնի խորհրդի տեղը, որոնք ինչ-որ չար բան էին ձեռնարկել:

Դիեգոն հասկացավ, որ բացատրում ավագակներ են հավաքվում, քննարկելու իրենց անելիքները, իսկ մոխրագույն գլխարկով մարդը նրանց պարագլուխն է:

Դիեգոն միայն երեկ լսեց, որ ավագակները պատրաստվում են հարձակվել իր ընկերների՝ ավելի ճիշտ «դոն Ֆրանսիսկոյի» վրա: Նրանք գիտեին, որ ճանապարհորդները պատրաստվում են Լիվինգստոն մեկնել, որ «դոն Ֆրանսիսկոն» որոշել է միայն վերջին թուրքին բանկից մի խոշոր գումար վերցնել՝ ճանապարհի համար: Մի խոսքով, նրանց հայտնի էր ամեն ինչ, բացի մի բանից. երբ և որտեղ հարմար առիթ կստեղծվի հարձակման համար:

Համաձայնեցին, որ առաջինը իր բախտը կփորձի ինքը՝ պարագլուխը, երկու օգնականների հետ միասին: Պլանն այսպիսին էր. սենյակ ներխուժել պատուհանից, իսկ եթե դա չհաջողվի, հարձակվել Դիեգոյի վրա փողոցում: Այդ մտադրությամբ երեք հոգի պետք է կրկնակույս հետևեն նրան: Եթե այս անգամ անհաջողության մատնվեն, ապա կփորձեն իրենց նպատակին հասնել նավի վրա:

— Ինչո՞ւ մեզ ոչինչ չէիր ասում,— կշտամբանքով հարցրեց Ֆրանտիշեկը:— Չէ՞ որ կարող էիր մեզ նախազգուշացնել:

— Չէի կարող, պարո՛ն,— պատասխանեց Դիեգոն,— լսելով նրանց խոսակցությունը ճշացի և մատնեցի ինձ: Նրանք վեր թռան և նետվեցին թփուտները՝ ինձ փնտրելու: Ես սլանում էի ամբողջ ուժով, բայց երկուսը վազում էին իմ հետևից: Ես նրան խաբեցի, բայց պետք է թաքնվեի, որովհետև նրանք ամբողջ օրը դարանակալել էին ինձ: Ես բարձրացա հյուրանոցի բակում աճած ծառը և սկսեցի սպասել, մտածում էի, եթե սողոսկեն ձեզ մոտ, ես տազնապ կբարձրացնեմ: Ճիշտ է, երկուսը մտան բակ, բայց դուք տանը չէիք և նրանք գնացին: Այդ ժամանակ ես արագ իջա ծառից և սկսեցի ամբողջ քաղաքում փնտրել ձեզ, բայց միայն երեկոյան կողմ տեսա, որ նեգրը և հնդիկները նավակայան գնացին: Ես վազեցի նրանց հետևից և համարյա հասնում էի, երբ հանկարծ երևաց մոխրագույն գլխարկով մարդը. նա ծովափով ինչ-որ տեղ էր շտապում: Ես սողացի նրա հետևից, բայց նկատելով երկու ավագակի ևս, թաքնվեցի ճահճում, թողեցի, որ նրանք առաջ անցնեն, և բարձրացա ծառը, տեսնելու, թե ուր գնացին: Եվ անմիջապես տեսա ձեզ. դուք քայլում էիք ծովափով, և գլխի ընկա, որ նրանք պատրաստվում են ձեզ վրա հարձակվելու: Ես շատ սարսափեցի: Իջա ծառից և մեծ շրջան կատրելով, վազեցի մյուս կողմը, որպեսզի օգնություն կանչեմ: Բարեբախտաբար մոտակայքում լսեցի Լգոտկայի հաչոցը: Մնացածը դուք ինքներդ գիտեք:

— Ինչո՞ւ վազեցիր երրորդ ավագակի հետևից, որը պահակ էր կանգնել:

— Ես ուզեցի իմանալ, նա չի վազո՞ւմ արդյոք մյուսներին պատմելու: Նա այդպես էլ արեց. հայտնեց իրենց մարդկանց, թե մտադրությունը տապալվեց և մեկը վիրավորված է, իսկ մյուսին համարյա խեղդել է շունը: Ավագակները աղմուկ բարձրացրին և երդվեցին դաժան վրեժ լուծել ձեզնից: Դրա համար էլ ես խնդրեցի նավ չնստել:

Ֆրանտիշեկը զարմացած էր պատանու շրջահայացության վրա:

— Դու լավ տղա ես, Դիեգո, ես երբեք դա չեմ մոռանա: Հիմա մենք պետք է փոխենք ուղղությունը: Դիեգոն ճանաչում է ավագակներին, թող առաջվա նման հետևի նրանց: Վացլավը վաղը կգնա միստր Բլեքի մոտ և իմ անունից կխնդրի այցելել: Իսկ հիմա ժամանակն է հանգստանալու: Այս անախորժությունը բոլորիս հոգևեցրեց:

Գիշերն անցավ: Բոլորը անհանգիստ քնեցին, բայց ամենից վատ այդ գիշերը անցկացրեց Ֆրանտիշեկը: Առավոտյան նա այնքան գունատ էր և ընկճված, որ նույնիսկ չկարողացավ անկողնուց վեր կենալ:

Միստր Բլեքը այցելեց Ֆրանտիշեկին և լսեց նրա պատմածը տեղի ունեցածի մասին: Իմանալով բոլոր մանրամասները, միստր Բլեքը խորհուրդ տվեց չդիմել իշխանություններին:

— Կարիք չկա աղմուկ բարձրացնել: Հանցագործները կթաքնվեն երկրի բոլոր անկյուններում, որպեսզի ավելի մեծ հանցանքներ գործեն: Այդ գործը թողեք ինձ: Ես հոգ կտանեմ, որպեսզի ոստիկանությունը գտնի ավագակների որջը: Իհարկե, այդ պետք է անել շատ զգույշ, որպեսզի կարողանան բռնել և վնասագերծել ամբողջ ավագակախումբը: Ինչ վերաբերում է ձեզ, ապա հավանություն եմ տալիս երթուղին փոխելու ձեր մտադրությունը: Եթե հարմար է ուղիղ Լիմոն /Հիմա ճանապարհորդները պիտի ուղիղ Կոստա-Ռիկա մեկնեն:/ գնացող նավը, ապա կարող եմ ձեզ ուրախացնել: Վերակրուսից վերադարձող «Կուգուարը» Բելիզում կլինի վաղը երեկոյանկամ վաղը չէ մյուս օրը՝ առավոտյան: Շատ հուսալի նավ է, գնում է մինչև Պանամա: Դուք անհանգստանալու ոչ մի պատճառ չունեք: Ինքս ամեն ինչ կկարգավորեմ, միայն պատրաստվեք ճանապարհվելու, իսկ գլխավորը՝ առողջացեք:

Ֆրանտիշեկը շնորհակալություն հայտնեց միստր Բլեքին և կարգադրեց ճանապարհ ընկնելու պատրաստություն տեսնել:

Գլուխ քսաներորդ

ԴԵՊԻ ԿՈՍՏԱ-ՌԻԿԱՅԻ ԽՈՐՔԵՐԸ

Մյուս օրը ճանապարհորդները հրաժեշտ տվեցին Բելիզի նավահանգստին: Մի փոքր գունատ, Ֆրանտիշեկը կանգնել էր «Կուգուարի» տախտակամածին՝ հրաժեշտի ողջույններ հղելով միստր Բլեքին, որը մի կողմ էր քաշվել և նայում էր հեռացող նավի հետևից: «Կուգուարը»՝ երկծիսնելույզ գեղեցիկ նավը, հանգիստ հանդիսավոր դեպի հարավ էր լողում:

Նավահանգստից նավի դուրս գալը ընդհանրապես հուզիչ տեսարան է: Նա ընթանում էր փառահեղ, անաղմուկ ինչպես հսկա մի կարապ, զգուշությամբ անցնելով նավակների և կղզյակների մոտով. հետո կարծես ուղղելով սպիտակ փետուրները, սկսեց ակոսել ջուրը և բաժանել երկու լայն թևերի... Եվ այդ ժամանակ արդեն թվում էր, թե նավը ոչ թե լողում, այլ թռչում է: Աննկատելիորեն հայացքի առջև նավը քանի գնում փոքրանում է, մինչև որ վերջապես վերածվեց պստիկ լուսավոր ամպիկի: Շուտով դա էլ գունատվեց, և ահա հայացքը իզուր դեգերում է երկնքի և ծովի միջև, փնտրելով հեռավոր, փոքրիկ կետը. բայց չկա, չքացել է, հալվել հեռվում:

Պուերտո-Լիմոնը հիանալի նավահանգիստ է, լավ պաշտպանված բոլոր կողմերից, այնպես որ նավերի համար ավելի անվտանգ ապաստարան չի կարելի գտնել: Բայց երկու հազար բնակիչ ունեցող այդ քաղաքը շատ է աննշան:

Մեր ճանապարհորդները Լիմոն հասան ողջ և առողջ, հանգստացած և այնտեղ անցկացրին մի քանի ժամ: Նրանց նպատակը Կարիլիո փոքրիկ քաղաքն էր. այնտեղ պետք էր հասնել երկաթուղով: Կարիլիոում նրանք կհանգստանան, Ֆրանսիշեկը կոնսի բեռնակիր գրաստներ, արկղեր, զամբյուղներ և արշավախումբը կշարժվի առաջ՝ դեպի լեռները:

Բոլորն արդեն ուրախանում էին, երբ մտածում էին լեռնային օրիսիդեա որոնելու մասին, որը առատորեն աճում էր Կոստա-Ռիկայում: Ֆրանսիշեկի ասելով այս երկիրը Եվրոպայի առջև իր բոլոր հարստությունները դեռ չի բացել:

Երկաթուղով ճանապարհորդելը շատ հետաքրքիր էր: Սկզբում շոգեքարշը իր հետևից քաշում էր վագոնների երկար շարքը, իսկ լեռներին մոտենալու ժամանակ դրանք քչացան ու քչացան: Փոքրիկ կայաններում հետևի վագոնները անջատում էին, այնպես, որ երբ սկսվեց իսկական վերելքը, ծանր փնչացող շոգեքարշը միայն չորս վագոն էր քշում:

Կոստա-Ռիկայի մակերևույթը շատ յուրօրինակ է: Բարձր Կորդիլերները հատում են Կոստա-Ռիկան հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք՝ երկու բարձր լեռնաշղթաներով, որոնք որոշ տեղերում հասնում են 2000 մետրի. այս բնական իսկա պատկերների միջև, ծովի մակերևույթից 1500 մետր բարձրության վրա, սփռված է լեռնային բարձրավանդակը, իսկ այդ հարուստ, պտղաբեր հարթության վրա աճում են անտառներ, հասկանալի է՝ միայն սաղարթավորները, իսկ նրանց միջև տարածված են լայնարձակ տափաստանները: Լեռնածալքերին զուգահեռ փռված են հովիտները և ժայռոտ զառիվերի լանջերին, բացի անուշահոտ վանիլից, աճում են տարբեր տեսակի օրիսիդեաներ: Ի միջի այլոց, վանիլը նույնպես օրիսիդեայի մի տեսակ է. փաթաթվող բույս է, կաշվի պես ամուր, վառ կանաչ տերևներով: Դեղնականաչ ծաղիկները թափվելուց հետո առաջանում են գլանաձև տուփիկներ: Մյուս օրիսիդեաների հետ միասին վանիլը լեռնային օդը լցնում է անուշահոտությամբ: Օրիսիդեայի թփերը աճում են ժայռերի վրա, նրանց ընդերքում թաղելով իրենց մոխրագույն, հանգուցավոր արմատները: Երբեմն թփերը կառչում են զառիթափից, ինչպես ծիծեռնակների բույսը, և նրանց արմատները ազատ տարուբերվում են օդում: Հողն այստեղ հրաբխային ծագում ունի: Մի քանի հրաբուխներ գործում են մինչև օրս, իսկ թեթև, անվտանգ երկրաշարժերը այնքան հաճախակի են, որ բնակիչները ընտելացել էին դրանց:

Կարիլիոում Ֆրանսիշեկը հեշտությամբ բոլոր անհրաժեշտ բաները գտավ: Կոստա-Ռիկան ձիերի և ջորիների պակասություն չի գգում, իսկ ինչ վերաբերում է զամբյուղներին, ապա տեղացիները շատ ճարակությամբ դրանք գործում են պատատուկներից, ռոտանից /Ռոտանը (կամ, ավելի ճիշտ, ռոտանգ) — պատատուկներ են, որոնք տարածված են արևադարձային անտառներում: Նրանց երկարությունը հասնում է 300—400 մ: Կենտրոնաման և Հարավային Ամերիկայում դրանք հայտնի են «Իսպանական եղեգ» անունով: Ռոտանը օգտագործվում է միայն զամբյուղ գործելու, կահույք պատրաստելու համար: / և ամուր ու ճկուն շյուղերից:

Դեռ գնացքում ընկերները համոզվեցին, որ տեղի բնակիչների սիրալիրության և բարեհոգության մասին եղած լուրերը երբեք էլ չափազանցված չեն: Ամեն տեղ էլ նրանք հանդիպում էին բացառիկ բարի և կարեկից մարդկանց:

Բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն էր. արտահանման գլխավոր մթերքը սուրճն էր: Մի անգամ Ֆրանսիշեկը ասել էր, որ Կոստա-Ռիկայում նրանք սուրճի լեռներ կտեսնեն, և ենիկը հիշեց նրա խոսքերը: Բայց և այնպես սուրճի իսկա շեղջերը, սուրճի իսկական լեռները, որ նրանք տեսան այստեղ, զարմացրին նույնիսկ իրեն՝

Ֆրանսիշէկին: Կեղևահանված, լվացված, չորացած սուրճը դիզված էր ուղղակի դաշտում՝ այնպիսի բարձր ու երկար կույտերով, ինչպես Չեխովականիայում շաքարի ճակնդեղի բուրգերը, որոնցով գյուղացիները ամեն ձմեռ հեղեղում են շաքարի գործարանները:

Սուրճից բացի, Կոստա-Ռիկայում աճեցնում են բրինձ, ծխախոտ, շաքարեղեգ, բանան և այլ պտուղներ... Այնուամենայնիվ, այստեղ հազիվ թե հողի հինգ տոկոսը մշակելիս լինեն. մնացած մասը անմշակ է, կամ էլ ծածկված է կուսական անտառով:

Ենիկը իրեն երջանիկ էր զգում այսքան ընդմիջումից հետո արածող կովերի նախիրը տեսնելով. ուրախությունից նաայնքան շատ կաթ խմեց, որ հետո անհանգստացած շփում էր իր փորը, իսկ մրգի վրա նայել չէր կարողանում:

Տեղացիները անդադար նրանց իրենց խրճիթներն էին հրավիրում: Որքա՛ն ուրախացավ Ենիկը, երբ Ֆրանսիշէկը նրան գորշ, պտավոր մի ձի նվիրեց: Վացլավը նույնպես ձի ստացավ. նրա ձին մյուսից տարբերվելու համար, սև էր: Իհարկե բեռներով ճանապարհորդելիս ամենահուսալին զգույշ ջորին է, և իր համար քեռին հենց այդ կենդանուն ընտրեց:

Ենիկը իսպանական ձևով ձիու վրա կարմիր թամբածածկ գցեց և ափսոսաց, որ լոնդոնյան չարածճիները չեն տեսնում, թե ինչպես է նստում թամբին, ձախ ձեռքը հենելով կողքին, իսկ աջով պահում էր սանձը: Ա՛խ, ի՛նչ սանձ: Իսկական կաշվե սանձ, զարդարված պղնձյա քանդակներով:

— Ով պարծենում է, փոսն է ընկնում,— նկատեց Ֆրանսիշէկը, որը ժպտալով հետևում էր երևակայող Ենիկին:— Տե՛ս, կընկնես:

Ենիկը ուրախ ծիծաղեց:

— Այս այծից ընկնես, թե նստարանից միևնույնն է: Նայեք, ասպանդակները ընդամենը կես մետր են բարձր գետնից:

Ձին նույնպես գոհ էր իր հեծյալից: Իսկ Լգոտկան, որը արդեն լավացել էր, շատ էր խանդում: Բավական էր, որ Ենիկը շոյեր Վետերկային (Ենիկը այդպես անվանեց իր ձիուն), կամ նրան սիրալիր խոսք ասեր, Լգոտկան անմիջապես իր նկատմամբ ուշադրություն էր պահանջում: Շունը սկսում էր թռչկոտել երիտասարդ ձիավորի շուրջը, իսկ եթե նա չէր նկատում, թռչում էր ուղղակի թամբի վրա և կախ էր ընկնում Ենիկից: Հասկանալի է, Ենիկը անմիջապես քշում էր նրան, և շունը վիրավորված, պոչը թափահարելով, գլխապատառ վազում էր առաջ և գծի պես հաչում:

Անձանոթ երկիրը բոլորին դուր եկավ, և միայն մի բան մթազնեց տրամադրությունը: Ամեն օր անձրև էր գալիս: Օրվա կեսին հորիզոնը ծածկվում էր ամպերով, թնդում էր որոտը, փայլում կայծակը. մոտավորապես մինչև ժամը երեքը այնպես անձրև էր գալիս, ասես դույլից էին թափում, իսկ հետո անձրևը հանկարծակի վերջանում էր, կարծես ոչ մի բան էլ չէր եղել. փայլում էր արևը և տարածվում խոտերի բուրմունքը:

Իսկապես որ կամակոր բնություն է: Որպես կանոն, անձրևից հետո արևը այրում ու խորովում էր առաջվանից էլ ուժեղ: Հովիտներից ու անտառներից սպիտակ քուլաներով բարձրանում էր մշուշը, տերևների վրա, թանկարժեք քարերի նման, փայլկոտում էին ցողի կաթիլները, լանջերն ի վար վազում էին առվակները, իսկ ծաղիկների բույրը մշուշում էր մարդկանց գիտակցությունը:

Ֆրանսիշէկը շուտով վարժվեց տեղի եղանակների քմահաճույքներին և արշավախմբի բոլոր անդամների համար ռետինե անձրևաթափներ գնեց:

— Ա՛յ քեզ եղանակ,— դժգոհեց Ենիկը, երբ տեղատարափը բռնեց գրոսանքի ժամանակ:— Այս Կոստա-Ռիկայի գերբի վրա երևի գորտ պետք է նկարել կամ ջրային ոգի:

— Եթե մենք անցնեինք Կորդիլերների հարավային շղթաները,— ասաց Ֆրանսիշէկը,— դուք բոլորովին այլ բան կտեսնեիք: Այնտեղ, լեռների մյուս կողմում տարվա տասը ամսում անձրև ոչ մի կաթիլ չի ընկնում: Կարծում եմ, որ դա նույնպես քեզ դուր չէր գա: Այնտեղ անտառները նվազ են, անտերև, լեռները խանձված են, մերկ ու չոր:

Ենիկը լռեց: Նա վաղուց էր հասկացել, որ բողոքելը բոլորովին իմաստ չունի, միևնույն է, կմնաս հիմար վիճակում:

Շուտով արշավախումբը սկսեց որոնումները և Ֆրանսիշէկը հույս ուներ, որ շատ շուտով նորից կլցվեն զամբյուղներն ու արկղերը:

Նրանք ուղղվեցին արևմուտք՝ դեպի լեռները: Եթե ջունգլիում ծառ բարձրանալու արվեստ էր պահանջվում, ապա այստեղ պետք էր կարողանալ ժայռեր մագլցել, որովհետև օրիսիդեաները աճում էին խոր անդունդներին նայող զառիկող ժայռերի վրա:

Հնդիկները ճարպիկու արագ էին աշխատում և բավականին լավ ավար էին բերում: Բայց բոլորից խիզախը Դիեգոն էր, և նրա քաջությունը հաճախակի գրավում էր Ենիկին: Դրա համար Ֆրանսիշէկը հանդիմանում էր նրանց երկուսին էլ, իսկ երբեմն էլ խիստ պատժում:

— Այստեղ էլ ամեն քայլափոխին վտանգ է սպառնում,— մի անգամ ասաց նա, երբ ճանապարհորդները հավաքվեցին երեկոյան խարույկի մոտ: Ես արդեն տեղեկություններ եմ հավատքել այս շրջանների մասին և կարող եմ ասել, թե այստեղ ամենախուլ ջունգլիից էլ վատ է: Հովազն ու կատվառյուծը, իսկ դա հենց ինքը պուման է, այստեղ էլ կան ինչպես Գվատեմալայում: Բացի այդ, Կոստա-Ռիկայում կան սողունների հարյուր երեսուն տարբեր տեսակներ, որոնց մեջ շատ թունավոր օձեր կան: Էլ չեմ խոսում անհաշիվ կարիճների, սարդերի, հազարոտանիների մասին, որոնց խայթածը շատ վտանգավոր է: Չգույշ եղեք: Երբեք դուրս չգաք առանց գենքի և աչքներդ չորս արեք:

Լեռների խաղաղ ու անդորր գիշերները իջնում էին ճիշտ ժամանակին: Արշավախմբի բոլոր անդամները կարող էին լավ քնել: Հետևում մնացին ջունգլիի սարսափելի գիշերները, երբ արևմուտից հետո սկսում էր աղմուկ, սարսափելի մռնչոց, ողբ, քրքիջ, նախամահյան խռիռոց ու ոռնոց: Լեռներում հանդիսավոր խաղաղություն էր թագավորում: Մեծ, պայծառ աստղերը հանգիստ նայում էին երկրին, իսկ հեռվում աղմկում էին ջրվեժները:

Բայց երիտասարդներին նորից հրապուրում էր հրացանը ձեռքներին թափառելը: Առատ որսը ուղղակի գրավում էր: Բայց Ֆրանսիշէկը առանց Լգոտկայի չէր ուզում գնալ: Դուք, երևի, հարցնեք թե նրան ինչ էր պատահել: Ոչինչ, ուղղակի Լգոտկան չէր ցանկանում թողնել վրանը: Այնտեղ, գործած զամբյուղում, անվրդով քնած էին նրա երեք ձագուկները:

— Երեք Լգոտկաներ,— հիացած ասաց Ենիկը:

Նրանք վնասողով գալարվում էին զամբյուղում՝ երեք փոքրիկ, կույր, հիմար, բայց դուրեկան գնդիկներ: Լգոտկան անձնագրի պահպանում էր նրանց, լիզում էր, կարգի բերում և ոչ ոքի թույլ չէր տալիս նրանց ձեռք տալ:

Միայն եսիկը իրավունք ուներ թեթևակի շոյելու ձագերին: Եսիկը մտածում էր նրանց լավ, և խիստ դաստիարակություն տալ և Լգոտկան լուռ համաձայնել էր դրան:

— Գիտե՞ս, Լգոտկա, այդ մեծագլուխ, սպիտակ խալով արուին կանվանենք Պլուտոն: Համաձայն ես: Մենք նրան կտանք Վացլավին: Մինչև հիմա էլ տխրում է քո հին ընկերոջ համար: Պլուտոնը լավն էր, խոսք չկա, անվեհեր և նվիրված ընկեր էր, բայց քո Պլուտոնը ավելի լավը կլինի: Ուրեմն, որոշվեց այսպես: Պլուտոնը տալիս ենք Վացլավին: Մի առարկիր, Լգոտկա, այդպես է պետք: Իսկ այս զայրացկոտին մենք Կարո կանվանենք և կնվիրենք քեռուն: Բայց աղջկան կթողնենք մեզ, լավ: Դիեգոն նույնպես դեմ չի դրան վերցնելու, բայց չենք տա, թե չէ մեզ համար տխուր կլինի: Նա, իհարկե, ավելի թույլ է եղբայրներից, բայց մենք լավ կխնամենք: Միայն ի՞նչ անուն դնենք:

— «Հա՛ֆ-հա՛ֆ»,— առաջարկեց Լգոտկան:

— Դա ի՞նչ անուն է, որ,— հակառակեց Եսիկը:— Պետք է մի ուրիշ բան մտածել: Մեր գյուղի Նովակները մի շուն ունեին՝ Բելա անունով: Ինձ շատ էր սիրում: Ի՞նչ կասես, Լգոտկա: Բելա անունը քեզ դուր գալի՞ս է:

Հիմա էլ Լգոտկան չհամաձայնեց. նա դժգոհ գոմռաց:

— Լա՛վ, նոր անուն կմտածենք,— զիջեց Եսիկը:— Գուցե նրան Կոստառիկա անվանենք, հը՞: Ա՛յ թե լավ կլինի: Նա այստեղ է ծնվել, կարծես վատ չէ, հը՞: Կարծում ես երկար անո՞ւն է: Կարելի է կրճատել: Ապա, ընտրիր, Կոստա՞, թե՞ Ռիկա:

Լգոտկան գոմռաց, և այդ գոմռոցից Եսիկը ենթադրեց, որ նրան Ռիկա անունը ավելի է դուր գալիս. այդպես էլ որոշեցին:

Ճանապարհորդության տասներորդ օրը արշավախումբը մոտեցավ լեռնային ընդարձակ կիրճի, որը կարծես սարահարթի միջով հսկա գութանի բացած խոր ակոս լիներ: Նրա խորքում աղմկում էր լեռնային գետակը, իսկ լանջերը այնպես էին ծառերով ու թփուտներով ծածկված, որ հետագա ճանապարհը այս թավուտի միջից կարելի էր բացել միայն լարված և համառ աշխատանքով: Կիրճի մյուս կողմը անցնելուց առաջ Ֆրանսիշեկը որոշեց ստուգել ամենամոտ լանջը և հիմնովին ուսումնասիրել շրջապատը: Նա ենթադրում էր, թե այս տեղերում կարելի էր ոչ միայն լեռնային օրխիդեա գտնել, այլև ծառերին աճող օրխիդեայի տեսակներ:

Իսկապես ճանապարհորդների աչքերի առջև անսպասելի մի ծաղկուն այգի բացվեց: Փարթամորեն աճած օրխիդեաները հպարտ բարձրացրել էին իրենց հրաշալի գլուխները: Ափսոս, որ համարյա անհասանելի էին: Թվում էր, կարելի է հասնել ծաղիկներին, դրանք իսկապես քսան-երեսուն մետրի վրա էին, բայց, ձեռք բերելը անհնարին էր: Դրա համար պետք էր թռչել կարողանալ:

— Ի՞նչ ծանրաշարժ են մարդիկ,— տխուր հառաչեց Եսիկը:— Ինչո՞ւ ես կոլիբրի կամ թիթեռ չեմ: Ահա նրանք սուրում, ճախրում են «օդային այգու» վրա...

Խնդիրը այն էր, որ պետք էր հիշել, թե որ ուղղության վրա է գտնվում օրխիդեաներով ծառը: Դա հեշտ գործ էր թվում, քանի դեռ ճանապարհորդները

կանգնած էին ձորակի եզրին, բայց շատ դժվար էր նրանց համար, ովքեր փորձում էին իջնել կիրճը: Այդ աշխատանքները բավական հաջող կարողանում էին կատարել հնդիկները. միմյանց կանչելով, նրանք մագլցեցին բոլոր ծառերը, որտեղ, նրանց կարծիքով, պետք է հարուստ ավար լիներ: Նրանց օգնում էին Ենիկը, Վացլավն ու Դիեգոն. և այդ անմարդաբնակ վայրը, ուր հազիվ թե մարդու ոտք տեսած լիներ, դրդողում էր կանչերից, ծիծաղից և երագերից:

Մինչև այդ, Լգոտկայի ձագերը աննկատելիորեն մեծացել էին, իսկ տասն օրից հետո բացվեցին նրանց կապույտ աչքերը: Ենիկը Լգոտկայի մոտից չէր հեռանում:

Ձագերը արագ մեծացան և սովորեցին զամբյուղից դուրս սողալ: Ենիկը, ճիշտ է, արգելել էր այդ բանը, բայց մի՞թե Կարոյի նման սատանան կլսեր: Մի՞թե որևէ մեկը կարող էր հետևել Պլուտոնին կամ Ռիկային: Նրանք գլուխկոնծի էին տալիս զամբյուղից և մի կերպ քարշ էին գալիս իրենց հաստիկ թաթերի վրա...

Բայց Լգոտկայի հետ կատակելը հեշտ չէ. նա բռնում էր չարաճճիների վզից և շարտում զամբյուղի մեջ: Ճիշտն ասած, ձագերի հետ քարշ գալը նրան արդեն շատ էր ծանծրացրել: Շուրջը ինչքան ասես աշխատանք կար, իսկ նա ամբողջ օրերով նստում էր ու հսկում ձագերին:

Լգոտկայի համար Վացլավը պատրաստեց հատուկ զամբյուղ՝ որը խիտ էր գործված և կափարիչ ուներ: Ձագերը դրա մեջ կարծես վանդակում լինեն: Ձագերը ուղղակի Ենիկի ծիծաղն էին շարժում, երբ ցանկանում էին փախչել: Կերակրելու ժամանակ նրանց բաց էին թողնում: Եվ այդ ժամանակ Պլուտոնը ապացուցում էր, որ լավ կռվող է դառնալու: Նա մարտի էր հրավիրում ճանապարհին ընկած ամեն մի քարի, հարձակվում էր մինչև անգամ տաշեղի, մաշիկների և նույնիսկ ոսկորների վրա:

Ռիկան կռվել չգիտեր. ա՞յդ էր պակաս, աղջիկները կռվել չեն սիրում: Իսկ Կարոն մեծանում էր որպես փիլիսոփա: Նա միշտ նստում էր մտազբաղ, միայն ականջն էր շարժում կամ թաթով քորում էր ծոծրակը և նորից խորասուզվում իր մտքերի մեջ: Մեջքի վրա պառկեցնեին, մեջքի վրա կմնար, փորի վրա պառկեցնեին՝ փորի: Վացլավը Կարոյին խորթում էր իր գրպանը, նա ոչ մի ձայն չէր հանում:

— Բարեհոգի շուն է դառնալու,— ասաց Ենիկը:— Հենց քեռու համար է,— շշնջաց Վացլավի ականջին:

Երբ շնիկները սովորեցին խաղալ, Լգոտկան մշտական հսկողությունը ավելորդ համարեց: Կամաց-կամաց նա վերադառնում էր իր ամենօրյա պարտականությանը: Հենց այդ ժամանակ էլ Ֆրանսիշեկը թույլատրեց որսի գնալ, որին վաղուց երագում էին Վացլավն ու Ենիկը: Ամեն գիշեր որսորդներին գրավում էին կիրճից եկող խորհրդավոր ձայները: Ամեն գիշեր կիրճը լցվում էր մռնչոցով, ինչ-որ բանով հիշեցնելով Գվատեմալայի ջունգլին: Երևի մոտակայքում, ինչ-որ տեղ, կենդանիները ջուր խմելու էին գալիս:

Որսորդությանը պետք է մասնակցեին նաև հնդիկները: Նրանք պատրաստեցին իրենց նետն ու աղեղը, իսկ Դիեգոյին, բացառիկ ծառայության համար, վստահել էին իսկական հրացան:

Առավոտ շուտ ճանապարհորդները ճյուղերով ծածկեցին վրանները և թաքցրեցին զամբյուղներն ու արկղերը: Հնդիկները իրենց հետ ուտելիքի պաշար վերցրին: Վացլավը շնիկներին վանդակում փակելուց հետո, կախեց զառիվերի վրա տարուբերվող ճյուղից, որը կարծես մկանոտ ձեռք լիներ: Որսորդները համարձակ հեռացան ճամբարից: Վտանգը մնացել էր հետևում:

այստեղ վախենալու բան չկար: Բացի դրանից, մինչև մուօն ընկնելը բոլորը պետք է գային:

Որսորդության ծրագիրը շատ պարզ էր, հարկավոր էր շարժվել գառիվերի երկարությամբ այնքան ժամանակ, մինչև հարմար տեղ կգտնվի կիրճ իջնելու համար: Լգոտկան ուրախ հաչոցով արտահայտեց իր հավանությունը և որոշեց իր ձևով նշել արշավի սկիզբը. տնկելով պոչը, նա երեք անգամ բարձր հաչաց, վազեց առաջ, իսկական հետախույզի նման և անմիջապես սկսեց որոնել: Ժամանակ առ ժամանակ, մի մեծ շրջան կատարելուց հետո, նա վերադառնում էր իր հետևից գնացող որսորդների մոտ: Բոլորին աննկարագրելի ուրախություն էր պատել: Երևի այն պատճառով, որ դա առաջին որսորդությունն էր այդքան երկար ընդմիջումից հետո:

Այս անգամ արշավախմբին ուղեկցում էր և Խոսեն: Նա խնդրել էր Ֆրանտիշեկին՝ իրեն էլ վերցնել, թեկուզ մինչև կեսօր, իսկ հետո կվերադառնա և ամեն ինչ կհասցնի անել՝ և՛ շնիկներին կկերակրի, և՛ թարմ որսից լավ ընթրիք կպատրաստի:

Գլուխ քսանմեկերորդ
ԵՂՆԻԿԻ ՀԵՏ ՊԱՏԱՀԱԾ ԱՐԿԱԾԸ

Ֆրանտիշեկը մտածում էր իջնել կիրճ և գնալ առվակի երկայնքով, մինչև որ հարմար տեղ գտներ հակառակ կողմի ժայռը բարձրանալու համար: Այդպես հնարավոր կլիներ դուրս գալ լեռնադաշտի մյուս կողմը: Նա դատում էր այսպես, եթե այդ հաջողվի որսորդներին, ապա հետո կարող է անցնել ամբողջ քարավանը, քանի որ ճանապարհը արդեն մաքրված կլինի:

Հնդիկները անընդհատ խորանում էին խիտ թփուտների մեջ, առանց հոգնելու աշխատում էին դաշույններով, կտրատում էին գետնին պառկած ցողունները, լիանաները և ոչ բարձր մացառները:

Որսորդները հետազոտում էին ամեն մի թուփ, ամեն մի քարայր, ամեն մի մեկուսացած անկյուն, որը կարող էր գազանների համար ապաստարան ծառայել:

Երկու ժամվա ծանր աշխատանքից հետո նրանք հասան գետակին: Նրա պաղ, մաքուր ջուրը հոսում էր քարերի միջով, իսկ ավելի ազատ տեղերում լայնորեն տարածվում էր, առաջացնելով փոքրիկ գետախորշ: Խոր տեղերը հնարավոր էր տարբերել ջրի մուգ գույնից:

— Ձո՛ւկ,— բացականչեց Վացլավը:— Այստեղ հրաշալի ձկներ կան... ինչ ցավալի է, որ մենք առանց կարթի ենք:

Բայց հնդիկներին կարթ պետք էլ չէր: Թռչելով ջրի մեջ նրանք շղթա կազմեցին և ձկներին քշեցին հոսանքի հակառակ ուղղությամբ: Դանդաղ շարժվելով առաջ, նրանք կայծակնային արագությամբ կռանում էին և բռնում ձկներին, որոնք փրկություն էին փնտրում ծանծաղուտ տեղում, քարերի տակ: Խոսեն հիացմունքի բացականչություններով քաջալերում էր հնդիկներին... Բայց Ֆրանտիշեկը շուտով ճանապարհը շարունակելու նշան տվեց:

Որսորդները գնում էին հոսանքի հակառակ ուղղությամբ և շատ հետքեր գտան, բայց որս դեռ չէր հանդիպում: Գլխների վրայով սուրում էին թռչունները, երբեմն հանդիպում էին ժիր կապիկների խմբերի, բայց որևէ կարգին որս չէր երևում: Վերջապես ծառերի միջից թափանցող լույսը ավետեց, որ բացատը մոտ է:

Բայց որքան եղավ մեր բարեկամների զարմանքը, երբ նրանք հայտնվեցին չորս կողմից բարձրացող անանցանելի մերկ ժայռերով շրջապատված փոսորակի մեջ: Միայն քարե պատերի տակ, ուր թափանցում էին արևի ճառագայթները, կանաչին էին տալիս խոտը և փոքրիկ թփուտները:

— Ահա որտեղ է որսը,— ասաց Ֆրանսիշեկը:— Բայց զգուշացեք, այստեղ կարող են օձեր լինել:

Որսը սկսվեց: Լգոտկան և հնդիկները թաքնվեցին թփուտներում: Այստեղ իսկապես որ բավականին որս կար. պեկարները, նապաստակները, վազվզում էին շուրջը, ականջ ծակող ճիչերով թռչում էին լեռնային կաքավները:

Վացլավը առաջինը կրակեց փախչող ինչ-որ թռչունների վրա, և դրանցից երկուսը ընկան: Շուտով թնդաց և Ենիկի կրակոցը: Տղան հրճվանքից ճչաց, և կրակելով երկրորդ անգամ, առանց Լգոտկային սպասելու, անհամբեր նետվեց դեպի որսը: Պարզվեց, որ նա վիրավորել է եղնիկի ձագին, նրան ընդունելով մեծ եղնիկի տեղ: Նա տեսավ, որ կենդանին սկզբում ընկավ, բայց արագ բարձրացավ և վազեց առաջ: Երկրորդ գնդակը նապաստակին չէր հասել:

Եղնիկի ձագը սլանում էր դեպի հարավ, որտեղ փոսորակը նեղանում էր, իսկ Ենիկը վազում էր նրա հետևից: Եղնիկը դժվարությամբ անցավ մատողաշ մացառուտի միջով: Նա ուժից ընկել էր, իսկ Ենիկը զառիվերով մագլցում էր նրա հետևից: Նա արդեն հասել էր իր գոհին, բայց այդտեղ դժբախտ եղնիկը մի թռիչքով պոկվեց հետապնդողից և կանգնեց անդուղի եզրին: Այլևս ճանապարհ չկար: Ենիկը հասկացավ, որ կենդանին ձգտելով ազատվել, սարալանջով կսլանա ուղիղ իր վրա: Դրանից Ենիկը կարող էր կորցնել իր հավասարակշռությունը և ցած գլորվել: Առանց հապաղելու տղան նետվեց եղնիկի վրա, դաշույնով հարվածեց վզին: Եղնիկը ընկավ... Եվ այդտեղ Ենիկը կատարեց անուղղելի մի սխալ. եղնիկի ոտքից բռնելով, փորձեց քարշ տալ նրան: Բայց կենդանին դեռ մեռած չէր: Հավաքելով վերջին ուժերը, նա վեր ցատկեց և անզգույշ որսորդը մի քանի քայլ այն կողմ թռավ:

Ենիկը զգաց, որ կորցնում է հավասարակշռությունը և գլխապտույտ արագությամբ գլորվեց ներքև, աշխատելով բռնել որևէ խոտից կամ թփից: Մի պահ նա զգաց, որ կտրվում է գետնից, և թը՛րմփ. ամբողջ ծանրությամբ ընկավ թփերի մեջ: Ճյուղերը ծածկեցին նրան, ինչպես լճակի ջուրը կծածկեր:

Մինչև այդ, կիրճում որսորդությունը վերջացավ: Հաջող որս էր. պեկարներ, կես դյուժին նապաստակ, երկու գույգ կաքավ դրված էին Ֆրանսիշեկի ոտքերի առջև:

— Որտե՞ղ է կորել Ենիկը,— հանկարծ անհանգստացավ Վացլավը:— Նա կարծես ինչ-որ կենդանու էր հետապնդում:

Այդտեղ բոլորը հիշեցին, որ Ենիկը իսկապես ինչ-որ տեղ վազեց, և սկսեցին կանչել... Բայց իզուր, Ենիկը չէր արձագանքում:

— Խոսեն կմա այստեղ որսը հսկելու,— որոշեց անհանգստացած Ֆրանսիշեկը,— իսկ մենք անմիջապես կգնանք փնտրելու. Լգոտկա, փնտրի՛ր, փնտրի՛ր Ենիկին:

Շունը անմիջապես հասկացավ հրամանը, վնգստաց և վազեց գետի հոսանքով վեր: Դիեգոն վազեց նրա հետևից, իսկ հնդիկները, ինչպես որսկան շներ, գնացին նրա հետքերով: Շուտով նրանք բարձրացան զառիվերը և նկատեցին սպանված

եղևիկին, բայց եսկը ոչ մի տեղ չէր երևում: Լգոտկան մի քանի անգամ վազվզեց այդտեղ, հետո հանկարծ վնգստաց, կանգնելով անդունդի եզրին, որը ամենաքիչը քսան մետր խորություն կունենար: Վերևում բավական զառիկող ժայռը ընդհատվում էր ուղղաձիգ ժայռապատով, որը կորչում էր խիտ փշոտ թփուտների մեջ:

— Եսկը գլորվել է այստեղից,— բացականչեց Վաղլավը:— Նայեցեք, ահա դեռ երևում է, թե ինչպես է նա պոկոտել խոտը, փորձելով պահել իրեն...

Կասկած չմնաց, հետքերը չափազանց պարզ էին: Լգոտկան վազեց ժայռի երկայնքով և նորից վնգստաց: Ներքև իջնել նա չէր կարող, իսկ թռչել՝ վախենում էր:

— Պետք է անմիջապես իջնել, բայց ինչպե՞ս,— ցնցվելով հարցրեց Ֆրանտիշեկը:

— Լիանանե՛ր,— ճչաց Դիեգոն, և բոլորը անմիջապես հասկացան նրա միտքը:

Հնդիկները անմիջապես վերադարձան լիանաները ձեռքներին և սկսեցին ստուգել դրանց ամրությունը. կտրված տեղերը արագ կապեցին իրար: Ծայրում սարքած հանգույցի մեջ Դիեգոն մտցրեց հրացանը, կանգնեց վրան և, խնդրելով, որ պարանը դանդաղ իջեցնեն, ժայռակողից ցած սահեց:

Հնդիկները հրաշալի մագլցողներ են: Նրանք սահեցին Դիեգոյի հետևից մինչև ուղղաձիգ ժայռը, պառկեցին գետնին և բռնելով լիանայից պատրաստված պարանի մի ծայրը, տղային իջեցրին անդունդը: Մի ակնթարթում Դիեգոն անհետացավ:

Շուտով հնչեց նրա ուրախ կանչը:

— Գտա,— բղավեց նա ներքևից, մի կողմ քաշելով թփերը:— Կենդանի՛ է,— ավելացրեց նա մի քանի րոպե հետո:

Լսվում էր, ինչպես ժայռի տակ Դիեգոն կտրտում էր թփերը՝ ճանապարհ բացելու համար: Շուտով նրան օգնություն հասավ. ավագ հնդիկը նույնպես ներքև էր իջել:

Դրանք Ֆրանտիշեկի և Վաղլավի կյանքում ամենասարսափելի րոպեներն էին: Վերջապես թփերը շարժվեցին և հնդիկը վեր բարձրացրեց ուշակորույս եսկին...

Դիեգոն հայացքով չափեց ժայռեղեն պատի բարձրությունը և օրորեց գլուխը: Ետ նայելիս նա նկատեց, որ արևելյան կողմի ժայռը քիչէ գահավեժ: Տղան նորից անհետացավ թփուտներում և աշխատեց ամբողջ ուժով, որպեսզի ճանապարհ հարթի հնդիկի համար, որը բերում էր եսկին:

Ֆրանտիշեկը, Վաղլավը և վերևում մնացած երկու հնդիկները հասկացան Դիեգոյի մտադրությունը: Ուշադրություն չդարձնելով խոչընդոտներին, մոռանալով զգուշությունը, նրանք սլացան դեպի արևելյան ժայռը, բայց հասան հենց այն պահին, երբ ավագ հնդիկը ու Դիեգոն դուրս էին եկել անդունդից:

Եսկը դեռ ուշքի չէր եկել:

— Դեպի ջուրը, շտա՛պ դեպի ջուրը:

Բայց մի՞թե այստեղ հնարավոր էր արագ գնալ: Ֆրանտիշեկը հոգնած հնդիկի ձեռքից վերցրեց թանկագին բեռը և տարավ փոքրիկ երեխայի նման վեր բարձրացրած, որպեսզի ճյուղերը չհարվածեն տղայի դեմքին:

— Խեղճ երիտասարդ պարոնը մեռել է,— աղեկտուր ողբում էր Խոսեն,— աչքերը փակ են, և գունատ է ինչպես լուսինը...

Ֆրանսիշեկը Ենիկին ցած դրեց, լվաց երեսը, իսկ երբ զգաց սրտի զարկերը, անմիջապես սկսեց արհեստական շնչառություն տալ։ Անդադար և հավասարաչափ նա ետ ու առաջ էր շարժում տղայի ձեռքերը։ Նրա ջանքերը վերջապես պսակվեցին հաջողությամբ. տղայի կոպերը շարժվեցին, սիրտը ավելի ուժեղ խփեց և փոքրիկ որսորդը հառաչեց։

— Փրկված է,— ասաց Ֆրանսիշեկը և նույնպես շունչ քաշեց։

Բայց հազիվ էր ճակատի քրտինքը սրբել, նորից կռացավ և զգույշ շոշափեց Ենիկի ոտքերն ու ձեռքերը. չէ՞ն ջարդված արդյոք։

— Լուրջ բան չկա, եթե միայն ընկնելուց չեն վնասվել ներքին օրգանները,— ասաց նա մանրագնին ստուգելով տղային։— Ճանկովածքներ ու քերծվածքներ են, դրանք արագ կլավանան։

Վացլավը դեռ բավական ժամանակ ջուր ցանեց Ենիկի դեմքին, իսկ Դիեգոն հանելով նրա կոշիկները, տրորեց սառած ոտքերը։ Ահա մի խոր շնչառություն ևս, կուրծքը վեր բարձրացավ և Ենիկը բացեց աչքերը։

Բոլորին իր շուրջը տեսնելով, նա շատ զարմացավ։

— Ի՞նչ է պատահել։ Ես ինչո՞ւ եմ պառկած,— հարցրեց նա և փորձեց վեր կենալ։

— Պառկիր, տղա՛ս, և լռիր,— կարգադրեց Ֆրանսիշեկը,— ի՞նչ սատանան քեզ անդունդը տարավ։

— Լեռնայծը,— պատասխանեց Ենիկը և անմիջապես հիշեց ամեն ինչ։

— Հա՛, եղևիկը,— գլխով արեց Ֆրանսիշեկը,— հենց այն, որին մենք գտանք վերևում։

Երկու հնդիկներ արագ վեր կացան և վազեցին ինչ-որ տեղ. իրարանցման ժամանակ նրանք մոռացել էին որսը և թողել էին անդունդի եզրին։

Ենիկը նստեց.

— Խմել եմ ուզում, խնդրում եմ ջուր տվեք։ Ես ձեզ բոլորը կպատմեմ։

— Որևէ տեղդ չի ցավո՞ւմ,— մտահոգված հարցրեց Վացլավը։

— Ամբողջ մարմինս ցավում է, բայց այդ նրանից է, որ փշերը քերծել են ինձ։

Ենիկը համառոտ պատմեց պատահածի մասին և վերջացնելուց հետո ներողություն խնդրեց։

— Ներեցե՛ք, որ ձեզ այսքան անհանգստացրի, բայց այդ եղևիկը ինձ շատ կատաղեցրեց... Ահա և նա։ Նայե՛ք, ի՞նչ գեղեցիկն է։— Եվ Ենիկը տեսնելով իր որսը, էլ չհամբերեց. հաղթահարելով ցավը՝ վեր կացավ։

— Իսկ սա ո՞վ բերեց,— անսպասելի հարցրեց Ֆրանսիշեկը, գետնից բարձրացնելով ամուր տերևներով և մազմզոտ արմատներով ինչ-որ թուփ։— Չէ՞ որ հրաշալի գյուտ է։— Նա հիացած և ուշադիր նայում էր բույսին։

— Երևի Եսիկը,— գլխի ընկավ Վացլավը:— Ընկնելու ժամանակ պոկել է այս օրխիդեան և հետը ցած գլորել:

— Թերևս դու ճիշտ ես,— համաձայնեց Ֆրանտիշեկը:— Այդ դեպքում Եսիկը ամենահաջողակ օրխիդեա որոնողն է, որին ես գիտեմ: Ախր նա պատահաբար գտել է այնպիսի հազվագյուտ մի բան, որի մասին երազում են մնգլիայի բոլոր օրխիդեա որոնողները:— Հրճվանքով ասաց Ֆրանտիշեկը:— Հանգստացիր մի քիչ,— առաջարկեց նա Եսիկին, իսկ մենք ժայռի վրա կփնտրենք քո օրխիդեայի քույրերից չէ՞ն մնացել արդյոք:

Եվ Ֆրանտիշեկը հնդիկների ուղեկցությամբ զառիթափով ցած վազեց: Խոսեն «սեղանը բացելիս» Եսիկի համար ընտրեց ամենահամեղ կտորները: Իսկ Լգոտկան այնպես էր կպել տղայից, որ ոչ մի կանչ նրա վրա չէր ազդում: Բացի դրանից, նա մտածում էր, որ այդպիսի տազնապից հետո վատ չէր լինի մի քիչ բան ուտել:

Այդպես նրանք քեֆ արեցին երեքով, որովհետև Խոսեն, որևէ մեկին ուտելու բան առաջարկելով, չէր մոռանում «խեղճ նեգրին», որը Լգոտկայի նման երբեք չէր տառապել ախորժակի բացակայությամբ:

Ժայռը ուսումնասիրելու որոշումը շատ ճիշտ էր. Ֆրանտիշեկի օգնականները հազվագյուտ օրխիդեայի ութ թուփ գտան:

Որսը ոչ ոք չէր ուզում շարունակել: Բոլորը հանկարծ տխրեցին «տան» համար: Եսիկը արդեն հանգստացել էր և կարող էր առանց կողմնակի օգնության գնալ. նա միայն հենվում է Դիեգոյի ձեռքին: Եսիկը մի անգամ էլ ընկերոջը պատմեց եղևիկի հետ ունեցած արկածը, որը իրեն անդունդը գլորեց:

Ճամբարում նրանց մի նոր դժբախտություն էր սպասում. հազիվհազ կարողացան փրկել Լգոտկայի ձագերին: Լգոտկան, ուղղակի կանխազգալով ինչ-որ վատ բան, մարդկանցից բավական առաջ էր անցել: Եվ կանխազգացումը չխաբեց նրան. շան կատաղի հաչոցը, հուսահատ ոռնոցը ուղղակի օգնություն էին խնդրում:

Եսիկն ու Դիեգոն նետվեցին առաջ և զարմանքից քարացան տեղներում ճյուղի վրա, որտեղից կախված էր շնիկների վանդակը, մի հինգ-վեց փոքրիկ կապիկներ էին թռչկոտում: Նրանցից մեկը արդեն նստել էր վանդակի կափարիչին և փորձում էր բացել դռնակը: Բայց այդ րոպեին թնդաց կրակոցը, և կապիկը, վիրավորված Վացլավի խոշոր կոտորարկից, հասած տանձի նման ցած գլորվեց: Մնացածները փախուստի դիմեցին, բայց շատերը իրենց հացը կերան, մի քանիսը իրենց մարմնի մեջ տարան նետեր, մյուսները՝ մանր կոտորակներ:

Հարձակվողներից ամենահանդուգնը մեռած ընկած էր: Լգոտկան կատակել չէր սիրում: Իսկ երբ Դիեգոն ծառի վրայից իջեցրեց վանդակը, շունը ամբողջ մարմնով ծածկեց ձագերին: Նա ամբողջովին դողում էր:

Գլուխ քսաներկուերորդ
ԱՆՍՊԱՍԵԼԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Որսից հետո Ֆրանտիշեկը որոշեց չգնալ կիրճի միջով, այլ նրա երկայնությամբ շարժվել դեպի հարավ և, եթե հնարավորություն լինի, կիրճը շրջանցել: Եթե կանյոնը /Կանյոն — խոր, նեղ հովիտ, թեք, հաճախակի աստիճանավոր լանջերով:/ չափից ավելի երկար լինի, ապա պետք է գտնել մացառներից ազատ

լանջեր, որոնք ավելի հեշտ են հաղթահարվում: Բացի դրանից, Ֆրանսիշեկը հույս ուներ այդտեղ հանդիպել օրխիդեայի այն տեսակներից, որը պատահաբար գտել էր Ենիկը:

— Քո ձեռքը, տղա՛ս, թեթև է,— մի անգամ ասաց Ֆրանսիշեկը, նայելով բույսերին,— դու արդեն երկրորդ անգամ հազվադեպ տեսակ ես գտնում: Լեռնային օրխիդեայի տարբերակը մինչև հիմա անհայտ է եղել, և դու լրիվ իրավունք ունես նրան որևէ անուն տալու:

— Թերեզիկ,— բացականչեց երջանիկ Ենիկը:

Ֆրանսիշեկը ժպտաց:

— Ի՛նչ կա որ, լատինական վերջավորությամբ դա վատ չի հնչի:

— Իսկ ինչո՞ւ է պետք լատինական վերջավորությունը,— զարցամավ տղան:— Ինչո՞ւ բույսը չի կարող կրել չեխական անուն:

— Նրա համար, որ դա կդառնա բոլոր ժողովուրդների գիտության սեփականությունը, իսկ նրանք պայմանավորվել են բույսերն անվանել լատիներեն, որպեսզի բոլորին հասկանալի լինի,— վեր կենալով բացատրեց Ֆրանսիշեկը:— Դե բավական է սրա մասին: Չնայած դու շատ ես ջախել, բայց քո կոչման հարցը, թվում է, որոշված է արդեն: Դժվար թե դու կտորեղենի խանութում աշխատես ու մետրի հետ գործ ունենաս... Ո՛չ, այդպես չի լինի, հը՞, Ենիկ:

— Դուք ճիշտ եք, քեռի՛,— համաձայնեց Ենիկը:— Ես կուզեի սովորել միայն ձեզ մոտ:

Երթուղին փոխելու Ֆրանսիշեկի որոշումը ճիշտ էր: Հնդիկները ամեն օր օրխիդեայի գեղեցիկ և հազվագյուտ տեսակներ էին գտնում, բայց երկարատև անձրևները խանգարում էին աշխատելուն:

Մի անգամ մեր ընկերները զարմանք կտրեցին անսպասելի, բայց հաճելի այցելությունից: Այդ պատահեց վաղ առավոտյան: Կանգառի տեղին մոտեցան ջրիներին նստած երկու բնիկներ և բացատրեցին, որ իրենց այստեղ է բերել ճամբարի խարույկների ծուխը: Ֆրանսիշեկը սիրալիր դիմավորեց հյուրերին: Դրանք տղամարդիկ էին՝ սպիտակ մաշկով, որը սովորական էր Կոստա-Ռիկայի բնակիչների համար. այդ խաղաղ, զրուցասեր մարդիկ խոսում էին իսպաներեն և հաստատում էին, որ դա իրենց մայրենի լեզուն է: Նրանք ապրում էին գյուղում, որը գտնվում էր կանյոնի մյուս կողմում, այնտեղ նրանք հոտեր և դաշտեր ունեին:

Ֆրանսիշեկը ուրախ էր այսպիսի ետ ընկած տեղում քաղաքակիրթ մարդկանց հետ հանդիպելու համար: Հյուրերից երիտասարդը իսպաներեն շատ ճիշտ էր խոսում և այն հարցերից, որ նա տալիս էր, կարելի էր ենթադրել, թե բավական լավ կրթություն էր ստացել:

Ֆրանսիշեկը կարգադրեց հյուրերին նախաճաշ տալ, իսկ ինքը պատմեց իր ուղեկիցների, արշավախմբի նպատակի և իր մասին:

Նոր ծանոթները, ինչպես մի ժամանակ դոն Ֆերնանդոն, չէին հավատում, թե սպիտակ մարդիկ խիզախել են կտրել-անցել օվկիանոսը միայն նրա համար, որ հավաքեն ինչ-որ բույսեր, որոնց այստեղ ոչ ոք ուշադրություն չի դարձնում:

Բնիկները որոնողներին սրտանց հրավիրեցին իրենց խրճիթը: Երբ Ֆրանսիշեկը ներողություն խնդրելով, հրաժարվեց (նրանք ուրախությամբ կընդունեին, բայց

շատ վտանգավոր էր կանյոնով անցնելը), երկու հյուրերը միաժամանակ խորհուրդ տվեցին անցնել մի քիչ ավելի հեռվից, հարավից, որտեղ անցումը հեշտ է, քանի որ քարե թեք ժայռերը փոխվում են թեթևակի զառիվեր լանջի, որը հիմնալի արոտավայր է անասունների համար:

Այս լուրը քաջալերեց բոլորին. քանի որ եղանակը անձրև չէր գուշակում և հապաղելու պատճառ չկար, որոնողները հյուրերի հետ դեպի հարավ շարժվեցին:

Եվ իսկապես, մի ժամից հետո նրանք մոտեցան այն տեղին, որտեղից եվրոպացիների աչքի առջև հրաշալի տեսարան բացվեց. թեթևակի զառիկող ժայռերը ծածկված էին խոտով և տեղ-տեղ ավելի մուգ գույնի թփուտներ էին երևում: Այդ բլրաշատ արոտավայրում խաղաղ արածում էին կովերի, հորթերի և ոչխարների հոտերը, ամեն ինչ այնպես էր, ինչպես ասել էին բնիկները: Լճի հավասար, մուգ հարթությունը, որը փայլում էր կիրճի ամենախոր հատակում, լրացնում էր այդ հիասքանչ տեսարանը: Այստեղից, երևի, սկիզբ էր առնում լեռնային առվակը, որը հորդացել էր տևական անձրևից:

Ֆրանսիշեկը ենթադրեց և, հավանական է այդպես է, որ այդ կանյոնը առաջացել է կամ երկրաշարժերից, որը շատ հաճախ է լինում այս կողմերում, կամ ջրի կործանարար ուժից, որը հազարավոր տարիներ մաշել է ժայռերը և անգուսպ դեպի հյուսիս նետվել: Բնիկներից երիտասարդը լրիվ բաժանեց Ֆրանսիշեկի կարծիքը:

Սիրալիր տեղացիները առանց դժվարության քարավանը անցկացրին կիրճի միջով, իսկ երբ ճանապարհորդները բարձրացան հակառակ լանջը, լեռնային փոքրիկ մի գյուղ տեսան, որը կիսով չափ թաղված էր ծառերի մեջ: Այստեղ արդեն մեր բարեկամներին պարզ դարձավ, որ իրենք ընկել են նախալեռնային հիասքանչ մի վայր:

Անտառածածկ լեռնալանջերը նահանջում էին, հեռու հեռվում տարածվել էին եգիպտացորենի անծայրածիր դաշտերը: Այս դաշտերից տարեկան երեք անգամ բերք էին հավաքում: Նրանք տեսան սուրճի, բակլայի և շաքարեղեգի պլանտացիաներ և հացաբույսեր, որը ավելի զարմացրեց նրանց: Տորենը դեռ չէր հասել, բայց դա այնքան հարազատ էր, սրտին մոտ, որ ճամփորդները մի ակնթարթ իրենց տանը զգացին:

— Սա ի՞նչ է, քեռի՛,— անմիջապես հարցրեց Ենիկը,— մի՞թե ցորեն է:

— Իհարկե ցորեն է,— պատասխանեց Ֆրանսիշեկը և հուզված՝ ցորենի կանաչ տերևներից մեկը փաթաթեց իր մատին, որի միջից հետագայում դուրս պիտի գար ամուր ցողունը:

— Էլ մի՛ ասեք,— Ենիկի դեմքը ուրախությունից փայլեց,— գուցե որևէ տեղ, բոլորովին մոտիկ, մեզ կարկանդակներ են սպասում կամ նույնիսկ ամբողջ մի բոքոն հաց:

Բնիկները միայն ժպտում էին: Ենիկը խոսում էր իսպաներեն, և նրանք հասկանում էին:

Գյուղում իրարանցում բարձրացավ: Բնակիչները դուրս թափվեցին իրենց խրճիթներից և սիրալիր դիմավորեցին անսպասելի հյուրերին, իսկ հյուրերը չէին կարող չզարմանալ նրանց սիրալիր վերաբերմունքից:

Այստեղ էլ կալվածատները ռանչո էին կոչվում: Տների փայտակերտ մասերը բարձրանում էին քարե հիմքի վրա, ճեղքերը խնամքով փակված էին կավով, պատերը մաքուր սպիտակեցված էին. թիթեղով ծածկված տանիքները հենվում էին ուղղահայաց սյուներին: Բոլոր տների առջև պատշգամբներ կային:

— Տներ չեն, այլ ուղղակի թռչունների վանդակներ,— իր բացասական կարծիքը հայտնեց Վացլավը:

— Դրանք շատ ամուր են,— նկատեց Ֆրանտիշեկը:— Ձեզ արդյոք հայտնի՞ է, թե ինչու են այստեղ լայն և ցածր տներ կառուցում: Երկրաշարժերի ժամանակ այդպիսի տները չեն քանդվում: Նայե՛ք, դրանց ծխնելույզն էլ նույնիսկ փայտից է: Քարե խողովակները տան համար վտանգավոր կլինեին:

— Ինչպե՞ս թե փայտե խողովակներ,— չհավատաց Ենիկը,— դրանք չէ որ կարող են վառվել:

— Մոտեցիր և լավ նայիր. դրանց շուրջը խնամքով կավ է քսված, իսկ միջից անցնում է երկաթե ծխնելույզը:

Ենիկը միայն ուսերը թոթվեց. քեռի Ֆրանտիշեկը աշխարհում պարզապես բան չկա, որ չիմանա:

Գյուղի բնակիչները ճամփորդներին անմիջապես առաջարկեցին իրենց խրճիթները այն տանտերերի իրավունքով, որոնք իրենք էին հյուրերին տուն բերել:

Այնպես, ինչպես Պետեն լճի բնիկների մոտ, տներում կահկարասի համարյա չկար: Մահճակալներին փոխարինում էին ցանցաճոճերը, բայց դա բոլորովին էլ չէր նշանակում, թե այդ ընտանիքները աղքատ են: Ընդհակառակը, գյուղում ամեն ինչ վկայում էր ակնհայտ հարստության մասին: Եվ դա հասկանալի էր. այս կողմերի հողը բարեբեր է, իսկ բնակչությունը շատ չէ: Բայց երկրի հարստության հիմնական աղբյուրը այն էր, որ Կոստա-Ռիկայի ափերի երկարությամբ՝ Կարաիբյան ծովով և Խաղաղ օվկիանոսով, անցնում էին ծովային բանուկ ճանապարհները /Կոստա-Ռիկա պետության տերիտորիաները որոշվում են Կարաիբյան ծովով, իսկ արևմուտքից՝ Խաղաղ օվկիանոսով/: Այսպիսի աշխարհագրական դիրքը հնարավորություն էր տալիս լավ առևտուր անելու և մշտական կապեր հաստատելու այլ երկրների հետ: Դրա համար ոչնչով զարմանալի չէ, որ այս երկրի աշխատասեր բնակչությունը շահավետ ձևով է վաճառահանում գյուղատնտեսական մթերքները:

Դրա մասին պատմեց ինքը՝ տանտերը, չմոռանալով, իհարկե, պարծենալ նրանով, որ երեք տարի հաճախել է Սան Խոսե դե Կոստա-Ռիկայի դպրոցը: Նրա կարծիքով դա աշխարհի ամենագեղեցիկ և հարուստ քաղաքն է. կան ազգային թանգարան, եկեղեցի, արխիվ, դպրոցներ, բանկեր, հյուրանոցներ, փողոցներով երթևեկում են տրամվայներ, և քաղաքը լուսավորված է էլեկտրականությամբ:

Ֆրանտիշեկը հետո Ենիկին ասաց, որ քաղաքում կան քառասուն հազարից ավելի բնակիչներ, և որ Սան Խոսե դե Կոստա-Ռիկան Կոստա-Ռիկա պետության մայրաքաղաքն է:

Ճանապարհորդները լսելով տանտիրոջ պատմածը, մի քիչ տխրեցին: Նրանք հիշեցին Լոնդոնը: Վաղուց է, որ նրանք էլեկտրական լույս, հյուրանոցներ և տրամվայներ չեն տեսել... Վաղուց է նրանք չեն օգտվել հարմարություններից, որը թվում էր այնքան սովորական և բնական եվրոպական քաղաքներում:

Տանտիրոջ անունը, որի մոտ նրանք տեղավորվել էին, Պեդրո Սայաս էր: Նա էլ հենց գյուղի տանուտերն էր: Դոն Պեդրոն հպարտությամբ հյուրերին ցույց տվեց իր ձիերի երամակը, կովերի հոտը, խոզերի բոլուկը և միամտորեն ուրախացավ օտարերկրացիների զարմանքի վրա, երբ նրանց վերջապես իր տունը տարավ: Այստեղ, այս խուլ տեղերում, կուսական անտառների և անապատների մեջ, նրանք ընկան անսպասելի, անակնկալելի մի տուն, որը կահավորված էր եվրոպական ձևով՝ պատերին փակցված նկարներով, գրքերով լի պահարանով և գեղեցիկ զենքերով:

Դոն Պեդրոն միայն ափսոսում էր, որ տանտիրուհին մեկնել է. նա հյուր էր գնացել Սան-Խոսե իր տղայի մոտ:

— Տղաս սովորում է այնտեղի լիցեյում,— հպարտությամբ ասաց տանտերը:— Բայց նա ձանձրացել է քաղաքից, և երբ իրեն լավ չի գտնում, մայրը մի քանի շաբաթով նրա մոտ է մեկնում, մինչև որ նորից հանգստանա:

Դոն Պեդրոյի տանը շատ ծառաներ կային, բայց ծառաներից ոչ մեկը տեղացի չէր. դրանք հոնդուրացիներ էին:

Եվրոպացիները երեք օր վայելեցին տանտիրոջ հյուրասիրությունը, և երբ չորրորդ օրը Ֆրանսիշեկը սեղանի վրա մի բուռ ոսկե պեսո դրեց, դոն Պեդրոն հավաքեց փողը և նորից լցրեց Ֆրանսիշեկի գրպանը: Դա արվեց այնքան նրբությամբ ու սիրալիր ձևով, որ Ֆրանսիշեկը չէր կարող վիրավորվել: Դրա փոխարեն Ֆրանսիշեկը առատորեն վարձատրեց բոլոր ծառաներին:

Ֆրանսիշեկը որոշեց այստեղ օրիսիդեայով լցնել վերջին դատարկ պարկերը և Կարլիոյի վրայով Լիմոն վերադառնալ, որտեղ հեշտ էր Եվրոպա ուղևորվող նավ գտնել: Դրա համար էլ իր արկղերն զամբյուղները նա առայժմ թողեց ռանչոյում: Իհարկե, նա այդ ժամանակ չգիտեր, որ իրենց վիճակված է Անգլիա վերադառնալ ավելի շուտ, քան ինքը կարծում էր:

Որոշվեց կանյոնի երկայնությամբ դեպի հյուսիս գնալ, որպեսզի հարաբերությունն հաստատեն մոտակա գյուղերի հետ և ուղևորության ընթացքում մթերքներ գնեն:

Սև Խոսեն ուրախացել էր: Ժպտալով նա ջորու մեջքին էր կապում իր բեռը. այլուրի մի տոպրակ, մի տոպրակ հնդկացորեն, խոզի ապխտած ազդր. մի փոքր տակառ խոզի ճարպ, մի զամբյուղ ձու, շաքար, սուրճ, կակաո...

Դոն Պեդրոն ուղեկցեց հյուրերին և մինչև կեսօր նրանց հետ մնաց. ճամփորդները խփեցին վրանները և զբաղվեցին կանոնավոր գործով՝ օրիսիդեա հավաքելով: Դոն Պեդրոյին շատ էր դուր գալիս Լգոտկան: Ենիկը քիչ էր մնում նրան նվիրել փոքրիկ Ռիկային, բայց վախեցավ, որ մայրը կտխրի: Կեսօրից հետո դոն Պեդրոն շտապեց տուն, նույնիսկ ճանապարհից մեծ հաջողություններ մաղթելով նրանց:

Հնդիկները աշխատեցին օրվա ամբողջ երկրորդ կեսը. այդ օրը անձրև չկար, և բոլորն էլ հույս ունեին, որ լավ եղանակ կանի. այդպես հավատացրեց դոն Պեդրոն:

Երեկոյան խարույկի մոտ խոսում էին միայն սիրալիր տանտիրոջ և կոստանիկցիների սիրալիության մասին:

Բոլորը հաճույքով վայելեցին իրենց հանգիստը: Հետևյալ օրը աշխատող հնդիկներից մեկը անհանգստացրեց բոլորին մի նորությամբ. բարձր ծառի վրայից նա ծուխ էր նկատել, որը բարձրանում էր կիրճից:

Գլուխ քսաներեքերորդ
ՆՈՐԻՑ ՀԱՐՁԱԿՈՒՄ

Տագնապալի լուր բերող մշակը կասկածամիտ էր ու զգույշ, և ինչպես ամեն մի հնդիկ, անհապաղ ուղևորվեց այնտեղ, որտեղից բարձրանում էր ծուխը: Նա քայլում էր զգույշ և կարողացավ այնքան մոտենալ խարույկին, որ տեսավ խարույկի նստած վեց հոգու: Նա անմիջապես հասկացավ, որ դրանք սպիտակներ են, չնայած շատ թուխ էին: Մի քիչ հեռու խփված էր վրանը: Ծառին հենած գեները վկայում էին, որ դրանք որսորդներ են, ոչ թե անտառապահներ: Ահա բոլորը, ինչ կարողացավ գեկուցել հնդիկը:

Ինչ-ինչ պատճառով նորությունը ամենից շատ անհանգստացրեց Դիեգոյին: Արդեն կեսօրից անցել էր, բայց նա հայտնեց, որ ինքը անձամբ պետք է պարզի, թե ովքեր են այդ որսորդները և ինչ են այստեղ փնտրում: Դիեգոն շատ անգամ էր եսիկին զգուշացրել, թե Բելիզի ավազակները ինչ ուզում է լինի, իրենց կհետապնդեն:

Հնդիկը պատրաստակամությամբ Դիեգոյին տարավ այն տեղը, ուր ցերեկով ինքը նկատել էլ անձանոթներին: Արդեն հեռվից երևում էր, որ կրակը այլևս չի վառվում: Տղան և հնդիկը սկսեցին ավելի զգույշ մոտենալ այն տեղին, որը հնդիկը գտել էր ծառերի և ժայռերի միջոցով: Նրանք հասան ժամանակին, օտարականները դեռ չէին գնացել, բայց պատրաստվում էին շարժվելու:

— Կուզեի լսել, թե ինչի մասին էին խոսում,— շնչաց Դիեգոն:— Կանգ առ, սպասիր ինձ այստեղ:

Տղան կռացավ և օծի նման սողաց թփուտների մեջ: Հնդիկը համբերությամբ սպասում էր: Մոտավորապես կես ժամից խշխշացին ճյուղերը և Դիեգոն վերադարձավ գունատ ու անհանգստացած: Նա լուռ գլխով արեց հնդիկին, նշան տալով հետևելու իրեն, և երկուսով շտապեցին ճամբար:

Ֆրանտիշեկը՝ Լգոտկայի հետ միասին, արդեն դուրս էին եկել նրանց դիմավորելու:

— Այս գիշեր մեզ վրա կհարձակվեն Բելիզի ավազակները,— արագ շնչաց Դիեգոն:— Մոխրագույն գլխարկով մարդը այստեղ է, նա՛ է ղեկավարում:

Ֆրանտիշեկը անսպասելիությունից քարացավ տեղում:

— Չի կարող պատահել: Որտեղի՞ց են իմացել, թե մենք այստեղ ենք: Տղա՛ս, երևի դու սխալվել ես:

— Ո՛չ, տեր իմ: Փախչենք, քանի ուշ չէ: Լավ գիևված վեց մարդ, վրեժի ծարավ: Մեզ սպասում է անախորժ մի գիշեր: Մեր մասին նրանց ամեն ինչ հայտնի է: Նրանք գալիս են մեր հետքերով, դա դժվար չէ: Նրանք որոշել են հարձակվել մեզ վրա այս գիշեր, գյուղի կողմից, որպեսզի մենք չկարողանանք ոչ մեկին օգնության կանչել: Շտապենք, չարագործները արդեն պատրաստվում են ճանապարհվելու:

Ֆրանտիշեկը ժամանակ չկորցրեց: Արագ վերադառնալով կայանը, նա, չնայած արևը արդեն մայր էր մտել, կարգադրեց քանդել վրանները, բեռնել կենդանիներին և ինչքան հնարավոր է արագ դեպի գյուղ գնալ:

Դժբախտաբար արդեն մթնում էր, իսկ մթության մեջ համարյա հնարավոր չէր գործը արագ վերջացնել: Եվ, բացի այդ, կենդանիներին բարձելու համար շատ

ժամանակ էր պահանջվում: Քարավանը դժվարությամբ էր ընթանում ճանապարհագուրկ վայրերով: Ջորիներին ստիպված էին քշել որքան հնարավոր է զգույշ, որպեսզի նրանք անդունդը չգլորվեն:

Երկինքը ծածկվեց աստղերով, իսկ հեռվում, լեռներից այն կողմ, բոցկլտում էին նարնջագույն մի շերտ. դա ավետում էր լուսնի մոտալուստ ծագումը:

Այս անգամ լուսինը դավաճան դուրս եկավ: Մեր բարեկամները դեռ չէին անցել ճանապարհի կեսը, երբ ներքևից, կիրճից թնդաց հինգ կրակոց և գնդակները սուլեցին նրանց գլխների վրայով: Բայց մեր որոնողների հրացաններն էլ պատրաստ էին, ու նրանք պատասխանեցին խմբական կրակով:

— Տրվե՛ք, բայց շարժվեք գյուղի ուղղությամբ,— խուլ ձայնով հրաման տվեց Ֆրանտիշեկը:— Եվ կրակեք, կարող է կրակոցների ձայնի վրա օգնության հասնեն:

Հանկարծ քարավանից անջատվեց մի ձի: Դա Վետերոկն էր, որ կանյոնից հեռու էր փախչում: Կարծես նա առանց ձիավորի էր:

Ավազակները, երևի, չէին կարծում, թե դիմադրության կհանդիպեն հետապնդողների հաճախակի հրաձգությունը որոշ ժամանակ նրանց մեջ խառնաշփոթություն գցեց, բայց շուտով նորից հնչեցին կրակոցներ:

Գնդակը դիպավ մի ջորու, որը իր բեռով փլվեց գետնին:

Հնդիկների մեջ խուճապ ընկավ, նրանք ցիրուցան եղան:

— Չփախչե՛լ,— բղավեց Ֆրանտիշեկը:— Կենդանիները ձեր թաքստոցը կլինեն, թաքսվեք նրանց հետևում:

Նա հնդիկներին արագ ատրաճանակներ բաժանեց և կարգադրեց կրակել, միայն մոտ տարածությունից, երբ չարագործները կհարձակվեն ավարի վրա: Նրանք երկար չսպասեցին. երկու մարդ դուրս թռան կիրճից, բայց նրանցից մեկը անմիջապես զոհ գնաց գնդակին, որը արձակված էր ինչ-որ ուրիշ տեղից: Մյուսը մի ակնթարթում թռավ ետ, դեպի զառիվայրը:

Ո՞վ էր համարձակվել մոտենալ անդունդի եզրին: Ո՞վ ետ մղեց առաջին վտանգավոր հարձակումը: Հետևյալ կրակոցը, որը ուղղված էր դեպի մացառուտները, նույնպես իզուր չանցավ: Բարձր ճիչը ապացուցեց, որ գնդակը նպատակին էր հասել:

— Դա Դիեգոյի հրացանն էր,— ասաց Վացլավը:— Բայց, աստծո սիրուն, որտե՞ղ է ենիկը:

Բոլորը անհանգստացան: Սկսեցին նորից և նորից հաշվել մեկը մյուսին. հաշվեցին միայն հինգ հոգու՝ երեք հնդիկների, Վացլավին ու Ֆրանտիշեկին: Երկու տղաները անհետացել էին:

Հետապնդողները շտապում էին հեռանալ կանյոնից և շուտով գյուղ հասնել: Բայց գյուղը դեռ բավականին հեռու էր:

Քարավանի վրա հարձակվելու համար չարագործները պետք է ձորակից դուրս գային: Բայց նրանք վախենում էին համարձակ քայլի դիմել. թաքստոցից նրանց էր հետևում դիպուկ մի հրաձիգ:

Որոշ ժամանակ նրանք կենդանության ոչ մի նշան ցույց չտվեցին, բայց ճամփորդները շատ լավ էին հասկանում, որ վտանգը դեռ չի անցել: Բոլորը գրոհի էին սպասում կանյոնի կողմից և արագ գնում էին առաջ, թաքնվելով ջրիների հետևում: Բայց հաջորդ հարձակումը կատարվեց այն կողմից, որտեղից նրանք չէին սպասում. ուղղակի դիմացից, կարծես գետնի տակից, դուրս եկան ինչ-որ մուգ ստվերներ և փակեցին նրանց ճանապարհը:

Թնդացին կրակոցները և Ֆրանտիշեկը, որ քայլում էր քարավանի առջևից, կտրված ծառի նման գետին տապալվեց: Դա միաժամանակ և ճակատամարտի վերջն էր: Արագ մոտենում էին ձիերի դոփյունները: Քսան ձիավորներ, մեծ շրջանց կատարելով, գյուղից դեպի կիրճն էին սլանում:

Դոն Պեդրոն իր ընկերներով ճիշտ ժամանակին հասավ: Նա ձիուց թռավ ցած և մոտեցավ քարավանին: Արշավախմբի անդամները խմբվել էին ճանապարհին: Լսվում էին տազնապալից ձայներ, լաց: Ենիկը (այդ նա բերեց օգնությունը) չոքել էր Ֆրանտիշեկի մոտ և փորձում էր դադարեցնել վիրավորի կրծքի արյունը:

Դոն Պեդրոն հեռացրեց տղային, թեքվեց Ֆրանտիշեկի վրա և ականջը դրեց նրա կրծքին:

— Կենդանի է, բարեկամներ: Ձիերից իջեցրեք թամբերը և պատգարակ պատրաստեք:

Քիչ անց տխուր թափորը շարժվեց դեպի գյուղը: Բնակիչները լապտերներով ընդառաջ դուրս եկան, բայց դոն Պեդրոն կարգադրեց հեռանալ և չաղմկել: Նրան բոլորը հարգում էին և անմիջապես լսեցին: Ֆրանտիշեկին ռանչո տարան և տանտիրոջ հրամանով հեռացրին բոլոր հետաքրքրվողներին: Միայն մի մարդ թույլտվություն ստացավ ներս մտնել և այնտեղ մոտ մի ժամ մնաց: Նույնիսկ Ֆրանտիշեկի ընկերներին արգելված էր մտնել հիվանդի մոտ: Վացլավը, Ենիկը և Դիեգոն լուռ նստել էին դրսում և սպասում էին:

Ֆրանտիշեկը դեռ ուշքի չէր գալիս: Գնդակը աջ կողմից ծակել էր կուրծքը և մնացել էր թիկունքում: Պետք էր հանել, և դա արեց մի լռակյաց մարդ, որը հենց նոր դուրս եկավ տնից: Բոլորը շրջվեցին նրա կողմը. նա ձեռքում բռնել էր կապարի մահաբեր կտորը:

— Արյան մեծ կորուստ,— ասաց նա,— եթե ուժեղ ջերմություն սկսվի, օտարերկրացին առանց գիտակցության գալու կմահանա հենց այս գիշեր:

Ֆրանտիշեկի բարեկամների համար դրանից ավելի սարսափելի լուր չէր կարող լինել: Նրանք հանկարծ իրենց զգացին կորած, անօգնական, մոլորված այս անդրօվկիանոսյան երկրում: Ընկերների վիշտը փոխվեց ատելության, ատելությունը նորից փոխվեց տխրության և տառապանքի: Ափսոսանքը նրանց մեջ արթնացրեց հուսահատություն. այդպես շարունակվեց ամբողջ գիշեր: Գիշերը անհավատալի երկար տևեց: Ռանչոն լուռ էր, դա կարծես ծածկել էին սև շղարշով, որի վրա փայլվում էր աստղերի արծաթյա շողքը: Ընկերները նստել էին հնդկական ձևով՝ ծալապատիկ, և դեմքները թաքցրել էին ձեռքի ափերում: Նրանք ամբողջ գիշեր աչք չկացրին:

Երբ, վերջապես բարձրացավ լուսաբացի քամին և կանչեցին աքաղաղները, բացվեց ռանչոյի պատուհանը և այնտեղ երևաց դոն Պեդրոն, անքնությունից և տառապանքից գունատված:

— Գիտակցությունը տեղը եկավ,— շնչաց նա:— Վերջապես քնեց: Փա՛րճ աստծո:

Պատուհանը փակվեց: Ընկերները վեր թռան, նայեցին միմյանց, կարծես չհավատալով իրենց ականջներին:

— Զեռին ուշքի՛ է եկել,— առաջինը բացականչեց եսիկը և դեպի դաշտ սլացավ:

Ո՛հ, նա չէր կարող այստեղ նստել, նա պետք է մենակ մնար, լրիվ մենակ:

Գլուխ քսանհինգերորդ
ՀԻՎԱՆԴԸ ԱՌՈՂՋԱՆՈՒՄ Է

Երեք օր անընդհատ ռանչո էր գալիս արդեն մեզ ծանոթ սակավախոս այն մարդը, իսկ դոն Պեդրոն այդ օրերին ընդհանրապես տնից չէր հեռանում: Գլուղի բնակիչները սրտառուչ ուշադրությամբ էին շրջապատել մեր բարեկամներին:

Ինը օր և ինը գիշեր Ֆրանսիշեկը կռվեց մահվան դեմ, որը չէր նահանջում նրա անկողնու մոտից: Միայն տասներորդ օրը լռակյաց բժիշկը հայտարարեց, թե՝ մարտը շահված է:

— Դոն Ֆրանսիսկոն կապրի և, մինչև հունձը ոտքի կկանգնի,— ասաց նա:

Դա իսկական տոն էր, մանավանդ որ այդ ժամանակ վերադարձավ և տանտիրուհին: Ընկերներին առաջին անգամ թույլատրեցին այցելել հիվանդին:

Նրանք հազիվ ճանաչեցին Ֆրանսիշեկին, այնպես էր նա նիհարել և թուլացել: Բոլորը, դրանց հետ էլ և Լգոտկան, նետվեցին դեպի նրա անկողինը, ինչպես մահից հարություն առածի վրա: Շատ բան էր հավաքել սրտում... բայց տեսակցությունը ընդամենը մի քանի րոպե տևեց: Նրանք նույնիսկ չհասցրին ասելու, թե ինչպես էին ողբացել, ինչպես էին տխրել, ինչպես էին իրենց մենակ զգում և ինչպես անսահման սիրում են նրան: Ֆրանսիշեկը միայն ժպտաց և իր նիհար մատներով սեղմեց նրանց ձեռքերը:

Ընկերներին թույլ էին տվել նրա մոտ գալ ամեն օր, բայց ոչ երկար ժամանակով: Իսկ երբ մի ամիս անց ծառաները հիվանդին դուրս բերեցին պատշգամբ, բոլորը հավաքվեցին նրա շուրջը և պատմում էին, պատմո՞ւմ անվերջ: Մոտ վազեցին նույնիսկ Լգոտկայի ձագուկները: Այս չարաճճիները իրենց ատամներով և ճանկերով ամեն ինչ պատռտում էին: Նրանց մոտ տարբեր հակումներ էին երևան եկել. փոքրիկ Ռիկան պատրաստ էր ժամերով նստել որևէ մեկի ծնկներին, Պյուտոնը խաղում էր ամեն բանի հետ, ինչ կանգնած էր կամ շարժվում էր, իսկ Կոստան, նստած պոչի վրա, մտածում էր և միայն ճանճերին քշելու համար շարժում էր ականջները:

— Թանկագին բարեկամներ,— ասաց մի անգամ Ֆրանսիշեկը,— պատրաստվեք մեկնելու: Հենց առողջանամ, մենք տուն կգնանք:

— Տո՛ւն,— ճչաց եսիկը: Նա քիչ մնաց ուրախությունից խելքը թռցներ:— Տո՛ւն, իսկապե՞ս:

— Դա այնպիսի ճշմարտություն է, ինչպես ես վիրավորված եմ: Եյ դո՛ւ, թույլից փախած:— Հիվանդության ընթացքում առաջին անգամ Ֆրանսիշեկը փորձեց կատակել:— Մեր խնդիրը կատարել ենք և բավականին լավ: Իսկ երբ լավանամ, պետք է, ինչպես հարկն է, հանգստանալ: Լարվածությունը արդեն իմ բանը չէ: Այժմ ինձնից էլ ինչ օգուտ: Այստեղի բժիշկն էլ խորհուրդ է տալիս տուն վերադառնալ:

— Այստեղի բժիշկը՝,— զարմացան բոլորը:

— Այո՛, այդ լռակյաց մարդը հրաշալի բժիշկ է: Հնարավոր է, որ նա համալսարանական դիպլոմ չունի, բայց դրա փոխարեն բնությունից նրան մեծ շնորհ է պարգևած, մեծ փորձ ունի, և ամենագլխավորը, համբերատարություն և սեր դեպի հիվանդը:

Հյուրասեր տանտիրուհին հայացքով հասկացրեց, որ ժամանակն է վերջացնելու խոսակցությունը:

Հիվանդի աչքերը փակվում էին հոգնածությունից: Նա դեռ թույլ էր և հաճախ էր քնում:

Բարեկամները խորհրդակցեցին և պայմանավորվեցին, որ այդ օրվանից անգործությանը վերջ տան: Մինչև տուն վերադառնալը որոշ աշխատանքներ էին մնացել. մի քանի արկղեր և զամբյուղներ դեռ լցված էին: Որոնոդները որոշեցին առանց իրենց ղեկավարի օրիսիդեա հավաքել, մանավանդ որ այժմ շրջապատը լրիվ անվտանգ էր դարձել:

Հետևյալ օրը մշակները Վացլավի հետ միասին շարժվեցին դեպի հյուսիս, իսկ Ենիկը մնաց. նա սպասում էր, թե երբ իրեն թույլ կտան հիվանդի մոտ գնալու: Հետո Ֆրանտիշեկի ոտքերի մոտ նստած, նա աշխատում էր որևէ պատճառ հնարել Վացլավի բացակայության համար, բայց վիրավորը քմծիծաղով ասաց.

— Տղա՛ս, մի՛ չարչարվիր, ինձ չես խաբի: Ես տեսնում եմ, որ անգործությունը ձեզ ձանձրացրել է, և Վացլավը մարդկանց հետ գնացել է դեպի կիրճը:

Ի՞նչ էր մտում Ենիկին անելու: Ստիպված էր խոստովանել ամեն ինչ: Բայց Ֆրանտիշեկը չէր էլ մտածում բարկանալ. թվում էր, թե նա նույնիսկ ավելի սիրալիր դարձավ:

Դոն Պեդրոն հիվանդի համար զանազան զբաղմունքներ էր հորինում և մի անգամ շախմատ բերեց, որով անասելի ուրախացրեց Ֆրանտիշեկին: Տղամարդիկ նստեցին շախմատ խաղալու. նույնիսկ այդ թագավորական խաղը մտածեցին սովորեցնել տանտիրուհուն: Մի շաբաթ էլ չանցավ, որ խելոք աշակերտուհին հեշտությամբ մատ արեց իր ուսուցչին:

Այժմ Ֆրանտիշեկը չէր ձանձրանում... Ենիկը դեռ չէր հասցնում դուրս գալ, որ վերադառնում էր Վացլավը և պատմում աշխատանքի մասին: Իհարկե, նա պատմում էր մեծ զգուշությամբ, միայն այն բաների մասին, ինչը չէր վրդովի հիվանդին: Օրինակ, նա ոչ մի խոսք չասաց կատվառյուծի մասին, որ Դիեգոն գնդակահարել էր քսան քայլի վրա, դա, իհարկե, կանհանգստացներ Ֆրանտիշեկին և մեկ էլ տեսար, կարգելեր օրիսիդեայի որևումը: Իսկ կատվառյուծի հետ պատահեց այսպես: Հովազը և կատվառյուծը այս երկրներում խույս են տալիս մարդկանցից, բայց եթե դրանց վրա հարձակվես կամ վախեցնես, կկատաղեն: Այստեղ արդեն մարդը փրկություն չի կարող գտնել, նույնիսկ ծառի վրա. կատվառյուծը ինչպես, ի միջի այլոց, կատվացեղի համարյա բոլոր գիշատիչները, շատ լավ են մագլցում ծառերը:

Դիեգոն հանդիպեց կատվառյուծին ձորակի քարանձավում: Գազանը պատրաստվեց թռչելու, իսկ Դիեգոն այդ տեսնելով, ընկավ գետնին: Կատվառյուծը թռավ նրա վրայով, բայց չփախավ, ընդհակառակը, իր ուժեղ պոչով սկսեց հարվածել գետնին, պատրաստվելով նորից թռչելու: Դիեգոյի մարմինը սարսռում էր նույնիսկ հիմա, պատմելիս, երբ հիշում էր, թե ինչպես էին փայլում նրա կանաչ աչքերը:

Քարանձավից մլավոցի ծայն լսվեց. ուրեմն այնտեղ ծագերն են: Եվ Դիեգոն հասկացավ, որ կորած է. կատվառյուծը քարանձավից չի հեռանա և կհռչոտի անկոչ հյուրին: Պետք է գործել արագ: Գետնին պառկած նա բարձրացրեց հրացանը և կրակեց իրենից քսան քայլ հեռավորության վրա նստած գազանի վրա:

Կրակոցը հաջող էր. կատվառյուծը վեր ցատկեց, բայց նույն րոպեին գնդակահար թրմփաց գետնին: Դիեգոն պոկվեց տեղից և թաքնվեց քարի հետևում: Այնտեղից մի անգամ էլ կրակեց գալարվող կենդանու վրա և փախավ:

Միայն մոտ մի ժամ հետո նա հնդիկներին բերեց մարտի տեղը, որտեղ ընկած էր կատվառյուծի դիակը:

Դոն Պեդրոն իմանալով տեղի ունեցածի մասին, իր մարդկանց ուղարկեց վերցնելու ծագերին: Այստեղի բնակիչները չեն վախենում ո՛չ կատվառյուծից, ո՛չ էլ հովազից, բայց ոչնչացնում են նրանց, որպեսզի փրկեն անասուններին: Դոն Պեդրոյի ծառաները պատրաստակամ ուղևորվեցին լեռները. նրանք ծագերին կբերեն, կկերակրեն կաթով, իսկ հետո կվաճառեն: Սան Խոսեում, որտեղ գալիս են ամբողջ աշխարհի կենդանաբանական այգիների և գազանանոցների գործակալները, այդպիսի որսի համար կարելի է լավ գումար ստանալ...

Անցավ երկու ամիս: Ֆրանսիշեկը այնքան էր կազդուրվել, որ կարող էր աներկյուղ ճանապարհ ընկնել: Նրանց համար դժվար էր ռանչոյի տերերից և գյուղի հյուրասեր բնակիչներից բաժանվելը: Իսկ նրանք հյուրերին ճանապարհում էին այն հարազատների նման, որոնք մեկնում են հեռավոր վայրեր: Հրաժեշտը ամբողջ երկու օր տևեց: Ուղեկցողները և մեկնողները փոխանակեցին հարյուրավոր խոստումներ: Անընդհատ լսվում էր.

— Չմոռանաք մեզ:

— Չե՛նք մոռանա:

— Ցտեսությո՛ւն: Կհանդիպենք Կոստա-Ռիկայում:

— Ցտեսությո՛ւն: Կհանդիպենք Եվրոպայում:

— Ո՛ղջ եղեք:

— Երջանի՛կ եղեք:

— Բարի՛ ճանապարհ:

Լավ տեղավորելով թանկարժեք բեռը, մեր օրիսիդեա որոնողները ճանապարհ ընկան իրենց արդեն լավ ծանոթ հարթավայրով: Ամեն ինչ վերջ ունի՝ նույնիսկ ամենաջերմ հրաժեշտը: Եվ ահա, հրաժեշտ տալով այդ սիրալիր մարդկանց, որոնց նմաններին նրանք չէին հանդիպել Կենտրոնական Ամերիկայում, մեր ճանապարհորդները արագ ընթացքով դեպի Կարիյո շարժվեցին:

Գլուխ քսանհինգերորդ

ԴԵՊԻ ՏՈՒՆ

Երկաթուղիների և շոգենավերի արժեքը բոլորից լավ նա է գնահատում, ով շտապում է տուն: Ի՛նչ շնորհակալությամբ ես նշում յուրաքանչյուր անցած մղոնը,

որքան ես ուրախանում եմ և ավելացող արագության համար: Կարիյոյից մինչև Լիմոն ճանապարհորդները հանգիստ գնացին: Իսկ երբ իմացան, որ Լիմոնում այդ շաբաթ մի լավ երեք է խաղալու ծագելու, որը ուղևորվելու է Մերիդ, Եսիկը ուրախությունից երեք անգամ գլուխկոնծի տվեց:

Լիմոնում քիչ զվարճանալու բան կար: Չորս կողմը դատարկ ծովափն էր, որ դեմ էր առնում լեռներին: Լեռները երբեմն ծուխ էին արձակում: Կոստա-Ռիկայում մի քանի հրաբուխներ են գործում: Աշխուժություն կար միայն նավահանգստում, և այնտեղ էլ, ինչպես Բելիզում, մեր Վացլավը, Եսիկը և Դիեգոն, անցկացրին օրվա մեծ մասը, այն ժամանակ, երբ Ֆրանսիշեկը օրագրի մեջ նշումներ էր կատարում տեսածների մասին և հաշիվն էր կազմում:

Բարեկամները Դիեգոյին իրենց հետ Անգլիա հրավիրեցին, և նա, երկար տատանվելուց հետո, որոշեց գնալ ամբողջ աշխարհում իրեն միակ հարազատ այդ մարդկանց հետ:

Հնդիկ մշակները որոշեցին Կոստա-Ռիկայում մնալ. սուրճի պլանտացիաներում նրանց համար շահավետ, լավ վարձատրվող աշխատանք գտնվեց: Նրանք հուզված հրաժեշտ տվեցին եվրոպացիներին: Հնդիկները չվստահող մարդիկ են և եթե նրանց չխաբեն, կսովորեն սպիտակներին: Իհարկե, նրանց վստահությունը շահելը այնքան էլ հեշտ չէ: Սկզբում նրանց պետք է համոզվել սպիտակ մարդկանց անկեղծության մեջ: Այդ ժամանակ միայն նրանք սիրում են եվրոպացիների հետ վերաբերվել որպես ավագ և ավելի փորձված եղբայրների: Բայց վա՛յ է, եթե նրանց վստահությունը չարաշահեն:

Մեր բարեկամները ոչ մի բանում նրանց չխաբեցին: Ճանապարհորդները Կոստա-Ռիկայում թողեցին երեք հավատարիմ ընկերների, որոնց դեռ հաճախ պետք է հիշեն:

Դիեգոն Լիմոնում անգործ չնստեց: Նա ուզեց իմանալ, թե ինչպես են ավագակները հետևել արշավախմբին: Եվ այդ նրան հաջողվեց: Նա գտավ նավահանգստի այն աշխատողներին, որոնք հիշում էին վեց զինված մարդկանց: Նրանք ներկայացել էին որսորդների անվան տակ և հարցուփորձ էին արել իրենց ընկերների մասին, որոնք մեկնել էին իրենցից շուտ: «Երկու սպիտակամորթ տղամարդ, երկու պատանի. մեկը սպիտակ, մյուսը՝ գունավոր և երեք հնդիկներ»,— այդպես էին չարագործները նկարագրել իրենց «ընկերներին», որոնք պետք է Բելիզից նավով այստեղ գային: Լիմոնում շատերն էին հիշում Դոլեթալի արշավախմբին և անկեղծությամբ պատմել էին, որ նրանք գնացքով գնացել են Կարիյո: «Բարեկամները» անմիջապես ճանապարհվել էին նրանց հետևից:

— Մի՞թե նրանք ձեզ չհասան,— զարմանքով հարցրին լիմոնցիները:

— Ո՛չ,— պատասխանեց Դիեգոն:— Ես չեի հարցնի, եթե իմանայինք, թե որտեղ են նրանք գտնվում:

— Գուցե որևէ բա՞ն պետք է հաղորդել նրանց: Երևի նրանք նորից Լիմոն կվերադառնան:

— Եթե նրանցից որևէ մեկը վերադառնա...— Դիեգոն մի րոպե մտածեց,— հայտնեք, որ մենք գնացել ենք Բելիզ և նրանց համար գրություն ենք թողել փոխնահանգապետի մոտ:

Եվ ահա մեր որսորդները արդեն այն հսկայի տախտակամածին էին, որ «Բաթ» էր կոչվում: Նրանք կանգ կառնեն Տրինիդադում, իսկ հետո կլողան Ատլանտյան օվկիանոսի անծայրածիր տարածություններով:

Դեռ գունատ, բայց արդեն լրիվ առողջ ու հանգիստ Ֆրանտիշեկը նայում էր հեռացող Յուկատանի ափերին: Նա հիշում էր անցած տարին, բոլոր դառնությունները, դժվարությունները և վտանգները, որը հաղթահարել էր իր բարեկամների հետ: Բայց նա իր հետ դառնություն չէր տանում: Նրանք հանդիպել էին հրաշալի մարդկանց, տեսել էին բնության հազվագյուտ գեղեցկությունը... Արշավանքը ընդհանրապես կարելի էր հաջողված համարել:

Ենիկը բախտավոր ծեռք ունի: Հարազատները կգարմանան, երբ տեսնեն նրա բերած աշխատանքի վարձատրությունը: Նրանք, իհարկե կներեն չարաճճի, հրաշալի տղային՝ անխոհեմ արարքի համար: Ճանապարհորդությունը նրա համար խիստ դպրոց եղավ, բայց նրան բարի ծառայություն կմատուցի:

Վերևի տախտակամածից Ֆրանտիշեկը հիանում էր Ենիկով, որը Վացլավի հետ միասին կանգնել էր ներքևում, բազրիքի մոտ: Հիմա նա կարող է խոստովանել. ուրախ էր, որ տղան եկել էր իրենց հետ: Բայց, ճիշտն ասած, մի՞թե Ենիկը դեռ երեխա է: Ֆրանտիշեկը սովորել էր այդպես անվանել նրան, բայց նայեք, թե դեմքը որքա՜ն է թխացել, մկանները որքա՜ն են ամրացել և, որ գլխավորն է, ինչպիսի՜ փորձ ունի: Ուրիշ ի՞նչ տղա տասնչորս տարեկան հասակում այսպիսի փորձ կունենա: Ենիկը այլևս ոչ մի վտանգից չի վախենում: Նա քաջ է, շրջահայաց և դիմացկուն: Նրա մարմինը ամրացել է և կոփվել, նրա հիշողության մեջ կուտակվել են զանազան տեղեկություններ: Նա սովորել է օտար լեզուներ: Գիտե մարդկանց հետ վարվելու ձևը: Նրան կարելի է վստահել ամեն ինչում: Մի տարվա ճանապարհորդության ընթացքում նա ծեռք է բերել այնքան գիտելիքներ, որքան տանը նույնիսկ հինգ տարում չէր կարող: Ո՛չ, Ենիկը իրոք իսկական տղամարդ է դարձել:

Վացլավը նույնպես հարստացել է շատ արժեքավոր գիտելիքներով և փորձով, որը միշտ էլ կարող է օգտագործել: Նա նույնպես, իհարկե, չի ափսոսա ճանապարհորդելու համար:

Հետո Ֆրանտիշեկի հայացքը կանգ առավ Դիեգոյի վրա: Նա նստել էր արկղին, շնիկների կողքին և նրանց տարբեր չարաճճիություններ էր սովորեցնում:

«Տղա՛ս, դու միշտ կմնաս մեզ հետ: Քանի՜ անգամ ես փրկել մեր կյանքը: Քանի՜ անգամ ես անգնահատելի խորհուրդներ տվել և օգնել գործին: Որտե՞ղ կա ավելի հավատարիմ ու նվիրված սիրտ: Իսկ հիմա դու կճանաչես մի այլ կյանք, իսկ ես ոչինչ չեմ ափսոսա քո կրթության համար, նրա համար, որպեսզի քեզ տամ ամեն ինչ, ի՛մ սևամորթ տղա»:

Ո՛վ իմանա... Երևի Դիեգոն զգաց, որ այդ րոպեին «դոն Ֆրանսիսկոն» մտածում էր իր մասին, իր ապագայի մասին... Նա հանկարծ կտրվեց խաղից, արագ վազեց Ֆրանտիշեկի մոտ և ամուր գրկեց: Երևի, Դիեգոն հիշեց այն օրը, երբ դավաճան և անարգ ծեր Սանայի հետ սպիտակների վրանը եկավ, իսկ «դոն Ֆրանսիսկոն» Սանայի դավաճանությունից հետո իր մոտ վերցրեց նրան, բոլորի կողմից լքված որբին և ընդունեց հարազատի նման:

Երկար ժամանակ, այն բանից հետո երբ Դիեգոն վերադարձել էր շնիկների մոտ, Ֆրանտիշեկ Դուլեժավը նայում էր ճանապարհորդությունն անցավ հաջող և արագ, բայց մեր ուղևորների անհամբերությունը անցնում էր ամեն տեսակի արագությունից: Եվ ահա մի անգամ Ենիկը ասաց.

— Եվս մի գիշեր, և մենք տանը կլինենք:

Վաղվա՛վի աչքերը լցվեցին արցունքով, նա ամաչում էր դրանից, բայց հուզմունքից չէր կարողանում իրեն պահել: Նրա հոգում մանկական դեռ շատ բաներ կար, չնայած լրանում էր նրա քսաներկու տարին:

Երբ չորս անբաժան բարեկամները ոտք դրեցին Անգլիայի հինավուրց հողին, Ենիկը գրկեց Դիեգոյին՝ հետևյալ խոսքերով.

— Հիմա, սիրելի Դիեգո, դու արդեն հնդիկ չես, դու եվրոպացի ես: Նայիր, քեզ ինչպես է սագում նոր կոստյումդ:

Բայց փոքրիկ Դիեգոն չհամաձայնեց.

— Ո՛չ, Ենիկ, ես մինչև մահս կմնամ հնդիկ, այնպես, ինչպես դու ամեն տեղ չեիս կմնաս: Բայց եվրոպայում ես ուզում եմ դառնալ իսկական մարդ, այնպես ինչպես մեր թանկագին դոն, ո՛չ, ոչ թե դոն... ինչպես մեր քեռի Ֆրանսիսկոն: